

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

А. А. БОЗОЯН


ВОСТОЧНАЯ ПОЛИТИКА
ВИЗАНТИИ И КИЛИКИЙСКАЯ
АРМЕНИЯ
В 30—70-ые ГОДЫ XII ВЕКА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1988

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Ա. ԲՈՉՈՅԱՆ

ԲՅՈՒՋԱՆԴԻԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺԲ ԴԱՐԻ
30—70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՊԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1988

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանառու խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր
Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Դիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր Կ. Ն. ՅՈՒԶԲԵՆՅԱՆԸ
և պատմական գիտությունների թեկնածու Հ. Գ. ՄԱՐԴԱՐՅԱՆԸ

Թողոյան Ա. Ա.

Բ 802 Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը
և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30—70-ական
թվականներին, Պատ. խմբ.՝ Պ. Մ. Մուրադյան —
Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988.—286 էջ,

Աշխատությունը նվիրված է Կիլիկյայի հայկական
իշխանության և Բյուզանդական կայսրության քաղաքական
փոխհարարերությունների պատմության ուսումնասիրությանը։
Դրամ մանրամասնորին բնութադրված է Բյուզանդական
կայսրության արևելյան և Ռուբինյան իշխանության արտա-
քին քաղաքականությունը ԺԲ դարի 30—70-ական թվական-
ներին։ Լայնորեն օգտագործված են Հռոմելյայի կաթողիկո-
սարանի դիվանագիտական փոխհարարերությունների վագե-
րագրերը։ Հետազոտության մեջ ճշտված են ԺԲ դարի 40—70-
ական թվականների Կիլիկյայի բյուզանդական կառավարիչնե-
րի իշխանության ժամանակը և գործունեության ոլորտները,
փորձ է կատարված վերականգնելու նրանց իշխանության
տարածքը։

Դիրքը հասցեազրված է հայագետներին, բյուզանդագետ-
ներին և Մերձավոր արևելքի պատմությամբ հետաքրքրվող
ընթերցող լայն շրջաններին։

Կ0504020000

Բ ————— 29—87

703 (02)—88

ԳՄԴ 63.3(22) 1

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակություն, 1988

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1081թ. Բյուզանդական կայսրության գահին տիրացավ Ալեքս Ա. Կոմնենոսը։ Այդ իրադարձությամբ Բյուզանդական կայսրության պատմության մեջ սկսվեց նոր՝ Կոմնենոս կայսրերի կառավարման դարաշրջանը (1081—1185)։ Այդ ժամանակաշրջանը նշանավորվեց Հակասական տեղաշարժերով, որոնք իրենց կնիքը դրեցին Բյուզանդական կայսրության ներքին կյանքի և արտաքին քաղաքական հարաբերությունների հետագա ընթացքի վրա։ Կոմնենոսների իշխանության տարիներին կայսրությունը հասավ տնտեսության և մշակույթի զարգացման որակական նոր աստիճանի, բարձրացավ Բյուզանդիայի միջազգային հեղինակությունը, ձեռնարկվեցին հեռավոր ուազմարշավներ Հյուսիսային Ասորիք, Խոտալիա և Եգիպտոս։ Առաջին Կոմնենոսների իշխանության ժամանակաշրջանի մասին Կարլ Մարքսը գրել է. «...Խաչակրաց արշավանքները կրկին բարձրացրեցին կայսրության նշանակությունը, հեռացրեցին Արևելքից սպառնացող վտանգը»¹։ Միենույն դարաշրջանում պետության ներսում և հատկապես արքունիքում ժամանակ առ ժամանակ հայտնվում էին հզոր, ընդդիմադիր խմբակցություններ և պալատական կուսակցություններ, որոնք հակադրվում էին կայսրության պաշտոնական արտաքին կայսրության ու ներքին քաղաքականությանը։ Նրանց հակածարված տալու համար պահանջվում էին հսկայական ուազմական և տնտեսական ուժեր։

Կոմնենոս կայսրերի հեռավոր ուազմարշավները Հյուսի-

¹ K. Marx, Хронологические выписки. I. от—91 приблизительно до +1320, Архив Маркса и Энгельса/Под ред. В. Адоратского. т. V., Л., 1938, с. 188.

սային Ասորիք, Իտալիա և Եգիպտոս չէին արտահայտում երկրի իրական տնտեսական և ռազմական հզորությունը: Պատահական չէ, որ նշված տարածքներում ռազմական գործողություններ ծավալելուց շատ շանցած կայսրությունը կորցնում էր նվաճված տիրութիւնները: Այդ ռազմարշավները հիմնականում ունեին մեկ նպատակ՝ պահպանել Բյուզանդական կայսրության տարեցտարի նվազող միջազգային հեղինակությունը:

Կոմնենոսների ժամանակաշրջանի Բյուզանդական կայսրության քաղաքական ու տնտեսական աստիճանական վերելքը ընդհատվեց 1176 թ., երբ Իկոնիայի սուլթան Ղիձ Արսլանը Միրիոկեֆալեի ճակատամարտում պարտության մատնեց Մանուել Ա Կոմնենոսի բանակը: Բյուզանդական կայսրության պատմության մեջ կրկին սկսվեց երկարատև ներքին և արտաքին քաղաքական լճացման ժամանակաշրջան, որը հյուծեց երկրի տնտեսությունը և, որի հետևանքով, 1204 թ. Կոստանդնուպոլիսը հանձնվեց լորրորդ խաչակրության բանակներին²: Բյուզանդական կայսրությունը այդ իրադարձությունից հետո մասնատվեց:

Մինչդեռ ԺԱ դարի 70-ական թթ. Կիլիկիա երկրամասը, երբեմն, որպես սահմանային գոտի հարում էր Բյուզանդիայի տարածքներին; սակայն ավելի հաճախ ամբողջությամբ հնթարկվում էր կայսրությանը: Կիլիկիան համարվում էր Հռոմեական կայսրությունից Բյուզանդիային անցած, նրանից անրաժան տարածքային ժառանգություն: Է դարում այդ երկրամասը Արարական խալիֆաթի և Բյուզանդական կայսրության բանակների միջև քաղաքական բախումների ռազմական թատերաբեմ դարձավ: 703 թ. Բյուզանդական կայսրությունը կորցրեց Կիլիկիան, իսկ Ժ դարի ընթացքում կրկին վերագրավեց այն³: 1071 թ. Մանազկերտի ճակատամարտից հետո, Բյուզանդական կայսրության ռազմական ուժերը

² K. H. Յօբայան, Կլասսовая борьба в Византии в 1180—1204 гг. и четвертый крестовый поход, Ереван, 1957.

³ՏԵ՛ս Ա. Խ. Տեր-Վետենյան, Արարական սահմանային ամրությունների գոտին (սուլուր), ՊԲՀ, 1981, № 2, էջ 140, 148:

շախջախվեցին Սելզուկյան մեծ սուլթանության բանակների կողմից։ Այդ իրադարձությունից հետո վերացվեց Բյուզանդական կայսրության վերահսկողությունը Կիլիկիայի տարածքի վրայից։

ԺԱ դարում Բյուզանդական կայսրությունը բռնության և դիվանագիտական համոզման ճանապարհով տեղահան է անում հայկական բնակչության մի նշանակալի զանգված Մեծ Հայքի տարածքներից և բնակեցնում է Կապադովկիայում ու Հյուսիսային Ասորիքում⁴։ Տեղահանված հայկական բնակչությունը իրեն հատկացված տարածքներում պահպանում էր որոշ ինքնավարություն, իսկ Փիլարտոս Վարաժնունու և նրա հետեւրդների իշխանության տարիներին ձեռք է բերում փաստական (de facto) անկախություն։ Այդ հիմքի վրա ԺԱ դարի վերջին Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում ձևավորվում են մի շարք հայկական իշխանություններ, որոնք ժԲ — ԺԴ դարերի ընթացքում կարևոր դեր են խաղում Մերձավոր արևելքի քաղաքական կյանքուն։ Սակայն նրանցից շատերը շկարողացան դիմանալ հզոր հարևանների քաղաքական ձընշմանը և հեռացան պատմության թատերաբեմից։ Քշերին էր վիճակված դիմանալ մինչև ժԲ դարի 30-ական թթ.։ Դրանց մեջ հիշատակելի են Կիլիկիայի Ռուբինյան, Լամբրոնի ու Պապեռոնի Հեթումյան իշխանությունները։ ԺԱ դարում Փոքր

4 Թեև ժԲ դարի նշանավոր հակոբիկ մատենագիր Դիռնիսիոս Բար Սալիիրին հայերի ժուտքը Հյուսիսային Ասորիք թվագրում է 725 թ. (Դիռնիսիոս Բար Սալիիրի հականառութիւնը հայոց դէմ, թարգմանեց ասորի բնագրէ Հ. Պողոս Էտապալիան, Վիեննա, 1938 (Ազգային մատենադարան, հ. ձեռէ), էջ 87)։ Այնուամենայնիվ հայկական բնակչության զանգվածային դադթը դեպի Կապադովկիա, Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք սկսվում է ԺԱ դարում (ան' Ա. Ալպօյանեան, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Տեղագրական, պատմական և ազգագրական ուսումնասիրութիւն, հ. Ա, Գաճիրին, 1937, էջ 478—481; Վ. Թիմունյան, Հայերի արտագաղթը դեպի Գամիրը (11-րդ դարում), Տ27, 1955, Խ 2, էջ 78—81, Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում (IX դ. կեսրից մինչև XIV դ. կեսրը), Երևան, 1976, էջ 506—515, G. D'Alleyan L'immigration Arménienne en Cappadoce au XI^e siècle, Byzantion, t. XLV, 1975, fasc. 1, p. 41—117).

Ասիայում հայերի ստեղծած քաղաքական միավորումներից ամենակենսունակը եղավ Կիլիկիայում Ռուբինյանների ստեղծած հայկական իշխանությունը, որը գոյատևեց մինչև 1375 թ.:

Մինչև ԺԲ դարի առաջին կեսը ներառյալ, հայկական այն իշխանությունները, որոնք ինքնուրույնարար շարունակում էին իրենց գոյությունը Կիլիկիայի տարածքի վրա, քաղաքական և տնտեսական սերտ կապերով էին կապված Բյուզանդական կայսրությանը ու ճանաշում էին նրա գերակայությունը: Կայսրությունը Փօքք Ասիայի այս տարածաշրջանում (регион) պահում էր մեծաթիվ քանակ և նշանակում էր իր զորահրամանատար-կառավարիչներին: Սակայն, հակառակ Բյուզանդիայի եռանդուն տիեզերակալական քաղաքականությանը, Ռուբինյան հայկական իշխանությանը հաջողվեց միավորել Կիլիկիայի գրեթե բոլոր շրջանները, դուրս գալ Բյուզանդական կայսրության ստորակայի (вассал)⁵ կարգավիճակից և ԺԲ դարի երկրորդ կեսին կատարել իր առաջին հաջող և նպատակաւորդված դիվանագիտական քայլերը միշագգային փոխհարաբերությունների ասպարեզում, որը երկրին բերեց լիակատար՝ և՛ փաստական, և՛ իրավաբանական (de jure) անկախություն: 1198 թ. Կիլիկիայի Ռուբինյան հայկական իշխանությունը թագավորություն հռչակվեց: Այդ իսկ պատճառով, Բյուզանդական կայսրության և Ռուբինյան իշխանության միջև ԺԲ դարի 30—70-ական թթ. ժամանակաշրջանում թագավորության հռչակման նախօրեին ներկայացնում է որոշակի գիտական հետաքրքրություն:

Աշխատության մեջ արտացոլված կարևոր խնդիրներից մեկն էլ Բյուզանդական կայսրության փոքրասիական շրջանների վարչատարածքային բաժանման որոշ առանձնահատկությունների ուսումնասիրությունն է Կիլիկիայում թագավորության հռչակման նախօրեին ներկայացնում է որոշակի գիտական հետաքրքրություն:

5 Վասալ և սյուզեն տերմինների փոխարեն օգտագործում ենք Հ. Մարգարյանի «Հյուզանդական Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատճենաթյան մի քանի հարցեր» (Երևան, 1980) աշխատության մեջ կիրառված ստորակա և գերակա համարժեքները:

վրա: ԺԲ դարի ընթացքում Բյուզանդական կայսրության ներսում վարչատարածքային բաժանումների համակարգը մասնավոր ուսումնասիրության չի ենթարկվել: Հետևաբար ԺԲ դարի 40—70-ական թթ. Կիլիկիայի բյուզանդական կառավարիչների ժամանակագրական հերթականության բացահայտումը, կայսրության փոքրասիրական տարածքների վարչական բաժանման առանձնահատությունների ուսումնասիրությունը կարող է նոր խթան դառնալ Կոմնենոսների դարաշրջանի Բյուզանդիայի ներքին՝ վարչատարածքային քաղաքականության հետազոտության բնագավառում:

Բյուզանդական կայսրության և Ռուբինյան հայկական իշխանության միջև ԺԲ դարի 30—70-ական թթ. քաղաքական և եկեղեցական փոխհարաբերությունները ներկա աշխատանքում ուսումնասիրված են հայկական, բյուզանդական, ասորական, արարական և լատինական սկզբնաղբյուրների համեմատական քննության լրացման ներքո: Փոքր Ասիայում տեղի ունեցած իրադարձությունները դիտված են Մերձավոր արեւիլքի քաղաքական պատմության հետնախորքի վրա, քննության են առնված այն բոլոր արմատական վերափոխումները, որոնց ենթարկվեցին Բյուզանդական կայսրության և Ռուբինյան հայկական իշխանության միջազգային քաղաքական փոխհարաբերությունները: Աշխատանքում օգտագործվել են նաև հայոց կաթողիկոսարանի և բյուզանդական արքունիքի ու եկեղեցու միջև վարվող դիվանագիտական փոխհարաբերությունների վավերագրերը, որոնք լուսաբանում են հայրեյուզանդական եկեղեցական երկինության քաղաքական շարժառիթները: Ռուբինյան իշխանությունը և Հռոմեացի կաթողիկոսարանը պայքարի տարրեր ճակատներում փորձում էին հասնել մի ընդհանուր քաղաքական նպատակի՝ հայկական պետականության վերականգնմանը: Կիլիկիայի սահմաններում բյուզանդական տեղական վարչության կառուցվածքի և Ռուբինյան պետության ձևավորման ընթացքի ուսումնասիրությունը նպատակ է հետապնդում քննության առարկա դարձնել նշված տարածաշրջանում գործող այն քաղաքական ուժերի պատմությունը, որոնց անմիջական միջա-

մտությամբ վերականգնվեց Հայկական պետականությունը Կիլիկիայում:

Փորձենք սահմանել այն հիմնական խնդիրները, որոնց լուսաբանմանն էլ նվիրված է ներկայացվող աշխատությունը.

ա) ԺԲ դարի միջազգային-քաղաքական պայքարի միջավայրում հետևել Բյուզանդական կայսրության և Կիլիկիայի Հայկական իշխանության միջև ժավալված քաղաքական փոխհարաբերությունների ընթացքին այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ նրանցից առաջինը աննկատելիորեն դեպի անկում էր գնում, իսկ երկրորդը, հետզհետե, բարձրանում էր,

բ) Հաշվի առնելով Հայ-բյուզանդական քաղաքական փոխհարաբերությունները և յուրաքանչյուր կոնկրետ ժամանակաշրջանի միջազգային իրադրությունը, բացատրել Կիլիկիայի Հայկական իշխանության քաղաքական դաշինքի հիմնական դրդապատճառները Դանիշմանյան ամիրայության, Իկոնիայի սուլթանության, Հալիպ-Մոսուլի աթաբեկության, Անտիոքի և Եղեսիայի իշխանությունների հետ ԺԲ դարի 30—70-ական թվականներին,

գ) Վեր հանել բյուզանդական աստիճանավորների գործունեության ոլորտները Կիլիկիայում և նրանց առաքելությունը Ռուբինյան Հայկական իշխանության դեմ մղվող պայքարում,

դ) Եկեղեցիների միությանը վերաբերող Հայ-բյուզանդական դիվանագիտական վավերագրերի ընձեռած նյութի հիման վրա հետազոտել այդ բանակցությունների քաղաքական դրդապատճառները

Բյուզանդական կայսրությունը, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, փորձում էր վերականգնել իր իշխանությունը Փոքր Ասիայում: Հովհաննես Բ և Մանուել Ա Կոմնենոսների արևելյան քաղաքականության հիմնական խնդիրն էր ելակետային դիրքեր գրավել Սև և Միջերկրական ծովերի ափամերձ շրջաններում, օգտագործելով դինաստիական ամուսնությունները՝ կայսրությանը ենթարկել Մերձավոր արեգելքի խաչակրաց իշխանությունները, բարձրացնել կայսրության միջազգային-քաղաքական հեղինակությունը: Այդ քա-

դաքականությունը իրագործելու հիմնական պայմաններից մեկը Կապադովկիայում, Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում հաստատված հայկական բնակչության հպատակեցումն էր Բյուզանդական կայսրության արտաքին քաղաքական շահերին։ Այդ նպատակին համնելու համար կայսրությունը կազմակերպում էր հեռավոր ուղղմարշավներ դեպի Հյուսիսային Ասորիք, բյուզանդամետ ուժերի օգնությամբ երկպառակտչական պատերազմներ էր հրահրում Կիլիկիայում, ստիպում էր Հռոմեայում հաստատված հայոց կաթողիկոսարանին՝ ընդունելով բյուզանդական եկեղեցու դավանաբանական-ծիսական պայմանները, ճանաչել Կոստանդնուպոլիսի պատրիարքության գերագահությունը։

ԺԲ դարի 30—70-ական թթ. Կիլիկիայի Ռուբինյան հայկական իշխանության քաղաքական գործիչների առջև գրված էին բազմաբնույթ խնդիրներ (որոնց ճիշտ լուծումը կարող էր երկիրը հասցնել լիակատար անկախության և թագավորության հոչակման)։

ա) ազատագրել Ռուբինյան իշխանությունը Բյուզանդական կայսրության ստորակայի կարգավիճակից, պաշտպանել Կիլիկիայի տարածքային ամբողջականությունը և փաստական անկախությունը, արգելել Բյուզանդական կայսրությանը, Իկոնիայի սուլթանությանը, Դանիշմանյան ամիրայությանը, Հալեպ-Մոսուլի աթարքեկությանը, Անտիոքի և Եղեսիայի լատինական իշխանություններին միջամտելու երկրի ներքին գործերին,

բ) ենթարկել Կիլիկիայի տարածքում ամրոցներ ունեցող բոլոր հայ և այլազգի ավատակեր ընտանիքներին, որոնք անջատվողականության և օտարերկրյա կողմնորոշման կրողներ էին,

գ) Ռուբինյան իշխանության գերակայության ներքո համախմբել Կիլիկիայի տարածքում ապրող բոլոր ժողովուրդներին, կարգավորել երկրի ներքին՝ և հասարակական, և տնտեսական փոխհարաբերությունները,

դ) դուրս բերել երկիրը միջազգային-քաղաքական մե-

կուսացումից, վերականգնել հայկական պետականությունը և կիլիկիայի տարածքում ստեղծել թագավորություն:

Չնայած ԺԱ. դարի վերջից-Հյուսիսային Ասորիքում և Փոքր Ասիայում գոյություն ունեին բազմաթիվ անկախ հայկական իշխանություններ, այնուամենայնիվ, մինչև ԺԲ. դարի ՅՈ-ական թվականները ինքնուրույն պետականության դադարի այդ քաղաքական միավորումներում դեռ ծիլեր շարձակած, հարևան պետական միավորումների ուազմական ուժերի միջամտությամբ արմատախիլ էր արվում: Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում հաստատված այնպիսի անկախ հայկական իշխանություններ, ինչպիսիք էին Փիլարտոս Վարաժնունու և Գող Վասիլի⁶ ղեկավարած պետությունները իրենց առջև շղրեցին և շէին կարող դեռևս գնել հայկական պետականության վերականգնման խնդիր: Նրանք շկարողացան կողմնորոշվել իրենց շրջապատող ժողովուրդների և պետական միավորումների հետ քաղաքական փոխարարերություններում և փլուզվեցին: Այդ իշխանությունների անկման պատճառները բազմաթիվ են, կանգ առնենք դրանցից հիմնականների վրա.

ա) Նրանց ստեղծած պետությունների մեջ համախմբված հայկական ուազմավատատիրական վերնախավը շկարողացավ նոր պայմաններում հարմարվել արդեն իսկ տեղում ձեզավորված ավատատիրական հարաբերություններին,

բ) ամենամյա պատերազմները ամբողջովին հյուծեցին

6 ԺԱ. դարի վերջի և ԺԲ. դարի սկզբի հայկական իշխանությունների ժաման տե՛ս Կոմմագենացի, Փիլարտոս Հայք Կիլիկիայ ճախութեան բան Հիմնադիրը, Հալեպ, 1930, M. J. Laurent, Byzance et Antioche sous le curopalate Philarète, REA, 1929, t. IX, fasc. 1, p. 61—72; C. J. Jarrett, Philaretos arménian bandit or byzantine general? REA, 1972, n. s., t. IX, p. 331—353; B. A. Арутюнова-Фиданян, Армяне-халкедониты на восточных границах византийской империи (XI в.), Ереван, 1980, с. 152—169; В. П. Степаненко. Из истории международных отношений на Ближнем Востоке XII в. Княжество Васила Гоха и Византия. В кн.: Античные традиции и византийские реалии, АДСВ, Свердловск, 1980, с. 34—44.

նրանց իշխանության ներքո գտնվող երկրամասերի տնտեսությունը,

գ) շգտնվեց ազգային և ավատադիրական փոխարարությունների կարգավորման այն ճշգրիտ ուղին, որը կօգներ հետազայռում երկրի գուրս բերումը ներքին և արտաքին քաղաքական ճգնաժամից ու միջազգային մեկուսացումից:

Նման դժվարությունների առաջ էին կանգնած ԺԱ դարի երկրորդ և ԺԲ դարի առաջին կեսին Փոքր Ասիայի և Մերձավոր արևելքի գրեթե բոլոր պետական միավորումները: Բյուզանդական կայսրությունը կորցրեց սեփական փոքրասիական տիրույթները, Մելիքշահի մահից (1092) հետո մասնատվեց Մեծ սելջուկների սուլթանությունը⁷, քաղաքական պայքարի թատերաբեմից բավական արագ դուրս եկան Դանիշմանյան, Արտուրյան⁸, Մերձավոր արևելքում դեռևս իրենց գոյությունը շարունակող արարական ամիրայությունները, շուտով իրենց տարածքների մեծագույն մասը կորցրեցին արևելքի խաչակրաց իշխանությունները⁹: Հատկանշական է, որ ԺԱ—ԺԲ դարերում Փոքր Ասիայում և Մերձավոր արևելքում ձևավորված բոլոր պետական միավորումներից ամենակենսունակը եղան Կիլիկիայի Ռուրինյան հայկական իշխանությունը և Իկոնիայի սուլթանությունը¹⁰: Այդ իսկ պատճառով, այդ պետությունների սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության ուսումնասիրությունը ներկայացնում է գիտական որոշակի հետաքրքրություն:

7 Ս. Վ. Խոնազյան, Հայաստանը և սելջուկները XI—XII դդ., Երևան, 1980, էջ 218:

8 J. Melikoff, Dānishmendides, EI, n. éd., t. II, Leide—Paris 1965, p. 112—114; Cl. Cahen, Le Diyar Bakr au temps des premiers, urtukides, JA, j. 227, 1935 № 1, pp. 270—276.

9 Cl. Cahen, La Syrie du Nord à l'époque des croisades et la principauté Franque d'Antioche, Paris, 1940, p. 368—373, 420—434.

10 В. А. Гордлевский, Государство Сельджукидов Малой Азии, В кн.: Академик В. А. Гордлевский, Избранные сочинения т. 1, М., 1960, с. 29—218. Cl. Cahen, Pre-Ottoman Turkey. A general survey of the material and spiritual culture and history c. 1071—1330, London, 1968.

Եկեղեցու պատմության և տարբեր աթոռների միջև դիվանագիտական փոխհարաբերությունների հարցերը վաղուց ի վեր գրավել են բյուզանդագետների և հայագետների ուշադրությունը: Աշխատություններ են նվիրվել Կոստանդնուպոլսի պատրիարքության, Հռոմի պապության, Հայոց կաթողիկոսարանի և ասորի հակոբիկ պատրիարքության փոխհարաբերությունների պատմությանը¹¹: Սակայն ուսումնասիրությունների գերակշիռ մասը գրվել է եկեղեցու պատմության խնդիրների տեսանկյունից, հետազոտողները փորձ շնու կատարել այդ անցուղարձերը շաղկապել Մերձավոր արևելքում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական տեղաշարժերի հետ: Այդ իսկ պատճառով փորձել ենք ընդգծել, որ տարբեր եկեղեցական կազմակերպությունների միջև ժամանակ առ ժամանակ փոխանակվող դեսպանագնացությունները և հարևան կրոնական համայնքների միջև բորբոքվող ծխադավանաբանական պայքարը իրականությունից կտրված սխուլաստիկ վեճ չեր, այլ արտացոլումն էր այն միջազգային-քաղաքական պայքարի, որը կրքեր էր բորբոքում առօրյա կյանքում, միմյանց դեմ էր հանում հակառակորդ պետությունների բանակները:

ԺԲ դարի քրիստոնեական եկեղեցիները միջազգային եկեղեցաքաղաքական հարաբերություններում նույն սանդղահարթակի վրա չեին կանգնած, ունեին շեշտակիորեն տարբերակվող նկրտումներ և հեղինակություն: Հռոմի պապական եկեղեցին խաչակրաց առաջին արշավանքների հաջող ելքից հետո չափազանց բարձր քաղաքական դիրք գրավեց ինչպես Արևմտյան Եվրոպայում, այնպես էլ Մերձավոր արևելքում:

11 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1912, 88. 961—1028, W. Norden, Das Papsttum und Byzanz. Die Trennung der beiden Mächte und das Problem ihrer Wiedervereinigung bis zum Untergange des byzantinischen Reichs (1453), Berlin, 1903; J. M. Hussey, Church and Learning in Byzantine Empire 867—1185, London, 1937; S. Der Nersessian, Armenia and the Byzantine Empire, Cambridge, Massachusetts, 1945, pp. 42—52; G. Every, The Byzantine Patriarchate (451—1204), London, 1962.

ԺԲ դարի արևմտաեվրոպական միջազգային իրավունքի տեսանկյունից Հռոմի պապությունը դիտվում էր ավատատիրական աստիճանակարգը գլխավորող տիրակալների առաջնորդ նա իր իշխանությունը պարտադրում էր Եվրոպայի գրեթե բոլոր պետություններին, օծում էր գերմանական՝ արևմտահռոմեական կայսրերին։ Զնայած վերջիններս ԺԱ—ԺԲ դարերում բազմիցս փորձեցին պապերից խլել նշված առանձնաշնորհումները և վերջ դնել հռոմեական կղերի արտոնյալ վիճակին, այնուամենայնիվ գերմանական կայսրերի քաղաքական պայքարը ավարտվեց Հռոմի պապության հաղթանակով¹²։

Բյուզանդական եկեղեցական կազմակերպությունը ենթարկվում էր պետությանը։ Եկեղեցական գործերում Կոստանդնուպոլսի պատրիարքի հետ միասին առաջնային դեր էր խաղում բյուզանդական կայսրը, որը համարվում էր Քրիստոսի փոխանորդը երկրի վրա¹³, Կոստանդնուպոլսի պատրիարքը կայսեր արտաքին ու ներքին քաղաքական ձեռնարկումների հետ կամակատարն էր, բյուզանդական տիեզերակալական գաղափարախոսության կրողը։ Բյուզանդիայի արտաքին նվաճողական քաղաքականությունը զուգորդվում էր գաղափարական զավթողամոլ քաղաքականության հետ, որով կայսրությունը ստիպում էր առանձին քրիստոնեական եկեղեցիների ղեկավարներին ընդունել օրթոդոքս եկեղեցու վարդապետությունը և գերազանցությունը։ Այդ իսկ պատճառով մեծ հետաքրքրություն են ներկայացնում Բյուզանդական կայսրության և Կոստանդնուպոլսի պատրիարքության քաղաքական և եկեղեցական փոխարարերությունները մյուս քրիստոնեական եկեղեցիների և պետությունների հետ։

Ի տարրերություն Կոստանդնուպոլսի օրթոդոքս եկեղեցու,

¹² R. Folz, La papauté médiévale: vue quelques-uns de ses historiens récents, RH, 1957, t. CCXVIII, p. 55.

¹³ L. Bréhier, Le monde Byzantin, t. II. Les institutions de l'Empire Byzantin, En série: L'évolution de l'humanité, Paris, 1919, p. 16, 432—439.

Հակոբիկ ասորիների պատրիարքությունը և հայկական կաթողիկոսարանը սեփական ազգային պետությունների լգոյության պայմաններում ձեռք էին բերել պետական կազմակերպությանը բնորոշ հատկանիշներ.

ա) միջազգային քաղաքական և եկեղեցական փոխհարաբերություններում հանդես էին գալիս իրենց ժողովուրդների անունից,

բ) իրավասու էին տնօրինելու քաղաքացիական և եկեղեցական դատական վեճերը, կարող էին նույնիսկ հաշտարար (կամ միջնորդ) դատավորներ լինելու հայկական իշխանությունների և նրանց հարեան պետությունների միջև,

գ) ստորագրում էին միջազգային եկեղեցական և քաղաքական բնույթի փաստաթղթեր:

Հակոբիկ ասորիների եկեղեցական կազմակերպության ղեկավարները, հայկական կաթողիկոսարանի համեմատությամբ, առանձնահատուկ դիրք էին գրավում իրենց ժողովուրդի հասարակական-քաղաքական կառուցվածքում։ Ասորի բնակչությունը փորձ չէր կատարում վերականգնելու սեփական ժողովուրդի պետական անկախությունը, այդ իսկ պատճառով ասորի հակոբիկյան հասարակության մեջ շկար սոցիալական որևէ կայուն խավ, որն իր գործունեությամբ հակոբունքը հակոբիկյան պատրիարքության եկեղեցաքաղաքան ձգտումներին։ Այդ եկեղեցու ղեկավարները իրենց գործողությունների մեջ շափազանց ազատ էին, նրանք փոխադարձարար օգնում էին օտարազգի, մանավանդ մահմեդական տիրականներին և ավատատիրական վերնախավին, պահանջելով այդ պետություններից անձեռնմխելի դարձնել իրենց եկեղեցու ունեցվածքն ու իրավասությունները և ազատորեն սեփական հավատքը դավանելու իրավունքը, պաշտպանում էին այլ կրոնական համայնքների ուսնձգությանը հակոբիկ բնակչության իրավունքները։

Ի տարբերություն հակոբիկ ասորական եկեղեցու, Հռոմեական կաթողիկոսարանը ներկայացնում էր մի ժողովուրդ, որը թեև ոչ հեռավոր անցյալում կորցրել էր սեփական անկախությունը, այնուամենայնիվ չէր գաղարել, ուղիներ

փնտրել անկախ պետականությունը վերականգնելու համար, ԺԲ
դարում Հայոց կաթողիկոսարանը ազգային պետականության
վերականգնման համար պայքարող ամենաուժեղ կազմակեր-
պություններից էր. Այս առումով մեզ հետաքրքրող հարցին
ճիշտ մոտեցում է ցուցաբերել ակադ. Աշոտ Հովհաննիսյանը.
«Հայաստանի և Անդրկովկասի Բագրատունիների գլխավո-
րած միասնությունը քայլայվելուց հետո՝ Հայ եկեղեցին հայ
ֆեոդալական միակ կազմակերպությունն էր, որ հավակնում
էր կարծես գրավել Հայ պետականության թափուր տեղը,
ներկայացնել Հայերին օտարների առաջ, բանակցություն-
ներ վարել նրանց հետ Հայ ժողովրդի անունից»¹⁴. Ահա այս
առումով ուշագրավ է կաթողիկոսարանի քաղաքական և դի-
վանագիտական պայքարը Փոքր Ասիայի և Մերձավոր արե-
գելքի պետական միավորումների; Երբեմն էլ Ռուբինյան Հայ-
կական իշխանության դեմ, ամեն գնով պաշտպանելու իր
ինքնուրույնությունը և շնորհվելու որևէ պետական միավորի
հետ: Այդ իսկ պատճառով Հայոց կաթողիկոսարանը ԺԲ դա-
րի 40-ական թվականներից մինչև ԺԲ դարի 90-ական թվա-
կանները իր նստավայրը շփոխադրեց որևէ Հայկական իշ-
խանության տարածք, այլ հետապնդելով «Համահայկական»
քաղաքական նպատակներ, գերադասեց մնալ մուսուլմանա-
կան պետություններին ենթակա Հոռոմկլա ամրոցի պաշտպա-
նության ներքո: Հայոց կաթողիկոսարանը ԺԲ դարի 30—70-
ական թթ. յուրահատուկ քաղաքական կուրս էր վերցրել Հա-
րեւան ժողովուրդների և եկեղեցական կազմակերպություն-
ների նկատմամբ: Մասնակցելով Կիլիկիայում և Հյուսիսա-
յին Ասորիքում ծավալված քաղաքական պայքարին, Հա-
յոց կաթողիկոսարանը փորձում էր Հաշտության եզրեր-
դտնել քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ փոխհար-
բերություններում: Նման դիրքորոշման հիմնական դրդա-
պատճառն այն էր, որ Հայկական բնակչությունը Կիլիկիա-
յում և Հյուսիսային Ասորիքում ապրում էր հույն, ասորի,

14 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ Հայ ազատագրական մտքի պատ-
ճառության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 266:

զատին քրիստոնյա բնակչության հետ կողք-կողքի: Պետականության հասնելու համար անհրաժեշտ էր այդ բոլոր ժողովուրդների քաղաքական և եկեղեցական կազմակերպությունների աջակցությունը: Այս իմաստով առանձնակի հետաքրքրություն է ձեռք բերում Հայոց կաթողիկոսարանի վոխհարաբերությունների ուսումնասիրությունը Բյուզանդական կան կայսրության և Կոստանդնուպոլսի պատրիարքության հետ եկեղեցիների միության բանակցություններ վարելու ընթացքում: Եկեղեցական այդ հարաբերություններն աշխատության մեջ դիտվում են ԺԲ դարի 30—70-ական թթ. Մերձավոր արևելքի քաղաքական պատմության հետնախորքի վրա: Հանգամանք, որը թույլ է տալիս նկատել եկեղեցական բանակցությունների քաղաքական շարժառիթները:

Ի՞աբկե վերը նշված ոչ բոլոր հարցերն են, որ աշխատության մեջ սպառիլ լուծում են ստացել, քանի որ այս մենագրությունը իր սուղ ծավալի մեջ հավակնություն շռնի պատասխանելու ԺԲ դարի 30—70-ական թթ. Կիլիկիայի Ռուբինյան իշխանության և Բյուզանդական կայսրության քաղաքական և եկեղեցական փոխհարաբերությունների պատմության բոլոր հարցերին:

ՄԿՁԲՆԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԺԲ դարի 30—70-ական թթ. հայ-բյուզանդական քաղաքական և եկեղեցական փոխհարաբերությունների պատմության բազմաթիվ խնդիրներ իրենց արձագանքն են գտել այդ ժամանակաշրջանի և հետագայի միջնադարյան քաղաքական բազմաժանր և բազմաթիվ սկզբնաղբյուրներում: Փոքր Ասիայի և Հյուսիսային Ասորիքի պետական միավորումներին սահմանակից Կիլիկիայի հայկական իշխանության արտաքին քաղաքականության ուսումնասիրությանը անհնար է ձեռ-

նամուխ լինել առանց հայկական¹, բյուզանդական², ասորական³, լատինական⁴ և մուսուլմանական⁵ արևելքի ժողովուրդների լեզուներով ստեղծված մատենագրությունների հաշվառման։ Մեզ հետաքրքրող պատմական սկզբաղբյուրներին անդրադարձած հետազոտողներից շատերը այդ աղբյուրները ըստ լեզվական պատկանելության բաժանում են տարրեր խմբերի, սակայն մինք կփորձենք աշխատության մեջ օգտագործված սկզբնաղբյուրները ներկայացնել ըստ ժամանակին պատկանելության, քանի որ մատենագրական յուրաքանչյուր ժամանակակից լեզվական խոշընդութին, ժա-

¹ Մեզ հետաքրքրող հայկական սկզբնաղբյուրների մասին տե՛ս Մ. Արելյան, Հայոց հին գրականության պատմություն, Երկրորդ գիրք (X—XX դդ.), «Երկեր», Հ. Դ., Երևան, 1970, էջ 86—256, և Հ. Բարձրյան, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (IX—XIII դդ.), Երևան, 1981։

² Բյուզանդական սկզբնաղբյուրների ընդհանուր բնութագրումներ տե՛ս K. Krumbacker, Geschichte der byzantinischen Litteratur von Justinian bis zum Ende des oströmischen Reiches (527—1453), München, 1897, S. 79—91, 274—286; H.—G. Beck, Kirche und theologische Literatur im byzantinischen Reich, München, 1959, S. 609—629; H. Hunger, Die hochsprachliche Profane Literatur der Byzantiner. B. I, München, 1976, S. 409—441.

³ Ասորական սկզբնաղբյուրների համար տե՛ս (A. Lüders, Die Kreuzzüge im Urteil syrischer und armenischer Quellen, Berlin, 1964, S. 5—16; A. Baumstark, Geschichte der syrischen Literatur, Bonn, 1922, S. 292—320; B. Raft, Краткий очерк истории сирийской литературы. Перевод с английского К. А. Тураевой, под редакции и с дополнениями проф. П. К. Коковцева. СПб., 1902, с. 175—204).

⁴ Այս անվան տակ նկատի ենք ունեցել արևմտահվայական և խաչակրաց արևելքի լատինագիր մատենագրությունը, որի մասին տե՛ս M. A. Зaborov, Введение в историографию крестовых походов (латинская хронография XI—XIII вв.), М., 1966.

⁵ Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի անցուղարձնական անդրադարձած պարսկա-արարական պատմական մատենագրության մասին տե՛ս Cl. Cahen, La Syrie du Nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, Paris, 1940, pp. 33—95; N. Elisséeff, Nur ad-Din. Un grand prince musulman de Syrie du temps des croisades (511—569 h./1118—1174), t. I, Damas, 1967, pp. 1—85.

ռայում է կոնկրետ նպատակի, հեղինակները ձգտում են պահպանել տվյալ գրական տեսակին բնորոշ ավանդական, տեղական յուրահատկությունները: Ըստ այդմ էլ, ներքո՞ից-յալ սկզբնաղբյուրները ներկայացնում ենք հետեւյալ ենթարաժիններում. ա) պատմագրություն, բ) վավերագիր, գ) պատմագեղարվեստական մատենագրություն, դ) հականառական գրականություն:

Դետք է նկատի ունենալ, որ այստեղ ի վիճակի շենք ամբողջությամբ ներկայացնել մեր ուսումնասիրած ժամանակաշրջանին և տարածքին վերաբերող բոլոր մատենագրական երկերը ու սահմանափակվում ենք միայն նրանցով, որոնք անմիջականորեն առնչվում են արծարծված հարցերին:

ա) Պատմագրություն

Հյուսիսային Ասորիքի և Փոքր Ասիայի պատմությանը նվիրված ժԲ—ժԳ դդ. պատմագրական սկզբնաղբյուրները քազմաթիվ են և բազմաբնույթ. պատմությունների կողքին մեզ են հասել ժամանակագրություններ և տարեգրություններ, որոնցից յուրաքանչյուրը մասնագետից պահանջում է ցուցաբերել առանձնահատուկ մոտեցում, քանի որ ներկայացնում է որոշակիորեն տարբեր պատմագրական ավանդույթ:

Աննա Կոմնենու (1081—1153) ժԲ դարի բյուզանդական պատմագրական դպրոցի լավագույն ներկայացուցիչներից է: ԺԲ դարի 30—40-ական թթ. շարունակելով իր ամուսնու՝ Նիկեփոր Վրիենոսի անավարտ աշխատությունը, նա շարադրել է իր հոր՝ կայսր Ալեքս Ա. Կոմնենոսի դարաշրջանի Բյուզանդական կայսրության պատմությունը⁶: Պատմագրու-

6 Այս աշխատության վերջին հրատարակությունը տե՛ս Anna Comnēna. Alexiade (règne de l'empereure Alexis I Comnèn 1081—1118)/Texte établi et traduit par B. Leib, t. I—III, Paris, 1945—1947.

Եշված հրատարակությունը մենք ձեռքի տակ շենք ունեցել, այդ իսկ պատճառով օգտագործել ենք Դյուկանժի կազմած բնագիրը (‘Αννής τῆς Κορωνής: πιστούργεννή του χριστιανίσσης Ἀλεξιας.—In: PG, t. 131, p. 59—1307): Աշխատանքում համախակի օգտագործում ենք նաև այդ բնագրի ուսւերեն թարգմանությունը (Анна Комнина. Алексиада/ Вступительная статья, перевод, комментарий Я. Н. Любарского, М., 1965).

Հին փառաբանում է Ալեքս Ա.-ի պետական գործությունը, այդ իսկ պատճառով պատրմագրության մեջ այս աշխատանքը համառոտակի անվանվում է «Ալեքսիադա»⁷: Առանց հաշվի առնելու այս երկը անհնարի է անդրադառնալ Հովհաննես Բ և Մանուել Ա Կոմնենոսների ժամանակաշրջանի Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության խնդիրներին ու կայսրերի հեռագնաց զավթողական ռազմարշավների ուսումնասիրությանը: Վերոհիշյալ կայսրերը որոշ շտկումներով շարունակում էին Ալեքս Ա Կոմնենոսի իշխանության տարիներին սկսված Փոքր Ասիայի և Հյուսիսային Ասորիքի տարածքների վերագրավման քաղաքականությունը: «Ալեքսիադայում» նկարագրվում են Ալեքս Ա.-ի արևելյան ռազմարշավները, բացահայտվում են Կոմնենոսների դարշութանի բյուզանդական դիվանագիտության որոշ սկզբում բային մոտեցումներ, սակայն մեր աշխատանքի համար այս երկը հատկապես հետաքրքիր է նրանով, որ այնտեղ է պահպանվել Դեարոլյան համաձայնագրի բնագիրը, կնքված 1108 թ. Բոհեմիոնդ Անտիոքացու և Բյուզանդական կայսրության միջև⁸: Այդ փաստաթուղթը թույլ է տալիս հետազոտողին թափանցել Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության տիեզերակալական էության խորքերը Հովհաննես Բ Կոմնենոսի Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք ծրագրված ռազմարշավի (1136—1138) նախօրյակին, քանի որ ԺԲ դարի Կոմնենոս տիրակալների նվաճողական արտաքին քաղաքականությունը արևելքում արդարացնելու համար պատմագիրները հաճախ վկայակում են Դևարոլյան հաշտության պայմանագիրը⁹:

⁷ Հ. Հովհանքը իրավացի է, անվանելով Աննա Կոմնենի աշխատությունը «Բյուզանդական մեծ արձակ — վեպ Ալեքս Ա կայսեր մասին» (տե՛ս H. Hunger, նշվ. աշխ., Բ. I, էջ 404):

⁸ E. Honigmann, Die Ostgrenze des byzantinischen Reiches von 363 bis 1071, Bruxelles, 1935, p. 125—130; Я. Н. Любарский, М. М. Фрейденберг, Девольский договор 1108 г. между Алексеем Комнином и Боземундом, ВВ, т. 21, 1962, с. 260—274.

⁹ Այդ մասին վկայում է Միքայել Ասորին, «Երր նա (Հովհաննես Կոմնենոսը—Ա. Բ.) չկարողացավ գրավել այն (Անտիոքը—Ա. Բ.), Զու-

Ալեքս Ա-ին հաջորդած երկու բյուզանդական կայսրերի իշխանության դարաշրջանի պատմությունը շարադրում է Մանուել առաջինի արքունական դպիր (օ թշւալւած շրաբրաւած) Հովհաննես Կիննամոսը: Թեև պատմագրության մեջ նրա աշխատանքը երբեմն անվանվում է «Համառոտ պատմություն» (չուրման)՝, այնուամենայնիվ մենք այն կանվանենք «Պատմություն»¹⁰: Այդ երկը պահպանվել է ժամանակի մի ձեռագրում, որից կատարվել են հետագա բոլոր բնորդինակությունները: «Պատմության» մեջ հասած բնագիրը ընդհատվում է 1176 թ. ղեպքերի նկարագրության մասում, ուր պատմիշի միտքը մնում է անսավարտ¹¹: Հովհաննես Կիննամոսը ընդհանուր գծերով է ներկայացնում Հովհաննես թ Կոմնենոսի կառավարման ժամանակաշրջանը, ավելի հանգամանորեն անդրադառնալով Մանուել Ա-ի իշ-

լինը (Եփեսիայի տերը—Ա. Բ.) եկավ նրան փետրելու և նրանք հաշտություն կնքեցին. պայմանով, որ երբ կայսրը տիրանա Ասորիթի ասրածացրանին (des regions), այսինքն՝ Հայեափին և մնացածին (du reste), նա դրանք կատ ֆրանկներին, իսկ ֆրանկները նրան կհանձնեն Անտիոքը, ինչպիս նրանք խոստացել էին նրա համբ Ալեքսին» (Chronique de Michel le Syrien patriarche Jacobite d'Antioche (1166—1199)/Editer pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t. III, Paris, 1905, p. 245 (այսուհետեւ—Մ. Տ., տ. III).

¹⁰ *Ioannis Cinnamti, Epitome rerum ab Ioanne et Alexio (sic) Comnenis gestarum/Ad fidem codicis Vaticanani recensuit Augustus Meineke.* Bonnae, 1836 (այսուհետեւ I. С.): Հունարեն բնագրի հետ միասին մենք հավասարապես օգտագործել ենք նաև Հովհաննես Կիննամոսի երկի ուսաբեն թարգմանությունը (տե՛ս Կраткое обозрение царствования Иоанна и Мануила Комнинов (1118—1180). Труд Иоанна Киннама/Перевод под редакцией профессора В. Н. Карпова, СПб., 1859).

¹¹ *Տե՛ս P. Wirth, Zur Frage nach dem authentischen Titel von Johannes Kinnamos' Geschichtswerk,—Byzantion, t. 41, 1971, S. 375—377.*

¹² *Տե՛ս M. Фрейденберг, Труд Иоанна Киннама как исторический источник, ВВ, т. XVI (1959), с. 30.*

խանության ժամանակաշրջանին¹³: Հովհաննես Կիննամոսը մանրամասնորեն ներկայացնում է Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականությունը, նկարագրում է Հովհաննես թ-ի և Մանուել Ա-ի Կիլիկիա-Հյուսիսասորիթյան ռազմարշավները, հիշատակում է Կիլիկիայում կառավարած բյուզանդական պաշտոնյաներին, անդրադառնում է կայսերական դիվանագիտության կարևորագույն ձեռնարկումներին:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի պատմական գործիչների, դեպքերի ու իրադարձությունների մասին հանգամանալից պատմում է նաև ԺԲ դարի վերջին և ԺԴ դարի սկզբին ապրած բյուզանդական մատենագիր Նիկետաս Խոնիատեսը: Վերջին երկու Կոմնենոսների (Ալեքս թ-ի և Անդրոնիկոս Ա-ի) կառավարման տարիներին Նիկետաս Խոնիատեսը Բյուզանդական կայսրության վարչական ապարատում զբաղեցրել է տարբեր պաշտոններ, այնուհետև ծառայության է անցել Անգելոսների մոտ, նշանակվել է Փիլիպպոլսի (Ներկայիս Պլովդիվ) կառավարիչ: 1204 թ. լատինների կողմից Կոստանդնոպոլսի գրավումից հետո, Նիկետաս Խոնիատեսը որոշ ժամանակ թափառելով Բյուզանդիայի տարբեր շրջաններում, բնակություն է հաստատում (1206/7). Բյուզանդական կայսրության նոր մայրաքաղաք Նիկիայում՝ Լասկարիսների արքունիքում, ուր ապրում է մոտավորապես մինչև 1216 թ.: Այդ ընթացքում (1206—1216) Նիկետասը ավարտում է իր պատմական երկը: Նիկետաս Խոնիատեսը իր աշխատությունը սկսում է Ալեքս Ա-ի մահով (1118 թ.) և շարադրանքը հասցնում է մինչև 1206 թ. իրադարձությունները¹⁴: Բայց Ֆ. Շալանդոնի, Նիկետաս Խոնիատեսը

13 Այս հանգամանքը նկատի ունի Հ. Հովհաննես, երբ այս երկի վերնագրի մասին գրում է. «...պաճուճազարդ վերնագիրը ցույց է տալիս, որ Հովհաննեն վերաբերում է միայն Հովհաննես թ-ի կառավարմանը, այդ իսկ պաճուճառով աշխատության իսկական վերնագիրը պետք է համարել ձարձրությունը» (H. Hunger, նշվ., Բ. I, Տ. 410):

14 Տե՛ս Nicetae Choniatae Historia/Recens uit Icarus Aloysius

Հովհաննես Բ և Մանուել Ա Կոմնենոսների կառավարման ժամանակաշրջանի պատմությունը գրել է 1183—1204 թթ. Բյուզանդագիտության մեջ երկարաժեք վիճականություններից հետո հաստատվել է այն ճշմարիտ կարծիքը, որ Նիկետաս Խոնիատեսը ծանոթ է եղել Հովհաննես Կիննամոսի պատմությանը և, ամենայն հավանականությամբ, օգտվել է նրանից¹⁵: Ի դեպ, այս տեսակետը լիովին իրավացի է միայն Հովհաննես Բ Կոմնենոսի ժամանակաշրջանի իրադարձությունների շարադրման մասի վերաբերյալ: Մանուել Ա Կոմնենոսի իշխանության ժամանակաշրջանի իրադարձությունների նկարագրման մասում հիշյալ երկու բյուզանդական պատմիչները հեռանում են միմյանցից և՝ փաստերի ընտրության, և՝ շարադրանքի հաջորդականության, և իրադարձությունների գնահատության խնդրում¹⁶: Նկատելի է նաև, որ Նիկետաս Խոնիատեսը լինելով 1204 թ. Կոստանդնուպոլսի առման ականատեսը, այդ տեսանկյունից է դիտում Բյուզանդիայի ողջ ժմ դարի պատմությունը: 1204 թ., շորորդ խաչակրաց արշավանքից հետո, Բյուզանդական կայսրության տրոհման արմատները փնտրելով նախորդ մի քանի կայսրերի անհեռատես քաղաքականության մեջ, Խոնիատեսը ի հակադրություն Կիննամոսի, որը հերոսական գծերով է ներկայացնում Մանուել Ա-ի գործունեությունը, երբեմն կծու հումորով ժաղըռում է նրան, երբեմն էլ՝ նվազեցնում է քաղաքական գործերում այս կայսեր դերը¹⁷:

van Dieten, In: *Corpus Fontium Historiae Byzantinae*, v. XI 1/2 Berolini et Novi Eboraci, 1975 (այսուհետև՝ N. Ch.): Օգտվել ենք նաև ուսւերեն թարգմանությունից (տե՛ս Հոկտա Խոնատ, История/Перевод под редакцией проф. В. И. Долоцкого. Т. I (1118—1185), СПб., 1860).

¹⁵ F. Chalandon, *Les Comnènes*, t. II(1), p. XXIV.

¹⁶ V. Grecu, Nicetae Choniatis a-t-il connu l'histoire de Jean Clinnamos ?, REB, t. VII, f. 2, 1950, p. 194—204; H. Hunger, Die hochsprachliche..., B. I, S. 410; A. П. Каждан, Еще раз о Киннаме и Никите Хониате, In: BS, XXIV, 1963, p. 4—31.

¹⁷ А. П. Каждан, Еще раз..., с. 30.

¹⁸Տե՛ս Հ. Гроссу, Отношения византийских императоров

Եթե վերոհիշյալ բյուզանդական մատենագիրների երկրում առանձնացվում է յուրաքանչյուր կայսեր գործունեությունը և կարծես ամփոփ գնահատականի են արժանանում նրանց ձեռնարկումները, ապա՝ այլ բնույթի երկեր են ԺԴ դարի «Հայոց պատմությունները»։ Հատկանշական է, որ շնայած այդ ժամանի երկերի հայկական մատենագրության մեջ ունեցած դարավոր ավանդներին, ԺԲ դարում «Հայոց պատմություն» չստեղծվեց։ Այդ տեղատվության հիմնական պատճառներից մեկն այն էր, որ հայ ժողովուրդը կորցրել էր իր պետականությունը, իսկ կրթություն ստացած անհատների մի նշանակալի մասը դեգերում էր հայկական լեռնաշխարհի սահմաններից գուրս։ Հկար քաղաքական կամ եկեղեցական մի այնպիսի կազմակերպություն, որը շահագրգուված լիներ նմանատիպ երկի ստեղծմամբ։ Սակայն արդեն ԺԴ դարում պատմական Հայաստանի մշակության նշանավոր կենտրոններում կրկին փորձեր են կատարվում ստեղծելու այդ մատենագրական տեսակին պատկանող երկեր, որոնց մեջ առանձնակի տեղ են գրավում Կիրակոս Գանձակեցու (1201/2—1271) և Վարդան Արևելցու (ԺԴ դար) «Պատմութիւն Հայոց»-ները։ Զնայած այս երկու պատմագիրներն էլ իրենց երկերում մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի իրադարձությունները շարադրում են հետեւելով ԺԲ դարի սկզբանայրուններին, այնուամենայնիվ հիշյալ պատմիչների քաղմաթիվ դիտարկումներ, առանձին իրադարձությունների մասին կոնկրետ վերաբերմունքով, օգնում են ժամանակաշրջանի խառն քաղաքական իրադարձությունների ընկալմանը։ Կիրակոս Գանձակեցին¹⁹, որպես կանոն վերապատմում է ԺԲ դարի հայունի ժամանակագիրներ Մատթեոս Ուոհայեցու, Գրիգոր Երեցի և Սամուել Անեցու երկերի համապատասխան հատվածները, սակայն երբեմն շփոթում է անձնավորությունները, խստորեն չի հետևում ժամանակագրական հերթա-

Иоанна II (1118—1143) и Мануила I (1143—1180) Комникив к вопросу об унии с западом, Труды Киевской духовной Академии (отдельный оттиск), 1912, с. 15.

19 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Ա. Սելիբ-Թնահցանյանի, Երևան, 1961:

կանությանը, նույն իրադարձությունը պատմում է մի քանի անգամ²⁰:

Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմությունը» Հայոց արևելյան կողմերում ապրող, քննող պատմիչի ստեղծագործություն է: Հեղինակը հաճախ օգտագործում է վավերագրեր²¹: Կիրակոս Գանձակեցու երկը բազկացած է 65 գլուխներից, որոնցից միայն առաջին երկուսն են, ուր կարելի է տեղեկություններ գտնել ԺԲ դարի իրադարձությունների վերաբերյալ: Պետք է նշել, որ մեզ հետաքրքրող մասում Գանձակեցին չի տալիս ժամանակաշրջանի ամբողջական պատմությունը, նրա շարադրանքը թուցիկ է, քննվող հարցերի քանակը՝ սահմանափակ:

Կիրակոսի երկի համեմատությամբ բավականաշատ մանրապատում է Վարդան Արևելցու «Պատմութիւն տիեզերական» աշխատությունը²², ուր հեղինակը ժամանակագրական հերթականությամբ շարադրում է ԺԲ դարի 30—70-ական թթ. անցուղարձը: Վարդանն իր աշխատության մեջ, բացի հայալեցու սկզբնաղբյուրներից, առատորեն օգտվել է Միքայել Ասորու Ժամանակագրությունից, որը 1248 թ. հայ պատմիչի աջակցուն մասնակցությամբ թարգմանվել է հայերեն: Վարդանի երկում ես, ինչպես նկատեցինք Կիրակոս Գանձակեցու պատմության մասին խոսելիս, իրադարձությունների նկարագրության առանցքը Հայաստանի արևելյան մասում կատարվող անցուղարձերն են: Մեզ հետաքրքր-

20 Բերենք միայն մեկ հատկանշական օրինակ. «Զոր լուեալ կալորն յունաց, որ Ալեքս կոչիր, առաքէ քաղսում զօրօթ ի վերայ իշխանացն Հայոց՝ Ստեփանեայ և Թորոսին զԱնգրուիկոսա (Կիրակոս Գանձակեցի, էջ 109—110): Այսուեղ Ալեքս կայսեր անվան հիշատակությունը ակնհայտ վրիպում է, սպասելի էր Մանուել անձնանվան հիշատակությունը:

21 Կիրակոս Գանձակեցի, էջ 121—147, 169—170, 295—300 և այլն:

22 Վարդանի պատմական երկասիրությունը ունի երկու հրատարակություն, որոնք բազմաթիվ դրվագներում լրացնում են մեկը մյուսին: Այդ հրատարակություններն են. Մեծին Վարդանայ թարձրաբերդեցու Պատմութիւն Տիեզերական, ի լոյս ընծայեաց Սկրտիչ էմին, Մոսկվա, 1861 և Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862 (աւտոհետեւ՝ Վարդան, 1861 և Վարդան, 1862):

ՔՐՈՌՈՂ պատմական անցքերին անդրադառնում է նաև ԺԴ դարի պատմիչ Ստեփանոս Օքբելյանը Սյունյաց նահանգի պատմությանը նվիրված աշխատության մեջ²³:

ԺԲ դարի 30—70-ական թթ. պատմական իրադարձությունները ավելի հանգամանորեն են նկարագրված մեզ հասած ԺԲ դարի ժամանակագրություններում և տարեգրություններում: Դրանց մեջ մասնավոր ուշադրության են արժանի Մատթեոս Ուոհայեցու և նրա երկի շարունակող Գրիգոր Երեցի Տարեգրությունները²⁴: Մատթեոս Ուոհայեցու երկը բաղկացած է երեք մասից (և ընդգրկում է 952—1128 թթ. իրադարձությունների նկարագրությունը), որոնցից միայն երրորդն է իր ժամանակագրական սահմաններով առնչվում մեր հետազոտության նյութին: Ուղղակի վկայություն չունենք այն մասին, թե հատկապես ե՞րբ է Մատթեոսը ձեռնամուխ եղել Տարեգրության շարադրանքին²⁵, սակայն հայտնի է, որ առաջին երկու մասերը գրելուց հետո «զամս» տասն,— ինչպես գրում է հեղինակը,— «լինին արարաք հոգս վասն այս ժամանակագրութեանցս և թողեալ էաք ի բացեայ զարուեստ գրչութեանցս ...»²⁶: Ուոհայեցին երկարատև ընդմիջումից հետո ձեռնամուխ է լինում երրորդ մասի շարադրմանը. «Եւ արգ սկսաք ասել և զայլ ևս զամաց քսան և հնդից²⁷ և երեսուն՝ լիցի վճարումն գրոցս, վասն սի ամեաց թուականութիւնս Հայոց բազում նե-

23 Պատմութիւն նահանգին Սիսական, արտքիալ Ստեփանոսի Օքբէւան արքեպիսկոպոսի Սիսնեաց, Թիֆլիս, 1910:

24 Օգտագործել ենք՝ Մատթեոս Ուանայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898 (այսուհետև՝ Մատթեոս):

25 Ակադ. Հր. Աճառյանը ենթադրում է, որ Մատթեոսը սկսել է շարադրել իր երկը 1113 թ. (տե՛ս Հ. Անանեան, Մատթէոս Ուոհայեցի, ՀԱ, 1953, էջ 352, հմմտ. նաև Մատթեոս Ուանայեցի, ժամանակագրություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Հր. Բարթիկյանի, Երևան, 1973, էջ XI):

26 Մատթեոս, էջ 277:

27 Երտառազմելյան հրատարակության մեջ պահպանվել է մեր կարծիքով ավելի ճիշտ ընթերցում՝ «եօթանց» (Պատմութիւն Մատթէոսի Ուոհայեցոյ, Երևանալէմ, 1859, էջ 345):

դութեամբ. և ի նոյն հայրապետութեան *Sēshen* Գրիգորիսի
և թագաւորութեանն Յունաց Ալէքսին դարձաք յօժարական
մտօք և սկսաք առ ի պատմել զկատարածն և զնեղութիւնն
շար ժամանակիս այսորիկ»²⁸; *Մեջքերված հատվածից հատա-
կորեն երեսում* է, որ հեղինակը գրքի երրորդ մասի շարադ-
րանքը սկսելով ՇԾ (=1101/2) թվականի դեպքերի շա-
բագրանքով, երբ գահակալում էին Գրիգոր Բ (1066—1105)
Հայոց կաթողիկոսը և Ալեքս Ա Կոմնենոս (1081—1118)
բյուզանդական կայսրը, նպատակ է ունեցել աշխատությունը
ավարտել 1131/2 թ. իրադարձությունների արձանագրո-
մամբ: Զնայած վաղարշապատյան հրատարակության (1898)՝
մեջ նախկին տպագրության «քսան և եօթանց»-ի փոխա-
րեն ընտրված է «քսան և հնգից» ընթերցումը, սակայն այս
վերջինը չի համապատասխանում իրերի վիճակին, քանի որ
երրորդ մասը սկսելով ՇԾ թվականին տեղի ունեցած դեպ-
քերով, տարեգիրը իր «արուեստաւոր քննութիւնը» հասց-
նում է մինչև Հայոց ՇՀԵ (1128/9) թվականը, տարի առ
տարի նկարագրելով իրեն զբաղեցնող իրադարձությունները²⁹
(ՇՀԵ—ՇԾ=ԻԷ): Այս համադրությունից պարզվում է, որ
«քսան և հնգից»-ը գրչագրական սխալ է: Նման ենթադրու-
թյունն կատարելուց հետո, անհրաժեշտ է անդրադառնալ *Մատ-
թեոս Ուռհայեցու Տարեգրության* ամենավերջին հատվածին,
ուր խոսվում է ՇԶԵ (1136/7) թ. իրադարձությունների մա-
սին: Այս հատվածի և *Մատթեոսի* բուն երկի մեջ կա ուժ
տարվա ընդմիջում³⁰: Այս հատվածը շէր կարող գրվել եղե-
սացի *Մատթեոսի* կողմից³¹, քանի որ նրա հեղինակը Քեսու-

28 Մատթեոս, էջ 280—281:

29 Նույն տեղում, էջ 277—367:

30 *Մատթեոսի Տարեգրության* այս մասում շեն հիշատակվում միայն ՇԿԵ (1116/7) և ՇՀ (1121/2) թթ., մնացած բոլոր տարիները հերթակա-
նությամբ արձանագրվել են:

31 *Մատթեոս Ուռհայեցին* երրորդ գրքի սկզբում շեշտում է, որ ինքն իր երկը գրել է. «ի քաղաքս Միջագետաց յԱւոհա ժողովեալ զրեցաք» (*Մատթեոս*, էջ 278), երկրորդ գրքի սկզբում անվանում է իրեն և *Մատ-
թեոս Ուռհայեցին* (էջ 113):

նից է: Այդ մասին է վկայում հետևյալ արտահայտությունը՝
«պաշտրեալ քաղաքին Քեսնոյ՝ մերոյ իշխանին Պաղտունին
կողեցելոյ», հանգամանք, որը ընդհանրապես բնորոշ չէ իրեն
Ռւուհայեցի անվանող Մատթեոսին: Սակայն նման արտա-
հայտությունները հատկանշական են Գրիգոր Երեցին, որը
սեփական աշխատության մեջ իրեն բիզմից Քեսունցի է
անվանում³²: Հետեւապես, պետք է ընդունել, որ Մատթեոս
Ռւուհայեցու Տարեգրությունը ավարտվում է Հայոց ՇՀԷ
վականի գեպքերի մասին շարադրանքով³³:

Գրիգոր Երեցի Տարեգրությունը Մատթեոս Ռւուհայեցու
երկի օրգանական շարունակությունն է, և ամբողջովին նը-
պիրված է մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի իրադարձու-
թյունների նկարագրությանը, այն սկսվում է ՇԶԶ (=1137/8)
թ. դեպքերի շարադրանքով և հասնում է մինչև ՌԺԱ

32 Մատթեոս, էջ 370 «Եւ ես նուաստ երեցս Գրիգոր սրտապնդելով
գեսաւ ժրանալ ի պահպանութիւն քաղաքիս (իմա Քեսուն—Ա. Բ.)», 398
«զի՞նզ զամենենեան զտեսողս, որք էաք ի քաղաքին Քեսնոյ...»:

33 Նախորդ բոլոր ուսումնասիրողները հնագործ են, որ Մատթեոս
Ռւուհայեցին իր երկը հասցրել է մինչև ՇԶԵ (1136/7) թվականը: Հր.
Անառյանը գրում է. «Մատթեոս պետք էր շարունակելու այս տեղին (այ-
սինքն՝ 1101/2 թ.—Ա. Բ.) և թիրեր նախ մինչև 1128¹ որ էր գրութեան
արտած ժամանակը» Տիշդ 27 տարի, յետոյ այդ թուականէն ես շարու-
նակել եւ գալ մինչև 1137 թուականը՝ այն է ընկամէնը 36 տարի... Ան-
համաձայն է միայն վերի. ուսի երեսուն լիցի վճարումն գրուց խոսրվ՝
փոխանակ 36-ի ասոր համար ալ նաստատ կերպով կրնակ ըսել թէ
փորդիկ սիսալ մըն էօ (շըատառը մերն է—Ա. Բ.) կամ «Հարկ էր որ
Մատթեոս՝ երրորդ գիրքը գրել սկսած ատեն՝ եպատակ գրած ըլլար պատ-
մութիւնը հասցնել մինչև 1137² որ էր երրորդ գիրքը գրել սկսած թուա-
կանէն անմիջապէս առաջի տարին» (Հ. Անառյան, Մատթեոս Ռւուհայեցի,
ՀԱ, 1953, էջ 353): Հ. Բաբելիկյանը համամիտ է Հ. Անառյանի կարծիքին
(ՀՀմտ. Մատթեոս Ռւուհայեցի, ժամանակագրություն, Երևան, 1973, էջ
XII, հմատ. նաև Նույն տեղում, Գ մասի ժանեթ., 2.6, էջ 136, 137):
Ակադ. Մանուկ Արեգյանը ևս նկատելով վերհիշյալ անհամաձայնությունը
գրում է. «Այսպիս ուրեմն, նա (Մատթեոս Ռւուհայեցին—Ա. Բ.) մտադիր
է եղել իր ժամանակագրությունը հասցնել մինչև ՇԶ (=580—551/2 =
= 1131/2) թվականը, բայց թիրել հասցրել է մինչև 1136 թվականը (տե՛ս
Մ. Արեգյան, Երկեր, Երևան, 1970, հ. Դ, էջ 88):

Մատթեոսը Տարեգրության երրորդ մասի նախարանը (Մատթեոս, էջ

(=1162/3) թ.՝: Տարեգիրը հետևելով իր նախորդի շարադրականակին, հանգամանորեն անդրադառնում է Հյուսիսային Ասորիքի, Կիլիկյան իշխանության, խաչակիր իշխանությունների և իկոնիայի սովորականության տարածքում կատարվող իրադարձություններին, որով անփոխարինելի սկզբնաղբյուր է դառնում հիշյալ պետությունների այդ ժամանակաշրջանի պատմության համար: Ի տարրերություն Մատթեոս Ուռհայեցու, որի երկում պատմական իրադարձությունների առանցքը եղեսիան է, Գրիգոր Երեցի Տարեգրությունում իրադարձությունների կենտրոնում Քեսուն քաղաքըն է:

ԺԲ դարի 30—70-ական թթ. հայ-բյուզանդական քաղաքական փոխարական փոխհարաբերություններին անդրադամած ժԴ դարի Տարեգրությունների մեջ առանձնանում են Սմբատ Դունդստաբելի (Սպարապետ) անունով ներկայացվող Տարեգրքի երկու խմբագրությունները³⁵: Մինչև ժԲ դարի 60-ական թթ. դեպքերի շարադրանքը պարունակող մասում մեզ հե-

277—278), հավանաբար գրել է ամբողջ գիրքը շարադրելուց հետո, քանի որ ասում է թե այս հատվածում շարադրված է քսանյոթ տարվա պատմություն: Մատթեոսը, հերեւուն՝ լիցի վճարումն զրցու, արտահայտությամբ շեշտում է երրորդ գրքի շարադրանքի ավարտման թվականը $60+30+551/2=1131/2$ թ.): Ամենայն հավանականությամբ Մատթեոսը նշված թվականին ավարտել է իր Տարեգրությունը: Եղնելով այս հաշվարկից կարելի է ճշգրտուեն թվագրել այս երկի յուրաքանչյուր մասի գրման ժամանակը: Այս փաստարկով էլ կարելի է հերթել Հր. Աւագանի և Մ. Արեգանի ենթադրությունը:

34 Մատթեոս, էջ 367—429:

35 Սմբատի Տարեգրության համառոտ խմբագրությունը հրատարակվել է երկու անգամ, որոնցից յուրաքանչյուրն ունի որոշակի բնագրական տարրերություններ (տե՛ս Սմբատայ Սպարապետի եղբօր Հեթմոյ առաջնոյ արքայի Հայոց Պատմություն Յունաց ի Կոստանդնուպոլիս և Հայոց Մեծաց ըստ կարգի ժամանակաց, Մոսկվա, 1856, Տարեգիրք արարեալ Արմբատայ Սպարապետի Հայոց որդույ Կոստանդնեայ կոմսին Կոռիկոսոյ. ի ըստ ընծայեաց հանգերձ ծանօթութեամբ Կ. Շահաղարեանց, Փարիզ, 1859): Այս Տարեգրության ընդարձակ խմբագրությունը պահպանվել է ժԴ—ժԴ դարի մի եղակի ձեռագրով (տե՛ս Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956):

տաքրքրող աշխատության հիմնական սկզբնաղբյուրը Մատթեոս Ուտհայեցու և Գրիգոր Երեցի Տարեգրություններն են, սակայն 70-ական թթ. պատմական իրադարձությունների շարադրման հատվածում այս երկը դառնում է ինքնուրույն և եղակի սկզբնաղբյուր: Սմբատի Տարեգրքի ընդարձակ տարբերակի լույս ընծայումից հետո, հայագիտական գրականության մեջ կասկածի տակ է դրվել այդ երկի հեղինակային պատկանելության հարցը³⁶:

ԺԲ դարի ժամանակագրությունների մեջ միջնադարում ձեռնարկի արժեք է ունեցել Սամուել Անեցու «Հաւաքմունքի զրոց պատմագրաց» աշխատությունը³⁷: Այն ներկայացնում է աշխարհի արարշագործությունից մինչև ԺԲ դարի 60-ական թթ. պատմության համառոտ ժամանակագրական շարադրանքը, որին զուգահեռ տրվում են ցանկեր ժամանակագրական տարբեր համակարգերի զուգահեռ թվագրություններով: Մեր տրամադրության տակ եղած այս երկի ընագրի համեմատական հրատարակությունը շի արտացոլում Սամուել Անեցու աշխատության նախնական վիճակը: Այն լի է հետագայի բազմաթիվ ընդմիջարկություններով ու հավելումներով, որոնցից շատերը վերաբերում են ԺԲ դարի 30—70-ական թթ. պատմության դեպքերին³⁸: Մեզ հետաքրքրող պատմաշրջա-

36 Ի. Հ. Թարայան, Սմբատ Սպարապետը և «Տարեգրքի» հեղինակի հարցը, ՊԲՀ, 1976, № 1, էջ 243—253, La Chronique attribuée au Connétable Smbat/Introduction, traduction et notes par G. Dédéya Paris, 1980, 20—26; Տե՛ս նաև այս վերջին գրքի մասին գրախոսությունը, 2. Գ. Մարգարյան, Ա. Ա. Բողոյան, ՊԲՀ, 1981, № 2, էջ 285:

37 Սամուելի քահանայի Անեցու Հաւաքմունքի գրոց պատմագրաց յաղաղ զիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայիս ժայրաբազ արարեալ, առաջարանով, համեմատութեամբ, յաւելուածներով և ծանօթագրութիւններով Ա. Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1893 (այսուհետև՝ Սամուել):

38 Սամուել Անեցու ներկա հրատարակության ընագրի բազմաթիվ հատվածներ քաղված են Միքայել Ասորու 1248 թ. հայերեն թարգմանությունից (Հմմտ. Սամուել, էջ 130 (Ծ24), էջ 131 (Ծ25), 136 (ՈՒ) և այլն): Հուսանք, որ ընագրի նոր հրատարակությամբ, Սամուելին պատկանող երկի ընագրից մաքրված կլինի հետագայի բոլոր հավելումներից:

Նին անդրադարձած ժամանակագրությունների մեջ հիշատակելի են նաև Մխիթար Այրիվանեցու³⁹ երկը և ԺԳ—ԺԸ պարերի Մանր ժամանակագրությունները, որոնք հրատարակել է մեծավաստակ հայագետ Վազգեն Հակոբյանը⁴⁰:

Հյուսիսային Ասորիքի, Կիլիկիայի և Փոքր Ասիայի ժք գարի 30—70-ական թթ. տեղի ունեցած իրադարձություններին ամենայն բարեխղճությամբ անդրադարձել է ժք գարի Հակոբիկյան եկեղեցու պատրիարք Միքայել Ասորին (1166—1199) իր ժամանակագրության մեջ⁴¹, որը սկսվում է աշխարհի արարշագործությամբ և ավարտվում է 1195 թ. դեպքերի նկարագրությամբ⁴²: «Ժամանակագրությունը» բաղկացած է 21 գրքից, որոնք մասնաւուած են գլուխների, ուր պուգահեռաբար շարադրված են բաղաքական և եկեղեցական պատմության անցուղարձերը, մի երրորդ սյուն էլ հատկացված է բնական աղետների, հիվանդությունների և այլեւվայլ դեպքերի արձանագրմանը: Մեզ հետաքրքրող մասերում Միքայելն օգտվել է Բարսեղ Եղիսացու⁴³, Հովհաննես Քեսունցու և Դիոնիսիոս Բար Սալիբիի աշխատություններից⁴⁴, Հակոբիկ պատրիարքարանի դիվանատան վավերագրերից⁴⁵: Միքայել Ասորին անտարբեր չէ Կիլիկիայում:

³⁹ Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց. ի լոյն բնծայեաց Սկրտիչ էմին, Մոսկվա, 1850.

⁴⁰ Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դգ., հ. I—II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951—1956:

⁴¹ Միքայել Ասորու ժամանակագրության ասորերին բնագիրը գիտությանը մատչելի է զարձել միայն ժթ զարի վերըութ. Chronique de Michel le Syrien patriarche Jacobite d'Antioche (1163—1199)/Éditée par la première fois et traduite en français par J.-B. Chabot, 1899—1910, լ. I—IV.

⁴² M. S., լ. I, թ. XXIII.

⁴³ Մ. Զարորութ ալաւ ասորի հեղինակին սիալմամբ անվանում է «Հայկական պատմիչ» (տե՛ս Մ. Ա. Զաբօրօս, Կ վօրոս օ չնաշնչութեան իշխանական պատմիչներ (մասնաւուած աշխատության վերըութ), ԻՖԺ, 1968, № 3, ս. 158).

⁴⁴ M. S., լ. I, թ. XXXIV—XXXV.

⁴⁵ Այդ մասին է վկայում ժթ գրքի Յ գլուխը, ուր հատվածաբար բերված են Հայ-բյուզանդա-ասորական ժթ զարի 70-ական թթ. եկեղեցական

Հյուսիսային Ասորիքում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ, ժամանակ առ ժամանակ ցույց է տալիս իր վերաբերմունքն ու բունած դիրքը, այդ իսկ պատճառով, քննության առարկա դարձնելով նրա յուրաքանչյուր վկայությունը, ամենայն լրջությամբ պետք է խորամուխ լինել հակորիկ-ասորական եկեղեցու ձգտումների և ակնկալիքների մեջ և կարողանալ բացատրել պատմիչի կողմնորոշման եկեղեցաքաքական գրդապատճառները։ Ասորական պատմագրության այս նշանավոր հուշարձանը արդեն միշտագրում կանոնականացվել է։ Այդ է պատճառը, որ ԺԴ դարի նշանավոր մատենագիր և եկեղեցական գործիշ՝ հակորիկ եկեղեցու մափրիան⁴⁶ Բար Երրեսուը (1226—1286) այդ երկը ամբողջությամբ ներառել է իր ժամանակագրության մեջ⁴⁷ և իրադարձությունների նկարագրությունը հասցրել է մինչև 1285/6 թթ.⁴⁸ Այդ իսկ պատճառով, ներկա աշխատությունում դիմում ենք Բար Երրեսուին միայն այն ժամանակ, երբ փորձում

փոխարարերությունների ժամանակ՝ փոխանակված զավերագրերից հատկածներ (տե՛ս M., S., է. III, թ. 334—336)։ Նշված հատվածը բնագրում թերթերի կորսորդան պատճառով Ժ. — Բ. Շարոն վերականգնել է ըստ Բար Երրեսուի բնագրի համապատասխան հատվածի։ Հրատարակվել ճշմարտացիալյուը հաստատվում է, երբ համապատասխան հատվածը հանդիպում ենք նաև Միքայել Ասորու 1248 թ. հայերեն թարգմանության բնագրի համապատասխան մասում (Հմմտ. Տեսոն Միքայելի պատրիարքի Ասորուց ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1870, էջ 459—463)։

46 Եկեղեցական առտիճանակարգում մափրիանը երկրորդ անձնավորությունն է հակորիկ պատրիարքից Ծեսո, նրան են եկեղեցակլում հակորիկ եկեղեցու արեւելյան թեմերը (տե՛ս A. Lüders, Die Kreuzzüge im urteil syrischer und armenischer Quellen.—Berlin, 1964, S. 13).

47 Այդ ժամանակ տե՛ս M., S., է. I, թ. XLIII; P. Гусейнов, Сирийские источники XII—XIII вв. об Азербайджане, Баку, 1960, с. 53—63.

48 Բար Երրեսուի պատմությունը հրատարակվել է և թարգմանվել լատիներեն գեռես ԺՇ զարում (տե՛ս P. Гусейнов, նշվ. աշխ., էջ 54, ժան. 1): Աշխատության մեջ օգտագործել ենք նաև Բար Երրեսուի աշխատության անգլերեն թարգմանությունը (Ernest A. Wallis Budge. The Chronography of Gregory Abū'l-Faraj 1225—1286 the son of Aaron,

ենք ընկալել կամ լրացնել Միքայել Ասորու ժամանակագրության մեջ հասած բնագրի պակասները⁴⁹:

Զնայած Միքայել Ասորի պատրիարքի ժամանակագրությունը մեզ է հասել միայն մեկ ասորերեն ձևուագրով, սակայն այդ երկի նկատմամբ հետաքրքրությունը այնքան մեծ է եղել, որ միջնադարում այն թարգմանվել է արաբերեն⁵⁰ և հայերեն⁵¹: Ժարոն ելնելով Բար Երրեսոսի մի վկայությունից ենթադրում է նաև, որ Հայերեն թարգմանությունը կատարվել է Միքայել Ասորու ժամանակագրության հեղինակային ինքնագրից⁵² 1248 թ.⁵³: Թարգմանությունը կատա-

the Hebrew physician commonly known as *Bar Hebraeus* Being the first part of his political history of the world/Translated from the syriac with an historical introduction, appendixes, and an index accompanied by reproductions of the syriac texts in the Bodleian manuscript 52. Volume I: English translation.—Amsterdam (London, 1932, 1976).

49 Բացի այս եպակի ձեռագրից, որը արտագրվել և հրապարակվել է Ժ.-Բ. Շարոյի կողմից 1899 թ. (տե՛ս M. S., տ. I, XXXVII—XLIII), գոյություն ունի ևս մեկ՝ 1887 թ. կատարված ընդօրինակություն (հմմտ. M. S., տ. I, թ. XLII):

50 Միքայել Ասորու երկի արաբերեն թարգմանության մասին տե՛ս M. S., տ. I, թ. XLIII—L:

51 Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանությունը հայտնի է երկու խմբագրությամբ, որոնցից յուրաքանչյուրը արժանացել է առանձին հրատարակության (տե՛ս Տեղան Միխայլի պատրիարքի Ասորուց ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1870 և ժամանակագրութիւն Տեղան Միխայլի Ասորուց պատրիարքի Հանեալ ի հնագոյն գրչադրէ, Երուսաղէմ, 1871) (այսուհետև՝ Միքայել, 1870 և Միքայել, 1871):

52 Թարգմանական հիշատակութանեներից նախնականը մեր կարծիքով Վարդան Արեկելցունն է (Միքայել, 1870, էջ 608—622), ուր համապատասխանում են փրկչական (1248) և Հայոց (ՈՂէ=1248/9) թվականները, իսկ մյուսում (Միքայել, 1871, էջ 42—45) թվագրված է 4 անգամ, փրկչական (1248), Հայոց Մեծ (ՈՂէ=1248/9), Կոստանդին Բարձրաբերդիցու կաթողիկոսության (1221—1267), և Հեթում Ա թագավորի (1226—1270) իշխանության 25-րդ տարով: Մեր կարծիքով այս երկորդ հիշատակարանը կառուցված է ավելի ուշ Վարդան Արեկելցու 1248 թ. գրած հիշատակարանի հիման վրա:

53 M. S. է. I, թ. L: Վարդան Արեկելցու հիշատակարանում ևս նըշ-

բել է ասորի Իշող քահանան⁵⁴ («Գոխեցաւ ի ձեռն իշօխայ սրբամնեալ քահանայի վարժելոյ ի հանձար բժշկական արհեստի»)⁵⁵, իսկ Վարդան Արևելցին հավանաբար հայացրել է բնագիրը («Այլև մեք իսկ տառապեալ ոգի Վարդան վարդապետ, որ ըստ մերում կարի կատարեցաք ի գիրքս յայս»)⁵⁶ և իրադարձությունների նկարագրությունը հասցրել է մինչև 1229 թ.: Վերոհիշյալ թարգմանությունները, մանավանդ հայերենը օգնում են ուղղելու մեջ հասած ասորերեն բնագրի բազմաթիվ թյուրիմացություններ և լրացնելու բազմաթիվ բացեր⁵⁷:

ԺԴ դարի Անանուն Եղեսացի ժամանակագրի երկը հայտնաբերվել է 1899 թ. և իր վրա է գրավել մասնագետների ուշադրությունը: Այն հետաքրքիր մանրամասներ է հաղորդում ԺԲ դարի 30—70-ական թթ. քաղաքական իրադարձությունների մասին: Չնայած մեզ հետաքրքրող մասում Անանուն Եղեսացին որոշ զուգահեռներ ունի Միքայել Ասորու ժամանակագրության հետ, սակայն այդ հանգամանքը մասնագետների կողմից բացատրվում է. «ընդհանուր աղբյուրների առկայությամբ»⁵⁸, Աշխատանքում օգտագործվում է միայն Անանուն Եղեսացու քաղաքական պատմության հայերեն թարգմանությունը⁵⁹:

Պատճեն, որ ասորերեն բնագիրը տրամադրել է Խնամատիոս պատրիարքը («Եւ էր պատրիարք Ասորուց ուղղափառաց Մար Իգնատէ Անտիոքու, որ զօրինակն զնորհեաց տե՛ս Միքայել, 1870, էջ 612»):

54 Իշողի թարգմանական գործունեության մասին տե՛ս Խօսիս, Դիրքի վերայ բնութեան Քննական՝ բնագիրը, թարգմ. գրաբարից ուուերեն և առաջարանը Ս. Վարդանյանի, Երևան, 1979, էջ 7—8:

55 Միքայել, 1870, էջ 612—613:

56 Միքայել, 1870, էջ 613:

57 Այս մասին մանրամասնութեն խոսում է Ժ.—Բ. Շարոն Միքայել Ասորու ժամանակագրության հրատարակության առաջարանում և ֆրանսերեն թարգմանության ծանոթագրություններում:

58 Տե՛ս Անանուն Եղեսացի, ժամանակագրություն, թարգմանություն բնագրից, առաջարան և ժամոթագրություններ Լ. Հ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982, էջ 15:

59 Անանուն Եղեսացի, Երևան, 1982:

ԺԲ դարի պատմության հիմնական սկզբնաղբյուրների թվին է պատկանում արևելքի խաչակրաց պետությունների պատմագիր, Սուրբ քաղաքի արքեպիսկոպոս Վիլհելմ Սուրացու (Willermus Tyrensis) «Պատմություն ծովի այն կողմում կատարված գործերի, սկսած Սուհամեղի հետնորդներից մինչև Տիրոջ 1189 թ.» աշխատությունը⁶⁰. Այն խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանի մյուս լատինական սկզբանաղբյուրների նման ունի այն առավելությունը, որ չի սահմանափակվում արևելյան միջերկրականի աշխարհագրական տարածքում տեղի ունեցած իրադարձությունների նկարագրությունով, այլ ելնելով Արևմտյան Եվրոպայի քաղաքական շահերից⁶¹, իրադարձությունները քննում է արևմուտքի և արևելքի միջազգային փոխարարերությունների հենքի վրա: Վիլհելմ Սուրացին ծնվել է 1130 թ. Ասորիքում, իսկ 1162 թ. Եվրոպայում կրթություն ստանալուց հետո վերադարձել է արևելք և լծվել բուռն եկեղեցաքաղաքական գործումնության: 1170 թ. նա Երուսաղեմի թագավորության նոտար է, իսկ 1175 թ. ստանձնում է Սուրբ արքեպիսկոպոսությունը և Պաղտին Դ թագաժառանգի դաստիարակությունը: Ուշագրավ է, որ Վիլհելմը իր աշխատությունը գրել է Երուսաղեմի Ամորի թագավորի պատվերով: Վիլհելմ Սուրացու երկը եպակի սկզբնաղբյուր է 1127—1184 թթ. Ասորիքի խաչակրաց պետությունների պատմության ուսումնասիրության համար⁶²: Այն կարևոր տեղեկություններ է հաղորդում Բյուզանդիայի և Կիլիկյան Հայաստանի քաղաքական փոխարարերությունների մասին:

⁶⁰ Տե՛ս Willermus Tyrensis. Historia terrum in partibus transmarinis gestarum.—RHC. Historiens occidentaux t. I, part I et II, Paris, 1844 (այսուհետեւ W. T.).

⁶¹ Վիլհելմ Սուրացու աշխարհայացքի որոշ առանձնահատկությունների մասին տե՛ս M. A. Заборов, Введение..., с. 136—145:

⁶² Մինչև 1162 թ. իրադարձությունների նկարագրությունը օգտագործում է զրեթե բոլոր լատին ժամանակագիրների երկերը (տե՛ս Cl. Cahen, La Syrie du Nord, p. 17—18).

ԺԲ—ԺԳ դդ. մուսուլմանական աշխարհի բազմաթիվ մատենագիր հեղինակներից քշերն են անդրադարձել Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականությանը և ժմարի 30—70-ական թթ. Կիլիկիայի պատմությանը։ Այդ երկերի մեծամասնությունը տեղական պատմություններ են. դրանց մի մասը ներկայացնում է մուսուլմանական որևէ հարրուտության պատմության ժամանակագրական շարադրանք, մի նշանակալի մասն էլ իսլամական աշխարհի այս կամ այն նշանավոր գործշի կենսագրություն։ Եվ քանի որ գրեթե ոչինչ չի պահպանվել իկոնիայի սուլթանության և Դանիջանյան ամիրայության պատմագրությունից, որոնք մինչև ԺԲ դարի 60-ական թթ. կեսերը միակ մուսուլմանական պետություններն էին, որոնք Կիլիկիայի հայկական իշխանության և Բյուզանդական կայսրության անմիջական հարկաններն էին, ստիպված ենք բավարարվել այն հատուկենտ ու թռուցիկ վիայություններով, որոնք պահպանվել են Մոսուլի և Հայեպի աթաբեկության պատմաբան Իրն ալ-Ասիրի երկերում։ Ի՞արկե պետք է հաշվի առնել նաև նրա երկերի («Լիակատար (ամբողջական կամ տիեզերական) պատմություն» և «Մոսուլի աթաբեկների պատմություն») բաղադրական բնույթը, որի շնորհիվ բեղմնավոր մատենագիրը օգտագործել է իրենից առաջ գրված պատմական բազմաթիվ երկեր։ Ակատար պատմությունը» մի ընդարձակ աշխատություն է, ուր շարադրված է աշխարհի արարշագործությունից մինչև 1231 թ. տեղի ունեցած իրադարձությունները ժամանակագրական հերթականությամբ⁶³, «Մոսուլի աթաբեկների պատմությունը» երկում հեղինակը հանդես է գալիս որպես Զենդյան հարստության ջատագով։ Այս երկու աշխատությունների մեջ էլ արաբայեզու հեղինակը անդրադառնում է Կի-

⁶³Տե՛ս Extrait de la Chronique intitulée Kamel-Altevazkh par Ibn-Alatyr.—In: RHC. Historiens orientaux, t I, Paris, 1872, p.p. 257—646; Հմմտ. նաև Իրն ալ-Ասիր. Թարգմանություն բնագրից, առաջարան և հանոթագրություններ Ա. Տեր-Ղետիշյանի, Երևան, 1981, էջ 236—266.

Միկյան Հայաստանի և Բյուզանդիայի պատմությանը միայն այն ժամանակ, երբ խաչաձևվում են մի կողմից նշված քաղաքական միավորումների, իսկ մյուս կողմից Զենքյան-ների քաղաքական շահերը:

բ) Վավերագրեր

ԺԲ դարի հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական փոխարարերությունների ուսումնասիրման անգնահատելի սկզբնադրյուրներ են հայերեն և հունարեն լեզումներով պահպանված վավերագրերը: Դրանք մի կողմից բյուզանդական կայսր Մանուել Ա Կոմնենոսի ու Կոստանդնուպոլսի պատրիարք Միքայել Գ Անքիալոսի, մյուս կողմից 1165—1178 թթ. Հռոմելայի Հայոց կաթողիկոսների միջև փոխանակված պաշտոնական և ժողովական թղթերն են և տեղի ունեցած հայ-բյուզանդական բանակցությունների արձանագրությունները: Այդ փաստաթղթերից ընտրովի ժողովածու է կազմել, Ներսէս Լամբրոնացին, որը հապավված ձևով կանվանենք «Պատճառ խնդրոյ միաբանութեան ...»⁶⁴: Այդ ժողովածուում փաստաթղթերը բերված են ժամանակագրական հերթականությամբ, հաճախ Ներսէս Լամբրոնացին տալիս է այս կամ այն թղթի գրման հանգամանքներին կամ թվականին վերաբերող ծանոթագրություններ, որոնց մասին այդ աշխատության մեկենաս՝ իր հարազատ եղբայր Հեթումին ուղղված հիշատակարան-թղթում գրում է. «Եարագրեցի համառօտարար զՊատճառ նամակացն հանդերձ թղթովքն»⁶⁵, «Պատճառ խնդրոյ միաբանութեան» ժողովածուն պարունակում է 1165—1177 թթ. 17 փաստաթուղթ, որոնցից 11-ը Հռոմելայի կաթողիկոսարանի դպրանոցից դուրս եկած փաստաթղթերն են

64 Թուղթ ընդհանրական արարեալ երիցս երանեալ սուրբ Հայութիսի մերոյ տեառն Ներսէսի Շնորհալույ, էջմիածին, 1865, էջ 113—280, Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսէսի Շնորհալույ, Երուսաղէմ, 1871, էջ 85—201 (այսուհետեւ Պ. Ը. 1865 կամ Պ. Ը. 1871):

65 Ն. Ալինեան, Ներսէս Լամբրոնացի, արքապիսկոպոս Տարտոնի (կեանքն եւ գրական վաստակները հանդերձ աղքարանութեամբ Պահլաւունեաց եւ Լամբրոնի Հեթմեանց), Վիեննա, 1956, էջ 218:

(Դրիգոր Գ, Ներսես Գ և Գրիգոր Դ կաթողիկոսների անուններով), 4-ը՝ Մանուկ Ա կայսեր ստորագրած փաստաթղթերն են, երկուսը՝ Կոստանդնուպոլսի պատրիարք Միքայել Գ Անքիալոսին են պատկանում: Այդ ընթացքում տեղի ունեցած բանակցություններից երկուսի արձանագրությունները (Թեորիանոսի 1169—1170 և 1171 թթ.) և զրանց ընթացքում փոխանակված վավերագրերը պահպանվել են Հունարեն բնագրով⁶⁶: Որոշ վավերագրեր և քաղաքական համաձայնությունների մասին ակնարկներ կարելի է հանդիպել նաև պատմական այլ սկզբնաղբյուրներում:

գ) Պատմագեղարվեստական մատենագրություն

ԺԲ դարի 30—70-ական թթ. Հյուսիսային Ասորիքի և Փոքր Ասիայի քաղաքական իրադարձությունները յուրովի են արձանագրվել ԺԲ—ԺԴ դարերի պոեմներում, վարքերում և ոտանավոր հիշատակարաններում:

ԺԲ դարի եկեղեցաբարդաքական գործիչ և բազմաշնորհ մատենագիր⁶⁷ Ներսես Շնորհալին (1166—1173) ժառանգություն է թողել պոեմների, տաղերի և ոտանավոր հիշատակարանների մի ամբողջ շարք, ուր կարելի է բազմաթիվ վկայություններ գտնել նրա ժամանակի քաղաքական իրադարձությունների մասին: Զափազանց կարևոր սկզբնաղբյուր են Ներսես Շնորհալու «Աղք Եղեսիոյ» և «Վիպասանութիւն»⁶⁸ պոեմները: Եթե առաջինում մատենագրությունը կանգ է առնում որոշակի իրադարձության՝ 1144—1146 թթ. ամիր Ջանգու կողմից Եղեսիոյի գրավման վրա, նկատի ունենալով,

⁶⁶ P. G., t. 133, p. 119—228.

⁶⁷ Ներսես Շնորհալու քաղաքական և մատենագրական գործունեության մասին տե՛ս Դ. Ալիջան, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, Գր. Հակոբյան, Ներսես Շնորհալի, Երևան, 1964, «Ներսես Շնորհալի (Հոդվածների ժողովածու)», Երևան, 1977:

⁶⁸ Ներսես Շնորհալի, Աղք Եղեսիոյ, քննական բնագիրը, բանասիրական դիտողությունները, ժանոթագրությունները Մ. Մկրտչյանի, Երևան, 1973, Ներսես Շնորհալի, Վիպասանութիւն, քննական բնագիրը պատրաստեց, ժանոթագրեց և առաջարանց զրեց՝ Մ. Մկրտչյանը, Երևան, 1981:

քաղաքի համար հետագա պայքարի փաստը⁶⁹, ապա երկու բորդում հայոց պատմության ուսանավոր շարադրանքը հասցված է մինչև ԺԲ դարի սկիզբը: Իր պատմական բովանդակությամբ և հանգավորման ձևով ներսես Շնորհալու «Վիպասանության» շարումակությունն է ԺԴ դարի մատենագիր Վահրամ Բարունու «Ուտանաւոր պատմութիւն Ռուգինեանցը»⁷⁰: Այս հանգամանքը իր երկի առաջարանում շեշտում է հեղինակը⁷¹: Վահրամ Բարունու պոեմում գեղարվեստական կերպավորում են ստացել ԺԲ դարի 30—70-ական թթ. իրադարձությունները, քաղաքական ու եկեղեցական գործիշները: Վահրամը պոեմը գրելիս օգտագործել է Մատթեոս Ուտայցու, Գրիգոր Երեցի, Սամուել Անեցու աշխատությունները, սակայն երրեմն հաղորդում է մեզ այլուստ Հանդիպող տեղեկություններ: Ներսես Շնորհալու «Վիպասանության» ազդեցություններից մեկն էլ մեր մատենագրության մեջ պետք է դիտել Ներսես Լամբրոնացու «Գովեստ ներբողական» պոեմը⁷², ուր հեղինակը գովերգելով ներսես Շնորհալուն, անդրադառնում է նաև ժամանակի մի շարք պատմական իրադարձությունների:

Զափածո երկերի մեջ առանձնանում են նաև ներսես Շնորհալու ուսանավոր հիշատակարանները, որոնց մեջ հե-

⁶⁹ Այս պոեմը ուշագրավ սկզբնաղրյուր է Հայոց եկեղեցու գաղափարախոսության ուսումնասիրության տեսանկյունից (տե՛ս Լ. Զեր-Պետրոսյան, ներսես Շնորհալու ռմզը Եղեսիուն-ն և ժամանակի ասորական գրականությունը, և ներսես Շնորհալի (Հողվածների ժողովածու), էջ 201—211):

⁷⁰ Վահրամայ Բարունայ Ուտանաւոր պատմութիւն Ռուբենեանց ի լոյս ընծայեաց Հանգերձ ծանօթութեամբը Կ. Շահնազարեանց, Փարիզ, 1859 (Հաճախ կազմում է Սմբատի Տարեգրի փարիզյան հրատարակության շարումակությունը):

⁷¹ Նույն տեղում, էջ 185—186:

⁷² Այս շափածո երկի ամբողջական վերնագիրն է. «Գովեստ ներբողական պատմագրական բանիւ յաղագս վարուց մեծի հայրապետին տեսան ներսիսի Կլայեցու Հայոց կաթուղիկոսի, ասացեալ տեսան ներսիսի լամբրոնացու արքեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցույ» (տե՛ս Թ. Ը. 1865, էջ 461—497), այս երկի ձեռագրերի և հրատարակությունների մասին մանրամասն տե՛ս Խ. Ալիքեյան, ներսէս Լամբրոնացի, էջ 221—225:

տաքրքիր տեղեկություններ կարելի է գտնել ԺԲ դարի 40—50-ական թթ. քաղաքական իրադարձությունների մասին⁷³, Նման հիշատակությունների կարելի է հանդիպել նաև Ներսես Շնորհալու տաղերում⁷⁴:

Բյուզանդական շափածո և արձակ ստեղծագործություններում ևս իրենց արձագանքն են գտել ԺԲ դարի 30—70-ական թթ. պատմական իրադարձությունները: Այդ պոեմների մեջ առանձնանում են Թեոդորոս Պրոգրոմոսի, Հովհաննես Կամատերոսի երկերը: Պահպանվել են նաև բազմաթիվ արձակ ստեղծագործություններ՝ հիմնականում ճառեր, որոնք ձևված են ԺԲ դարի բյուզանդական քաղաքական գործիչներին, այս կամ այն իրադարձությանը⁷⁵:

Պատմագեղարվեստական ստեղծագործությունների մեջ առանձնանում են ԺԲ դարի եկեղեցաքաղաքական գործիչների վարքերը⁷⁶: Դանիշմանյան ամիրայության պատմությանը վերաբերող հուշարձանները սակավաթիվ են⁷⁷: Այդ պետու-

73 Ներսես Շնորհալու հիմնական հիշատակարան-ուսանավորների հրատարակությունը տե՛ս Տն. Խերսէսի Շնորհալոյ Հայոց կաթողիկոսի Բանք շափաւ, Վենետիկ, 1928, էջ 170—177, 239—245, 389—392, Ներսէս Շնորհալի, Ողբ Եղիսիսյ, Երևան, 1973, էջ 136—138:

74 Ներսես Շնորհալու այս ժանրի երկերի մասին տե՛ս Ա. Մ. Քյոշկերյան, Ներսես Շնորհալու նորահայտ տաղերի և հատված-տաղերի մասին, «Ներսես Շնորհալի» (Հոգվածների ժողովածու), Երևան, 1977, էջ 139—156:

75 K. Krummbacher, Geschichte der byzantinischen Litteratur von Justinian bis zum Ende des Oströmischen Reiches (527—1453), München, 1897, S. 749—761.

76 «Սրբոյն Ներսէսի Շնորհալոյ Պատմության վարուց», Սովորք Հայկական, ԺԲ, Վենետիկ, 1854, «Դրիգորի Սկնուացոյ Ներբողեան ի սուրբն Ներսէս Լամբրոնացի», Սովորք Հայկականք, ԺԲ, Վենետիկ, 1854, «Էլիակատար վարք և վկայարանութիւն սրբոց ...», Հ. Յ. Վ. Վենետիկ, 1813, էջ 330—353, Վ. Ս. Տեր-Դավթյան, Ներսես Շնորհալու վարքը, «Ներսես Շնորհալի» (Հոգվածների ժողովածու), Երևան, 1977, էջ 189—200:

77 Դանիշմանյան ամիրայության պատմության մասին տեղեկություններ կարելի է բաշել Նիկետոս Խանիատեսի, Հովհաննես Կիննամոսի, Իրե ալ-Ասիրի, Միքայել Ասորե, Անահետ Եղիսաբետ, Մատթեոս Ուրհայեցու, Դրիգոր Երեցի երկերից: Դանիշմանյանների մասին տե՛ս I. Mélíkoff, Danishmendides, EI, n. éd., t. II, p. 112—114.

թյան մասին մեր պատկերացումները ընդլայնում են այլ պետական միավորումների քաղաքական դիրքերից գրված հուշարձանները: Դանիշմանյան ամիրայության պատմության մեջ նշանակալի դեր է խաղացել Հայ ազգաբնակչությունը, որից մեզ են հասել սոսկ մատենագրական պատառիկներ: Դրանց մեջ ուշագրավ են Յակուբ Արտանի իշխանության տարիներին Սեբաստիայում զոհված վկաների վարքերը⁷⁸:

Դ) Հականառական գրականություն

ԺԲ դարի քրիստոնեական մատենագրությունները լի են քրիստոնեական եկեղեցու տարբեր ուղղությունների դեմ գրրված հականառական երկերով: Բյուզանդական մատենագրության մեջ բազմաթիվ երկերում օրթոգրքս եկեղեցու պաշտոնական դավանարանությանն են հակադրված կաթոլիկ, Հայ, հակոռիկ և նեստորական եկեղեցիների հավատամբն ու ծիսական բազմաթիվ ավանդություններ⁷⁹: Հայ մատենագրության մեջ ևս ԺԲ դարում ստեղծվել են մի շարք երկեր, որոնք հակադրվում են բյուզանդական եկեղեցու պաշտոնական դավանարանությանը և ծիսակարգին⁸⁰: Նմանատիպ երկեր գրվում են նաև հակոռիկ աստորական եկեղեցու ներկայացուցիչների կողմից ընդգեմ Հայկական, բյուզանդական և նեստորական եկեղեցիների: Հարկ ենք համարում անդրադառնալ նմանատիպ երկերից միայն մեկին: ԺԲ դարի մատենագիր հակոռիկ Դիոնիսիոս Բար Սալիբին թշնամական դիրք է գրավել Հայ-հակոռիկ եկեղեցիների բանակցություններում: Նրա գըրշին են պատկանում Հայոց եկեղեցու դեմ գրված մի շարք շշիատություններ, որոնց մի մասը հրապարակված են⁸¹:

78 Հայոց նոր վկաները (1155—1843), գիտական հրատարակութիւն, աշխատութեամբ Հ. Մանանիանի և Հ. Անանիանի, Վաղարշապատ, 1903, էջ 3—22:

79 H.—G. Beck, Kirche..., S. 616—629.

80 «Թուղթ երանելոյն Պօղոսի Տարօնացւոյ յաղթօղ ախոյեան վարդապետի ընդգէմ թէոփիստեայ հոռոմ փիլիսոփային», Կ. Պօլիս, 1752, և Ամենաբանութիւն սրբոյն Ներսիսի Համբըրնացւոյց, Վենետիկ, 1812:

81 A. Baumstark, Geschichte der syrischen Literatur,—Bo nn 1922, S. 295—298.

Բյուզանդական կայսրության ներքին և արտաքին քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմությունը ուսումնասիրության առարկա է գարձել դեռևս եվրոպական հումանիստական շարժման ներկայացուցիչ պատմաբանների կողմից⁸⁶: Սկզբից ի վեր բյուզանդագիտության կնճոռտ խնդիրներից մեկն է եղել Կոմնենոսների հարստության կառավարման ժամանակաշրջանի պատմության ընկալումն ու լուսաբանությունը: Այդ կայսերական ընտանիքի գահակալ ներկայացուցիչներից Ալեքս Ա-ի (1081—1118), Հովհաննես Բ-ի (1118—1143), Մանուել Ա-ի (1143—1180), Ալեքս Բ-ի (1180—1183), Անդրոնիկոս Ա-ի (1183—1185) գործունեությունը հակասական գնահատականների է արժանացել գիտական գրականության մեջ⁸⁷, Կոմնենոսների դարաշրջանի ուսումնասիրության բնագավառում պատմագրության նոր փուլը սկսվում է Ֆ. Շալանդոնի երկհատոր հետազոտությամբ⁸⁸, ուր ֆրանսիացի բյուզանդագետը կարողացել է ամրողացնել այդ հարստության հարյուրամյա պատմությունը՝ իր հայացքը գլխավորապես սեվեռելով Կոմնենոս կայսրերի քաղաքական գործունեության վրա, շարադրանքի մեջ երբեմն-երբեմն անդրադառնալով նաև նրանց սոցիալ-տնտեսական և վարչական գործունեությանը: Հսկայական է հեղինակի վաստակը բյուզանդական, եվրոպական և արևելյան սկզբնադրյուրների վերհանման և կապակցված պատմություն շարադրելու գործում: Այդ մենագրությունը այսօր էլ անփոխարինելի է Կոմնենոսներով ըզբազվող մասնագետի համար, քանի որ այն ամփոփում է պատմական գիտության 300-ամյա գիտելիքները Կոմնենոսների հարստության կայսրերի քաղաքական պատմության մասին և նոր լիցք է հաղորդում ավելի մասնավոր քննություն կատարող մասնագետներին: Ներկա աշխատանքում

⁸⁶Տե՛ս Գ. Լ. Կուրբատօվ, История Византии (историография), Л., 1975, с. 13—25.

⁸⁷Ա. Պ. Կաջդան, Загадка Комнинов (опыт историографии), ВВ, т. XXV, 1964, с. 53—98.

⁸⁸F. Chalandon, Les Comnènes. Etudes sur l'Empire Byzantin au XI^e et au XII^e siècles, Paris—Picard, 1912, t. I—II.

արծարծված խնդիրներն ավելի շատ մոտենում են մենագրության երկրորդ հատորի բովանդակությանը։ Այստեղ ֆրանսիացի հետազոտողը անդրադարձել է Հովհաննես Բ և Մանուկ Ա Կոմնենոսների իշխանության ժամանակաշրջանի Բյուզանդական կայսրության քաղաքական պատմությանը⁸⁹։ Հեղինակն այդ լույսի տակ մանրամասնորեն անդրադարձել է նաև կայսրության արևելյան քաղաքականությանը և Կիլիկյան հայկական իշխանության հետ նրա փոխհարաբերություններին։ Նա իր ուսումնասիրության մեջ լայնորեն օգտագործում է Մ. Չամչյանի և Պ. Ալիշանի ուսումնասիրությունները և խաչակրաց ժամանակաշրջանի պատմիչների հավաքածոյի հայկական նյութերի շարքում լույս տեսած հայերեն սկզբնաղրյուրները⁹⁰։ Սակայն, որքան էլ Ֆ. Շալանդոնի շարադրանքը մանրապատում է, այնուամենայնիվ նրա նպատակը Բյուզանդական կայսրության արտաքին և ներքին քաղաքականության բացահայտումն է, իսկ Բյուզանդիային սահմանակից և նրա պատմության հետ խաշաձևվող երկրների անցյալին վերաբերող խնդիրները ֆրանսիացի հետազոտողի համար կորցնում են իրենց նշանակությունը, եթե դրանք ուղղակիորեն կապված չեն կայսրության քաղաքականության հետ։ Այնուամենայնիվ բյուզանդագիտությունը շարունակում է ուշադրության կենտրոնում պահել Կոմնենոսների դարաշրջանի պատմության բազման խնդիրները⁹¹։

⁸⁹ F. Chalandon, Les Comnènes. Etudes sur l'Empire Byzantin au XI^e et XII^e siècles. T. II: Jean II Comnène (1118—1143) et Manuel I Comnène (1143—1180), Paris—Picard, 1912.

⁹⁰ Recueil des historiens des Croisades. Documents Arméniens, t. I, Paris, 1869.

⁹¹ Ֆ. Շալանդոնի երկի լույս ընծայումից հետո տպագրված աշխատությունների մասին տե՛ս Ա. Պ. Կաջդան, Загадка Комнинов, с. 78—98; P. Wirth, Kaiser Manuel I. Komnenos und die Ostgrenze. Rückerobierung und Wiederaufbau der Festung Dorylaion, BZ, B. 55, 1962. S. 21—29; D. Obolensky. The Byzantine Commonwealth (Eastern Europa 500—1453), London, 1971; A. Hohlweg, Beiträge zur

Կիլիկյան Հայաստանի ժմ դարի 30—70-ական թթ. պատմության հարցերը քննության առարկա են դարձել հայգետ պատմաբանների ուսումնասիրություններում։ Առաջինը Ս. Զամշյանն էր, որը, համագրելով Հայ և բյուզանդական պատմական երկերում հանդիպող բազմաթիվ հակասական վկայությունները, փորձեց հյուսել կիլիկյան պետության պատմությունը⁹²։ Չնայած Մ. Զամշյանի աշխատության մեջ հանդիպող մի շարք ժամանակագրական սխալներին, այս երկի հայագիտությանը բերած նորությունը՝ հսկայական էր։ «Հայոց պատմության» համակարգում շարադրված էր կիլիկյան իշխանության ապա նաև պետության ամփոփ պատմությունը։

Կիլիկիայի հայկական պետության պատմության ուսումնասիրության հաջորդ փուլը անխզելիորեն կապված է ֆրանսիացի հայագետներ է. Դյուլորիեի և Վ. Լանգլուայի գիտական գործունեության հետ։ Եթե է. Դյուլորիեի վաստակը մեծ է կիլիկյան իշխանության պատմության սկզբնաղբյուրների ֆրանսերեն թարգմանության և ուսումնասիրության գործում⁹³, ապա Վ. Լանգլուան ձեռնամուխ եղավ Կիլիկիայի հայկական իշխանության պատմության քննության համար անհրաժեշտ այնպիսի բնագավառների հետազոտությանը։

Vervaltungsgeschichte des Oströmischen Reiches unter den Komnenen, München, 1965; H. Ahrweiler, Byzance et la mer, Paris, 1966, p. 175 և հակ.։

92 Մ. Զամշյան, Պատմություն Հայոց, հ. 9, Վենետիկ, 1786, էջ 5—416։

93 Chronique de Matthieu d'Edesse (962—1136) avec la continuation de Grégoire le Pieux jusqu'en 1162/Bibliothèque historique arménienne et choix des principaux historiens arméniens traduits en français... par M. Edouard Dulaурier, Paris, 1858; Recueil des historiens des Croisades. Documents Arméniens, 1869, t. I; Ed. Duleurier. Etudes sur l'organisations politiques, religieuse et administrative du royaume de Petite-Arménie, JA, 5th ser., XVII—XVIII, 1861.

ինչպիսիք են վավերագիտությունը⁹⁴, դրամագիտությունը⁹⁵ և վիմագրությունը⁹⁶: ԺԹ գարում կատարված ուսումնասիրությունների հանրագումարը դարձավ Դ. Ալիշանի «Սիսուան» աշխատությունը⁹⁷: Այն հայկական Կիլիկիայի քաղաքական և տնտեսական պատմության, աշխարհագրության և մշակույթի անփոխարինելի հանրագիտարան է: Պետք է նշել, որ այսօր էլ այդ երկը շի կորցրել իր գիտական արժեքը:

Կիլիկյան Հայաստանի քաղաքական և մշակութային պատմության հետագա ուսումնասիրությունը նոր թափ ստացավ սովետական պատմաբան Գ. Միքայելյանի ուսումնասիրությամբ⁹⁸: Նրա մենագրության լույս ընծայումից հետո ևս հայագիտությունը բազմից անդրադարձել է Կիլիկիայի

⁹⁴ Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupénens.../Recueillis, mis en ordre et publiés pour la première fois avec une introduction historique par V. Langlois, Venise, 1863; V. Langlois, Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie sous les rois de la dynastie Roupénienne, d'après les documents orientaux et occidentaux conservés dans les dépôts d'archives de l'Europe.—Mémoires de l'Académie impériale des sciences de St.—Pétersbourg, VII^e série. Tome III, № 3, St.—Pétersbourg, 1860.

⁹⁵ Numismatique de l'Arménie au Moyen Âge /par V. Langlois.—Paris, 1855, p. 31—110; Numismatique générale de l'Arménie/par V. Langlois. Paris—Londres (Bibliothèque historique Arménienne..), 1859, p. 31—110.

⁹⁶ Inscriptions Grecques, Romaines, Byzantines et Arméniennes de la Cilicie/Recueillies par V. Langlois, Paris, 1854.

⁹⁷ «Սիսուան, համագրութիւն հայկական Կիլիկիոյ և Լևոն Մեծագործ», հաւաքեալ ի Անոնքեալ գ. Մ. Ալիշան, Վենետիկ, 1885: Այս երկի համառոտարքեալ թարգմանվել է նաև ֆրանսերեն (ան «Leon le Magnifique premier roi de Sissouan ou de l'Arménocilicie/écrit par le R. P. Leonce M. Alishan, traduit par le P. Georges Bayan, Venise, 1888»).

⁹⁸ Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952.

Հայկական իշխանության քաղաքական⁹⁹, սոցիալ-տնտեսական¹⁰⁰, իրավունքի¹⁰¹ ու մշակույթի¹⁰² պատմության բազմաթիվ հարցերի:

Ժթ դարի 30—70-ական թթ. բազմաթիվ քաղաքական իրադարձություններ քննության նյութ են դարձել խաչակրաց արևելքի պատմությանը նվիրված հետազոտություններում։ Եազեկան են Ռ. Գրուսետի¹⁰³, Ս. Ռենսիմենի¹⁰⁴ և Ք. Սետոնի¹⁰⁵ հեղինակությամբ և խմբագրությամբ լույս տեսած հետազոտությունները։ Կիլիկիայի հայկական իշխանության և Բյուզանդիայի ժթ դարի 30—70-ական թթ. փոխարարելու-

⁹⁹ The Cilician Kingdom of Armenia /Ed. T. S. R. Becase.—Edinburg—London, 1978, Ա. Առիքիայան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978; Ս.—Ե. Զ. Քասանի, Կիլիկիոյ հայկական իշխանագետութիւնը Մերձաւոր Արքեպիքի բաղաքան հոգվոյթին մեջ (1080—1137), Պետք, 1974։

¹⁰⁰ P. Z. Fedoukian, Coinages of Cilician Armenia.—New York 1962. Ա. Բունազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկիան հայկական պետությունում XII—XIV դարերում, Երևան, 1973։

¹⁰¹ Г. А. Дмитриев. Некоторые вопросы поземельных отношений и положения крестьян в Киликийской Армении XII—XIII вв.—ИФЖ, 1970, № 2, с. 107—123; Ю. Г. Барсегов, Отказ армян от «берегового права»—ИФЖ, 1971, № 1, с. 95—110; Его же. Борьба Килийской Армении против пиратства в Средиземном море.—ИФЖ, 1973, № 3, с. 71—84; Его же. Арбитраж в международных отношениях Армении эпохи античности и средних веков.—ИФЖ, 1982, № 1, с. 39—54.

¹⁰² Լ. Ազարյան, Կիլիկիան մանրանկարչություններ XII—XIII դդ., Երևան, 1954։

¹⁰³ R. Grousset, Histoire des Croisades et du royaume Franc de Jérusalem. T. II: Monarchie Franque et monarchie Musulmane: l'équilibre, Paris, 1935.

¹⁰⁴ S. Runciman, A history of the Crusades. V. II: The Kingdom of Jerusalem and the frankish East 1100—1187, Cambridge, 1951.

¹⁰⁵ A history of the Crusades /Kenneth M. Setton general editor. Volum I: The first hundred years/ Edited by Marshall W. Baldwin, Madison, Milwaukee and London, 1969.

Թյումների ուսումնասիրությանը նպաստ են բերում նաև իկոնիայի սուլթանության¹⁰⁶, Դանիշմանյան և Արտուքյան ամիրությունների¹⁰⁷, Հալեպի աթարեկության¹⁰⁸, Անտիոքի և Եղեսիայի լատինական իշխանությունների¹⁰⁹ պատմությանը նվիրված հետազոտությունները¹¹⁰:

¹⁰⁶ Cf. Cahen, Pre-Ottoman Turkey. A general survey of the material and spiritual culture and history c. 1071–1330, London, 1968; B. A. Гордлевский, Государство Сельджукидов Малой Азии.—B. A. Гордлевский. Избранные сочинения. Т. I, М., 1960, с. 29—218.

¹⁰⁷ I. Melikoff, Dānishmendides, EI, n. éd., t. II, p. 112—114; Cf. Cahen, le Diyar Bakr au temps des premiers urtukides, JA, t. 227, 1935, № 1, p. 220—276.

¹⁰⁸ N. Elisséeff, Nûr ad-Din. Un grand prince musulman de Syrie au temps des Croisades (511—569 h/1118—1174), t. I—III, Damas, 1967.

¹⁰⁹ Cf. Cahen, La Syrie du Nord à l'époque des Croisades, Paris, 1940.

¹¹⁰ M. A. Зaborов, Крестовые походы, М., 1956; Его же, Крестоносцы и их походы на Востоке в XI—XIII вв., М., 1962; M. A. Зaborов, Крестоносцы на Востоке, М., 1980.

ԲՅՈՒՋԱՆԴԻԱՆ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՆ ԺԲ ԴԱՐԻ
30—70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԺԱ դարի երկրորդ կեսին Բյուզանդական կայսրությունը երկրի ներքին և արտաքին քաղաքական կյանքում լուրջ զբժվարությունների հանդիպեց: Պեղենեգների¹ և նորմանների² հարձակումները հյուսիսից և արևմուտքից, թյուրք-սելջուկների արշավանքներն³ արևելքից ծանր կացության մեջ դրեցին երկիրը: Խախտվեց երկրի ներքին կյանքը կարգավորող բանակաթեմային կառուցվածքը, որն այլևս չվերականգնվեց:⁴

¹ F. Chalandon, *Les Comnènes...*, t. I. *Essai sur le règne d'Alexis Ier Comnène (1081—1118)*/par Ferdinand Chalandon, Paris, 1900, p. 112—134; G. Moravesik, *Byzantinoturcica*, I. Die byzantinischen Quellen der Geschichte der Türkvölker, 3. unveränderte Auflage (*Berliner byzantinistische Arbeiten*, Bd. 10), Berlin, 1983, S. 87—90.

² F. Chalandon, *Les Comnènes*, t. I, p. 57—94; F. Chalandon, *Histoire de la domination normande en Italie et en Sicile*, Paris, 1907.

³ F. Chalandon, *Les Comnènes*, t. I, p. 95—112; Cl. Cahen, La première pénétration turque en Asie Mineure (second moitié du XI^e siècle), *Byz.*, 18, 1946—48, p. 5—67; Jr. Speros Vryonis, The Decline of Medieval Hellenism in Asia Minor and the Process of Islamization from the Eleventh through the Fifteenth Century, London, 1971, p. 1—142.

⁴ S. Vryonis, The Decline ..., p. 85—113: Աշխատության մեջ պատմաաշխարհագրական էքսկուրսներ կատարելիս, երբեմն, հատակության համար դիմում ենք բանակաթեմային բաժանումների ժամանակաշրջանի աշխարհագրական անվանակարգին (նույնկատութա), որի արձագանքները դեռևս կենդանի են ժԲ—ժԳ դդ. բյուզանդական մատենագրության մեջ:

Գրեթե ողջ Փոքր Ասիան մինչև ԺԲ դարի սկիզբը մատնըված էր անիշխանության⁵. բյուզանդական պաշտոնեռությունը հեռացել էր, իսկ սելջուկ-թյուրքերի քոչվոր բանակները դեռ չէին հասցրել արմատ ձգել և վերջնականապես հաստատվել գրաված տարածքների վրա։ Այդ անիշխանության տարիներին էր, որ քաղաքական պայմանները նպաստեցին Կիլիկիայում և նրա շրջակայրում (*Մելիտինե, Եղեսիա, Անտիոք և այլուր*) Փիլարտոս Վարաժնումու և նրա հետևորդների⁶ ղեկավարությամբ ստեղծելու անկախ իշխանություններ, ընդունելով մերթ Բյուզանդական կայսրության, մերթ մուսուլմանական պետական միավորումների գերակայությունը⁷։ Զնայած բյուզանդական պատմիչները հակված են Փիլարտոս Վարաժնումու ստեղծած իշխանությունը ներկայացնել որպես կայսրության բաղկացուցիչ մաս⁸, սակայն այդ պետական միավորումը մեզ հետաքրքրող տարածքների վրա Բյուզանդական կայսրության իշխանության շարունակություն կարելի է համարել այնքանով, որքանով Փիլարտոսը և նրա հետևորդները ժամանակին եղել էին

⁵ F. Chalandon, *Les Comnènes*, t. I, p. 95; Geschichte des byzantinischen Staates/von George Ostrogorsky, München, 1963, S. 294.

⁶ F. Chalandon, *Les Comnènes*, t. I, p. 95–98; M. J. Laurent, Byzance et Antioche sous le empereur Philaret, REA, t. IX, f. 1 (1929), p. 61–72; N. Adontz, La famille de Philaret, In: N. Adontz, Études arménobyzantines.—Lisbonne, 1965, p. 147–152; C. J. Yarnley, Philaretos armenian bandit or byzantine general ?, REA, n. s., t. IX, (1972), p. 331–353; B. A. Арутюнова-Фиданян, Армяне-халкидониты на восточных границах византийской империи (XI в.), Ер., 1980, с. 152–169.

⁷ B. A. Арутюнова-Фиданян, Армяне-халкидониты..., с. 167–168; Հմատ. Կոմմագենացի, Փիլարտոս Հայոց, Հալեպ, 1930, էջ 54–59.

⁸ Հովհաննես Սիմիլցիս, Թարգմանություն բնագրից, առաջարան և ծանոթագրություններ Հր. Բարթիկյանի (Թուար ազգյուրները Հայաստանի և Հայերի մասին, 10. Բյուզանդական աղբյուրներ Գ), Երևան, 1979, էջ 230, ծան. 703, էջ 270, ծան. 805։

բյուզանդական գինվորական պաշտոնյաներ, իւ՛ հետագայում ժամանակ առ ժամանակ, ընդունել են նրա գնրակայությունը⁹ իրենց հակադրելով շրջակա մուսուլմանական իշխանություններին։ Փիլարտոսի ստեղծած իշխանությունը մի կղզյակ էր շրջապատված թշնամական մուսուլմանական իշխանություններով։ Այդ իսկ պատճառով Փիլարտոսի մահից հետո այդ պետությունը մասնաւեց¹⁰։ Նրա իշխանապետության տարրեր մասերում էր, որ հաստատվեցին և ապա հզոր իշխանություններ կազմակերպեցին Գող Վասիլը¹¹, Ռուբինյան և Հեթումյան պայազատները։

Փոքր Ասիայի հյուսիսում՝ Սև ծովի ափին, հին Խալդիա բանակաթեմի տարածքում, իր գոյությունն էր շարունակում Տրապիզոնի գրսությունը, որի կապերը Բյուզանդական կայսրության մնացած տարածքների հետ գրեթե ամբողջովին խղզել էին։ Տրապիզոնում հաստատված բյուզանդական իշխանությունները, չնայած ճանաշում էին Բյուզանդական կայսրության գերակայությունը, այնուամենայնիվ, կայսրության ներսում գլուխ բարձրացրած անջատողական միտումների կրողներն էին։ Ալեքս Ա և Հովհաննես Բ Կոմնենոսների իշխանության տարիներին Տրապիզոնը հաճախակի խղում էր իր հարաբերությունները Բյուզանդական կայսրության կենտրոնական իշխանությունների հետ և ապստամբում¹²։

⁹ Իր ալ-Քայանիսին Փիլարտոսին (al-Firdaous) անվանում է. «Հույների թագավոր» (անգ. Roger le Tourneau, Damas de 1075 à 1154. Traduction annotée d'un fragment de l'Histoire de Damas d'Ibn al-Qualanisi.—Institut Français de Damas, 1952, p. 11, n. 3). .

¹⁰ В. А. Арутюнова-Фиданян, Армяне-халкидониты..., с. 169—187.

¹¹ В. П. Степаненко, Из истории международных отношений на Ближнем Востоке XII в. Княжество Василия Гоха и Византия. Античные традиции и Византийские Реални (АДСВ), Свердловск, 1980, с. 34—44.

¹² F. Chalandon, Les Comrènes, t. II, p. 37.

Արդեն ԺԲ դարի սկզբին Ալեքս Ա Կոմնենոսի (1081—1118) ղեկավարությամբ կայսրությունը հիմնականում կանգնեցրեց նորմանների, պեշենեգների և հատկապես թյուրք-սելջուկյան նվաճողների մուտքը կայսրության կենտրոնական նահանգները¹³: Օգտվելով առաջին խաչակրաց արշավանքի ժամանակ ստեղծված բարենպաստ իրադրությունից, 1097/8 թ. Ալեքս Ա-ը Բյուզանդական կայսրության իշխանությունը վերահաստատեց Փոքր Ասիայի արևմտյան հատվածում (Նիկիա, Զմյուռնիա, Եփեսոս, Սարդիկե, Ֆիլադելֆիա և այլուր)¹⁴: Երկրի ներքին կյանքում կայսրությունը հետզհետե անցնում է պայմանական հողատիրության նոր կարգին (τρίγονα), միջոցառում¹⁵, որի գլխավոր նպատակներից մեկը պետք է համարել բանակի ամրապնդումը: Սկիզբ է դրվում Բյուզանդիայի բարձրացման նոր փուլին՝ Կոմնենոսների կառավարման դարաշրջանին (1081—1185):

Եթե Ալեքս Ա-ի իշխանության տարիներին պեշենեգները և նորմանները դուրս շպրտվեցին Բալկանյան թերակղզուց, ապա թյուրք-սելջուկյան հորդաները կարողացան հաստատվել Փոքր Ասիայում, իրենց իսկ ստեղծած պետական միավորումներում (Իկոնիայի սուլթանություն, Դանիշմանյան ամիրություն և այլն): Փոքր Ասիայում ստեղծված իրավիճակը անհանգստացնում էր Բյուզանդական կայսրերին: Այդ էր պատճառը, որ կայսրությունը սկսեց ուղիներ փնտրել վերադարձնելու փոքրասիական տարածքները:

¹³ F. Chalandon, *Les Comnènes*, t. I, p. 263—266, 268, 271, t. II, p. 35—48; The Cambridge medieval History, v IV, p. 212—223;

¹⁴ G. Ostrogorsky, *Geschichte...*, S. 300; F. Chalandon, *Les Comnènes*, t. I, p. 192—198; Cl. Cahen, *Pre-Ottoman Turkey*, p. 84—85;

¹⁵ Pour l'histoire de la féodalité Byzance par Georges Ostrogorsky, (*Corpus Bruxellense historiae, Subsidia I*), Bruxelles, 1954, p. 26—54; G. Ostrogorsky, *Geschichte...*, S. 306—307; Г. А. Островский, К истории иммунитета в Византии, ВВ, н. с., т. XIII (1958), с. 72.

1. ՀԱՎՀԱՆՆԵՍ Բ ԿՈՄՆԵՆՈՍԻ (1118—1148) ԱՐԵՎԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻԼԿԻԱՆ

Եթե ուշադիր հետևենք ԺԲ դարի երկրորդ և երրորդ
տասնամյակներում բյուզանդական արշավանքների և տա-
րածքային գրավումների ուղղություններին արևելքում¹⁶,
պարզ կդառնա, որ կայսրության արտաքին քաղաքականու-
թյան առաջնային խնդիրներից է եղել Փոքր Ասիայի հյուսի-
սային և Հարավային ծովափնյա շրջաններում վերահաս-
տատվելը: Նման քաղաքականությամբ կայսրությունը իր
առջև նպատակ էր զրել խանգարել սելջուկ-թյուրքերին ըս-
տեղծելու ուազմական և առևտրական նավատորմ որը կա-
րող էր մրցության մեջ մտնել կայսերական նավատորմիդի
հետ¹⁷ և լուրջ վտանգ դառնալ կայսրության առևտրական և
արտաքին քաղաքական կապերի, և բնդշանրապես, Միջերկ-
րական ծովում միջազգային ծովագնացության համար: Փոքր-
ասիական ծովափնյա քաղաքները դարգացած տնտեսական
և առևտրական կենտրոններ էին, որոնք չէին կորցրել իրենց
նշանակությունը սելջուկ-թյուրքական ներխուժումներից հե-
տո¹⁸: Այդ քաղաքների վերանվաճումը խոստանում էր Բյու-
զանդական կայսրության ներքին կյանքի նոր ծաղկում:
Փոքրասիական հարուստ տնտեսական շրջանների վերանվաճ-
ման քաղաքականությունը սկսած ԺԱ դարի 80—90-ական
թթ. հաջողությամբ իրականացնում էր Ալեքս Ա Կոմնենոսը¹⁹.

¹⁶ F. Chalandon, Les Comnènes, t. I, p. 264—266, 268—272, t. II, p. 35—51; G. Ostrogorsky, Geschichte .., Beilage IV.

¹⁷ Մինչև Ալեքս Ա-ի դահակալությունը բյուզանդական նավատորմը փաստորեն դադարել էր հզոր ուժ ներկայացնելուց և նորմանների դեմ կովելու համար կայսրը ստիպված էր դիմել վենետիկցիների օգնությանը, առկայն՝ արդեն՝ 1087 թ. պելինեցների դեմ, ինչպես պատմում է Աննա Կոմնեննեն, բյուզանդացիները դուրս են բերում սեփական նավատորմ (տե՛ս F. Chalandon, Les Comnènes, t. I, p. 279—280): Կոմնենոսների դա-
րագրջանի բյուզանդական նավատորմի և ծովային քաղաքականու-
թյան մասին տե՛ս H. Ahreweiler, Byzance et la mer..., p. 175—297

¹⁸ Sp. Vryonis, The Decline..., p. 114—130.

¹⁹ Այդ մասին հետաքրքրիր վկայություններ է հազորդում Աննա Կոմնե-
նին (книга 6, § 9 Ալիոպին տիրելու մասին), (книга 7, § 8, книга 9,

և արգեն դարասկղրին կայսրությունը հիմնականում կանգնեցրել էր սելջուկ և դանիշան թյուրքերի մուտքը դեպի Սև և Միջերկրական ծովեր²⁰:

Մյուս կարեոր խնդիրը, որը ժառացել էր Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության առջև և ստացել էր իր լուծումը ԺԲ դարի 20-ական թթ., դեպի Ատալիա տանող ցամաքային ճանապարհի մաքրումն էր հկոնիացի սուլթանության զինված զոկատներից²¹, որոնք ավարառում էին Բյուզանդական կայսրության տնտեսապես հարուստ շրջանները:

Երրորդ խնդիրը, որը կանգնել էր Հովհաննես Բ Կոմինոսի²² կառավարության առջև կայսերական բանակի համալրումն էր թյուրքական և ընդհանրապես «բարբարոս» ժողովուրդների զորամիավորումներով²³:

§ 1, 3, հինգ 11, § 5 Զականի նավատորմիդի դեմ բյուզանդացիների երկարատև պայքարի պատմությունը):

20 Այս դրույթը բավականին հստակ ընդգծում է Եվլուտաթիոս Սոլունցին (W. Regel, *Fontes rerum byzantinorum*, f. I, p. 65); հմատ. Դակ История Византии, т. 2, с. 321, прим. 21).

21 *I. C.*, p. 5—12; *N. Ch.*, p. 12—13; *F. Chalandon*. Les Comnènes, t. II, p. 46—48.

22 Հովհաննես Բ Կոմինոսին Սմբատ Սպարապետը անվանում է Պետպետչին (Սմբատ, 1956, էջ 160, 181 (= παράγραφος τετεντές)): Օտտոն Ֆրենցինցացին դիտե Կալոժան անվանումը (տե՛ս *F. Chalandon*, Les Comnènes, t. II, p. 9, n. 3).

23 Արևելյան բյուզանդական զորքի համալրման մասին Հովհաննեսը Կոմինոսի իշխանության տարիներին ձեռք առնված միջոցառումների մասին Կիննամուը հաղորդում է արժեքավոր տեղնկություններ (I. C., p. 9, 15):

Այս քաղաքականությունը հաջողությամբ կենսագործվում էր նաև Գանետրով կայսրության տարածքները ներխուժած ցեղերի նկատմամբ (նույն տեղում, էջ 3): Այս առումով ուշագրավ է Հովհաննես Կիննամուի հաղորդումը, ըստ որի բյուզանդական բանակում կարող էին ծառայության մանել միայն այն բարբարուները, որնք ընդունում էին կայսրության պաշտոնական եկեղեցու դավանությունը (πλείστους ու անտառ էու ուղարկությունները նշանաւում էին (հնդրատության) նույն ականավոր մատաֆերան ծծան անհետացնելու մասին) (I. C., p. 9), իսկ մնացածները ստրկացվում էին (հնդրատության) նույն ականավոր մատաֆերան ծծան անհետացնելու մասին) (I. C., p. 9, էջ 9, 4):

Փոքր Ասիայում Բյուզանդական կայսրության անմիջական հարևանները երկուսն էին՝ Էկոնիայի սուլթանությունը²⁴ և Դանիշմանյան ամիրությունը²⁵, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը որոշող էական գործուներից էին այդ երկու քաղաքական միավորումների հետ փոխհարաբերությունները. Նրանց միջև ծագած հակասությունները ամեն մի հարմար առիթով օգտագործում էր Բյուզանդական կայսրությունը՝ թշնամանը սերմանելով նրանց միջև և սեփական շահերի համար օգտագործելով այդ պետությունների ներսում ծագած յուրաքանչյուր բախում²⁶:

24 Զեալած Էննա Կոբեննեն Գալուսում է, որ 1116 թ. Էկոնիայի սուլթանության հետ կերպած հաշտության պայմանագրով թյուրքերը հրաժարվեցին իրենց նվաճումներից և կայսրության սահմանները ճանաշեցին Ռումանիայի ժամանակաշրջանի սահմաններով (F. Chalandon, *Les Comnènes*, t. I, p. 270; Աննա Կոմնինա, են. 15, § 5): Այսումնայինիվ. Հովհաննես Կիննամոսի և Նիկետոս Խոնիատեսի երկերի շարադրանքից ակնհայտորեն երևում է, որ Հովհաննես թ Կոմենսոսը իր իշխանության առաջին իսկ տարիներին ստիպված էր մտնել Մեսոպոտամիա դաշտը և գրավել Լառդիկիան, Սողովոյիսը և Ասուլիսայի հարևան շրջանները (տե՛ս I. C., p. 5—12; N. Ch., 12—13):

25 Դանիշմանյան ամիրության հետ կայսրությունը սահմանակից էր Տրապիզոնի դքսության և սեծովյան մի շարք ամիրութների շրջանում: Թյուրքական ամիրությունը խանգարում էր Բյուզանդական կայսրությանը ցամաքով իրեն միացնելու Տրապիզոնի դքսությունը: Ժթ դարի 30-ական թվականներին Հովհաննես թ Կոմենսոսը երկարաժեկ պայքար է սկսում Կաստամոն ամրոցի և Գանգրա քաղաքի համար (տե՛ս F. Chalandon, *Les Comnènes*, t. II, p. 175—181; I. C., p. 13—15): Այս գործողություններով կայսրությունը նվատակադրվել էր վերագրավել մինչև Տրապիզոն ընկած սեծովյան տիրութները և ստիպել Տրապիզոնի գուքը Կոստանդինիա Գարրասին հրաժարվելու կենտրոնախույս ձգտումներից:

Դանիշմանյան ամիրության ժաման մե՛ս El, p. 112—114; Mordtmann, *Die Dynastie der Danischmende*, Zeitschrift f. d. morgenl. Gesellschaft, t. XXX, p. 468; Casanova. La numismatique des Danischmendites, Revue numismatique, 3e s., t. XII, p. 437—438:

26 Այս առումով շափազանց ուշագրավ է 1126—1127 թթ. Էկոնիայի սուլթանության ներսում ծավալված ներքաղաքական պայքարը, որի ընթացքում Բյուզանդիան գործում միջամտություն էր տույց տալիս, մերժություններով թկոնիայի սուլթան Մասուդին, մերթ կանգնելով ապատամբ

Շատ են Իկոնիայի սուլթանության և Դանիշմանյան ամիրության հետ Բյուզանդիայի քաղաքական փոխհարաբերությունների ելևէցերը և հատկապես մութ կետերը, ուստի թվարկենք միայն հիմնական քաղաքական նպատակները, որոնց հետամուտ էին բյուզանդացիները արևելքում մինչև 1136—1138 թթ. մեծ ռազմարշավը դեպի Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք.

ա) Օգտվել Իկոնիայի սուլթանության և Դանիշմանյան ամիրության քաղաքական բախումներից և երկպառակտչական պատերազմներ հրահրել նրանց ներսում և միմյանց միջև: «Բարբարոս» ժողովուրդների նկատմամբ նման քաղաքականությունը բացահայտորեն խրախուսվում էր Աննա Կոմնենունեի պատմական երկասիրության մեջ²⁷:

Արագի կողմը (Հմմա. F. Chalandon, Les Comnènes, տ. II, թ. 78—80): Նմանատիպ մի իրազրություն էլ Բյուզանդական կայսրությունը փորձում էր օգտագործել սեփական շահերի համար 1134 թ., երբ դանիշմանյան ամիր Մուհամեդը ընդհարվում էր Իկոնիայի սուլթան Մասուդի հետ (նույն տեղում, էջ 88—89): Գանգրայի և Կաստմոնի համար մզվող պատերազմում Իկոնիայի սուլթանը դաշնակից օգնական բանակ է ուղարկում Հովհաննես թ Կոմնենոսին (տե՛ս I. C., թ. 14):

27 Տե՛ս Աննա Կոմնինա, Ալեքսանդր, ս. 184—185, շԲյուզանդական կայսրությունը փորձում է իր շահերի համար օգտագործել նորմանների պառակտումը) Աննա Կոմնինա, ս. 195—196 (Ալեքս Ա Կոմնենոսը Բուրսուի դեմ օգնություն է ցույց տալիս Արուլ Քասիմին): Ըստ Աննա Կոմնենունի ինքնակալը զորք ուղարկեց, ոչ թե նրա համար, որ օգնի Արուլ Քասիմին, այլ ընդհակառակն, քանի որ այն ժամանակ կայսրության երկու թշնամիները պատերազմում էին միմյանց դեմ, պետք էր օգնություն ցույց տալ ավելի թույլին (տե՛ս Աննա Կոմնինա, ս. 195): Հովհաննես թ Կոմնենոսը այս խնդրում ևս շարունակում էր իր հոր քաղաքական կուրսը: Բյուզանդական կայսրության սահմաններ ներխուժած սկյութների (ներկա դեպքում Հունգարների) դեմ ռազմարշավ կազմակերպելիս Հովհաննես թ-ը, ինչպես տեղեկացնում է Կիննամոսը, ձմեռում է Բերոյայում (բառ դար Մակեդոնիայում) նպատակ ունենալով. ա) պատրաստվել պատերազմին, թ իսկ ավելի շատ ցանկանում էր բարեկամանալ նրանց ցեղապետներից ուժանց հետ, որպեսզի դրանով սկյութներին բաժանելով առանց գժվարության հաղթի (ու նէ դիմէւ տան էն սփօւ վալարչան ւունէ էտարիստիւ, ու ան օսւա տօնէ ձլլուս չարէս ձկոլաբնան ու սն ուն ունը ուտօն շտանիւ) (I. C., թ. 7).

բ) Դանիշմանյան ամիրությանը դուրս շպրտել մինչև Հալիս գետը ընկած մերձական տարածքներից (Նկատի ունենք Պափլագոնիա և Արմենիակոն բանակաթեմերի ծովամերձ գոտին)²⁸ և ամրացնել կայսրության պաշտպանական կառույցները այդ շրջանում։ Այդ գործողությունների՝ շնորհիվ վերջապես ցամաքով Բյուզանդական կայսրությանը պետք է միանար մինչ այդ միայն ծովով կայսրության հետ կապված Խալդիա հին բանակաթեմը՝ Տրապիզոն կենտրոնով։

գ) Հաստատում դարձնել Իկոնիայի սուլթանության և Բյուզանդական կայսրության սահմանները և արևելքից ու հյուսիսից վնասազերծել միջերկրածովյան շրջանները՝ հատկապես Ատալիայի նավահանգիստը, որը հենակետ պիտի ծառայեր գեպի Հյուսիսային Ասորիք ծրագրավորված ուղարշավին²⁹։

Իկոնիայի սուլթանության և Դանիշմանյան ամիրության հետ քաղաքական փոխարարերությունների այս փուլում (1129—1139) Բյուզանդական կայսրությունը փորձում է պահպանել առաջինի հետ բարի-դրացիական փոխարարերություններ, իսկ Դանիշմանյան ամիրության դեմ վարում էր թշնամական քաղաքականություն՝ պարբերաբար արշավանքներ կազմակերպելով նրանց կողմից նվաճված Պափլագոնիա և Արմենիակոն բանակաթեմերի տարածքների վրա։

Քաղաքական այս գիծը ժի գարի 30-ական թվականների սկզբին խոշընդուի հանդիպեց կայսրության ներսում։

28 Ֆ. Շալանդոնը ենթադրում է, որ միայն 1125 թ. հետո է որ Դանիշմանյան թյուրքերը ամրցներ են նվաճում Սև ծովի ափերին (տե՛ս F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 38): Պետք է հշել, որ Միքայել Ասորին Դանիշմանյանների մատուց ծովափ թվագրում է 1129/30 թ. և ամիր Ղազին հաղթելով Կապագովկիայի բոլոր թյուրքերին, միայնակ էր իշխում և ներխուժեց ծովափ։ Այստեղ Կասիանուս անումով մի հույն գտավ, որին պատկանում էր շրջանը։ Վերջինս ինքնակամ գնաց գտնելու ամիր Ղազուն և նրան հանձնեց սեծովյան (Pont) ափերի բոլոր ամրցները։ Ղազին նրան իր երկրում մի պաշտոն տվեց և Կասիանուսը նրա մոտ ծառայության մտավ (M. S., t. III, p. 227; F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 81).

29 F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 46—48.

Պալատական ընդդիմագիր կուսակցությունը գլխավորում էր Խաչակ Կոմնենոսը՝ կայսեր եղբայրը, որն աջակցել էր Հովհաննես Բ-ին իշխանության հասնելու գործում³⁰: 1130/1 թ. նա փախավ Դանիշմանյան թյուրքերի տարածքները³¹: Կայսրության ներսում սկսված քաղաքական պայքարը, որը վերածվել էր միջազգային արկածախնդրության, սեփական կենտրոնախույս ձգտումների համար էր փորձում օգտագործել Տրապիզոնի դուքս Կոստանդին Գարրասը, որը 1126 թ. ինքնիշխան էր դարձել³²:

Փաստորեն Ղազի Դանիշմանյանը Կաստամոնի և Գանգրայի համար մղվելիք պայքարի նախօրյակին Հովհաննես Բ-Կոմնենոսի արկելյան քաղաքականության դեմ պայքարող դաշնակցություն ստեղծեց, որի մեջ ներգրավել էր Իկոնիայի սուլթանությանը, Տրապիզոնի դքսությանը և բյուզանդական պետության և արքունիքի ինչ-ինչ սոցիալական խավերի քաղաքական շահերը արտահայտող Խաչակ Կոմնենոսին:

Չատ կարճ ժամանակով այդ դաշինքին միացավ նաև Լեռնային Կիլիկիայի Ռուբինյան իշխան Լևոնը: Եթե ուշադիր հետեւենք Միքայել Ասորու պատմության մեջ հետաքրքրող հատվածի շարադրանքին, պարզ կդառնա, որ Լևոնը՝ բյուզանդական կայսրության ստորական, միացել է այդ քաղաքական դաշինքին՝ ենթարկվելով Ղազի Դանիշմանյանի ուղմական և քաղաքական ճշշմանը³³, Ասորի պատմիշը հաղորդելով Ղազիի Կողմը Խաչակ Կոմնենոսի անցնելու իրադարձության, ապա, կայսեր եղբոր Տրապիզոն՝ Կոստանդին Գարրասի մոտ այցելություն կատարելու մասին, նույն տարվա (1131/2 թ.) իրազարձությունների շարադրանքում ավելացնում է, որ Ղազին ներխուժել է նաև Կիլիկիա Լևոն հայի երկիրը, և դրավել է որոշ ամրոցներ ու «Լևոնը ենթարկվեց» նա երդվեց այլևս չներխուժել և ոչ էլ (զինված—Ա. Բ.)

³⁰ N. Ch., p. 8.

³¹ M. S., t. III, p. 230; F. Chatandon, Les Comnènes, t. II, p. 84.

³² F. Chatandon, Les Comnènes, t. II, p. 37.

³³ M. S., t. III, p. 227, 230.

մարդիկ ուղարկել ամիր Ղազիի երկրները և ամեն տարի հարկ վճարել Ղազիին։ Վերջինս հավատ ընծայելով նրա խոսքերին, թողեց նրան և հեռացավ։ Լեռնը խարեց և ոչինչ շտվեց։ Ամիր Ղազին եկավ Մելիտենե։ Նրա փեսա սուլթան Մասուդը և Հույների կայսեր եղբայր Խսահակը, որը վերադարձել էր Թաթրասի մոտից, եկել էին նրան (Ղազիին—Ա. Բ.) այնտեղ (Մելիտենեում — Ա. Բ.) գտնելու և այնտեղ մնացին ողջ ձմեռը։ Ապա Խսահակը գնաց Լեռնի մոտ և Լեռնը տվեց իր գստերը կայսեր բարեկամին³⁴ երկու քաղաքների հետ՝ Մոպսուեստիայի և Աղանայի։ Այնուհետև նրանց միջև վեճ ծագեց։ Լեռնը ետ վերցրեց Հույներից (այն բոլորը, ինչին նրանք տիրում էին) և Խսահակը (փախավ) իր որդու հետ Մասուդ սուլթանի մոտա³⁵։

Այստեղ պետք է հատկապես շեշտել այն հանգամանքը, որ Լեռն Ռուբինյանը Խսահակ Կոմնենոսին է հանձնել³⁶ մասնավորապես այն շրջանները, որոնց նկատմամբ հավակնություններ ուներ Բյուզանդական կայսրությունը, և որոնք կայսրության սեփականությունն էին համարվում Դեսպոլյան հաշտության պայմանագրով։

Վերորերյալ հատվածում շարադրված դեպքերի հաջորդականությունը հուշում է, որ Կիլիկիայի իշխանը, մինչև Ղազի Թանիշմանյանի 1131/2 թ. ուղարշավը դեպի Կիլիկիա, դաշնակցել է, կամ էլ բյուզանդամետ դիրք գրավել, աջակցել է 1130/1 թ. և դրանից առաջ հյուսիսից Դա-

³⁴ Միքայել Ասորու Ժամանակագրության ֆրանսերեն թարգմանության մեջ այս բառը ժ. — թ. Շարօն վերարտադրել է. «au fils du frere», նկատի ունենալով Խսահակ Կոմնենոսի որդուն, սակայն Բար Երրեսուի ժամանակագրության մեջ մեզ հետաքրքրող հատվածը այլ բռվանդակություն է ստացել. „Isaac donna sa fille à Léon” (M. S., t. III, p. 230, n. 4, հմմ. Bar Hebraeus, London, 1932, t. I, p. 255).

³⁵ M. S., t. III, p. 230—231.

³⁶ Ըստ Բար Երրեսու՝ նշված քաղաքները Լեռն Ռուբինյանը հանձնել է Խսահակ Կոմնենոսին, որպես ամուսնական օժիտ (տե՛ս Bar Hebraeus, London, 1932, t. I, p. 255).

Նիշմանյան ամիրության վրա հարձակվող Հովհաննես Բ Կոմնենոսին³⁷:

Բյուզանդական կայսրության և Կիլիկիայի Ռուբինյան իշխանության միջև, մեր կարծիքով արդեն ԺԲ դարի 20-ական թվականների վերջին, դաշինք էր ձևավորվել ընդդեմ Դանիշմանյան ամիրության:

Այս առումով չափազանց ուշագրավ է 1126—1127 թթ. Իկոնիայի սուլթանության ներսում ծավալված ներքաղաքական պայքարի ուսումնասիրությունը: Եվ բյուզանդական կայսրությունը, և Կիլիկիայի Ռուբինյան իշխանությունը ժամանակ առ ժամանակ միջամտում էին այդ պայքարի ընթացքում Փոքր Ասիայի սելջուկյան պետության ներքին գործերին: Իկոնիայի սուլթան Մասուդի դեմ ապստամբել էր նրա եղբայրը՝ Արապը, քանի որ սուլթանը. «օգնություն ցույց էր տվել իր եղբորը Մելիտենեում³⁸ և թողել էր այն (Մելիտենեն—Ա. Բ.) Ղազիին»³⁹: Դանիշմանյան Ղազիի փեսա և դաշնակից սուլթան Մասուդը պարտություն կրելով Արապից, փախչում է Հովհաննես Բ Կոմնենոսի մոտ⁴⁰: Հատկանշական է, որ պայքարի առաջին փուլում Մասուդին դաշնակցում և օգնություն է ցույց տալիս Բյուզանդական կայսրությունը: Իկոնիայի սուլթանը բյուզանդական օգնությամբ Կոստանդնուպոլիսից վերադառնում է իր տիրույթները և միանալով Դանիշմանյան Ղազիին, իկոնիայի սուլթանության սահմաններում վերականգնում է իր իշխանությունը⁴¹: Արապը ստիպված հեռանում է իկոնիայի սուլթանու-

37 Այլ կերպ անհնար է բացատրել Միքայել Ասորու նկարագրած (M. S., t. III, p. 230) Ղազի Դանիշմանյանի 1131/2 թ. պատժիլ ուազմարշավը դեպի Կիլիկիա, և դրանից հետո Անոն Ռուբինյանի վերցրած պարտավորությունը՝ այլևս զինված ջոկատներ շուղարկել ամբող Ղազիի երկրները:

38 Մելիք Արապը իր եղբոր՝ Իկոնիայի սուլթան Մասուդի դեմ է դուրս գալիս 30000-ոց զորաքանակով և շրջապատում է Իկոնիա քաղաքը (տե՛ս M. S., t. III, p. 223):

39 M. S., t. III, p. 223.

40 Տե՛ս M. S., t. III, p. 223.

41 Եռոյն տեղում:

թյան տարածքներից և ապաստան է գտնում Կիլիկիայում՝
 «Բորոս Հայի» մոտ⁴²: Պայքարի երկրորդ փուլում, Արապը
 պատերազմում է Ղազի Դանիշմանյանի դեմ, որին դաշնակ-
 ցել էր Մասարայի տեր ամիր Յանինան⁴³: Բայ Միքայել
 Ասորու, 1127 թ. ամռանը Արապը «միավորից թյուրքերին և
 Հայերին»⁴⁴: Մեր կարծիքով, հենց այս պահից էլ Բյուզան-
 դական կայսրությունը Հովհաննես Բ Կոմնենոսի ղեկավա-
 րությամբ կամաց-կամաց հակվում է դեպի Արապը և Կիլի-
 կիայի Հայկական իշխանությունը, որոնք պայքարում էին
 Բյուզանդիայի արևելյան քաղաքականության ամենաոխերիմ
 Հակառակորդներից մեկի՝ Դանիշմանյան ամիրության դեմ:
 Մեզ թվում է, թե Բյուզանդիան վախենում էր Խկոնիայի
 սուլթանության և Դանիշմանյան ամիրության քաղաքական
 դաշինքից, և այս հողի վրա ձևավորվում է Դանիշմանյան
 ամիրության դեմ Արապի գլխավորած Հայ-բյուզանդա-
 թյուրքական քաղաքական խմբակցությունը, որի նկատմամբ
 կարծես թե շեզոք դիրք է գրավում Խկոնիայի սուլթան Մա-
 սուլը: Սակայն Ղազի Դանիշմանյանը կարողանում է ջախ-
 չախել Արապին և հասնել մինչև Կոմանա և Անկյուրիա, ուր
 Արապը բանտարկել էր Ղազիի որդի Մուհամեդին: Դանիշման-
 յանների այս նոր Հաջողությունները ավելի մտահոգեցին
 Բյուզանդական կայսրությանը, այդ էր պատճառը, որ Հովհ-
 աննես Բ Կոմնենոսը ստիպված եղավ նյութական և բարո-
 յական ավելի շոշափելի օգնություն ցույց տալ նրանց Հա-
 կառակորդներին: Ղազի Դանիշմանյանից կրած պարտությու-
 նից հետո Արապը ստիպված փախչում է Կոստանդնուպոլիս,
 որտեղ էլ կիսատ թողնելով իր գործը, կնքում է մահկանա-
 ցուն⁴⁵:

⁴² M. S., t. III, p. 223; F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 79.

⁴³ Տե՛ս M. S., t. III, p. 223, n. 16.

⁴⁴ Տե՛ս նույն տեղում:

⁴⁵ M. S., t. III, p. 223—224; F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 79—80.

Բյուզանդական կայսրության և Դանիշմանյան ամիրության թշնամությունը ավելի է սրվում 1129/30 թ., երբ կայսրությանը ենթակա պաշտոնյա-ազնվականներից մեկը՝ Կամիանուս անունով, իր տիրուցիքները հանձնում է ամիր Ղազիին և նրա մոտ ծառայության է անցնում⁴⁶:

Փոքր Ասիայում բարձրացող Դանիշմանյան ամիրությունը Կիլիկիայի Ռուրինյան հայկական իշխանության ամենահզոր հակառակորդն էր: Այդ է պատճառը, որ ԺԲ դարի 20-ական թթ. Թորոս Ա-ը դաշնակցում էր բոլոր այն քաղաքական ուժերի հետ, որոնք բախման մեջ էին այդ քաղաքական միավորման հետ և կարող էին թուլացնել նրա ուազմական հզորությունը:

Թորոս Ա Ռուրինյանի քաղաքական այս կուրսը որոշ սրբագրումներով շարունակում էր նրա եղբայր Լևոն Ա Կիլիկիայի իշխանը: ԺԲ դարի 20-ական թթ. վերջին Ռուրինյանների հակադանիշմանյան քաղաքականությունը պայմանավորված էր Դանիշմանյան ամիրության աճող հզորությամբ, և որը ամեն մի հարմար առիթով կարող էր հարվածել Կիլիկիայի հայկական իշխանության կենսական շահերին:

Վերադառնանք 1131/2 թ. իրադարձություններին: 1131/2 թ. Կիլիկիան ուազմարշավով Ղազի Դանիշմանյանը նպատակադրվել էր հարված հասցնել Բյուզանդական կայսրության դեմ պայքարի ընթացքում իր թիկումքում գտնվող Լիոնային Կիլիկիայի հայկական իշխանությանը և այն ներգրավել հակարյուղանդական խմբակցության մեջ: Դանիշմանյան ամիրության այդ քաղաքականությունը, ինչպես վերևում տեսանք, հաջողությամբ պսակվեց⁴⁷:

Լևոն Ա Ռուրինյանի հետ կնքած հաշտության պայմանագիրը ստորագրելուց հետո, Դանիշմանյան ամիր Ղազին վերադառնում է իր իշխանության սահմանները: Մյուս տար-

46 M. S., t. III, p. 227; F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 81.

47 ԺԲ դարի 30-ական թթ. Դանիշմանյան ամիրության հզորացման տարիներն էին (I. Melikoff, Danishmendides. - EI, t. II, 1965, p. 112).

վա (1132/3) գարնանը Կիլիկիա է գալիս հակարյուղանդական խմբակցության ոգին՝ Հովհաննես թ Կոմնենոսի եղբայր Իսահակ Կոմնենոսը, որն իր որդուն ամուսնացնում է Լևոն Ա. Ռուբինյանի դստեր հետ և նրանից, որպես հարսանեկան օժիտ, ստանում է Աղանա և Մոպսուեստիա քաղաքները⁴⁸: Դանիշմանյան ամիրության հետ հաշտությունը, և գրան հաջորդող դեպքերը Կիլիկիայում, մեր կարծիքով, ուղղված պետք է լիներ Բյուզանդական կայսրության հակադանիշմանյան քաղաքականության դեմ, քանի որ Հովհաննես թ Կոմնենոսը պատերազմական վիճակի մեջ էր Ղազի Դանիշմանյանի դեմ և գրեթե ամեն տարի ռազմարշավ էր ձեռնարկում Պաֆլագոնիա և Արմենիակոն հին քանակաթեմերի ծովափնյա տարածքները վերագրավելու հույսով⁴⁹: Սակայն Ռուբինյան հայկական իշխանությունը այլ ելք չուներ: Փոքր Ասիայում չէր մնացել որևէ հարևան քաղաքական միավորում, որը կարողանար հակահարված տալ Դանիշմանյան ամիրության աճող հզորությանը: Լևոն Ա.-ի առջև կար երկու ճանապարհ՝ կամ մինչև վերջ շարունակել Դանիշմանյաների դեմ պայքարը, որը կարող էր ողբերգական հետևանքներ ունենալ Կիլիկիայի Ռուբինյան իշխանության համար, կամ էլ դաշնակցելով Դանիշմանյաների հետ ժամանակավորապես իր կողմը գրավել ամիրությանը:

Հետևաբար կարելի է ենթադրել, որ Լևոն Ռուբինյանը, ենթարկվելով Ղազի Դանիշմանյանի քաղաքական ճնշմանը, խզում է իր հարաբերությունները Բյուզանդական կայսրության հետ, դրանով իսկ Ռուբինյան հայկական իշխանությունը ազդարարում էր Կիլիկիայի դուրս գալը Բյուզանդական կայսրության ստորակայի կարգավիճակից⁵⁰:

Բյուզանդական կայսրության դեմ գործող խմբավորման հետ դաշնակցելու ապացույց է նաև այն, որ Լևոն Ա. Ռուբինյանը Կիլիկիայում քաղաքներ է շնորհում Հովհաննես թ-

⁴⁸ M. S., t. III, p. 230.

⁴⁹ M. S., t. III, p. 230; F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 82

⁵⁰ Այս մասին տե՛ս նաև Ա.-Ե. Հ. Քաստինի, Կիլիկիոյ հայկական իշխանապետութինը..., էջ 183—184:

դեմ ապստամբած, բյուզանդական պալատական ընդդիմադիր խմբակցության պարագլուխ՝ Խսահակ Կոմնենոսին։ Սակայն շուտով, մեկ անհայտ պատճառներով, Լևոն Ա.-ը դադարում է Հովհանավորել Խսահակ Կոմնենոսին, և նա փախչում է Իկոնիայի սուլթան Մասուդի մոտ։ Այս իրադարձությունը պետք է համարել բյուզանդական օպոզիցիայի գույնավորությամբ ստեղծված դաշինքի քայլքայման գլխավոր կանխանշաններից մեկը։

Չնայած այս կարևոր քաղաքական իրադարձությանը, Լևոն Ա. Ռուբինյանը իր կապերը վերջնականապես գեռ չէր խզել Դանիշմանյան ամիրության հետ և ինչպես պատմում է Միքայել Ասորին 1132 թ. գեպքերի շարադրանքում. «Հույների կայսրը (Հովհաննես Բ Կոմնենոսը—Ա. Բ.), իր կողմից, շարացած գուրս եկավ Թյուրքերի և հայերի դեմ։ Նա ջարդեց բազմաթիվ թյուրքերի, որոնք (ապրում—Ա. Բ.) էին ծովափում և վերցրեց երկու ամրոց։ Նրա մեծամեծները կրկին նրա դեմ ապստամբեցին և ուղարկեցին փնտրելու նրա եղբորը (Խսահակ Կոմնենոսին—Ա. Բ.), որպեսզի նրան իշխող դարձնեն։ Այդ պատճառով, նա (Հովհաննես Բ Կոմնենոսը—Ա. Բ.) փութով վերադարձավ (Կոստանդնուպոլիս—Ա. Բ.)»⁵¹։

Դանիշմանյան ամիրության և Կիլիկիայի հայկական Ռուբինյան իշխանության քաղաքական դաշինքը իր սուրծով պարունակած էր ոչ միայն Բյուզանդական կայսրության⁵², այլ նաև արևելքի լատին իշխանությունների դեմ։

Բյուզանդական կայսրության և արևելքի լատին իշխա-

51 M. S., t. III, p. 232։ Միքայել Ասորու ռժամանակագրության Հետապա շարադրանքուն կարելի է ենթադրել, որ հայ-դանիշմանյան դաշտավագա շարադրանքուն է Իկոնիայի սուլթանությունը, ավարառելով մինչև Սույներին աշակեցել է Իկոնիայի սուլթանությունը։ Հետաքրքիր է նաև, որ վերոհիշյալ բյուզանդականյան բախումից հետո ամիր Ղազին Մասուդի հետ միապահանիշմանյան բախումից հետո ամիր Ղազին Մասուդի հետ միակ կրկին արշավում են բյուզանդական ծովափությունը և պաշարում են սին կրկին արշավում են բյուզանդական մասունքի վրա։ Ապա դադարում Տյուն ամրոցը (տեղը անհայտ) և բյուզանդականներից 4 հազար դինար վերցնելով հեռանում են (M. S., t. III, p. 232—233)։

52 Այս դաշինքի գոյությունը և հակարյուղանդական ուղղվածությունը նկատել է նաև Կլոդ Կահեն (C. Cahen, La Syrie..., p. 359)։

նությունների միջև կարծես ուժերի տեղաբաշխում էր կատարվել. բյուզանդական գորքերը հյուսիսից ձևշում էին գործադրում Դանիշմանյան ամիրության վրա, իսկ Անտիոքի լատին իշխանությունը ամեն հարմար առիթով ոտնձգություններ էր կատարում, ներխուժելով Կիլիկիայի Ռուբինյան իշխանության սահմանները⁵³.

Հարց է առաջանում. որոնք էին այդ հակադիր դաշինքների իրական քաղաքական ազդակները և ինչպես են դրանք մեկնարանգում միջնադարյան պատմագրության մեջ։ Այս առումով ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Նիկետաս Խոնիատեսը։ Խոսելով ԺԲ դարի 30-ական թվականներին Բյուզանդական կայսրության և Դանիշմանյան ամիրության թշնամական փոխհարաբերությունների մասին, պատմիլը ամիրության բնակիչներին անվանում է պարսկահայեր (περσαρμενίοι)⁵⁴, իսկ դանիշմանյան ամիրը Ղազիին կոչում է Կապաղովկիայի պարսկահայկական իշխող⁵⁵. Զափազանց ուշագրավ է նաև այն պարագան, որ Ղազիի որդի Մուհամեդ Դանիշմանյանի սոհնմածառը Նիկետաս Խոնիատեսը հասցնում է մինչև Արշակունիներ⁵⁶, ԺԲ դարի հայկական

⁵³ Cf. Cahen, La Syrie..., p. 359.

⁵⁴ Նիկետաս Խոնիատեսի մոտ այս տերմինը արձանագրված է երկու անգամ (տե՛ս N. Ch., p. 18, 71, 75)։ Փոքր Ասիայի թյուրք բնակչությանը ԺԲ-ԺԳ դարի բյուզանդական հեղինակները հիմնականում անվանում են պարսիկներ (Հմմտ. *M. B. Բանիկօս. Пути имманентного анализа византийских источников по средневековой истории СССР (XII—первой половины XIII в.)—Методика изучения древнейших источников по истории народов СССР. Сборник статей, М., 1978, с. 98).

⁵⁵ Նիկետաս Խոնիատեսը այդ մասին գրում է. օ γάρ τὸν καιρὸν ἐκεῖνον τῆς Καππαδοκῶν χώρας κρατῶν Περσաρμένιος Τανιτάνιος (N. Ch. p. 19).

⁵⁶ Նիկետաս Խոնիատեսի մոտ մեզ հետաքրքրող հատվածն հետևյալ տեսքն ունի. Դն γάρ օ τῆς Καισαρείας տότε կրատῶν Μουχօնμετ, περὶ ո՞ս εἰπεῖν էֆθημεν, πλείστην ծու περιβεβλημένος լεցόν, μέρος τε τῆς Ιβηρίας նուայացնենոς και նուա τῆς τῶν ποταմῶν Μίσης παραστησάμενος, τὸ μὲν ձնաթեν ցένος նේ τούς 'Αρշակիաց սυնալειփնենος, τὸ δὲ προσεχές էն Τανιտանίων καταցուμενος, իսան ծ'օմու տολμηրίατ και անձրիտαι και τῶν շειրաշաբենων τὰς չόνաς πόλεις 'Ρωμաίων օ բնիւտա κράτιστοι τε και անչիւնետοι (N. Ch., p. 34).

Ժամանակագիրներից դանիշմանյան ամիրներին հայկական ծագում է վերաբրում միայն Մատթեոս Ռուհայեցին⁵⁷:

Դանիշմանյան տոհմի ծագման խնդիրը ցայսօր, տեղեկությունների հակասականության պատճառով, բավարար լուսաբանություն չի ստացել⁵⁸: Դեռևս գիտության կողմից լիովին մերժված չէ Մատթեոս Ռուհայեցու տեղեկության հավաստիությունը⁵⁹ և բացառված չէ, որ առաջին դանիշմանյան ամիրը հայկական ծագում ունենալու վարկածը միջնադարյան պատմագրության մեջ կարող էր առաջանալ և գոյատել, մեր կարծիքով, երկու հնարավոր պարագաներում.

ա) Այս վարկածը կարող էր առաջանալ Դանիշմանյան ամիրության սահմաններում հոծ հայկական բնակչության առկայության պայմաններում, այն դեպքում, եթե թյուրք ամիրները փորձեին իրենց բաղաքական շահերի համար օգ-

57 «Յայսմ ամի մեռաւ Դանիշմանն մեծ ամիրայն Հոռոմոց աշխարհին, որ լեալ էր յազգէն Հայոց, այր բարի և շինող աշխարհի և էր յոյժ ողորմած ի վերաբ հաւատացելոցն Քրիստոսի...» (Մատթեոս Ռուհայեցի, էջ 297):

58 Հմմտ. I. Melikoff, *Danishmendides*, -E1, Paris, 1935, 1. II, p. 112: Զափազանց հետաքրքիր, սակայն դեռևս շհմնավորված վարկած է այդ մասին առաջ քաշել ակադ. Ս. Երեմյանը (տե՛ս Երա, Լիպարիտ զորագրի հաշորդները և Դանիշմանյան տոհմի ծագման խնդիրը, ՏՀԿ, 1947, № 8, էջ 65—79, Խոյնի, Լիպարիտ զորագրը և նրա նախորդները, Ն. Մարի անվան կարինետի աշխատություններ, № 2, Սրբան, 1947, էջ 103—142): Զարգացնելով Կոմմագենացու (Փիլարտոս Հայը, Հալեպ, 1930 էջ 23—24, ծան. 27) և Ա. Ալպոյանյանի (Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Հ. Ա, Գագիր, 1937, էջ 485—486) նեթաղրությունը, թե առաջին Դանիշմանյան ամիրան ունի հայ-վրացական ծագում, ակադ. Ս. Երեմյանը այդ տոհմը կապում է Լիպարիտյանների հետ:

59 Ֆրանսիակի արևելագիւտ Կլոդ Կահենը սխալմամբ հայկական սկզբնաղբյուրներին է վերաբրում Նիկետաս Խոնիատեսի վերորերյալ տեղեկությունը. Some Armenians authors indeed wished to regard him as a Persian, or even as a descendant of the Arsacids (Cl. Cahen Pre-Ottoman Turkey, London, 1968, p. 82): Կ. Կահենի նշգած աշխատությունն հանրամատչելի բնույթը, գիտական ապարատի բացակարությունը և հեղինակի որոշ հակագիտական միտումները ինձ թույլ են տվել երրեմն շրջանցելու այդ աշխատությունը:

տագործել հայկական բնակչության ուազմական և տնտեսական կարողությունը։ Պետք է նկատի ունենալ, որ Կապադովկիայում հաստատված Դանիշմանյան ամիրությունը կազմավորվել էր մի այնպիսի տարածքի վրա, ուր մինչև թյուրքսելջուկյան նվաճումները բնակություն էր հաստատել Բյուզանդիայի կողմից նվաճված հայկական թագավորությունների ավատատիրական ավագանին սեփական դինված ջոկատներով և մեծ թվով հայկական բնակչությամբ⁶⁰։

Բ) Նման քաղաքական տեսություն Բյուզանդական կայսրության ներսում կարող էր առաջանալ նաև հայ-դանիշմանյան դաշինքի տարիներին (1131—1136)։ Մեր կարծիքով այս ենթադրության ամենածանրակշիռ փաստարկները Նիկետաս Խոնիատեսի հաղորդած տեղեկություններն են, որոնք անկասկած արձագանքն են ԺԲ դարի 30-ական թվականների դրավոր հուշարձանների, կամ մեզ շհասած վավերագրերի վկայությունների։

Բյուզանդական կայսրության և Դանիշմանյան ամիրության քաղաքական պայքարը բավարար լուսաբանում է բատացել բյուզանդապիտության տեսանկյունից⁶¹ և կրկին այդ ուազմարշավներին անդրադառնալը դուրս է մեր աշխատության հետապնդած նպատակներից⁶²։ Պետք է միայն վերստին

60 Կապադովկիա գաղթած հայ ավատատերերի և բնակչության մասին *mb'» G. Dédéyan, L'immigration Arménien en Cappadoce au XIe siècle, Byz., t. XLV, f. 1(1975), p. 41—117 մասնագորապես՝ ժանությունը 2, ուր հզված է այդ հարցի շուրջ լույս՝ տեսած հիմնական գրականությունը Այստեղ եղածին կարելի է միայն ավելացնել։ Ալպոյանյան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա., (էջ 412—502) աշխատությունը։*

61 F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 84—91.

62 Բյուզանդա-դանիշմանյան քաղաքական հակամարտության ժամանակակրությունը դեռ ամբողջովին բացահայտված չէ։ Այդ անցուղարձերի ժամանակագրությունը վերականգնելու համար մանրամասնորեն պետք է ուսումնասիրել ոչ միայն մեղ հասած բազմալեզու պատմագրական երկները, այլ նաև դեպքերին ժամանակակից ժամանագիրներին պատկանող գեղարվեստական ստեղծագործությունները (ճառեր, նիրառվաններ), որոնք նվիրված են Հովհաննես թ Կոմնենոսի ուազմարշավներին։ Այդ հեղինակների մեջ ամենակարևորներն են Թեոդորոս Պրոգրոմոսը և Միքայել Բառիկոսը։ Թևողորոս

շեշտել, որ 1132—1135 թթ. Բյուզանդական կայսրության և Դանիշմանյան ամիրության պատերազմների ընթացքում Կիլիկիայի հայկական իշխանությունը Դանիշմանյան ամիրության դաշնակիցն էր և եթե բառացի հասկանանք Միքայել Ասորու վկայությունը, ապա նրանք միացյալ բանակներ էին դուրս բերում Հովհաննես թ Կոմինենոսի դեմ⁶³: Միայն հատուկ նշենք, որ բյուզանդական պատմիչները և մանավանդ Հովհաննես Կիննամուսը շեշտում են, թե Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք ուղղմարշավը (1136 թ.) տեղի է ունեցել Գանգրա քաղաքի և Կաստամոն ամրոցի գրավումից անմիջապես հետո⁶⁴:

Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականու-

Թրոգրոմոսի երկերից մեկի՝ „Տօն անոս Եփ բեղալոնիք ուրժարօշենից ու աւտօքրածոր ասրդ ՚Իանոն ՚Վո Կօմոնցի չառա Պերսան ՚Եզրջօմենու ՚Են ծենատուն (P. G., t. 133, p. 1362), գրման ժամանակը չետրողանալով ճշգրիս որոշել, Ֆ. Շալանդրնը նեթադրում է, թե հեղինակը 1130—1135 թթ. զիան բյուզանդական 10 ուղղմարշավ դեպի Դանիշմանյան ամիրության տարածքները, այն դեպքում, երբ Միքայել Ասորին գտնել միայն 5 ուղղմարշավ (F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 82 n.4): Մեր կարծիքով ներբողւթյանը գրված է 1138 թ. հետո (մինչև 1143 թ.) և Թեսոգրոս Պրոգրոմոսը իր հաշվի մեջ է մտցրել Հովհաննես թ Կոմինենոսի Փոքր Ասիա կատարած բոլոր ուղղմարշավները՝ ներառյալ 1136—1138 թթ. Կիլիկիա-Հյուսիսասորիքյան ուղղմարշավը, որը մի քանի անգամ հիշատակվում է այդ երկի մեջ (P. G., t. 133, p. 1362—1370): Պարսիկների դեմ 10-րդ ուղղմարշավ ասելով, Պրոգրոմոսը նկատի ունի, մեր կարծիքով, ինչպես Դանիշմանյան ամիրության և Խոնիայի սուլթանության դեմ ձեռնարկված ուղղմարշավները, այնպես էլ Հյուսիսասորիքյան ուղղմարշավը, որը մասամբ ընթացավ Հալեպի աթաբեկության տարածքում:

⁶³ M. S., t. III, p. 232.

⁶⁴ I. C., p. 15; N. Ch., p. 18—20; F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 90—91.

Կաստամոն ամրոցի համար մզկող պայքարում Բյուզանդական կայսրության հաջողությունները այնքան էլ ակնառու չեն, ինչպես այն փորձում են ներկայացնել բյուզանդական պատմիչները և նրանց հիման վրա իր ուսումնասիրությունը շարադրող Ֆ. Շալանդրնը: Ըստ արևելյան սկզբնաղբյուրների, բյուզանդացիների կողմից քաղաքը գրավվելուց շատ չանցած, այն կրկին վերադրավել են Դանիշմանյանները (տե՛ս C. J. Heywood, Kashtamouni, EI, n. éd., t. IV, p. 767—769):

թյանը ԺԲ դարում բնորոշ մոտիվների մեջ իրենց ուրույն տեղն ունեին նաև քաղաքական ամուսնությունները: Երբ խոսքը վերաբերում է Հայ-դանիշմանյան քաղաքական դաշինքին, երբեք չպետք է մոռացվի այն հանգամանքը, որ Բյուզանդական կայսրությանը ինքնարերաբար դաշնակից է դառնում Անտիոքի լատին իշխանությունը: Հովհաննես Բ Կոմնենոսը դեռևս իր իշխանության սկզբին (1118—1120 թթ.) փորձում էր իր ավագ որդի Ալեքսի Համար Հարսնացու գըտնել Անտիոքի նորմանական ծագում ունեցող իշխանադրստրերի մեջ⁶⁵: Քաղաքական ամուսնությունների միջոցով հետագայում ևս Բյուզանդական կայսրությունը փորձում էր լուծել արևելյան քաղաքականության առջև ծառացած որոշակի խնդիրներ:

ԺԲ դարի 20-ական թթ. ապահովելով Փոքր Ասիայի Հարավային ծովափերի անվտանգությունը, իսկ 30-ական թթ. Դանիշմանյան ամիրությանը Հնարավորին շափով զրկելով սկզբյան տիրույթներից, Հովհաննես Բ Կոմնենոսը Հնարավորություն ստացավ շարունակելու Կիլիկիայի և Անտիոքի իշխանությունների նկատմամբ Ալեքս Ա Կոմնենոսի մշակած քաղաքական գիծը⁶⁶, Նման քաղաքականության հիմնական առանձնահատկությունը բխում էր նրանից, որ Բյուզանդական կայսրությունը հենվում էր 1108 թ. Թոհեմունդ Անտիոքացու հետ Ալեքս Ա Կոմնենոսի կնքած Դեաբոլյան պալմանագրի գրույթների վրա⁶⁷, չնայած այն կենսագործե-

⁶⁵ С. Пападимитրу, Брак русской княжны Мстиславны Доброй с преческим царезицем Алексеем Комнином, ВВ, старая серия, т. XI, СПб., 1904, с. 85—87; հմտ. F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 120.

⁶⁶ F. Chalandon, Les Comnènes, t. I, p. 217—253. Հովհաննես Բ Կոմնենոսի արևելյան քաղաքականության հիմնական գրույթները շարադրված են իր մահվան նախօրյակին արտասանած ճառում (I. C., p. 26—28, N. Ch., p. 42—46):

⁶⁷ Մասնագիտական գրականության մեջ այսպես են կոչում մեզ հետաքրքրող պայմանագիրը, նկատի ունենալով վայրը, որ կնքվել է այն (ան' ա) E. Honigmann, Die Ostgrenze des byzantinischen Reiches

լու բոլոր փորձերը ձախողվեցին դեռ Ալեքս Ա.-ի կենդանության տարիներին⁶⁸:

Ուրեմն, որպեսզի բավարար պատկերացում կազմենք Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում Հովհաննես Կոմնենոսի ունեցած ակնկալիքների մասին, անդրադառնանք այդ համաձայնագրի մեջ հետաքրքրող կետերի քննությանը⁶⁹: Ըստ այդ համաձայնագրի շեղյալ էին համարվում Բոհեմունդ Անտիոքացու մինչ այդ կնքած բոլոր պայմանագրերը և նորմանական արքայազնը ստորագայի երդում էր տալիս Ալեքս Ա Կոմնենոսին և նրա որդի՝ գահաժառանգ Հովհաննեսին, նաև հակառակ ավատատիրական Եվրոպայի «իմ ստորակայի ստորական իմ ստորական չէ» սկզբունքի, Բոհեմունդ Անտիոքացու բոլոր ստորակաները պետք է ճանաշեին Բյուզանդական կայսրության գերակայությունը⁷⁰ և հավատարմության երդում տային կայսրին ու գահաժառանգին⁷¹, իսկ նրանք, որոնք արևելքում էին, Անտիոքի լատինական իշխանության տարածքում, երդում պետք է տային կայսեր կողմից այնտեղ ուղարկված պաշտոնյային⁷²:

von 363 bis, 1071.—Bruxelles, 1935. p. 125—130; Я. Н. Любарский, М. М. Фрейденберг, Девольский договор 1108 г. между Алексеем Комнином и Бозмундом, ВВ, Т. 21, 1962, с. 260—265).

⁶⁸ F. Chatandon, *Les Comnènes*, t. I, p. 249—253.

⁶⁹ Այս պայմանագրի բնագիրը պահպանված է միայն Անտառ Կոմնեների պատմության ԺԴ գլուխում և վաղուց ի վեր գրավել է բյուզանդագետների և խաչկրաց արևելքի երկրների պատմությունը ուսումնասիրող մասնագետների ուշադրությունը (տե՛ս Я. Н. Любарский, М. М. Фрейденберг, Девольский договор 1108 г. между Алексеем Комнином и Бозмундом, ВВ, т. 21, 1962, с. 260—265):

⁷⁰ Я. Н., Любарский, М. М. Фрейденберг, Девольский договор, с. 268.

⁷¹ Հովհաննես Բ Կոմնենոսը գահաժառանգ է հայտարարվել 1092 թ. (տե՛ս G. Ostrogorsky, *Geschichte...*, S. 310).

⁷² Տե՛ս հաշտության պայմանագրի 15-րդ կետը (Я. Н. Любарский, М. М. Фрейденберг, Девольский договор, с. 268).

Եթե փորձենք հետևել, ըստ Դեաբոլի պայմանագրի, Բյուզանդական կայսրության և Անտիոքի լատինական իշխանության միջև Հյուսիսային Ասորիքի բաժանման սկզբունքներին⁷³, ակնհայտ կդառնա, որ Բյուզանդական կայսրությունը հետամուտ էր ամբողջ ծովափնյա հատվածի գրավմանը: Ըստ այդ փաստաթղթի, Բյուզանդական կայսրությանը պետք է անցներ Կիդոնս և Հերմոն (Փիրամիդ) գետերի միջև ընկած ողջ Դաշտային Կիլիկիան⁷⁴: Հյուսիսային Ասորիքում Բյուզանդիան տեր էր դառնում Տրիպոլիսից հյուսիս ընկած միջերկրածովյան ողջ առափնյա գոտուն⁷⁵: Այս տեսանկյունից ուշագրավ է Գ. Միքայելյանի այն դրույթը, թե խաչակրաց նավահանգիստների առևտրական մրցակցությունը լուրջ վտանգ էր դարձել Եվրոպայի և Ասիայի միջև առևտրական միջնորդ դարձած Բյուզանդական կայսրության համար և «Անտարակույս, հենց այդպիսի պատճառներով է բացատրվում այն փաստը, որ Բյուզանդիան համառորեն ձգտում էր կրկին նվաճել Հյուսիսային Միջագետքը, Ասորիքը և Կիլիկիան, որոնք մինչև սելջուկյան ներխուժումը պատկանում էին նրան... Այդ նպատակին հասնելու համար

⁷³ Այս պայմանագրում արտացըլված Բյուզանդական կայսրության և Անտիոքի իշխանության միջև տարածքային բաժանումներին մասնաւուն անգրագործել է Ծոնիկաս Հոնիգմանը (E. Honigmann, Die Ostgrenze des byzantinischen Reiches von 369 bis 1071, Bruxelles, 1935, p. 125—130, հմմտ. նաև Յ. Ի. Լյուբարսկայ, Մ. Մ. Փրեյդենբերգ, Դևոլյսկий договор, с. 260—265).

⁷⁴ Պայմանագրում նշված են Դաշտային Կիլիկիայի կարևորագույն վարչական կենտրոնները և նավահանգստային քաղաքները Բնագիրը բերում ենք ըստ է. Հոնիգմանի ուսումնասիրության. „Τό τε θέμα τὸ Ποδανὸν καὶ Λογγινιάς καὶ πρὸς τούτοις τὸ στρατηγάτον τῆς Ταρσοῦ πόλεως καὶ ἡ "Αδανα πόλις καὶ αἱ ταῦ Μόρφου/έστιαί ἡ Ἀνάβαρξα καὶ συνεլόντα φίναι, ἡ γύρα πᾶσα τῆς Κιλικίας, διῃν ὁ Κύδνος καὶ ὁ "Ερμοὺς περιορίζουσιν“ (E. Honigmann, Die Ostgrenze..., S. 128).

⁷⁵ E. Honigmann, Die Ostgrenze..., S. 128.

լու բոլոր փորձերը ձախողվեցին դեռ Ալեքս Ա.-ի կենդանության տարիներին⁶⁸:

Ուրեմն, որպեսզի բավարար պատկերացում կազմենք Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում Հովհաննես Կոմնենոսի ունեցած ակնկալիքների մասին, անդրադառնանք այդ համաձայնագրի մեջ հետաքրքրող կետերի քննությանը⁶⁹: Ըստ այդ համաձայնագրի շեղյալ էին համարվում Բոհեմոնդ Անտիոքացու մինչ այդ կնքած բոլոր պայմանագրերը և նորմանական արքայազնը ստորակայի երդում էր տալիս Ալեքս Ա. Կոմնենոսին և նրա որդի՝ գահաժառանգ Հովհաննեսին, նաև հակառակ ավատատիրական Եվրոպայի «իմ ստորակայի ստորական իմ ստորական չէ» սկզբունքի, Բոհեմոնդ Անտիոքացու բոլոր ստորակաները պետք է ճանաչեին Բյուզանդական կայսրության գերակայությունը⁷⁰ և հավատարմության երդում տային կայսրին ու գահաժառանգին⁷¹, իսկ նրանք, որոնք արևելքում էին, Անտիոքի լատինական իշխանության տարածքում, երդում պետք է տային կայսեր կողմից այնտեղ ուղարկված պաշտոնյային⁷²:

von 363 bis, 1071.—Bruxelles, 1935, p. 125—130; Я. Н. Любарский, М. М. Фрейденберг, Девольский договор 1108 г. между Алексеем Комнином и Боземундом, ВВ, Т. 21, 1962, с. 260—265).

⁶⁸ F. Chatandon, Les Comnènes, t. I, p. 249—253.

⁶⁹ Այս պարմանագրի բնագիրը պահպանված է Ժիայն Աննա Կոմնենեի պատմության ժԴ գլուում և վաղուց ի վեր գրավել է բյուզանդագետների և խաչակաց արևելքի երկրների պատմությունը ուսումնասիրող մասնագետների ուղագրությունը (տե՛ս Я. Н. Любарский, М. М. Фрейденберг, Девольский договор 1108 г. между Алексеем Комнином и Боземундом, ВВ, т. 21, 1962, с. 260—265):

⁷⁰ Я. Н., Любарский, М. М. Фрейденберг, Девольский договор, с. 268.

⁷¹ Հովհաննես Բ Կոմնենոսը գահաժառանգ է հայտարարվել 1092 թ. (տե՛ս G. Ostrogorsky, Geschichte..., S. 310).

⁷²Տե՛ս Հաշտության պայմանագրի 15-րդ կետը (Я. Н. Любарский, М. М. Фрейденберг, Девольский договор, с. 268).

Եթե փորձենք հետևել, ըստ Դեարոլի պայմանագրի, Բյուզանդական կայսրության և Անտիոքի լատինական իշխանության միջև Հյուսիսային Ասորիքի բաժանման սկզբունքներին⁷³, ակնհայտ կդառնա, որ Բյուզանդական կայսրությունը հետամուտ էր ամբողջ ծովափնյա հատվածի գրավմանը: Ըստ այդ փաստաթղթի, Բյուզանդական կայսրությանը պետք է անցներ Կիղնոս և Հերմոն (Պիրամիդ) գետերի միջև ընկած ողջ Դաշտային Կիլիկիան⁷⁴: Հյուսիսային Ասորիքում Բյուզանդիան տեր էր դառնում Տրիպոլիսից հյուսիս ընկած միջերկրածովյան ողջ առափնյա գոտուն⁷⁵: Այս տեսանկյունից ուշագրավ է Գ. Միքայելյանի այն դրույթը, թե խաչակրաց նավահանգիստների առևտրական մրցակցությունը լուրջ վտանգ էր դարձել Եվրոպայի և Ասիայի միջև առևտրական միջնորդ դարձած Բյուզանդական կայսրության համար և «Անտարակույս, հենց այդպիսի պատճառներով է բացատրվում այն փաստը, որ Բյուզանդիան համառորեն ձգտում էր կրկին նվաճել Հյուսիսային Միջագետքը, Ասորիքը և Կիլիկիան, որոնք մինչև սելջուկյան ներխուժումը պատկանում էին նրան... Այդ նպատակին հասնելու համար

⁷³ Այս պայմանագրում արտացոլված Բյուզանդական կայսրության և Անտիոքի իշխանության միջև տարածքային բաժանումներին մասքայան անդրադարձել է Ծոնեստ Հոնիգմանը (E. Honigmann, Die Ostgrenze des byzantinischen Reiches von 369 bis 1071, Bruxelles, 1935, p. 125—130, հմմտ. նաև Я. Н. Любарский, М. М. Фрейденберг, Деволъский договор, с. 260—265).

⁷⁴ Պայմանագրում նշված են Դաշտային Կիլիկիայի կարևորագույն վարչական կենտրոնները և նավահանգստային քաղաքները: Բնագիրը բերում ենք ըստ Է. Հոնիգմանի ուսումնասիրության: „Τό τε θέμα τὸ Ποδανέδον καὶ Δογγινίας καὶ πρὸς τούτοις τὸ στρατηγάτον τῆς Ταρσοῦ πόλεως καὶ ἡ "Αδανα πόλις καὶ αἱ τοῦ Μόψου/εστιαι ἡ "Ανάβαρζα καὶ συνεլόντα φίναι, ἡ χώρα πᾶσα τῆς Κιλικίας, ծաղν ὁ Κύδνος καὶ ὁ "Ερμος περιορίζουσιν“ (E. Honigmann, Die Ostgrenze..., S. 128).

⁷⁵ E. Honigmann, Die Ostgrenze..., S. 128.

Հարկավոր էր սկզբում նվաճել Կիլիկիան, որպես հարմար հենակետ Ասորիքը և Միջագետքը վերագրավելու համար»⁷⁶:

Բայց Դեարոլյան պայմանագրի Անտիոքի լատին իշխանությանն էր թողնվում միայն, այսպիս կոչված ներքին Ասորիքը (Կօլոն Տարթար) Անտիոք կենտրոնով, որի միակ ծովափնյա նավահանգստային քաղաքը Սուետիան էր (... Տօսետիք, օ ուրաք ուղիւն նաև առաջաւագ նիշության դիմումը էին օգնել Անտիոքի դքսությանը գրավելու Հալեպը իր շրջակայքով և ծղեսիայի մոտակայքում գտնվող որոշ տարածքները⁷⁷:

Անկարելի է անտեսել այն փաստը, որ Բյուզանդական կայսրությունը ինչպես իկոնիայի սուլթանության և Դանիշմանյան ամիրության, այնպես էլ Անտիոքի խաչակիր գրասության և Կիլիկիայի Հայկական իշխանության նկատմամբ վարում էր նույն քաղաքական կուրսը, փորձում էր խոշնդոտել այդ պետությունների ազատ մուտքը դեպի Սև և Միջերկրական ծովերը⁷⁸:

Սակայն բյուզանդացիները չկարողացան իրականացնել Ատալիայից Տրիպոլիս միջերկրածովյան հատվածի գրավումը

76 Բյուզանդական արևելյան քաղաքականության համար ծովի նշանագության մասին տե՛ս E. Ahrwälder, Byzance et la mer, p. 175; Գ. Գ. Միկաելյան, История Киликийского армянского государства, Ереван, 1952, с. 102—103.

77 E. Honigmann, Die Ostgrenze..., S. 126, հմտ. նաև Յ. Ի. Լյոբարսկի, Մ. Մ. Փրեյդենբերգ, Դևոլյան դоговор..., ս. 269, § 18.

78 E. Honigmann, Die Ostgrenze..., S. 129, Յ. Ի. Լյոբարսկի, Մ. Մ. Փրեյդենբերգ, Դևոլյան դоговор..., ս. 270, § 24.

79 Բյուզանդական կայսրությունը 1130—1135 թթ. պայքարում էր Պանիկանյան ամիրայության դեմ, տիրանալու համար Պաֆլագոնիա և Արմենիակոն բանակթեմերի ծովափնյա շրջաններին: 1136—1138, 1142—1143 թթ. կայսրությունը նպատակադրվել էր վերագրավել Կիլիկիայի Հայկական և Անտիոքի լատինական իշխանությունների ծովափնյա տարածքները:

Ալեքս Ա Կոմնենոսի իշխանության տարիներին⁸⁰ և սկսեցին քայլեր ձեռնարկել քաղաքական ամուսնության ճանապարհով կայսրությանը միացնել նշված տարածքները: Օդերիկ Վիտալիսը իր նշանավոր «Եկեղեցական պատմության» մեջ պատմում է Ալեքս Ա Կոմնենոսի իշխանության վերջին տարիներին (1118^o թ.) Ըստ նրանինոսի Անտիոք կատարած դեսպանագնացության մասին⁸¹: Այդ առաքելության հիմնական նպատակն էր նախնական պայմանավորվածություն ձեռք բերել և ամուսնացնել Անտիոքի դքսության ժմառանգորդուն Հովհաննես թ Կոմնենոսի ավագ որդի, հետագայում գահի ժառանգորդ հոչակված Ալեքսի հետ: Սակայն, Հյուսիսային Ասորիքի նկատմամբ ունեցած վերոհիշյալ հավակնությունները, որոնք պետք է դնել այդ դիվանագիտական առաքելության հիմքում, դեռ երկար տարիներ պետք է զբաղեցնեին Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականությանը: Ամուսնության ճանապարհով Անտիոքի դքսությունը Բյուզանդիայից կախման մեջ դնելու և նույնիսկ կայսրությանը միացնելու ծրագիրը Հովհաննես թ Կոմնենոսը և նրա հաջորդները փորձում էին իրականացնել նաև հետագայում: Նման փորձ, 1136 թ. կազմակերպված ուազմարշավի նախօրեին ձեռնարկեց Հովհաննես թ Կոմնենոսը⁸²: Ըստ Հովհաննես Կիննամոսի տեղեկության Անտիոքի ավագները (προύχοντες) առաջարկում էին կայսրին իր կրտսեր որդի Մանուելին ամուսնացնել դքսության ժառանգորդ իշ-

⁸⁰ Այն մասին, թե ինչ ընթացք է ունեցել Դեարոլի պայմանագրից հետո Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականությունը (տե՛ս Ա. Հ., Քառանի, Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը, էջ 123, *F. Chalandon, Les Comnènes*, 1. I. p. 252—253):

⁸¹ Օդերիկ Վիտալիսի պատմության մեջ հետաքրքրող հատվածը ամբողջովին բերված է С. Пападимитրу, Брак русской княжны Мстиславны Добродей с греческим царевичем Алексеем Комнином. ВВ, т. XI, СПб., 1904, с. 85—88 ուսումնասիրության մեջ: Տե՛ս նաև *F. Chalandon, Les Comnènes*, 1. II, p. 120.

⁸² I. C., p. 16.

խանադստեր հետ⁸³, սակայն Երուսաղեմի թագավորի և Եղեսիայի կոմսի միջամտության շնորհիվ, ձախողվում է նաև այս ծրագիրը⁸⁴:

Բյուզանդական կայսրությունը 1136 թ. ստիպված էր դիմելու վերջին միջոցին, զենքի միջոցով տիրանալու կեռնային և Դաշտային Կիլիկիաներին և ծովափնյա Հյուսիսային Ասորիքին: Արդ, երկար տարիներ պատրաստություններ տեսած Հովհաննես թ Կոմնենոսը ուղարշավ է կազմակերպում, ակնկալելով, թե կբարձրացնի կայսրության հեղինակությունը Մերձավոր Արևելքում և կլուծի Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության համար անկյունաքարտածածքի ինսդիրները: Այս ուղարշավին անդրադառնալուց առաջ մի հայացք նետենք ԺԲ դարի առաջին երեր տասնամյակներում Կիլիկիայում տեղի ունեցած անցուղարձերի վրա, արտացոլենք թե ինչ քաղաքական փոփոխություններ էին տեղի ունեցել Կիլիկիայում և Անտիոքի իշխանության սահմաններում Դեարոլյան պայմանագրից հետո ընկած ժամանակաշրջանում: Ճիշտ է, պատմական սկզբնաղբյուրները մեծամասամբ լուսաբանում Կիլիկիայում տեղի ունեցող անցուղարձերը և հըպանցիկ անդրադառնում են միայն Անտիոքի իշխանության հետ կապված իրադարձություններին, այնուամենայնիվ փորձենք վերականգնել այդ անցքերի հաջորդականությունն ու ընթացքը:

83 Ետքօնծու օք 'Αντιօχέων ἡρχεν ἐξ ἀνθρώπων ἡρανισμένου, ο τῆς χώρας προύχοντες ἐπὶ βατιλέα πέμψαντες ἔφεσσεν, ὡς εἰτε βουλομένῳ αὐτῷ εἰτε θυγατέρᾳ τὴν Βαῖκօնδου τῷ ὑστάτῳ τῶν παιδῶν ξυνοικεῖν τῷ Μανουῆλ, αὐτίκα μετὰ κῆδος τὰ 'Αντιօχέων ὑπ' αὐτῷ πνάγματα ἔστα (I. C., p. 16).

84 Այս մասին տե՛ս R. Grousset, Histoire..., t. II, p. 36–40 թ. Գրուսեն Բայյմոնդ Պուատիեի Անտիոքում հաստատվելու, Կոստանցայի հետ ամուսնանալու և Անտիոքի իշխան դառնալու իրադարձություններին անդրադառնալիս, շրջանցել է Հովհաննես Կիենամոսի վերոբերյալ վկայությունը:

2. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՌՈՒԹԻՆՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽԵՆԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԺՅ
ԴԱՐԻ 30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Կիլիկիայում Ռուրինյան իշխանության հիմնադրման և առաջին երկու իշխանների (Ռուրեն, Կոստանդին) կառավարման ժամանակաշրջանի իրադարձությունների վերաբերյալ շափազանց սակավ տեղեկություններ են պահպանվել միջնադարյան սկզբնադրյուրներում։ ԺԱ դարի 80-ական թթ. մինչև ԺԲ դարի 20-ական թթ. Ռուրինյան իշխանության պատմությունը կառուցվում է հիմնականում ենթադրությունների վրա, որովհետև միջնադարյան պատմագրական ավանդույթը դեպքից-դեպք է անդրադառնում Կիլիկիայում տեղի ունեցող իրադարձություններին⁸⁵։

Թյուրք-սելջուկյան արշավանքներից և մանավանդ Մանագերտի ճակատամարտից Հետո⁸⁶ Բյուզանդական կայսրությունը Փոքր Ասիայում կորցրեց գրեթե իր բոլոր տարածքները (այդ թվում նաև Կիլիկիան)։ Փոքր Ասիայից Հեռացած որոշ բյուզանդական դինվորական պաշտոնյաններ Փիլարտոս Վարաժնունու գլխավորությամբ փորձեցին օգտըվել այդ իրավիճակից և դիմադրություն ցուց տալով թյուրք-սելջուկյան հրոսակներին Կապաղովկիայի, Հյուսիսային Ասորիքի և Կիլիկիայի տարածքներում ստեղծեցին անկախ իշխանություն⁸⁷։ Ժամանակագիր Միքայել Ասորին Ռուրինյան իշխանության մասին առաջին անգամ խոսելիս շեշտում է այդ հանգամանքը. «Երբ թյուրքերը ելան Խորասանից և տարածվեցին այդ (Կապաղովկիա, Հայաստան, Ասորիք—Ա. Բ.) շրջաններում; Հույները շատ թուլացան և նրանց տիրապե-

85 Պ. Ալշան, Միսուան, էջ 42—48. Գ. Գ. Միկաելյան, Իстория Киликийского армянского государства. Еր., 1952, с. 81—95. Մ.—Ե. Քասունի, Կիլիկիոյ Հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արեւելքի քաղաքական հոլովոյթին մէջ, էջ 32—34, 52—54։

86 Մանագերտի ճակատամարտը պատմագրության մեջ հակասական գնահատականների է արժանացել։

87 Կոմմագենացի, Փիլարտոս Հալք, Հալեպ, 1930, էջ 83—91, Վ. Ա. Արյունով-Ֆիդայյան, Армяне-халкидониты на восточных границах Византийской империи (XI в.), с. 152—169.

տությունը դադարեց Ասորիքի, Կապադովկիայի և Հայաստանի վրա: Այնժամ, որոշ հայեր թափանցեցին անանցանելի լեռների ամրացված վայրերը և այնտեղ հաստատվեցին: Կիլիկիայի լեռներում կային երկու եղբայրներ՝ Ռուբենի որդի Կոստանդինի որդիները⁸⁸,

Թորոս Ա-ի իշխանության տարիներին Ռուբենյանները կարողացել էին ամրացնել երկրի սահմանները⁸⁹, նույնիսկ փորձ էին կատարել գուրս գալ Բյուզանդական կայսրության ստորակայի կարգավիճակից⁹⁰, որն արձանագրված է Դեսպոլյան (1108 թ.) հաշտության պայմանագրում⁹¹: Թեև Թորոս Ա Ռուբենյանի (1100—1129/30) քաղաքական գործունեության մասին սակավաթիվ տեղեկություններ են պահպանվել⁹², այնուամենայնիվ այդ ժամանակաշրջանի իրա-

88 M. S., t. III, p. 198.

89 Կիլիկիայի Ռուբենյան հայկական իշխանությունը մինչև ԺԲ դարի 30-ական թվականները տարածվում էր գերազանցապես Տավրոսյան լեռներից գահավիժող Սարու գետի ջրային ավազանի լեռնային շրջանների վրա:

90 Այդ առումով ուշագրավ են Մանտալե եղբայրների հետ բախման ահցուղարձերը: Մատթեոս Ուտհայեցին, պատմելով այդ իրադարձության մասին, Թորոսին հակագրում է բյուզանդական իշխաններին: Մանտալե եղբայրներից մեկը հետևյալ կերպ է ձևակերպում իրենց և Թորոսի միջև քաղաքական ստատուսների տարրերությունը. «Դու Հայ մարդ ես, և մեք Հոռոմի իշխանք, զի՞նչ կամիս պատասխանի տալ Հոռոմոց թագաւորին, որ դատես զՀռոմոց մարդ» (տե՛ս Մատթեոս Ուտհայեցի, էջ 320):

91 Այս տեսանկյունից շափազանց ուշագրավ է Դ. Ալիշանի (Սիսուան, էջ 50) տեսակեաը (Հմմտ. նաև Ս.—Ե. Քատունի, «Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը ...», էջ 98—99, 140—141, 151—153), ըստ որի Թորոս Ա Ռուբենյանի իշխանության տարիներին թեև նրա կրտսեր եղբայր Լևոնը ճանաշում էր ավագ եղբոր գերազահությունը, այնուամենայնիվ ինքն էլ ուներ իր սեփական տարածությունները, որոնք ի հակադրությում «Թորոսի երկրից» (Վանեամ Բարունի, Ոտանաւոր ..., էջ 195) կոչվում էին «Երկիր Լևոնի» (Հմմտ. նաև Մատթեոս Ուտհայեցի, էջ 325): Աննա Կոմինի բերած Դեսպոլյան պայմանագրում ես, որպես հավասարներ են Հիշատակվում Թորոս Ա Ռուբենյանը և նրա եղբայր Լևոնը (տե՛ս Աննա Կոմինա, Ալեքսանդր, ս. 369).

92Տե՛ս Ս.—Ե. Քատունի, «Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը, էջ 97, 98—100:

իպարձություններին և Կիլիկիայի Հայկական իշխանության միջազգային ստատուսին հանգամանորեն անդրադարձել են Դ. Ալիշանը⁹³, Մ. Զամշյանը⁹⁴, Մ. Օրմանյանը⁹⁵, Մ.—Ե. Քասունին⁹⁶:

Դեսբոլյան պայմանագրում Թորոսն ու Անոնը համարվում են Բյուզանդական կայսրության ստորականներ⁹⁷, իսկ Հայկական սկզբնաղբյուրներում Թորոսը երբեմն անվանվում է պրոտոսեբաստոս («որ ի Յունաց պատուեալ Պռաւսեաստոս (ՏԸԸ) կոչեցաւ»)⁹⁸. Հայկական սկզբնաղբյուրները Թորոս Ա Ռուբինյանի իշխանության տարիների Հայ-բյուզանդական քաղաքական փոխարարերությունների վերաբերյալ միայն երկու դրվագ են ավանդում.

ա) Կենտոռուկավիս ամրոցի գրավումը և երեք Մանտաւե եղբայրների (որոնք իրենց համարում էին Բյուզանդական կայսրության ստորականները) սպանությունը Հայոց ԾԿ թվականին (1111 թ. փետրվար—1112 թ. փետրվար)⁹⁹:

93 Դ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 48—50:

94 Մ. Զամշյանց, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1786, հ. 3, էջ 22—50:

95 Մ. Օրմանեան, Ազգապատում, §§ 908, 920—21, 931—32, 934:

96 Մ.—Ե. Քասունի, Կիլիկիոյ Հայկական իշխանապետութիւնը, էջ 97—167:

97 «Եշօնութան ձնմթքուն ու ոքածուս նկանա» (PG, լ. 131, թ. 1016): Թորոս Ա Ռուբինյանը (եթե նույնացնեմը ճիշտ է) Բյուզանդական կայսրության սերաստոսի տիտղոս է կրում նաև էրմիտաժում պահպող մի կնիքի վրա (տե՛ս Բ. Ս. Շանdrovskaya, К истории армяно-византийских отношений. XII в. (по данным эфрагистики), ВОН, 1974, № 4, с. 36—40; Հմմտ. նաև Հ. Անայեան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 346—347):

98 Հմմտ. «Համառոտ պատմութիւն Ռուբինյան իշխանաց» բնագրի հետ, ոտե՞ս Մանուէլ Անեցի, Հավելված Դ, էջ 214:

99 Մատթեոս Ռուբայեցի, էջ 318—321. Մարտ, 1956, էջ 136: Մ.—Ե. Քասունի, Կիլիկիոյ Հայկական իշխանապետութիւնը, էջ 103, 136—137: Հետաքրքիր է այն պարագան, որ Թորոս Ա Ռուբինյանը մինչև այս իրազարձությունը խնամիական կապեր էր Հաստատել Մանտակե եղբայրներից մեկի հետ. «Մին ի նոցանէ ունէր բնդ Թորոս միարանութիւն վասն խնամութեան» (Մատթեոս Ռուբայեցի, էջ 318):

բ) Անավարդա քաղաք-ամրոցի գրավումը հուներից¹⁰⁰

Զնայած Բյուզանդական կայսրությունը ցամաքային ուղղակի սահման շուներ Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի հայկական իշխանությունների հետ, սակայն դատելով սկզբունազբյուրների հաղորդած տեղեկություններից, նշված տարածաշրջանի բազմաթիվ իշխանություններ ընդունում էին Բյուզանդական կայսրությունից իրենց կախվածությունը։ Տարօրինակ չէ նաև, որ ժամանակ առ ժամանակ հիշյալ տարածաշրջանում սկզբնազբյուրները հիշատակում են բյուզանդական ներկայացուցչի առկայությունը¹⁰¹։

Իրերի վիճակը փոխվում է 1129 թ. Թորոս Ա-ի և նրա մանկահասակ որդի Կոստանդինի մահից հետո¹⁰², երբ Կիլիկիայի իշխանապետության կառավարման լծակները իր ձեռքն է վերցնում Լեռն Ա. Ռուբինյանը (1129/30—1136/7), որը մինչ այդ արգեն տիրում էր Կիլիկիայի որոշ շրջանների¹⁰³։ Բարձրացող Կիլիկյան իշխանապետությունը 1129—36 թթ. կենաց և մահու պայքար է մղում Անտիոքի լատինական դքսության դեմ։ Բախման հիմնական թատերաբեմը և պատճառը՝ Դաշտային Կիլիկիան էր, որը առաջին խաչակրաց արշավանքից հետո անցել էր Անտիոքի լատինական իշխանության հովանավորության ներքո։ Այդպես են իրերի վիճակը ներկայացնում ասորի, հույն, հայ և լատին միջնա-

100 Սամուել Անեցի, Հավելված, էջ 204, 214։ Տե՛ս նաև Մ.—Ե. Քառամբի, Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը, էջ 103—104, հմմտ. Գ. Գ. Միկայելյան, Կոլուկիակու, 95—100։

101 Այդպիսի եզրակացության համար մեծ քանակությամբ նյութ կարելի է հավաքել, սակայն նման ուսումնասիրությունը մեր խնդրի մեջ չի մտել։ Նշենք Ժիայն երկու դեպք. ա) օիշխանաց իշխանությունը, որը նդեսիայի կոմությանը հանձնելով Մարաշը վերադառնում է Կոստանդնուպոլիս (Սմբատ, 1956, էջ 125), բ) բյուզանդական ստորականեր Մանտալի եղբայրները և այլն։

102 Մանկահասակ գահաժառանգի մահման մասին հանգամանորեն խոսում է Վահրամ Բարսեղին (տե՛ս Սմբատ, 1859, էջ 196)։

103 Մ.—Ե. Քառամբի, Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը, էջ 98—99։

դպրյան պատմագիրներն սկսած Դեաբոլյան պայմանագրի ժամանակներից¹⁰⁴:

Կիլիկիայի հայկական իշխանության փոխարարերությունները բարեկամական չէին նաև հյուսիսային հարեանի՝ Դանիշմանյան ամիրության հետ: Թորոս Ա Ռուբինյանի մահին հաջորդած իրադարձություններին մանրամասնորեն անդրադառնում է Միքայել Ասորին. «Այդ տարի¹⁰⁵ մահացավ՝ Թորոս Հայը, Կիլիկիայի կառավարից (gouverneur, détenteur): Նրան հաջորդեց իր եղբայր Լոռնը: Անտիռքի տեր Բոհեմոնդը պատերազմի մեջ քաշեց Լոռնին¹⁰⁶: Այս իրադարձությունների մասին տեղեկացնում է նաև Վիլհելմ Սուրացին, ըստ որի Բոհեմոնդ Անտիռքացին արշավել է Հալեպի տեր Ռոդոպուանի (Rodoap) գեմ¹⁰⁷, որն, համաձայն լատին պատմագրի, ներխուժել էր Կիլիկիա: Նույն դեպքերի մասին Միքայել Ասորին շարունակում է. «Էմիր Ղազին այդքան հզորանալով (ayant donc atteint prevalu), հենց այդ ժամանակ իմացավ Թորոսի մահը և ուղարկեց իր զորքերը Կիլիկիա¹⁰⁸: Այն պահին, երբ թյուրքերը ներխուժեցին, Բոհեմոնդն ու ֆրանկներն էլ ներխուժել էին մի այլ կողմից: Ֆրանկները ոչինչ չգիտեին թյուրքերի ներկայության մասին, ոչ էլ թյուրքերը՝ ֆրանկների. սակայն երկու կողմերը՝ թյուրքերն ու ֆրանկները թշնամացած էին հայերին:

104 Ս.—Ե. Քառունի, Եշվ. աշխ., էջ 122—123:

105 Աելեկյան 1441 թ. համապատասխանում է մեր թվականության 1129/30 թվականին:

106 M. S., I. III, p. 227.

107 W. T., I. 1, p. 598—599.

108 Դանիշմանյան ամիրության այս ուազմարշավը պատմագրության մեջ իրավամբ դիտվել է հկանիայի սուլթան Մասուդի եղբարը՝ Արագին ապաստան տալու համար Կիլիկիայի Ռուբինյան իշխանությանը պատժելու համար ձեռնարկված միջոցառում (հմմտ. Ս.—Ե. Քառունի, Կիլիկիոց հայկական իշխանապետութիւնը, էջ 163—164): Երբեք չի մնկնարանվել հարցի մյուս կողմը. ինչո՞վ էր պայմանավորված Ռազուանի մասնակցությունը մեզ հետաքրքրող ուազմարշավին: Կասկած լինել չի կարող, թե սա ինչ որ այլ ուազմարշավ է, քանի որ և Միքայել Ասորու, և Վիլհելմ Սուրացու մոտ ճակատամարտերեւմ սպանվողը Բոհեմոնդը թ Անտիռքացին է:

*Մտնելով Անավարդայի դաշտը, թյուրքերը տեսան Բոհեմունդին մի քանի հեծյալների հետ. նրանք նրան ճանաշեցին և ճակատամարտ պարտադրեցին»¹⁰⁹: *Միքայել Ասորու այս վկայության ամենաուշագրավ հատվածն այն է, որ պատմը վում է, որ Լեոնը հետապնդել է ոչ թե Հաղթանակ տարած Ղազի Դանիշմանյանի զորացոկատներին, որոնք իրենց հետ տանում էին սպանված Բոհեմունդ Բ.-ի (1126—1130) գլուխը, այլ «Լեոնն էլ իր հերթին զավթեց կիրճերն ու ոչնչացրեց մի խումբ ֆրանկների»¹¹⁰:**

Միքայել Ասորու և Վիլհելմ Սուրացու ալստեղ քննվող հատվածների բովանդակությունից մեզ թվում է կարելի է կատարել միայն հետեւյալ հնարավոր ենթադրությունը, թե՝ Դանիշմանյան ամիրության և թե՛ Հալեպի ամիրության զորքերը ղեկավարում էր Ռոդուանը, իսկ ամիր Ղազին անձամբ շեր մասնակցում 1129/30 թ. կիլիկյան ներխուժմանը, քանի որ այդ ժամանակ պատերազմում էր Հովհաննես Բ Կոմինենոսի բանակի դեմ Դանդրա քաղաքի և Կաստամոն ամրոցի շրջանում¹¹¹: Վիլհելմ Սուրացին Բոհեմունդ Բ Անտիոքացու և մահմեդական զորքերի բախման վայրը անվանում է Portus Pallorum (հ. ֆ. Pré des Pailles), իսկ Միքայել Ասորին Ղազի Դանիշմանյանի զորքերի և Անտիոքի իշխանի գլխավորած բանակի առճակատման վայրը՝ Անա-

¹⁰⁹ M. S., t. III, p. 227.

¹¹⁰ Նույն տեղում:

¹¹¹ Նույն տեղում: Այս դեպքերից առաջ Միքայել Ասորին պատմում է Ղազի Դանիշմանյանի հաջողությունների մասին Կապանվկիայում, որ Ղազին դասնում է թյուրքերի միանձնյա իշխող և ապա՝ Բյուզանդական կայսրության պաշտոնյա Կասիհանուսը որոշ սկծովյան ամրոցներ է տալիս նրան և անցնում Ղազիի մոտ ծառայության (M. S., t. III, p. 227, հմմտ. նաև F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 80—81): Զնալած հայտնի չէ, թե հատկապիս Պաֆլագոնիայի որ շրջանների տերն էր Կասիհանուսը, այնուամենայնիվ հասկանայի է, որ այդ գրավումները հարվածում էին Թյուրքանդական կայսրության կենսական շահերին: Դրա ամենավառ վկայությունը Հովհաննես Բ Կոմինենոսի ժմ դարի 30-ական թթ. մզած պատերազմներն են տիրանալու համար մերձսեծովյան շրջաններին և հատկապես Կաստամոն ամրոցին և Դանդրա քաղաքին:

վարզայի դաշտը¹¹²: Կարելի է ենթադրել նաև, որ Ղազի Դանիշմանյանը ուսպական դաշինք է կնքել Հալեպի տիրող՝ Զանգու հետ և նրանց միացյալ բանակը Ռողուանի գլխավորությամբ հարձակվել է Անտիոքի դքսության և Դաշտային Կիլիկիայի վրա:

Չնայած մի քանի տարի այս գեղքերից առաջ Ռուբինյան իշխանությունը Թորոս Ա-ի գլխավորությամբ մասնակցում էր Արապի ստեղծած Հակաղանիշմանյան զինակցությանը (1125—1127), այժմ, երեսում է, որ Անուքինյանը Կիլիկիայի նկատմամբ Անտիոքի իշխանության հավակնություններին հակահարված տալու միտումով և երկրի դաշտային հատվածը գրավելու մտադրությամբ, հակվում է դեպի Դանիշմանյան ամիրությունը¹¹³: Եթե այս գեղքերի առիթով վերհիշենք այդ տարիներին Փոքր Ասիայում տիրող քաղաքական կացությունը, երբ Բյուզանդական կայսրությունը

¹¹² M. S., t. III, p. 227.

¹¹³ Զ. Ալիշանի մոտ (*Սիսուան*, էջ 50) խանկած է Անոն և Ռուբինյանի գործերի ժամանակագրությունը: Վերոնկարագրյալ իրադարձությունները թվագրելով 1131 թ., հայագետը գրում է. «ապա, ըստ ուժանց ասելոյ, զժտեալ ընդ երիտասարդ Քրինձին Անտիոքայ թ Պետութի՝ միարանիցաւ ընդ Զանկի գոռ ամիրայն Հալպայ, հճար խորտակեաց զօրանորա, յորում խոռան մարտին սպանեալ և կառափնատեալ քարձաւ ինքնիսկ Քրինձն այն» (նույն տեղում): Մեզ թվում է, որ ականավոր Հայագետը վկայությունը քաղել է Վիլհելմ Սուրացու երկասիրությունից, փոխարինելով Հալեպի տեր Ռողուանի անունը Մոսուլ-Հալեպի տեր Զանգու անունով: Բացի այդ Դ. Ալիշանին ժանոթ չի եղել Միքայել Ասորու (այն ժամանակ անհայտ) ժամանակագրության ասորերեն տարրերակի վերտերյալ վկայությունը, ըստ որի ամիր Ղազին է շախշախել Ռոհնելունդ թ Անտիոքացու զորաբանակը Կիլիկիայում և սպանել նրան Զանգի և Ղազի անունների այս թվացյալ շփոթը նկատել է Ս. Պատիկյանը (տե՛ս Հայերը եխաշակիրները, ՀԱ, 1963, էջ 70), սակայն նա էլ 1132/3 թ. իրադարձությունների մասին Սմբատի մոտ պահպանված վկայությունն է նույնացրել վերոհիշյալ գեղքերի հետ: Ս.—Ե. Քաստինին թեև օգտագործում է Անանուն Ասորու, Թար Երրեսի և Վիլհելմ Սուրացու վկայությունները, այնուամենայնիվ որևէ կերպ չի արձագանքում վերորերյալ իրադարձություններին այսպես կոշված Հալեպի տեր Ռողուանի մասնակցության մասին Վիլհելմ Սուրացու հիշատակությունը (տե՛ս Ս.—Ե. Քաստինի, Կիլիկիոյ Հայկական իշխանապետութիւնը, էջ 179—180):

քոլոր ճիգերն էր գործադրում վերսկսելու սկզբան ափերի գրավումը, ապա՝ ակնհայտ կդառնա, որ Առնը իր գործողություններով օգնելով Ղազի Դանիշմանյանին, Բյուզանդական կայսրության այդ տարիների ամենաոփերիմ հակառակորդին, փաստորեն քայլ էր կատարում Բյուզանդական կայսրության ստորակայի կարգավիճակից դուրս գալու և Դանիշմանյան ամիրության կողմը անցնելու համար¹¹⁴: Հարց է առաջանում. արդյոք Անտիոքի իշխան Բոհեմունդ Բ.-ը չէ՞ր համաձայնեցրել իր գործողությունները Բյուզանդական կայսրության հետ:

Անտիոքի երիտասարդ իշխանի անհեռատես գործողությունները և նրա մահը (1129/30) բացասական հետևանքներ ունեցան Անտիոքի խաչակրաց իշխանության հետագա պատմության վրա. հիշյալ բահման հետևանքով քաղաքը կորցրեց իր իշխանին և մինչև 1136 թ. ենթարկվելով մերթ Երուսաղեմի թագավորներ Բալգուին (Պաղտին) Բ.-ի¹¹⁵, ապա (1131 թ. հետո)՝ Ֆուլք Անժուացու, երրեմն էլ Եգեսիայի կոմսի՝ Զուլին Բ.-ի իշխանությանը, զրկվեց ինքնուրույն գործելու հնարավորությունից¹¹⁶: Իշխանության լժակները իր

114 Հովհաննես թ Կոմնենոսի առաջին կիլիկյան ուազմարշավի ժամանակակից Միքայել Խոալիկոսը իր «Ներբողլանում», որ փառաբանում է այս կայսեր 1133—1139 թթ. Հյուսիսային Ասորիիքում և Կիլիկիայում կատարած մեծագործությունները, ուղղակիորեն վկայում է, որ Առն ԱՌուբինյանը մերժելով բյուզանդական գերակայությունը իրեն թագավոր է սծել (Հ. Մ. Թարգիլյան, Միքայել Խոալիկոսի «Ներբողլանը» և Կիլիկիայի Հայոց առաջին թագավորի խնդիրը, ՊԲՀ, 1984, Տ. 4, էջ 218): Միքայել Խոալիկոսի մոտ ակնարկ իսկ չկա հայ-դանիշմանյան դաշինքի մասին: Բյուզանդական մատենագիրը մտահոգված է միայն մեկ հանգամանքով, թե երբ վերջապես ողջ արևելքը կենթարկվի կայսերական ուժին:

115 R. Grousset, Histoire des Croisades, t. I, p. 675.

116 Հետաքրքիր է այն պարագան, որ Երուսաղեմի թագավոր Բալգուին Բ.-ը, իշխանունի Ալիսի հայրը, ստիպված է լինում միշամտել Անտիոքի ներքին գործերին, իր վրա վերցնել անշափահամ իշխանադուստը Կոստանցի խնամակալությունը, և Անտիոքի խաչակիր իշխանության կառավարումը հանձնում է քաղաքի երեցներին (Յ.—Յ. Քասունի, Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը, էջ 181, W. T., t. I, p. 599—600, 613—614, R. Grousset, Histoire des Croisades, t. II, p. 9—13).

Ճեռքն առած Բոհեմունդ թ Անտիոքացու այրի Ալիսը փորձեց օգտագործել ամուսնու մահից հետո ստեղծված իրազրությունը և ինքնիշխան դառնալ¹¹⁷, նույնիսկ քաջար հրավիրեց Մոսուլի և Հալեպի աթաբեկ Զանգուն¹¹⁸, սակայն Երուսաղեմի թագավորը և Եղեսիայի կոմսը կարողացան կանխել Մերձավոր Արևելքի խաչակրաց իշխանությունների գլխին կախված աղետը ու իրենց զորքերն ավելի շուտ մտցրեցին Անտիոք։ Նրանց միջամտության շնորհիվ Անտիոքի դրսության ժառանգորդուհի Հողակվեց Բոհեմունդ թ-ի անշափահաս դուստրը, Երուսաղեմի թագավորի և Եղեսիայի կոմսի խնամակալության ներքո¹¹⁹։

Ինչպես վերկում տեսանք, Բոհեմունդ թ Անտիոքացու մահվան իրադարձությունից մեկ տարի անց, 1130/1 թ., ըստ Միքայել Ասորու տեղեկության, Դանիշմանյան Ղազին կըրկին արշավում է դեպի Կիլիկյան հայկական իշխանություն։ Այս անգամ Ղազին նպատակադրվել էր խափանել Թյուզանդական կայսրության հետ Ռուքինյան իշխանության համատեղ գործողությունները, հակարյուղանդական և հակալատին դաշինքի մեջ ներգրավել կեռն Ա Ռուքինյանին։ «կեռնը հնթարկվեց, նա երդվեց այս շմտնել, ոչ էլ մարդիկ ուղարկել ամիր Ղազու երկիրը և ամեն տարի հարկ տալ Ղազիին»¹²⁰։ Չնայած որ ասորի պատմիլը այնուհետև ավելացնում է «կեռնը խարեց և ոչինչ շտվեց»¹²¹, այնուամենայնիվ այս հաշտությունը բավական լուրջ դաշինք էր ընդդեմ Դա-

¹¹⁷ Ալիսը 1129—1136 թթ. մի քանի անգամ փորձեց իշխանության գլուխ անցնել Անտիոքում։ Այդ դեպքերին անդրադարձել են Հայագիտական գրականության մեջ Ս. Փապիկյանը (ՀԱ, 1963, էջ 70—72, 74, 77—78) և Մ.—Ե. Քառումին։ Այդ մասին տես՝ նաև R. Grousset, Histoire des Croisades, t. I, p. 671—678; t. II, p. 9—13.

¹¹⁸ Այդ մասին տեղեկացնում են ոչ միայն մուսուլմանական պատմագիրները (N. Elisséeff, Nur ad-Din, t. II, p. 343), այլ նաև Վեհերի՛ Առուրացին (W. T., t. I, p. 612—613, հմմտ. R. Grousset, Histoire des Croisades, t. II, p. 9—13).

¹¹⁹ Տե՛ս R. Grousset, Histoires des Croisades, t. II, p. 13.

¹²⁰ M. S., t. III, p. 230.

¹²¹ Նույն տեղում։

նիշմանյան ամիրության հետ պատերազմական գործողությունների մեջ գտնվող Բյուզանդական կայսրության Այդ մասին է վկայում իրադարձությունների հետագա ընթացքը: Կիլիկիայի հայկական իշխանությունը դրանով ազդարարում էր, որ այլև Հռովհաննես Բ-ի դաշնակիցը չէ և դուրս է գալիս Բյուզանդական կայսրության ստորակայի կարգավիճակից: Ինչպես վերևում տեսանք, նման հետեւության ապացուց է նաև Բյուզանդական կայսրության դեմ գործող խըմբավորման հետ դաշնակցելու պարագան, այն փաստը, որ Լևոն Ա-ը Դաշտային Կիլիկիայում տարածքներ է շնորհում Հռովհաննես Բ-ի դեմ ապստամբած, և կայսրությունը լքած Խաչակ Կոմնենոսին: Սակայն շուտով, մեզ անհայտ պատճառներով, Լևոն Ա Ռուբինյանը դադարում է հովանավորել Խաչակին և նա փախչում է Իկոնիայի սուլթան Մասուդի մոտ¹²²: Զնայած այս դիպվածին, պետք է մտածել, որ Լևոնը շարունակում էր մնալ հակաբյուզանդական խմբակցության մեջ: Մեր այս ենթադրությունը հաստատող վկայություն է բերում Միքայել Ասորին, ժամանակագրության հետագա շարադրանքում. «Հույների արքան իր կողմից շարացած դուրս եկավ Բյուզաբերի և հայերի դեմ»¹²³:

Լևոն Ա Ռուբինյանը 1132 թ. փորձում է օգտվել դանիշմանյան Ղազիի հետ կնքած հաշտության պայմանագրից և ներխուժում է Դաշտային Կիլիկիա: Ժամանակագիր Սամուել Անեցին և տարեգիր Սմբատ Սպարապետը գիտեն այդ դեպքերը, սակայն հակասում են միմյանց ժամանակագրության խնդրում: Սամուելը մեզ հետաքրքրող իրադարձությունը թըվագրում է քրիստոնեական ՌՃԾԿ (1133 թ.) և Հայոց ՇՀԹ (1130 թ. դեկտեմբեր 17—1131 թ. դեկտեմբերի 16) թվա-

122 Նույն տեղում, էջ 230—231: Այլ կերպ է այս իրադարձությունը յեկնաբանում Գ. Միքայելյանը: Բերելով Միքայել Ասորու տեղեկությունը, նա եզրակացնում է, որ «Լևոնը 1132 թ. խլեց Հույներից այն ամենը, ինչին նրանք տիրում էին Կիլիկիայում, այդ թվում Սամեստիան և Աղանան, որոնք գրանց ոչ շատ առաջ գտնվում էին նրա իշխանության ներքո և հանձնվել էին Խաչակի որդուն» (տե՛ս Գ. Գ. Միկայլյան, Իсторիա..., ս. 100):

123 M. S., t. III, p. 232.

կաններով. «Էառ Լևոն զքաղաքսն Կիլիկիոյ զՄսիս, զԱտանայ և զՏարսոնս և քանզի տէր ոչ գոյր Անտիոքայ՝ յարեան ֆուանկը ի վերայ նորա անձնադիր լինելով տապալեցին զերկիր»¹²⁴; Սմբատի երկի համառոտ խմբագրությունները որոշ կրծատումներով և տեղ-տեղ հավելումներով կրկնում են ընդարձակին. «Ի թուին ՇԶԱ (1132 թ. դեկտեմբերի 17—1133 թ. դեկտեմբերի 15) Լևոն որդի Կոստանդեայ էառ զքաղաքսն Կիլիկիցւոց զՄսիս, զԱտանա, զՏարսու. և յարեան ազգն ֆուանդաց ի վերայ նորա. շարաբարութն այնոքիկ անձնընտիր լինելով տապալեցին զերկիր»¹²⁵:

Այս գեպքերի թվագրում խնդրում մենք հակված ենք ընդունելու Սմբատ Սպարապետի առաջարկած 1132 թ., որովհետեւ ենթադրում ենք, թե այս իրադարձությունները կապված են Խսահակ Կոմնենոսին Կիլիկիայից վտարելու անցուղարձերի և Կիլիկիայի հայկական պետությունը ինքնանկախ հայտարարելու փաստի հետ։ Սամուելը և Սմբատը թեև չեն հիշատակում թե որ պետական միավորումներից գրավվեցին վերոհիշյալ քաղաքները, այնուամենայնիվ նշում են, որ Լևոնը դրանից անմիջապես հետո բախվել է ֆրանկների հետ։ Սամուելը հակված է Կիլիկիայի հայկական իշխանության վերոհիշյալ բախումը կապել Անտիոքի լատինների հետ, որոնք ժամանակ իշխան շունեին։ Միքայել Ասորին խոսում է միայն Մոպսուեստիա (Մսիս) և Աղանա քաղաքները Խսահակ Կոմնենոսից ետ վերցնելու մասին¹²⁶։

Վերեսում մեզքերված վկայությունները կարելի է հասկանալ այսպիս. Լևոն Ա Ռուբինյանը Խսահակ Կոմնենոսից խլում է Մսիս և Աղանա քաղաքները, իսկ Տարսոնը գրավում է Անտիոքի լատին իշխանությունից։ Զհանդուրժելով Ռու-

124 Սամուել Անեցի, էջ 129 (այս հատվածը, անշուշտ, հետամուտ է):

125 Սմբատ, 1956, էջ 159։ Սմբատ Գունդառաբելիք (Սպարապետի) երկի համառոտ խմբագրությունը ըստ փարիզյան (1859, էջ 92—93) և Ժուկովյան (1856, էջ 79) հրատարակությունների, ունի հետևյալ տեսքը. ու թուին ՇԶԱ պարոն Լևոն էառ զքաղաքսն Կիլիկիցւոց՝ զՏարսոն և զԱտանա և զՄսիս. և յարեան ազգն ֆուանդաց ի վերայ նորա. և անձնընտիր լինելով՝ տապալեցին զերկիրն»։

126 M. S., t. III, p. 231.

թինյան իշխանության հզորացումը Դաշտային Կիլիկիայում, Անտիոքի և Երուսաղեմի (Երուսաղեմի թագավորը Անտիոքի իշխանադատեր խնամակալն էր) իշխանությունների միացյալ գորքերը ներխուժում են Լոռն Ա-ի տարածքները և իրենց գոհարերելով, կործանում, քարուքանդ են անում երկիրը (Դաշտային Կիլիկիայի շրջանը). ուանձնադիր լինելով տապալեցին գերեկիր»:

Սրանից հետո ավելի են սրվում Լոռն Ա Ռուբինյանի փոխարարերությունները Անտիոքի լատինական իշխանության հետ: Սամուել Անեցին վերորերյալ հատվածից հետո գրում է. «Եւ ի ՇԶ (1131/2) ամին էառ Լոռն զքարն Սարւանդի և եղեւ խոռվութիւն ի մէջ ֆուանկին և Լոռնի: Խսկ Լոռն և իւր քուրորդին եղեն ի մի կողմն, և թագաւորն և զօրքն Անտիոքայ ի մի կողմն, և աւերեցին զաշխարհն Կիլիկիոյ. և զկնի նոցա անօրէն ազգն Խսմայէլի եկին և գերեցին զազգնքրիստոնէից անհամար բազմութեամբ և կրկին աւերեցաւ աշխարհն Կիլիկիոյ»¹²⁷: Այս նույն վկայությունը Սմբատի և ընդարձակ, և համառոտ խմբագրությունները թվագրում են ՇԶԴ (1135 փետրվարի 16—1136 թ. փետրվարի 15) թվականով¹²⁸: Մենք հակված ենք այս անցուդարձերը թվագրել 1133/4 թվականով: Սամուել Անեցու ժամանակագրությունը և Սմբատի Տարեգրության ընդարձակ և համառոտ խմբագրությունների զուգագրումից հայտնի է դառնում, որ Լոռնը, գործելով Անտիոքի լատինական իշխանության դեմ, կա-

127 Սամուել Անեցի, էջ 129:

128 ո՞հ թուին ՇԶԴ էառ Լոռն որդի Ռովբինի (պարոն Լոռն էառ) զքերդն Սարւանդաւ (զՍարուանդիքարն), և եղեւ խոռվութիւն մեծ ի մէջ Լոռնի և ֆուանգին: Եւ եղեւ Լոռն (պարոն Լոռն) և իւր քուրորդին (քեռորդին) մի (ի Ճի) կողմ (կողմն), և թագաւորն և Անտիոքու հեծեալն (եւ թագաւորն Երուսաղէմի և Անտիոքայ) մի կողմ (ի մի կողմն), և անօրէնք այլ զկնի նոցա (Չիթ. և ...նոցա), և աւերեցին զաշխարհն (գերեկիրս Կիլիկիցոց), և գերեցին զքրիստոնեայքն անհամար բազմութեամբ (եւ ազգն թուրքին զկնի նոցա գերեաց զազգն զքրիստոնէից անհամար և շատ): Հմմտ. Սմբատ, 1956, էջ 159—160: Փակագծում տրված են Սմբատի Տարեգրության համառոտ խմբագրության տարընթերցումները (հմմտ. Սմբատ, 1856, էջ 79—80, էջ 93):

բողանում է նրանից խլել Սարվանդիքար ամրոցը; Մեր ուսումնասիրության համար ուշագրավ է այն պարագան, որ երր Երուսաղեմի թագավորը և Անտիոքի հեծելազորը ներխուժում են Կիլիկիա, և ունին դաշնակցում է նրա քրոջ որդին՝ Եղեսիայի կոմս Զոսլին Բ-ը (1131—1150): Կիլիկիայի Ռութինյան իշխանության և Եղեսիայի կոմսության դաշնակցային փոխարաբերությունները նկատելի են դեռևս Զոսլին Ա-ի իշխանության ժամանակաշրջանից, երբ վերջինս, ըստ Անանուն Ասորու, փորձում է 1131 թ. խոշընդոտել Ղազի Դանիշմանյանին ներխուժել Ռութինյանների տարածքները¹²⁹: Այնուամենայնիվ Կիլիկիայի հայկական իշխանապետության և Եղեսիայի կոմսության միացյալ գործողությունները չեն կարողանում արգելել Երուսաղեմի թագավոր Ֆուլք Անժուացուն (1131—1143) ավերել Կիլիկիան: Այս դեպքերին, ինչպես տեղեկացնում են սկզբնաղբյուրները, հաջորդում է թյուրքերի ներխուժումը դեպի Կիլիկիա, որոնք գերեվարում են անհամար քանակությամբ քրիստոնյանների և կրկին ավարառությունների են ենթարկում երկիրը¹³⁰:

Ահա հենց այս պահից էլ սկսվում է Վասիլի՝ Գրիգոր Գ կաթողիկոսի եղբոր և Կարկառի նախկին տիր Միքայել Հայի՝ Կոստանդնի որդու միջև պայքարը Կարկառ ամրոցի համար: Միքայել Ասորին այդ իրադարձությունների մասին պատմում է. «1447 (1135/6 թ.) հայերը և ֆրանկները սկսեցին պատերազմել: Բալաքի ժամանակ Միքայել Հայը դուրս էր եկել Գարգարի ամրոցից և նրան էր թողել այն (Գարգարը—Ա. թ.): Բալաքի մահից հետո նա (Միքայելը—Ա. թ.) այն կրկին վերագրավեց և այնտեղ հաստատվեց¹³¹: Այն ժամանակ Միքարերեկի մարդիկ¹³² (les gens de Sibaberé)

129 Անանուն Ասորի, էջ 75:

130 Մեզ համար անհայտ է, թե որ պետական միավորման զորքերին ի նկատի ունեն պատմագիրները: Սակայն ամենայն հավանականությամբ խոսքը վերաբերում է Դանիշմանյաններին:

131 Այս դեպքերի մասին տե՛ս Մատթեոս, էջ 357—359, հմմտ. նաև Սմբատ, 1956, էջ 155:

132 Միքարերեկը կոչվում է նաև Սամկառ կամ Սահուկառ, եպիս-

պատերազմի մեջ մտան նրա դեմ. նա ավարառեց նրանց գյուղերը, իսկ նրանք՝ վերջինիս (*Միքայելի գյուղերը—Ա. Բ.*): Մի պահ թյուրքերը նրան հետապնդեցին մինչև Ցիզոնայի (*Zizona*)¹³³ մոտակայքը, եփրատի ափերի վրա. նրանք (*թյուրքերը*) նրան (*Միքայելին—Ա. Բ.*) շրջապատեցին բոլոր կողմերից, և նա շկարողացավ փրկվել: Այն ժամանակ նա մի քարձր ժայռից նետվեց գետը, ծածկված իր զրահով և վահանն էլ ձեռքին: Նա սուզվեց մինչև ջրի հատակը, ապա դուրս եկավ և թաքնվեց մի ժանժաղուտում, որն այնտեղ էր գտնվում: Նա շմահացավ: Ապա նա տվեց Գարգարը Զոսլինին և նրանից ստացավ Սոփարոսը (*Sopharos*)¹³⁴: Զոսլինը վաճառեց Գարգարը 500 զինարով Վասիլին, հայերի կաթողիկոսի եղբորը: Դրանից հետո Միքայելը փոշմանեց և մտածեց վերագրավել այդ քաղաքը: Քանի որ Զոսլինը դրան համաձայնեց, նա (*Միքայելը—Ա. Բ.*) հավաքեց մի բանակ, ներխուժեց և ավարառեց Քեսունի երկիրը: Ֆրանկները նրա դեմ ելան և նա հանկարծակի սպանվեց: Գարգարի տեր Վասիլը՝ ֆրանկների կողմից հեռացվելով, գնաց գտնելու կեն Հային, որը Կիլիկիայում էր և դարձավ նրա փեսան: Նա միավորեց հայերին և եկավ հարձակվելու ֆրանկների վրա, որոնք Փարզամանում էին (*Pharzaman*)¹³⁵: Այնտեղ բազմաթիվ հայեր սպանվեցին: Այն ժամանակ թյուրքերը տեսնելով, որ հայերը և ֆրանկները իրար հետ պատերազմում են, ուղարկեցին Աֆշին անունով մի դաժան մարդու, որը ավարառեց Քեսունի շրջանը. տեսնելով, որ ոչ իրենց դեմ շելավ, նրանք առաջացան ավարառելով մինչև Անտիոք¹³⁶: Այնուհետև Միքայել Ասորին պատմում է, որ

կոպոսանիստ քաղաք է Ամիգ և Սամոսատ քաղաքների միջև, այսօր՝ Սուփերիկ (*Հմատ. M. S.*, է. 1, թ. 68+).

¹³³ Քաղաքը թեև ըստ ազրյուրի տեղադրվում է Եփրատի ափին (sur les rives de l'Euphrate), սակայն տեղադրությունը մեզ անհայտ է:

¹³⁴ Ամրոց Սամոսատի շրջանում (*M. S.*, է. III, թ. 69+):

¹³⁵ Տեղադրվում է Եփրատյան մարզում, Խարանի մոտ (*M. S.*, է. I, թ. 58+):

¹³⁶ *M. S.*, է. III, թ. 244—245.

Թյուրքերը կրկին ներխուժում են Հյուսիսային Ասորիքի լատինական իշխանությունների սահմանները և հասնում մինչև Լառդիկե, սակայն ուտելով Որոնտ գետի ձուկը, շատերը հանկարծամահ են լինում և նույնիսկ գերիներին թողնելով փախչում են։ Այս գեպքերի մասին այլուստ տեղեկություններ չեն պահպանվել։ Միայն հայկական սկզբնազրյուրներն են, որ գալիս են փոքր ի շատե հաստատելու Միքայել Ասորու տեղեկությունները։ Մեզ հետաքրքրող իրադարձություններին անդրադարձել են Սամուել Անեցին և Սմբատ Սպարապետը։ Պետք է այստեղ նշել, որ Սմբատի երկի համառոտ խմբագրությունը և Սամուել Անեցու ժամանակագրության ձեռագրերից մեկը¹³⁷ գրեթե նույն ձևով են ավանդում մեզ հետաքրքրող իրադարձությունը¹³⁸, իսկ Սմբատի ընդարձակ խմբագրությունը հակասում է նրանց¹³⁹։

Ինչով են նույնանում Միքայել Ասորու և հայ ժամանակիրների վկայությունները. փորձենք որոշել այդ իրադարձությունների տեղն ու դերը Կիլիկիայի Ռուբինյան իշխանության պատմության համար։ 1133/4 թ. իրադարձությունների մասին խոսելիս մենք տեսանք, որ Լևոնը Եղեսիայի կոմսի հետ միասին դաշնակցում էր ընդդեմ Երուսաղեմի թագավորի և Անտիոքի լատին իշխանության։ Չնայած որ Եղեսիայի կոմս Զուլին Բ.-ը Լևոնի քրոջ որդին էր, նրա հետ Ռուբինյանների դաշինքը հաստատում չէր։

137 Սամուել Անեցու Ա. Տեր-Միքելյանի կազմած ընագրում գնիշով օգտագործված ձեռագիրը համապատասխանում է Երևանի Սաշտոցի անվան Սատեհագրանի 1486 մատյանին (Հին համարը՝ 1703)։

138 «Ի թուին ՇՁԵ (1136 փետրվարի 16—1137 փետրվարի 14) պարոն Լևոն իւանգուրեաց Պաղտին՝ տէրն Մարաշայ» (Սմբատ, 1856, էջ 80, 1859, էջ 93), Սամուելի ժամանակագրության ՄՄ 1486 ձեռագրում չի պահպանվել իրադարձության թվականը (Սամուել, էջ 128)։

139 Սմբատի Տարեգրության ընդարձակ խմբագրությունը այս գեպքերի մասին գրում է. «Ի թուին ՇՁԵ տէրն Մարաշայ Պաղտինն իւանգուրեաց զկեռն որդին Ռուբինայ...» (Սմբատ, 1956, էջ 160). Մեր կարծիքով, Սմբատի Տարեգրության ընդարձակ խմբագրության մեջ, 2փոթմամբ լևոնի արածը վերագրվել է Պաղտինին Հակառակ կարծիքին է Ս.—Ե. Քառունին (Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը, էջ 198)։

1135թ.¹⁴⁰ Կարկառի տեր Վասիլը (Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի եղբայրը) Եղեսիայի կոմությունից 500 դինարով գնում է Կարկառ (Գարգար) ամրոցը, սակայն դրա նախկին տերը՝ Միքայել Հայը, փորձում է զենքով տիրանալ ժամանակին իրեն պատկանած ամրոցին և ավարառում է Քեսունի շրջանը: Ֆրանկները (այսուեղ պետք է հասկանալ միայն Անտիոքի դքսության զորքը) պատերազմում են Միքայելի դեմ և սպանում նրան: Իր տիրույթներից վտարվում է նաև Վասիլը և հեռանալով, դաշինք է կնքում Կիլիկիայի իշխան Լևոնի հետ, ու դառնում է նրա փեսան¹⁴¹: Այդ ընթացքում ֆրանկները Մարաշի և Քեսունի իշխանությունը հանձնում են Պաղտին Մարաշացուն, որի մասին մինչ այդ որևէ վկացություն անհնար է գտնել միջնադարյան սկզբնաշրյուրներում¹⁴²: Միացյալ Հայկական ուղմական ուժերը հարձակվում են Փարզամոնի մոտ բանակ դրած լատին բանակի վրա: Հայերը մեծ կորուստներ են ունենում: Օգտվելով Հայերի և լատինների ուղմական բախումից, թյուրքերը ներխուժում են Քեսունի շրջանը և ավարառելով հասնում են մինչև Անտիոք: Կարելի է ենթադրել, որ թյուրքերի կողմից ուղարկված Աֆշինը¹⁴³ կամ Դանիշմանյան մելիք Մուհամե-

140 Թաղականը մենք ենք վերականգնում:

141 Գրիգոր Գ կաթողիկոսի եղբոր՝ Վասիլի հետ կնքված այս դաշները պետք է դիտել որպես փոխհամաձայնություն Սովորում (Տլուքի գալառ) Հաստատված Հայոց կաթողիկոսարանի և Ռուբինյան իշխանության միջև:

142 Պաղտին Մարաշացու գործունեությունը մասնակի հետազոտության մի ենթարկվել խաչակիրների պատմությամբ դրազվող հետազոտությունների կողմից: Այս իրադարձության մասին (R. Grousset, Histoire des Croisades, t. II, p. 52):

143 Կլող Կահենի աշխատանքում խոսվում է այս Աֆշինի մասին, սակայն այսուեղ էլ չի տագում, թի նա որ թյուրքական պետական միավորման անունից է գործել. L'encouragement est trop beau pour les Turcs; le même Aschin que vient d'illustrer le raid de Lattakie pilier la plaine de Kaisoun, où peu après lui succède une armée danois-mendite; quant à Gargar, les Francs la gardèrent, mais ne purent empêcher Dâoud de Hîçn Kaïfâ et Khartpert d'occuper Bâbalouï" (Cl. Cahen, La Syrie, p. 356):

դի, կամ էլ Հալեպի և Մոսուլի տեր Զանգու զորավարներից մեկն էր։ Այս առումով ուշագրավ է Միքայել Ասորու այն վկայությունը, որ այդ ժամանակ Դանիշմանյան ամիրությունը Թաղղատի խալիֆից և Խորասանի սուլթանից թագավորության (մելիքության) առանձնանշաններ էր ստացել, քրիստոնյաների ղեմ մղած սուրբ պատերազմը (ջահադ) ղեկավարելու համար։ Մեր ենթադրությունը, թե վերևում հիշատակված Աֆշինը Դանիշմանյան զորավար է, ավելի հավանական է դառնում, երբ նկատի ենք ունենում 1136/7 թ. Գրիգոր Երեցի Տարեգրության մեջ իրադարձությունների նկարագրությունը։ «Յամս շրջագայութեան տումարիս Հայոց ՇԶԵ (1136 թ. փետրվարի 16—1137 թ. փետրվարի 14) եկն Մահմատ սուլտանն¹⁴⁴, որդի Ամր-Խազէին՝ որդւոյ Դանիշմանին, սա եկեալ բազում զօրօք յաշխարհն Մարաշայ և եկեալ իշաւ ի վերայ Քեսուն քաղաքի և այրեաց զշէնս գեղիցն և վանորէիցն ի ժամանակս կթոց այգեստանացն։ և նստեալ աւուրս վեց ի վերայ քաղաքին, ոչ պատնէշ կանգնեալ կամ մեքենայս, և ոչ նետածիգ եղեալ, այլ լոելեայն նստեալ, հատանելով զջուր գետոյն և կոտորելով զրուրաստանսն՝ այսր անդր ասպատակ ունելով և զառ և զաւար յինքեանս կուտելով¹⁴⁵։ Այդ հարձակման սարսափից քաղաքացիները նույնիսկ թողնում են գորատաքին պարիսապն, սակայն թըշնամին ոռչ ետ հրաման զօրացն պատերազմաւ զքաղաքն (առնուլ—Ա. թ.), այլ արդ ի յաւուր ուրբաթու, որ էր օր շարշարանաց փրկչին մերոյ, եղև ազատութիւն քաղաքին Քեսնու»¹⁴⁶։ Մուհամեդ Դանիշմանյանը այրում է Կարմիր

Պարզ երեսում է, որ Կլոդ Կարճնը Աֆշինի և Դանիշմանյանների միջև որեւէ կապ չի տեսնում։ Հնարավոր է կատարել երեք ենթագրություն։ ա) Աֆշինը Դանիշմանյան զորավար է, թ. Բ) Մոսուլ-Հալեպի աթաքեկության զորավար է, զ) Աֆշինը Ամիդի կամ Մարգինի Արտուրյան ամիրայության զորավարներից է։

144 Գրիգոր Երեցը սուլթան է կոչում Դանիշմանյան ամիր Մուհամեդին (1134—1142)։ Դանիշմանյան ամիրությունը սուլթանի տարբերաններ է ստացել ղենան Ղազու կենդանության օրոք։ Այդ մասին տեղեկացնում է Միքայել Ասորին (Մ. Տ., է. III, թ. 237)։

145 Մատրեսս Ռոմայեցի, էջ 367։

146 Նույն տեղում, էջ 368։

վանքը. «զիսրճիթս միանձանց և մանրեալ զնշանս տէրու-
նական քարանց. և փայտից, գերի վարեալ զերկաթեղէնս և
զպղնձեղէնս, ի յերկիր կործանեալ զսեղան սրբութեան հացի՝
փշրեաց և զդուռն գեղեցկահիւ յօրինուածոյ և զայլն ընդ
ինքն բարձեալ տանելով յաշխարհն իշրեանց ի տես հարճից
և ուամկաց իբրև զԲարիլացին զայն»¹⁴⁷: Պատմիլը բացատ-
րում է նաև այս շուտափույթ փախստյան պատճառը. «Եւ
Մահմուտն զնաց փութանակի յաւոր ուրբաթու, որպէս ասա-
ցաք, քանզի համբաւ եհաս ի լսելիս նորա յաղագս թագա-
տրին Հոռոմոց, թէ դիմեալ գայ յօնութիւն պաշարեալ քա-
ղաքին Քեսնոյ՝ մերոյ իշխանին Պաղտունին կոչեցելոյ, մաղ-
թելով առ ոտս նորա, զի յաւորն յայնոսիկ մերձ էր թագա-
տրն Յունաց յԱնտիոք՝ աւարելով զՏամկաստան և բարձեալ
էր զիշխանութիւն մերոյ իշխանին կոն կոչեցելոյ, և զքա-
ղաքս և զբերդիս ամուրս յինքն գրաւեալ և զնա առեալ տա-
նէր յաշխարհն Յունաց յայնկոյս ծովուն ի սահմանս Ասիաց-
ոց աշխարհին»¹⁴⁸:

1136 թ., մինչև բյուզանդացիների դեպի Կիլիկիա և Հյու-
սիսային Ասորիք կատարած ուազմարշավը, Անտիոքի լա-
տինները կարողանուեմ են խարեւությամբ գերել կոն Ա Ռու-
բինյանին: Այս իրադարձությունը Սմբատ Սպարապետի Տա-
րեկրության ընդարձակ խմբագրությունը թվագրում է Քե-
սունի և Մարաշի տէր Պաղտինի զեմ կոն Ա Ռուբինյանի
գործողություններից երեք ամիս հետո. «...յետ Գ ամսոյ,
տէրն Անտիոքայ Պեմունդն կալաւ զկեւոն»¹⁴⁹: Այս դիպվածը
տպիթ է դառնում, որ Կիլիկիայում գլուխ բարձրացնեն կենտ-
րոնախույս ուժերը. «Եւ յարեան որդիքն կոնի միմեանց

147 Նույն տեղում, էջ 368:

148 Նույն տեղում, էջ 358—369:

149 Սմբատ, 1956, էջ 160: Անշուշտ սխալվում են Սմբատի Տարե-
գրության համառոտ խմբագրությունը և Սամուել Անեցու Ժամանակագրու-
թյունը «յետ Գ ամսոյ»-ի փոխարեն զնելով ոյետ երեք տարույ» (Սմբատ,
1956, էջ 80, 1859, էջ 98) կամ «յետ երեց ամաց» (Սամուել, էջ 128):
Այս վերջին բնագրում տրվում են նաև այլ ընթերցումներ Անտիոքի իշ-
խանի անվան համար, ըստ Սամուելի՝ «Պետքինն», իսկ ըստ Սմբատի
Տարեկրության համառոտ խմբագրության. «որդի Պետքինն Պայմունդն»
(Սմբատ, 1859), «որդի Պետքինն Պետքին» (Սմբատ, 1856, էջ 80):

հակառակս, որից հետո Կիլիկիայի պատմիլը ափսոսանքով է գրում. «և կալեալ զհանճարեղ եղբայրն (ՏԻԸ) Կոստանդին՝ խավարեցոյց զաշն»¹⁵⁰: Այս ներքաղաքական պայքարը ամենայն հավանականությամբ տեղի էր ունենում իշխանությունը օրինական զավակների ձեռքում պահելու համար և ջլատում էր առանց այն էլ արտաքին պատերազմներից թուլացած Կիլիկյան իշխանությունը: Այս փաստերը խոսում են այն մասին, որ Բյուզանդական կայսրությունը, վերջապես, հասել էր իր նպատակին, Կիլիկիայի հայկական իշխանությունը արդեն անզոր էր դիմագրավել կայսերական բանակների ներխուժմանը:

Բյուզանդական կայսրությունը, ինչպես կարելի է ենթադրել սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններից, ուշի ուշով հետևում էր Կիլիկիայի հայկական իշխանության ներսում և նրա հարեանների միջև բորբոքված քաղաքական պայքարին, և բացառված չէ, որ նաև գործուն միջամտություն էր ցույց տալիս: Կիլիկիայի հայկական և Անտիոքի լատին իշխանությունները միմյանց դեմ հանելով՝ Բյուզանդիան, իրոք, հասել էր իր նպատակին: Կիլիկիայի հայկական իշխանությունը 1134—1136 թթ. պատերազմների հետևան-

150 Սմբատ, 1956, էջ 160: Սմբատի համառոտված Տարեգրության քնարում այս իրադարձության նկարագրությունն փոքր-ինչ այլ տեսք ունի. «Եւ որդիքն կեսնի յարեան միմեանց հակառակ, և կալեալ զեղբայրն (իրեանց) Կոստանդին՝ հանին զաշբն» (Սմբատ, 1856, էջ 80, 1859, էջ 93): Սամուել Անեցու մոտ այս վկայությունը համեմված է մի շափականց կարևոր մանրամասնով. «Իսկ որդիքն կեսնի յարեան հակառակ միմեանց, և կալեալ զհարճեարայրն իւրեանց զկոստանդին՝ խաւարեցուցին զաշն» (Սամուել, էջ 128—129): Հիշատակված Կոստանդինը, ամենայն հավանականությամբ, կեսն Ա Ռուբինյանի հարճածին զավակն է, որովհետեւ Սմբատի Տարեգրության համառոտ խմբագրությունները նրա անունը տալիս են՝ չեղելով հարճածին լինելու հանգամանքը (հմմտ, Սմբատ, 1856, էջ 80, 1859, էջ 98), իսկ Վահրամ Մարումին, ընդհանրապես չի հիշատակում նրան, եթե թվարկում է կեսնի որդիներին. «Նախ զթորոսն՝ մեծըն կոլեալի եւ զՄտեֆանէն պսակադրեալ, լապա զՄէհն յառաջացեալի՝ եւ զլուրէնն՝ զհամ եղեալ», (Վահրամ Մարումի, Ռոտանաւոր, 1859, էջ 197): Հետևարար, Սմբատի ընդգրծակ խմբագրության մեջ առկա տղհանձարեղ եղբայրն ընթերցումը պետք է փոխարինել «զհարճեղբայրն» բառով:

քով կորցրել էր ուազմական հղորությունը, ևսոն Ա. Ռուբին-յանի գերեվարությունից հետո սկսված ներքին պայքարը արյունաքամ էր արել ու բզկտել երկիրը։ Չնայած Կիլիկիայի նկատմամբ Անտիոքի լատին իշխանության ժամանակավոր հաջողություններին, Հյուսիսային Ասորիքի խաչակրաց այս իշխանությունն էլ էր ստիպված եղել այդ տարիների ընթացքում հանդես գտնու մի քանի ճակատով.

ա) Անտիոքի լատինական իշխանությունը 1130 թ. կորցնելով իր իշխանին երկար ժամանակ, մինչև 1136 թ. գրադամած էր ներքին գահակալական պատերազմներով¹⁵¹։

բ) Անտիոքի լատինական իշխանության համար ժանր վիճակ էր ստեղծվել արևելյան սահմանների մոտ։ 1128 թ. Հալեպն իր իշխանության ներքո էր առել Մոսուլի աթարեկ Զանգին, որը հաճախակի քրիստոնյաների դեմ սրբազն պատերազմ էր հայտարարում և ժամանակ առ ժամանակ ավարառությունների ենթարկում Եղեսիայի և Անտիոքի լատին իշխանությունների տարածքները¹⁵²։

գ) Հյուսիս-եփրատյան մարզում, ուր 1135/6 թ. փորձում էր հաստատվել Անտիոքի իշխանությունը, Ռայմոնդ Պումատիեի և Պաղտին Մարաշացու ծրագրերը բախվում էին Դանիշմանյան ամիրության արտաքին-քաղաքական շահերի հետ։ Այդ էր պատճառը, որ Դանիշմանյան ամիրությունը հաճախակի ավարարիլ արշավանքներ էր կազմակերպում դեպի նշված տարածքները¹⁵³։

դ) Անտիոքի լատին իշխանությունը փորձում էր իր գերիշխանությունը վերահստատել Թաղտային Կիլիկիայի վրա, որտեղ նրա արտաքին-քաղաքական ծրագրերը բախվում էին Կիլիկիայի հայկական իշխանության կենսական շահերի հետ¹⁵⁴։

¹⁵¹ R. Grousset, Histoire des Croisades, t. II, p. 9—13, 15—18, 33—50.

¹⁵² N. Ellsséeff, Nur ad-din, t. II, p. 339—361.

¹⁵³ Տե՛ս Մատրոս, էջ 367—369.

¹⁵⁴ Հմմտ, նաև Ս.—Ե. Քառենի, Կիլիկիոյ հայկական իշխանապետությունը, էջ 195—199, 200—202։

ե) Հյուսիս-Եփրատյան մարզում (*Մարաշի և Քեսունի շրջաններ*) Անտիոքի լատինական իշխանության շահերը բախվում էին նաև Եղեսիայի կոմսության հետ, քանի որ այդ տարածաշրջանի իշխանությունների գերազակա տերը դիտվում էր Եղեսիայի իշխանը: Կիլիկիայի հայկական իշխանությունը ևս այդ խնդրում պաշտպանում էր այդտեղ հաստատված Վասիլի և Եղեսիայի կոմսության շահերը ի հակագշիռ Անտիոքի լատին իշխանության¹⁵⁵: Եղեսիայի և Անտիոքի լատին իշխանությունների միջև ծավալված քաղաքական պայքարը Հյուսիս-Եփրատյան տարածքների համար շարունակվում է մինչև Եղեսիայի առումը Զանգու կողմից, և նույնիսկ դրանից հետո (մինչև 1147 թ.)¹⁵⁶:

Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայում ստեղծված խառնաշփոթ իրազրությունը իր զավթողական նպատակների իրագործման համար փորձեց օգտագործել Բյուզանդական կայսրությունը: Հովհաննես Բ Կոմնենոս կայսրը ուազմարշավ ձեռնարկեց զեպի Կիլիկիա և Անտիոք: Այդ ուազմարշավի հաջողության, համար Բյուզանդական կայսրությունը կենտրոնացրել էր իր ողջ ուժերը. Հովհաննես Բ կայսրը իր հետ արևելք էր բերում գրեթե ողջ արքունիքը (վախենալով իր բացակայության շրջանում որևէ խռովությունից), հսկայական քանակությամբ ուազմական ուժեր, այդ թվում նաև վարձկան զորագույններ:

Հովհաննես Բ-ի ուազմարշավով՝ հարցականի տակ դրվեց և՛ Կիլիկիայի, և՛ Անտիոքի իշխանությունների անկախ գոյությունը: Եթե մինչ այդ Անտիոքի լատինական իշխանությունը ուղղակիորեն իր վրա չէր զգացել Բյուզանդական կայսրության ուազմական ճնշումը և իր իշխանության ամենասիերիմ հակառակորդներ էր համարում Մոսուլի և Հալեպի աթարեկ Զանգուն, Դանիշմանյան ամիրությունը, ապա՝ երբ Բյուզանդական բանակները ոչ թե հեռվից էին սպառնում, այլ

¹⁵⁵ Տե՛ս R. Grousset, *Histoire des Croisades*, t. II, p. 51–53:

¹⁵⁶ Տե՛ս R. Grousset, *Histoire des Croisades*, t. II, p. 199–201:

Հասել էին իշխանության սահմաններին, Անտիոքի և Եղեսիայի լատին իշխանությունները մեծ զգուշավորություն էին հանդեռ բերում և փորձում էին շահել կայսեր վստահությունը, չմոռանալով նրա դեմ պայքարում դաշնակիցներ վաստակել: Անտիոքի իշխան Ռայմոնդ Պուատիեն և ընդհանրապես արեւելքի լատին իշխանությունները շատ լավ էին հասկանում, որ բյուզանդական ուազմարշավը իր սուր ժայրով ուղղված է Անտիոքի լատինական իշխանության դեմ, և որ իրենք՝ միայնակ անզոր կլինեն դիմագրավել Հովհաննես Բ Կոմնենոսի բանակներին: Հովհանները իրենց հույսը դրել էին Կիլիկիայի հայկական իշխանության և Անտիոքի բախման հետեւանքների և հայ-լատին թշնամական փոխարարերությունների վրա: Այդ հանգամանքը ընդգծում է բյուզանդական պատմիշ Հովհաննես Կիննամոսը. «(Անտիոքի լատինները—Ա. Բ.) տեսնելով, որ չեն կարող դիմագրել բյուզանդական զորքին, հարմար նկատեցին իրենց կողմը գրավել նաև Լոռին» (օսկ ձիօրմաշու; ց լին հաւուն; ոյ՝ ‘Պարաւան ևնուես սրաւով ծեն շնաւան ու Լեթօնուց օգնուան ևուտիշտաւ):¹⁵⁷

Բյուզանդիայի և խաչակրաց պետությունների պատմության ուսումնասիրողները բաղմիցս անդրադաել են Հովհաննես Բ Կոմնենոսի 1136—1138 թթ. Կիլիկիա-Հյուսիսասորիքյան ուազմարշավին¹⁵⁸, սակայն Կիլիկիայի քաղաքական պատմության ուսումնասիրողները բավական թուցիկ են անդրադառնում Կիլիկիայի հայկական պետության համար այդքան ճակատագրական նշանակություն ունեցող իրադարձություններին¹⁵⁹:

157 Ի., Ը., թ. 16:

158 Ալգ աշխատություններից ամենակարևորներն են R. Grousset, Histoire des Croisades, t. II, p. 86—123; Cl. Cahen, La Syrie, p. 357—364.

159 Մ. Զամշեան, Պատմութիւն Հայոց, հ. 3, էջ 58—61, Ղ. Ավշան, Սիսուան, էջ 51—52, Ս.—Ե. Թասունի, Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը, էջ 204—212; Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, с. 103—106.

**Յ. ԿՈՎՀԱՆԻԱՅԻ ԳՐԱՎՈՒՄԸ ԲՅՈՒՋԱՆԴԻԱՅԻ ԿԱՊՄԻՑ. ՀՈՎՀԱՆՆԵՍ Բ
ԿՈՄՆԵՆՈՍԻ ԱՌԱՋԻՆ (1136—1138) ԽՎ ԵՐԿՐՈՐԴ (1142—1143)
ԴԱԶՄԱՐԵԱՎՆԵՐԸ ԴԵՊԻ ԿՈՎՀԱՆԻԱՅ**

Հովհաննես Բ Կոմնենոսի արևելյան քաղաքականության միջոցառումների մեջ առանձնանում են Բյուզանդական բանակի առաջին և երկրորդ ռազմարշավները դեպի Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք։ Այդ ռազմական գործողությունները նշանակալիորեն փոխեցին տարածքի քաղաքական քարտեզը և բարձրացրեցին կայսրության միջազգային հեղինակությունը Մերձավոր Արևելքի քաղաքական շրջաններում։ Այնուամենայնիվ, Կիլիկիայի վրայով անցած երկու ռազմարշավներից իր արդյունքներով առանձնանում է առաջինը։ Եթե բյուզանդական առաջին ռազմարշավի ընթացքում կայսրությունը նվաճեց Կիլիկիայի ողջ տարածքը և ստիպեց իր գերակայությունը ճանաչել Անտիոքի և Եղեսիայի լատինական իշխանություններին, ապա՝ երկրորդ ռազմարշավը ավելի համեստ քաղաքական արդյունքներ ունեցավ, կայսրությունը Կրկին վավերացրեց առաջին ռազմարշավի ընթացքում իր ձեռքբերումները։

Բյուզանդական կայսրության 1136—1138 թթ. ռազմարշավը դեպի Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք ժիշտ դարի առաջին կեսի բյուզանդական բանակի ամենամեծ միջոցառումն է Փոքր Ասիայում և Մերձավոր Արևելքում ու մեծ նշանակություն ունեցավ կայսրության, հետագա, արևելյան քաղաքականության կուրսի մշակման համար։

Հովհաննես Բ Կոմնենոսի կիլիկյան և Հյուսիսասորիքյան առաջին ռազմարշավը զբաղեցրել է Բյուզանդիայի, արևելքի լատինական և մուսուլմանական պետությունների և Կիլիկիայի հայկական իշխանության պատմության հետազոտողների ուշադրությունը¹⁶⁰։ Այդ ռազմարշավի հետ կապված

¹⁶⁰ Հովհաննես Բ Կոմնենոսի կիլիկյան-Հյուսիսասորիքյան առաջին ռազմարշավի մասին աեւս F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 128—154; R. Grousset, Histoire des Croisades, t. II, p. 83—123; P. Lamia, La spedizione di Giovanni Comneno in Cilicia ed in Siria in un Panegirico inedito di Michele Italico, Estratio dal vol. IV Serie V

բազմաթիվ խնդիրներ աղբյուրների սակավության և հակասականության պատճառով իրենց լուսարանումը չեն ստացել։ Գետք է նշել նաև, որ ուսումնասիրողներից բյուզանդագետ Հր. Բարթիկյանն է միայն փորձել քննել այդ ուսումնարշավի հետ կապված խնդիրները Կիլիկիայի հայկական իշխանության քաղաքական շահերի տեսանկյունից¹⁶¹, Յայոօթ Կիլիկիան առաջին ուսումնարշավի հետ կապված խնդիրները բավական կնճռոտ են թեկուզ այն պատճառով, որ պահպանված բազմաթիվ միջնադարյան սկզբնաղբյուրներից յուրաքանչյուրը մեզ հետաքրքրող դեպքերը դիտում է սեփական պատճագիտական ավանդույթների տեսանկյունից և միայն սկզբնաղբյուրների համեմատական ուսումնասիրությունը կարող է նոր լույս սփռել ուսումնարշավի դեռևս լուսարանված դրվագների վրա։

Բյուզանդական պատմիչներ Հովհաննես Կիննամոսը և Նիկետաս Խոնիատեսը Հովհաննես Բ Կոմնենոսի Կիլիկիան ուսումնարշավի առիթ են համարում այն, որ Անոն Ա. Ռուբինյանը գրավելով կայսրությանը պատկանող բազմաթիվ իսակրական քաղաքներ, փորձել էր տիրել նաև Սելեկիային¹⁶², Հովհաննես Կիննամոսը նշում է մեկ առիթ ևս, որը չի ավանդում Նիկետաս Խոնիատեսը. «Երբ» Բահմունդը (Բոհեմունդ Անտիոքացին — Ա. Բ.), որն Անտիոքիներին էր իշխում, մահացավ, երկրի ավագները («բօնշուտ») կայսեր մոտ ուղարկվածների միջոցով հայտնեցին, որ եթե (նա) կամենա (իր) որդիներից կրտսերին՝ Մանուելին պսակել Բահմունդի դստեր (հետ), անհապաղ, ամուսնությունից հետո Անտիոքիները նրա իշխանության տակ կանցնեն։ Սակայն (կայ-

delle Memorie della Accademia delle Scienze di Bologna. Classe di Scienze Morali, Bologna, 1952, p. 3–28; Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, с. 103—123.

161 Հր. Բարթիկյան, Միքայել Իտալիկոսի «Ներբողյանը» և Կիլիկիայի հայոց առաջին թագավորի խնդիրը, ՊԲՀ, 1984, № 4, էջ 216—220։

162 Լ. Ը., թ. 16; N. Ch., թ. 21։ Այս ուսումնարշավը հայերին պատճելու գործողություն են դիտում նաև Միքայել Ասորին և ԺԴ դարի Անան ասորի ժամանակիրը (M. S., թ. III, թ. 245; Անանուն Ասորի, ժամանակագրություն, էջ 98)։

սրը) դեռ չէր հասցրել մտնել Կիլիկիա և (Անտիոքիները) փոխելով մտադրությունը բարեկամների և գաշնակիցների փոխարեն դարձան նրա թշնամիները»¹⁶³; Միքայել Խտալիկոսը Կիլիկիայի դեմ Հովհաննես Բ Կոմնենոսի ուղմարշավիր պատճառ է համարում այն, որ Հեռն Ա Ռուբինյանը մերժել էր Բյուզանդական կայսրության գերակայությունը և իրեն թագավոր էր Հռչակել¹⁶⁴:

Հովհաննես Բ Կոմնենոսի Հյուսիսասորիքյան ուղմարշավիր այլ պատճառ և առիթ է մատնանշում արար պատմիչ իրն ալ-Ասիրը, ամրողությամբ այդ միջոցառումը կապելով Հյուսիսային Ասորիքում խաչակրաց իշխանությունների դեմ աթարեկ Զանգիի գործողությունների հետ. «...ֆրանկները Կոստանդնուպոլսի (Կուսթանթինիյա) թագաւորին լուր ուղարկեցին՝ օգնություն կանչելով և հիշեցնելով, թե ինչ էր արել Զանգին: Նրանք համոզում էին նրան օգնության հասնել այս երկրին, քանի դեռ ուրիշները չէին տիրել և դեռ ավելորդ չէր նրա գալը»¹⁶⁵; Բյուզանդական ուղմարշավիր առիթի և պատճառների մասին լատին պատմիչներն ու Վիլհելմ Սուրացին ոչինչ չեն հաղորդում: Ուրեմն՝ Հովհաննես Բ Կոմնենոսի առաջին Կիլիկիա-Հյուսիսասորիքյան ուղմարշավը ԺԹ—ԺԴ դդ. բյուզանդական և ասորի մատենագիրներն ներկայացնում են որպես պատժիչ արշավանք, որն առաջին հերթին ուղղված է եղել Կիլիկիայի Հայկական իշխանության, ապա նաև՝ Անտիոքի լատինական դքսության դեմ, իսկ ԺԴ դարի արար ժամանակագիր իրն ալ-Ասիրը այդ միջոցառումը դիտում է որպես մի գործողություն, որն ուղղված էր Հայեպի և Մոսուլի աթարեկ Զանգու նկրտումների դեմ: Վերընթաց շարադրանքից ելնելով կարող ենք ենթադրել, որ ուղմարշավի հիմնական նպատակն էր Բյուզանդական կայսրությանը ենթարկել Ատալիայից Տրիպոլի

163 I. C., թ. 16:

164 F. Fusco, Il panegirico di Michele Italico per Giovanni Comneno.—'Επετηρίς: 'Εταιρείς Βյζαντινῶν Σπουδῶν, τόμος ΛΣ', 'Αθῆναι: 1969—70, σ. 154 Հր. Խարիկյան, Միքայել Խտալիկոսի շնորհագիրը, էջ 218, 221:

165 Իրն ալ-Ասիր, էջ 249:

միջերկրածովյան առափնյա հատվածը, այդ ճանապարհին վերացնել Փոքր Ասիայի հարավ-արևելյան ելուստում ձևավորված Կիլիկիայի Հայկական իշխանությունը, որը զենք էր բարձրացրել Բյուզանդական կայսրության դեմ, դաշնակցել էր արևելյում Բյուզանդական կայսրության ամենալուրջ հակառակորդներից մեկի՝ Դանիշմանյան ամիրության հետ:

Հովհաննես Բ Կոմնենոսի Կիլիկիա-Հյուսիսասորիքյան առաջին ռազմարշավի պատմագրությանը հուզող կնճռոտ հարցերի թվում ուսումնասիրության կարոտ է ռազմարշավի սկսման տարեթվի որոշումը: Հայտնի է, որ ԺԹ դարի վերջին և ի դարի սկզբին բյուզանդագիտական գրականության մեջ արմատացել է այն դրույթը, որ Հովհաննես Բ Կոմնենոսի առաջին ռազմարշավը դեպի Կիլիկիա սկսվել է 1137թ.¹⁶⁶:

Առաջինը բյուզանդագետ էղուարդ Կուրցն էր, որ նորահայտ փաստերով փորձեց Հովհաննես Բ Կոմնենոսի Կիլիկիա-Հյուսիսասորիքյան առաջին ռազմարշավի սկսման թվականը 1137 թ. փոխադրել 1135 թ., հիմնվելով Կ. Պոլսի Պանտոկրատորի վանքի «Մահմանքում» (τοπίχα) պահպանված մահացածների ցուցակի հաղորդած տեղեկությունների վրա: Այդ փաստաթուղթը գրվել է 1136 թ. հոկտեմբերից ոչ ուշ¹⁶⁷: Այս վավերագրում Նիկեփորոս Վրիենոսը՝ Աննա Կոմնենեի ամուսինը, հիշատակվում է մահացածների շարքում: Գիտությանը հայտնի է նաև, որ Աննա Կոմնենեն, չհիշատակելով տարբիվը, ակնարկում է իր ամուսին Նիկեփորոս Վրիենոսի մասնակցությունը Հովհաննես Բ Կոմնենոսի առաջին ռազմարշավին: Մահամերձ Նիկեփորոսին ստիպված են լինում Կիլիկիայից ետ ուղարկել Կոստանդնուպոլիս: «Այն ժամանակ (նա) ծանր հիվանդ վիճակում (գնաց) պատերազմելու

¹⁶⁶ H. Gelzer, Abriss der byzantinischen Kaisergeschichte.—In: K. Krummbacher, Geschichte..., S. 1022; G. Ostrogorsky, Geschichte..., S. 313; St. Runciman, A history of the Crusades, v. II, p. 211, История Византии, т. II, с. 321.

¹⁶⁷ А. Дмитревский, Описание литургических рукописей хранящихся в библиотеке православного Востока. Т. I, Тοπίχα ч. I. Памятники патриарших уставов и ктиторские монастырские типиконы, т. I, Киев, 1895, с. 662.

Ասորիքում և Կիլիկիայում, ապա Ասորիքը (նրան) հյուծված վերադարձեց, կիլիկեցիները՝ Պամփյուլացիներին, Պամփյուլացիները՝ Լիդիացիներին, Լիդիան՝ Բյութանիային, և Բյութանիան՝ Կայսրական քաղաքին և մեզ: Արդեն ներքին օրգանները բազմաթիվ տանջանքներից ուռել էին»¹⁶⁸,

Հիմնվելով Պանտոկրատորի վանքի սահմանքի և Աննա Կոմնենի երկի վերորերյալ տեղեկությունների վրա է. Կուրցը եզրակացնում է. «Քանի որ այս երկընտրանքը անհնարի լուծել այլ կերպ, մենք հրաժարվում ենք ընդունված թվագրումից, զնում ենք Ասորիքյան ուազմարշավը ավելի վաղ և տեղափոխում ենք Վրիենոսի մահը, որը տեղի է ունեցել, շուտով, ուազմարշավը սկսվելուց հետո, 1136 թ. առաջին կեսին»¹⁶⁹; Ապա՝ գերմանացի բյուզանդակետը, որևէ այլ վկայությամբ չհիմնավորելով, Հովհաննես Բ Կոմնենոսի առաջին Կիլիկիա-Հյուսիսասորիքյան ուազմարշավի սկիզբը թվագրում է 1135 թ.¹⁷⁰, Հետագայում ևս, Ա. Պ. Կաժդանը և Պ. Գոտիեն հետևելով է. Կուրցին և հիմնվելով Պանտոկրատորի վանքի «Սահմանքի» հաղորդած վկայության վրա, Հովհաննես Բ-ի Կիլիկիա-Հյուսիսասորիքյան առաջին ուազմարշավի սկիզբը թվագրում են 1136 թ. սկզբից մինչև հոկտեմբեր ամիսը ընկած ժամանակամիջոցով¹⁷¹: Կոմնենոսիների դարաշրջանի սկզբնաղբյուրներին քաջատեղյակ Ֆ. Շալանդոնը, որը խորամուխ է եղել նաև մեզ հետաքրքրող ուազմարշավի խնդիրների քննարկմանը, շափազանց զգուշորեն ուազմարշավը թվագրել է 1136 թ. վերջով և 1137 թ. սկզբ-

¹⁶⁸ "Αννης τῆς Κομνήγης παρφυρογεννήτου καισαρίσσης Ἀλεξίας, PG, t. 131, p. 85.

¹⁶⁹ Ed. Kertz, Unedierte Texte aus der Zeit Kaisers Johannes — BZ, Bd. 7, (1907). S. 85.

¹⁷⁰ Նույն տեղում:

¹⁷¹ Տե՛ս P. Gautier, L' obituaire du typicon du Pantocrator.—REB, v. 27, p. 251—252; А. П. Каждан, Еще раз о Киннаме и Никите Хоннате, BS, XXIV /I, 1963, с. 14—16; Анна Комнина, Александра.—Вступительная статья, перевод, комментарий Я. Н. Любарского.—М., 1965, с. 439—440, прим. 19:

բով¹⁷²: Այնուամենայնիվ Ֆ. Շալանդոնի մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո հրապարակ ելած թյուզանդական պատմության հեղինակավոր ձեռնարկներում և խաշակրաց արշավանքներին նվիրված ուսումնասիրություններում Հովհաննես Բ-ի Կիլիկիա-Հյուսիսասորիքյան առաջին ուազին ուազմարշավի սկիզբը թվագրում է ավելի հաճախ 1137 թ.¹⁷³: Պետք է ավելացնել, որ մեզ հետաքրքրող ուազմարշավի թվագրման գործը բարդացնում են նաև պահպանված բազմաթիվ և բազմազու սկզբնաղյուրները, որոնցից յուրաքանչյուրը մեզ հետաքրքրող դեպքերի մասին խոսում է, առաջին հերթին նկատի ունենալով իր կողմից ներկայացվող պետական միավորման կամ տարածքի քաղաքական շահերը:

Բյուզանդական մատենագիրներ Հովհաննես Կիննամոսը, Նիկետաս Խոնիատեսը, Թեոդորոս Փրոդրոմոսը, Միքայել Խտալիկոսը, Նիկեֆոր Բասիլիակեսը և Հովհաննես Բ-ի Անանուն դովերգիչը թեև Հանգամանորեն պատմում են Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում տեղի ունեցող ուազմական գործողությունների մասին, սակայն ճշգրիտ ժամանակագրական տեղեկություններ չեն հաղորդում ուազմարշավի սկսման տարեթիվի վերաբերյալ: Կիննամոսը և Խոնիատեսը մեզ հետաքրքրող իրադարձությունների մասին պատմում են Հովհաննես Բ-ի՝ Դանիշմանյան ամիր Մուհամեդի դեմ ձեռնարկած ուազմարշավից անմիջապես հետո¹⁷⁴:

1134 թ. իրադարձությունների մասին խոսելիս, Միքայել Ասորին հաղորդում է, որ Մուհամեդը սրբազն պատերազմ մղելու համար ստացել է մելիքի տիտղոս և զինանշան-

172 F. Chatandon, Les Comnènes, t. II, p. 112.

173 G. Ostrogorsky, Geschichte, S. 313; St. Runciman, A history of the Crusades, v. II, p. 211; История Византии, т. II, с. 321.

174 Հովհաննես Կիննամոսը Կաստամոն ամրոցի շորոցը բյուզանդական գործերի և Դանիշմանյան ամիրության պատերազմների մասին պատմելուց անմիջապես հետո գրում է. Տե՛ս՝ նույն Պասուան ու կոլերան ձերչյան “Պարτίուս սնբառու” (I. C., p. 16).

Նիկետաս Խոնիատեսի մոտ և Դանիշմանյան ամիրության գեմ պատերազմներին հաջորդում են կիլիկյան ուազմարշավի դեպքերը. “Տե՛ս՝ չով ուսնե ուրաւեան ուռաւեան ուռաւեան ուռաւեան...” (N. Ch., p. 21).

Աեր175: Նույն տարվա նոյեմբերին (teστια 1^o), ըստ Միքայել Ասորու, Իկոնիայի սուլթան Մասուդը վախեցնում է Մուհամեդին բյուզանդական կայսեր նոր գալուստի մասին լուգեր տարածելով և Մուհամեդը իսկույն մեկնում է¹⁷⁶. Ենթադրում՝ ենք, բյուզանդական զորքերին ընդառաջ Հովհաննես կիննամուր նախքան Կիլիկյան ուղմարշավը տեղի ունեցած Գանգրայի և Կաստամոնի Խվաճման համար պայքարը բյուզանդական զորքերի կողմից թվագրում է ձմռան ամիսներով¹⁷⁷: Այս վկայությունը զուգադրելով Միքայել Ասորու տեղեկությանը, կարող ենք Մուհամեդ Դանիշմանյանի դեմ բյուզանդական ուղմարշավը (Պափլագոնիա և Արմենիակոնքանակաթեմերի տարածքներում) թվագրել 1134—1135 թթ. ձմռան ամիսներով: Պակաս հետաքրքիր չէ նաև այն հանգամանքը, թե ինչու այդքան կարճ տևեցին ուղմական գործությունները Դանիշմանյան ամիրության և Բյուզանդական կայսրության միջև: Ուշադրությամբ հետևելով Նիկետաս Խոնիատեսի և Հովհաննես Կիննամուրի հաղորդած տեղեկություններին պետք է ընդգծել, որ Հովհաննես Բ Կոմնենոսը ուղմական գործություններում շկարողացավ հասնել մեծ հաջողությունների¹⁷⁸: Ե՛վ Կաստամոն ամրոցը, և՛ Գանգրաքաղաքը նա կարողացավ գրավել միայն համաձայնագրով (օμοլոγիա)¹⁷⁹: Այնուամենայնիվ բյուզանդակիտության կողմից Մուհամեդ Դանիշմանյանի դեմ ուղղված այս ուղմարշավը անվանվում է «հաղթական»¹⁸⁰: Դանիշմանյան ամիրության և Բյուզանդական կայսրության միջև շուտափուլթ հաշտության համաձայնագրեր կնքելու գործում նշանակալի տեղ

175 *M. S.*, t. III, p. 237:

176 Նույն տեղում, էջ 237:

177 Հովհաննես կիննամուր գրում է. ընթա՝ ‘Պալատու ուլոն տառ նւատրիթսու շրջոն, չուսւի մի ելիշոն ծիւն շեմինոն էսչումսուու տա չուտիժուա, չսնեթաւու ինդ հւսմա կուսաւ’ (*I. C.*, p. 15).

178 Այս եղբակացությանը կարելի է հանդել ընթերցելով Հովհաննես Կիննամուր և Նիկետաս Խոնիատեսի Պատմությունների հետեւյալ հատվածները (տե՛ս *I. C.*, p. 14—15; *N. Ch.*, p. 19—21):

179 Տե՛ս *I. C.*, p. 15:

180 *F. Chalandon*, Les Comnènes, t. II, p. 91.

պետք է հատկացնել Դանիշմանյան ամիրության ներսում ժայր առած երկպառակտչական պատերազմներին, որոնց մասին Միքայել Ասորին գրում է. «Մուհամեդի երկու եղբայրները՝ Յագանը (Yagan) և Դոլահ (Daulah), ապստամբեցին նրա դիմ: Յագանը սպանվեց, իսկ Դոլահը ավարառեց Մելիտեննեի շրջանը»¹⁸¹: Միայն այդպիսի ներքին երկպառակտություններով կարելի է բացատրել Գանգրայի և Կաստամոնի առումը բյուզանդական զորքերի կողմից, և նաև Հովհաննես Կիննամոսի այն տեղեկությունը, թե գանիշմանյան թյուրքերը, որոնք գերի էին ընկել կամ պաշտպանում էին նշված ամրոցները, դերադասեցին ստրկությունը ազատությունից ու ժառայության մտնելով կայսեր մոտ, հզորացրեցին բյուզանդական բանակը¹⁸²: Գանիշմանյան ամիրության ներսում սկսված կենտրոնախույս ուժերի դեմ ներքին պարքարը միայն նպաստեց Կիլիկիայում բյուզանդական զորքերի ծավալած հաջող ռազմական գործողություններին:

Ինչպես ցույց տվեցինք վերընթաց շարադրանքում, Գանգրայի և Կաստամոնի դիմ ուղղված ռազմարշավից հետո (1134—1135 թ. ձմեռ), ըստ բյուզանդական պատմիչների սկսվում է Հովհաննես Բ-ի Կիլիկիա-Հյուսիսասորիքյան առաջին արշավանքը: ԺԴ դարի հեղինակ Անանուն Ասորի ժամանակագիրը մեր ձեռքի տակ եղած միակ սկզբնաղբյուրն է, որը հաստատում է Էդուարդ Կուրցի և նթագրությունը և բյուզանդական զորքերի Կոստանդնուպոլիսից դուրս գալը թըզագրում է սելլակյան 1446 թվականով (1134 թ. հոկտեմբերի 1—1135 թ. սեպտեմբերի 30). «Այդ ժամանակ, 1446 (1135) թվականին, հունաց կայսրը, որ Հովհաննեսն էր, նախանձախնդրությունից դրդված որոշեց արշավել զեպի Ասորիք»¹⁸³:

Վիլհելմ Սուրացին Հովհաննես թ Կոմնենոսի Հյուսիսասորիքյան ռազմարշավի մասին խոսում է, ավարտելով

¹⁸¹ M. S., t. III, p. 238:

¹⁸² I. C., p. 15:

¹⁸³ Անանուն եղեսացի, ժամանակագրություն, Երևան, 1982, էջ 79:

Ծայմոնդ Պուատիեին Անտիռքի իշխան օծելու արարողության մասին պատմությունը¹⁸⁴:

Կիլիկյան ռազմարշավի պատճառների մասին շարադրանքում այս վերջին իրադարձությանը անդրադառնում է նաև բյուզանդական պատմիչ Հովհաննես Կիննամոսը: Նա տեղեկացնում է, որ Բոհեմունդ (Եգիպունծու) Անտիռքացու մահից հետո Անտիռքի ավագները բանակցություններ էին վարում Հովհաննես թ Կոմնենոսի հետ, վերջինիս կրտսեր որդի Մանուելի և Բոհեմունդի դստեր ամուսնության հարցի շուրջ, հրավիրելով կայսրին Անտիռք: Սակայն, ըստ Կիննամոսի, բյուզանդական զորքերը գեռ չէին հասցրել մտնել Կիլիկիա, երբ անտիռքացիները թշնամական դիրք գրավեցին Բյուզանդական կայսրության նկատմամբ¹⁸⁵: Հովհաննես Կիննամոսը նաև հայտնում է. «Տեսնելով, որ իրենք չեն կարող առնակատել հռոմեական զորքին, հարմար նկատեցին Լոռնին ևս իրենց կողմը գրավել: Այնպես որ այդ մարդուն գուրս բերելով բանտից, ուր նա պատերազմում գերվելով պահվում էր հսկողության տակ, նրանից երդում առան, որ կլինի բարեկամ և զինակից ընդդեմ կայսեր, սիրալիրությամբ ազատարձակեցին»¹⁸⁶:

Անանուն Ասորի ժամանակագիրը ևս կևոն Ծուրինյանի և Ծայմոնդ Պուատիեի ռազմական բախումը կապում է Հովհաննես թ Կոմնենոսի Կիլիկիա-Հյուսիսասորիքյան առաջին ռազմարշավի ժամանակի հետ. «Պուտիինը (Ծայմոնդ Պուատիեն—Ա. Բ.) նրան (կևոն Ա. Ծուրինյանին—Ա. Բ.) շըթայված բերեց Անտիռք: Եվ մինչդեռ նա բանտարկված էր

184 W. T., p. 796:

185 I. C., p. 16: Իրն ալ-Ասիրը ևս տեղեկացնում է, որ բյուզանդական զորքերին Հյուսիսային Ասորիք էին հրավիրել արևելքի լատինները. «Ֆրանկները Կոստանդնուպոլսի (Կոստանդնուլիա) թագավորին լուր ուղարկեցին՝ օգնության կանշելով և հիշեցնելով, թե ինչ էր արել Զանգին: Նըրանք համոզում էին նրան օգնության հասնել այս երկրին, քանի դեռ ուրիշները չէին տիրել և դեռ ավելորդ չէր նրա գալը» (Իրն ալ-Ասիր, էջ 249):

186 I. C., p. 16:

Անտիռքում, Հունական զորքերը հասան մինչև Կիլիկիո ղղուները¹⁸⁷:

Անանուն Ասորին և իրն ալ-Ասիրը հաղորդում են, որ Հովհաննես Բ Կոմնենոսը Կիլիկիայի սահմաններին է համել ցամաքային ճանապարհով, սակայն ուազմարշավի պարենը, բեռներն ու զինամթերքը բերվել են ծովային ճանապարհով, նավատորմիդի օգնությամբ¹⁸⁸:

Հովհաննես Կոմնենոսը Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք էր արշավում մի զորաբանակով, որն իր նշանակալի մասով համալրված էր Բալկաններում և Փոքր Ասիայում զորագրված վարձկաններով¹⁸⁹:

Ամենայն հավանականությամբ, արդեն 1136 թ. սկզբին թյուղանդական զորքերը, - որոնց հրավիրել էին Անտիռի ավագները, արդեն գտնվում էին Ատալիայում և ընդհուպ մոտեցել էին Կիլիկյան հայկական իշխանության սահմաններին¹⁹⁰:

ԺԴ դարի արար և ասորի ժամանակագիրների տեղեկությունները միմյանց լրացնելով բյուզանդական ուազմարշավը ներկայացնում են որպես մի միջոցառում, որի ընթացքում Հովհաննես Բ Կոմնենոսը զուգակցել էր ցամաքային և ծովային բանակների գործողությունները¹⁹¹: Իհարկե անտրամաբանական է և շի կարելի հավատ ընծայել Անանուն Ասորուն՝ Հովհաննես Բ Կոմնենոսի Կիլիկիա բերած 400000 զին-

187 Անանուն նդեսացի, էջ 80:

188 Անանուն նդեսացի, էջ 79, Իրն ալ-Ասիր, էջ 249, F. Chalandon, Les Comnènes, I. II, p. 113.

189 Անանուն Ասորին բյուզանդական բանակի կազմի մասին խոսելիս պրում է. «...աւամուն և հունգար ֆրանկներից մոտ չորսհարյուր հազարանց զորք հավաքելով ...» (Անանուն նդեսացի, էջ 79): Բյուզանդական բանակը, ինչպես վերելում նշվեց, համարվել էր նաև Դանիշմանյան ամիրությանը հպատակ թյուրք-սելջուկյան զորամիավորումներով (տե՛ս F. Chalandon, Les Comnènes, I. II, p. 113).

190 Իրն ալ-Ասիրը սիսալվում է, վերագրելով Հովհաննես Կոմնենոսին Նիկիայի նվաճումը (այս մասին տե՛ս F. Chalandon, Les Comnènes, I. II, p. 115): Ֆրանսիացի բյուզանդագետի կարծիքով, այստեղ խոսքը վերաբերում է Սելնկիային:

191 Իրն ալ-Ասիր, էջ 249, Անանուն նդեսացի, էջ 79:

վորից բաղկացած բանակի մասին վկայությանը¹⁹², Ասորական աղբյուրի այս տեղեկությունը խոսում է միայն բյուզանդական բանակի բազմաքանակության մասին։ Բյուզանդական բանակի կազմում կռվում էին եվրոպական ժողովուրդների ներկայացուցիչներ (գերմանացիներ և հոնգարներ)¹⁹³, փոքրասիական թյուրքեր¹⁹⁴։ Զնայած սկզբնաղբյուրները որևէ վկայություն չեն հաղորդում, այնուամենայնիվ սխալված չենք լինի, եթե ենթադրենք, որ Կիլիկիա մտնելիս, ամենայն հավանականությամբ, Հովհաննես թ Կոմնենոսի բանակներին են միացել նաև Լամբրոնի և Պապեռոնի Հեթումյանները և Կիլիկիայի արևմտյան մասում հաստատված բյուզանդամետ հայկական իշխանական տները, որոնք ճանաշում էին Բյուզանդական կայսրության գերակայությունը և թշուամարար հետեւում Ռուբինյանների հայկական իշխանության հզորացմանը։

1136 թ. աշնան սկզբին բյուզանդական զորքերը ներխուժում են Կիլիկիա։ Այս մասին ուղղակի վկայության ենք հանդիպում Մատթեոս Ուուհայեցու Ժամանակագրության շարունակության՝ Անանուն Քեսունցուն պատկանող հատվածում, Եզե (1136 թ. փետրվարի 16—1137 թ. փետրվարի 14) թվականի իրադարձությունների նկարագրությունների մեջ։ Մեզ հետաքրքրող մասում պատմվում է Մուհամեդ Դանիշմանյանի Մարաշ և Քեսուն քաղաքների վրա կատարած կողոպտական արշավանքի մասին։ Ժամանակագիրը թվագրում է իրադարձությունը. «Ի ժամանակս կթոց այգեստանեացն», հետևապես դեպքը տեղի է ունեցել 1136 թ. աշնանը։ Գանիշմանյան ամիրա Մուհամեդը վեց օր Քեսունը շրջապատելուց և մերձակա շրջանները ավարառելուց հետո, ինչպես գրում է ժամանակագիրը. «գնաց փութանակի յաւուր ուրբաթու, որպէս ասացաք, քանզի համբաւ եհաս ի լսելիս նորա յաղագս թագաւորին Հոռոմոց, թէ դիմեալ գայ յօգնու թիւն պաշարեալ քաղաքին Քեսունոց ...»¹⁹⁵.

192 Անանուն նդեսացի, էջ 79.

193 Նույն տեղում:

194 F. Clarendon, Les Comnènes, t. II, p. 113.

195 Մատթեոս Ուուհայեցի, էջ 367—398.

Այսպիսով՝ 1136 թ. աշնան սկզբին Հովհաննես Բ Կոմ-
նենոսը իր բազմազգ և բազմաքանակ բանակով ներխուժել
էր Կիլիկիայի սահմանները և բանակ էր դրել երկրի դաշ-
տային հատվածում. «մերձ էր թագաւորն Յունաց յԱնտիոք՝
աւարելով զՏաճկաստան և բարձեալ էր զիշիանութիւն մե-
րոյ իշխանին կուն կոչեցելոյ...»¹⁹⁶. Սակայն Ֆ. Շալանդո-
նը, որը ևս Հովհաննես Բ Կոմնենոսի կիլիկյան առաջին
ուղմարշավը թվագրելիս հիմնվում է Անանուն Քեսունցու
գրչին պատկանող այս վկայության վրա, անուշադիր է եղել:
Ֆրանսիացի բյուզանդագետը հաշվի չի առել մատենագրի
օգտագործած հայկական թվականը (ՇԶԵ), ապա տեղի տա-
լով բյուզանդագիտության մեջ տարածում գտած տեսակե-
տին, եկել է հետևյալ եղրակացության. «...1136 թ. վերջի
ամիսներին բյուզանդական բանակը բռնեց Կիլիկիայի ճա-
նապարհը, որտեղ նա հասավ ապրիլին, քանի որ Ղազու որ-
դին դադարեցնում է Քեսունի պաշարումը Սուրբ Ուրբաթ օրը,
ապրիլի 9-ին, երբ իմացավ, որ բյուզանդական բանակը
մոտենում է»¹⁹⁷; Նման եղրակացության հանգելու խնդրում
Ֆ. Շալանդոնին շփոթության մեջ է դրել Անանուն Քեսուն-
ցու հաղորդած հետևյալ վկայությունը. «...արդ ի յաւուր
ուրբաթու, որ էր օր շարշարանաց փրկչին մերոյ, եղեւ ազա-
տութիւն քաղաքին Քեսուն...»¹⁹⁸. Սակայն, ինչպես վերևում
տեսանք, մեզ հետաքրքրող այս ուրբաթը չէր կարող լինել
ապրիլ ամսին, և որեէ կապ ունենալ շարշարանաց ուրբաթի
(կամ Ավագ Ուրբաթի)¹⁹⁹ մեծ Զատկին նախորդող Ուրբաթի,
քրիստոնեական տոնի հետ, քանի որ Անանուն Քեսունցին
շեշտում է, որ Մուհամեդ Դանիշմանյանի կողոպտչական
արշավանքը դեպի Քեսուն տեղի է ունեցել այգեկութի ժա-
մանակ։ Մեր կարծիքով մատենագիրը միայն համեմատում
է Քրիստոսի շարշարանաց ուրբաթը այս ուրբաթի հետ, որի

196 Մատքես Ռոմայեցի, էջ 368—369:

197 F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 112.

198 Մատքես Ռոմայեցի, էջ 368:

ժամանակ շարշարանքի և տանջանքի է ենթարկվել Քեսունի և նրա մերձակա շրջանների բնակչությունը¹⁹⁹:

Մյուս հայկական սկզբնաղբյուրը, ուր մեզ հետաքրքրող իրադարձությունը՝ Հովհաննես Բ Կոմնենոսի կիլիկյան ուղմարշավը, թվագրվում է Հայոց 626 (1136 թ. փետրվարի 16—1137 թ. փետրվարի 14) թվականով, Սմբատ Սպարապետի անունով հայտնի «Տարեգրքի» ընդարձակ և համառոտ խմբագրություններն են²⁰⁰:

Արաբ պատմիչ իրն ալ-Ասիրը Բյուզանդական կայսրության ուղմական գործողությունները Փոքր Ասիայում և Հյուսային Ասորիքում թվագրում է հիջրայի 531 (1136 թ. սեպտեմբերի 29—1137 թ. սեպտեմբերի 18) թվականով²⁰¹: Պետք է այստեղ նկատի ունենալ այն հանգամանքը, որ իրն ալ-Ասիրի երկի այս հատվածում իրադարձությունների կենտրոնում գտնվում է Հալեպի աթարեկությունը, և նրա հետքութանդական ուղմական գործողություններն են, որ առաջին հերթին փորձում է նկարագրել պատմից:

Այսպիսով, Մուհամեդ Դանիշմանյանի կողոպտչական արշավանքը դեպի Մարաշ և Քեսուն պետք է թվագրել ոչ ուշ քան 1136 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներով: Հետևապես, արդեն այդ ամիսներին բյուզանդական քանակը Հովհաննես Բ Կոմնենոսի գլխավորությամբ կարողացել էր տիրել Դաշտային Կիլիկիայի մեծագույն մասին:

Քիչ ավելի վաղ, 1136 թ. ամռան ամիսներով պետք է թվագրել Զուլին Բ-ի և Ռայմոնդ Պուատիեի այցը Հովհաննես Բ Կոմնենոսին, որը հասնելով «Կիլիկիոյ դոներին»²⁰²,

199 Նույն տեղում, էջ 368:

200 Սմբատ, 1956, էջ 160, Սմբատ, 1856, էջ 80, Սմբատ, 1859, էջ 23,

201 Իրն ալ-Ասիր, էջ 249: Այդ նույն թվականն է մատնանշում նաև ալ-Զառուզին (տե՛ս RHC, hist. or., I. III, p. 570).

202 Հովհաննես Բ Կոմնենոսի մուտքը Կիլիկիա, ուկիլիկիոյ դոներով հաստատում է նաև Նիկետաս Խոնիատեսը. «χαί τι ἐφόδια ἵκανα πρός χρονίαν ἐνθημένος ταῖς Κιτικίαις πύλαις ἐφίσταται» (N. Ch., p. 21), Մեր այս պեղումը հակադրվում է Ֆ. Շալանդոնի հնթագրությանը,

պատգամավորներ ուղարկեց ֆրանկների մռա և հաղորդեց. «Ով հնագանդվում է ինձ և բարի կամենում, թող վեր կենա գա՝ ինձ պատիվ տալու»²⁰³, Բստ Անանուն Եղեսացու, Եղեսիայի և Անտիոքի տերերը Բյուզանդիայի կայսրին հանդիպում են «Տարսոնից վեր»²⁰⁴. Միայն այս դիվանագիտական այցելությունից հետո է, որ Հովհաննես թ Կոմնենոսը ձեռնամուխ է լինում Կիլիկիայի նվաճմանը. Աղբյուրների կրց-կըտուր շարադրանքից դժվար է կռահել, թե Հովհաննես թ Կոմնենոսը ինչ հերթականությամբ է տիրել Դաշտային Կիլիկիայի քաղաքներին²⁰⁵, ո՞ր պետական միավորներից է գրավել գրանք²⁰⁶: 1136 թ. աշունը և 1137 թ. առաջին կեսը Հովհաննես Կոմնենոսը նվիրում է Դաշտային Կիլիկիայի նը-վաճմանը, որը շնայծ այդ տարածքների տիրոջ՝ կոն Ռուբինյանի բացակայությանը, քիչ մտահոգություններ լպատճառեց բյուզանդական բանակին:

Կիլիկիայի բյուզանդական նվաճման մասին մանրամասն տեղեկությունների համար մենք պարտական ենք բյուզանդական, ասորական, արաբալեզու մատենագիրներին և հայ տարեգիր Գրիգոր Երեցին:

Բստ Անանուն Եղեսացու, Եղեսիայի և Անտիոքի իշխանների վերադարձից հետո. «Հունաց կայսրը գրավեց Տարսոնը, Մսիսը և Աղանան, պաշարեց ու գրոհով նվաճեց նաև

որը հետեւալ ճանապարհն է մատնանշում, հենվելով Հովհաննես թ Կոմնենոսի Կիլիկիան երկրորդ ռազմարշավի ուղերթի սկզբնագրյուրների հաղորդած վկայությունների վրա՝ Ատալիա-Սելեկիա-Համոս-Կիլիկիան դաշտավայր (*հմտ. F. Chalandon, Les Comtènes, t. II, p. 113*).

203 Անանուն Եղեսացի, էջ 80:

204 Նույն տեղում, էջ 80:

205 Բստ Հովհաննես Կիննամոսի՝ Հովհաննես թ Կոմնենոսը սկզբում գրավել է Մապսնեստիան (*Մսիս*), ապա՝ Տարսոնը և Աղանան, երկարժամանակ պաշարել և ապա գրավել է Անավարդան, որից հետո շրջապատեց է Վահկան, սակայն կիսատ թողնելով պաշարումը, արշավել է դեպի Անտիոք (*I. C.*, թ. 16):

206 Անանուն Եղեսացին հաղորդում է, որ Աղանան գրավվել է լատին-ներից. «Երանք (*Աղանայի բնակիչները — Ա. Բ.*) ուրախացան, թե հնագանգվելով հույներին՝ վերջապես հանգիստ գտան և ազատվեցին ֆրանկների գոան հարկերից» (*հմտ. Անանուն Եղեսացի, էջ 81*):

Անարդարան²⁰⁷: Իբն ալ-Ասիրը ևս գիտե Աղանայի և Մամեստիայի գրավման մասին, սակայն նույնպես շեշտում է, որ Անարդարան Հովհաննես Բ-ը «պաշարեց և բռնի ուժով գրավեց»²⁰⁸: Նիկետաս Խոնիատեսը և Հովհաննես Կիննամուսը ևս տեղյակ են Տարսոնի՝ Աղանայի առանց պատերազմի նվաճմանը (ձմաշը ուրեմն Ածխոնի է պատճեն տղի Տարսոն)՝²⁰⁹, սակայն հետագա շարադրանքում հակառակում են միմյանց²¹⁰:

Բյուզանդական գորքերի կողմից Տարսոնի, Մոպուտիստիայի և Աղանայի գրավումը հեշտացնող հանգամանքները բազմաթիվ են, նշենք դրանցից մի քանիսը.

ա) Նշված քաղաքներին Ռուբինյանները տեր էին դարձել ԺԲ դարի 30-ական թվականներին, երբ արդեն հասցրել էին ամրապնդել իրենց իշխանությունը Լեռնային Կիլիկիայում:

բ) Այդ քաղաքները դեռևս ամբողջովին չեին կապվել Կիլիկյան իշխանության տնտեսության և վարչական ապարատի. Հետո: Նման ենթադրության լավագույն ապացույց է այդ քաղաքներից երկուսի՝ Մոպուտիստիայի և Աղանայի հանձնումը Բյուզանդական կայսրության ներքին օպոզիցիայի ղեկավար Խաչակ Կոմնենոսին դեռևս 1132 թ.:

գ) Հարկ է նաև ավելացնել, որ նշված քաղաքները, ըստ Սմբատ Սպարապետի Տարեշրության ընդարձակ և համառոտ խմբագրությունների, 1136 թ. հանձնվել էին որպես ուղամատուգանք Անտիոքի լատին իշխանության տնօրինությանը²¹¹:

207 Անանուն նպասացի, էջ 80: Առաջին երեք քաղաքների նվաճումը հավաստում է նաև Միքայել Ասորին, սակայն տարօրինակ կերպով ոչինչ չի հաղորդում Անարդարայի նվաճման մասին (տե՛ս M. S., լ. III, p. 245):

208 Իբն ալ-Ասիր, էջ 249: Պետք է այստեղ հատուկ նշել, որ Հովհաննես Կիննամուսը, ինչպես Միքայել Ասորին, Անանուն Եղիսացին և Իբն ալ-Ասիրը, հիշատակում է նաև Մոպուտիստիայի (Մսիս) նվաճումը:

209 N. Ch., p. 21: Իհարկե, Կիննամուսը խոսկով այս երկու քաղաքների նվաճման մասին, արձանագրում է սոսկ այդ փաստը (I. C., p. 16):

210 I. C., p. 19; N. Ch., p. 21:

211 Քնագրում հիշատակվում է. «...զՄսիս, զԱնտանա, զՄարզանդի»

Հետևելով դեպքերի ժամանակագրական հաջորդականությանը, Հովհաննես Կիննամուր նշված երեք քաղաքների դրավումը արձանագրելուց հետո անցնում է Անավարզայի պաշտրման նկարագրությանը²¹²: Գրիգոր Երեցը շափազանց ճշգրիտ է թվագրում քաղաքի շրջապատման և դրավման ժամանակը. «Քանզի ի բարձրանալ թուականութեանս Հայոց յամս ՇԶԶ (1137 թ. փետրվարի 15—1138 թ. փետրվարի 14) նոյն թագաւորս Հոռոմոց որդի Ալէքսին, որում անուն էր Պեռպեռօժէն, եկն մեծ խոռվութեամբ ի քաղաքն Անաւարզա: Եւ էր յաւուրսն ամառնային՝ յամիսն յովիսոյ. և խսարեաց զբաղաքն աւուրս երեսուն և հինգ (Երուս. տպ.՝ եօթն) և նեղեաց բարանովն...»²¹³: Հետևաբար, Անավարզայի շրջապատումը սկսվել է 1137 թ. հունիս ամսին և շարունակվել է մինչև օգոստոսի վերջը (գուցե նաև սեպտեմբեր ամսիսը): Դժվար չէ նաև ենթադրել, թե ինչու է պաշտպանությունը հատկապես ավելի ուժեղ եղել Անավարզայում: Ժամանակակիցների հաղորդած տեղեկություններից կարելի է կուահել, որ այս ամրոց-քաղաքը եղել է Կիլիկիայի հայկական իշխանության քաղաքական և հոգեոր ամենակարևոր կենտրոններից մեկը, քանի որ, ըստ մի շարք սկզբնաղբյուրների, հենց այստեղ է կալանավորում Հովհաննես Բ Կոմնենոսը կը կու Ա-ի որդիներին և կնոցը²¹⁴:

Անավարզայի գրավման մասին պատմող դրվագում հետաքրքիր վկայություն է պահպանել Նիկետաս Խոնիատեսը: Ըստ նրա, Հովհաննես Բ Կոմնենոսը այդ ամրոց-քաղաքի

Քարեն (տե՛ս Սմբատ, 1956, էջ 160, Սմբատ, 1859, էջ 99), Սմբատի այս վկայությունը Աղանայի մասին հաստատում է նաև Անանուն Եղեսացին (էջ 81):

212 J. C., p. 16, 17—18:

213 Մատթեոս Ռոմայեցի, էջ 369:

214 Գրիգոր Երեցի շարադրանքում նրանց հետ միաժամանակ կազմավորվել է նաև կեռն Ա Ռուբինյանը (տե՛ս Մատթեոս Ռոմայեցի, էջ 369), այսուամենայնիվ մենք հակված ենք ավելի շատ հավատ ընծայելու այս խնդրում Սմբատի (ընդարձակ և համառոտ) և Անանուն Եղեսացու վկայություններին, որոնց մասին, ավելի մանրամասն, տե՛ս հետագա շարադրանքում:

դեմ է ուղարկել Գանգրայի տակ իր կողմն անցած դանիշ-մանյան զորքերին իմանալու համար նրանց նկատմամբ (Հայերի²¹⁵) վերաբերմունքը²¹⁵: Այս հատվածից ակնհայտորեն երևում է, որ բյուզանդական կայսրը վստահ չի եղել Գանգրայի տակ իր կողմն անցած Դանիշմանյան ամիրության զորքերի նվիրվածությանը և վախեցել է, թե նրանք կրկին իր դեմ ճակատ կստեղծեն, դաշնակցելով հայերի հետ: Սակայն և՛ դանիշմանյան վարձկանների, և՛ ընդհանրապես բյու-զանդական քանակի նկատմամբ Անավրզան պաշտպանող հայերի վերաբերմունքը թշնամական էր: Քաղաքի պաշտ-պանները մի քանի անգամ ետ են մղում թշնամու գրոհները, կարողանում են ոշնչացնել բյուզանդական քարանետ մեքե-նաները և անգործության են մատնում կայսեր զորքերին²¹⁶:

Անավրզայի հերոսական պաշտպանությանը իրենց շա-րադրանքում անդրադարձել և հետաքրքիր նկարագրություններ են թողել բյուզանդական պատմիչներ Նիկետաս Խոնիա-տեսը և Հովհաննես Կիննամոսը: Խնչպես վերեւում տեսանք, Անավրզա քաղաք-ամրոցը բյուզանդական շրջապատմանը դիմացել է 35 (37^o) օր²¹⁷:

Ավելի համառ և երկարատև էր Վահկա ամրոցի պաշտ-պանությունը, որը սկսվել էր Անավրզայի գրավումից ան-միշտապես հետո²¹⁸: Վահկայի պաշտոման ժամանակամիջու-ցում կայսրը կարողացավ տիրել Թիլ Համտում ամրոցին և վերջինիս բնակիչներին բռնի բնակեցրեց Կիպրոս կղզում²¹⁹,

²¹⁵ εβασιλεὺς μὲν οὖν μέρος τῆς αὐτοῦ σερατίας προπέμψεων εἰς αὐτήν, καὶ τοῦτο περισκοῖς κατειλεγμένον τέλεσιν, ὃν ηὔμοιρης πρότε-ρον, τὴν Γάγγραν παραστησάμενος, πείρων λαβεῖν ἐντεῦθεν τῆς τῶν Ἀρ-μενίων γυνάμην βουλόμενος καὶ ἀκριβῶς γνῶναι πρὸς οἵ εἰσινε (N. Ch., p. 25).

²¹⁶ I. C., p. 17; N. Ch., p. 25—27; հմատ, F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 115—116; Г. Г. Микаелян, История.., с. 104—105

²¹⁷ Մատրէս Ռոմայեցի, էջ 369:

²¹⁸ Ի տարրերություն Հովհաննես Կիննամոսի, Նիկետաս Խոնիատեսը Վահկայի պաշտոման մասին խոսում է: Անավրզայի նվաճումից առաջ (տե՛ս N. Ch., p. 22—25):

²¹⁹ Իրեն ալ-Ասիր, էջ 249:

այնուհետև գրավեց Ալեքսանդրեթը և վերականգնեց նրա նավահանգիստը^{220:}

Այս վերջին տեղեկությունները նոր լույս են սփռում Բյուզանդական կայսրության միջնրեցիածովյան քաղաքականության որոշ նրբերանգների վրա, և ցույց են տալիս, որ կայսրությունը իր առջև նպատակ չէր դրել Կիլիկիայի և Հյումիսային Ասորիքի բոլոր տարածքների նվաճումը, այլ սահմանափակվում էր միայն ծովամերձ քաղաքների գրավումով և նավահանգիստների ամրապնդմամբ, ինչպես նշել ենք արդեն Դեաբողի պայմանագրի հետ կապված խնդիրներին անդրադառնալիս:

Կիլիկիայում հիշատակված ստրատեգիական կետերը նըգաճելուց հետո, Հովհաննես Բ Կոմնենոսը իր զորքերի գլուխնանցած, անցնում է Հյուսիսային Ասորիք և շրջապատում է Անտիոքը, քանի որ նրա իշխանը այդ ժամանակ քաղաքում չէր^{221:} Ռայմոնդ Պուատիեն այդ օրերին օգնության էր գնացել Տրիպոլիսի իշխանին և Երուսաղեմի թագավորին՝ Ֆուլք Անժուացուն, որոնք պաշտպանում էին Հյուսիսային Ասորիքի Բարին ամրոցը աթարեկ Ջանգու հարձակումներից^{222:} Բյուզանդական ռազմական ճնշումից ահարեկված Ռայմոնդ Պուատիեն ընդունում է իր տարածքների վրա Հովհաննես Բ-ի գերակայությունը և թույլ է տալիս կայսերը մտնել Անտիոք^{223:} Միքայել Ասորին հետեւյալ հերթականությամբ է նկարագրում Հովհաննես Բ-ի Անտիոքյան ռազմարշավը, «Հուների կայսրը ենթարկելով Կիլիկիան, և Լևոնին Կոստանդնուպոլիս

²²⁰ *Ibn al Atyr*, RHC, hist. or., t. I, p. 424.

²²¹ Այդ իրադարձությունների մասին ավելի մանրամասն տե՛ս R. Grousset, Histoire..., t. II, p. 91—97; S. D. Goitein, A Letter from Seleucia (Syria). Speculum, 1964, 39, № 2, p. 300 (հղումը ըստ Ի. Գուդզենի):

²²² F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 18—131; Այս ժամանին խոսում են նաև բյուզանդական սկզբնադրյալները (I. C., p. 18). Այդ ամրոցը Հովհաննես Կիննամոսը անվանում է Խոստափրա (Խույն տեղում, էջ 18); Ռ. Գրուստեն այդ ամրոցը անվանում է Montferrand — Ba'trin (R. Grousset, Histoire..., t. II, p. 91).

²²³ R. Grousset, Histoire..., t. II, p. 94—97.

տողարկելուց հետո, հարձակվեց Անտիոքի վրա։ Քանի զեռ
նա այն չէր կարողացել գրավել, Զոսլինը եկավ նրան զբա-
նելու և նրանք խաղաղություն կնքեցին պայմանով, որ երբ
կայսրը գրավի Ասորիքի շրջանը, այսինքն Հալեպը և մնա-
ցածը, նա դրանք հանձնի ֆրանկներին և ֆրանկները նրան
տան Անտիոքը, ինչպես որ նրանք խոստացել էին նրա հայր
Ալեքսանդր²²⁴,

Միքայել Ասորու և Անանուն Եղիսացու ժամանակագրու-
թյուններից պարզորոշ երևում է, որ Բյուզանդական կայսրու-
թյունը 1136—1138 թթ. ուղմարշավով փորձում է կենսա-
գործել Դեաբոլյան պայմանագրի Կիլիկիային և Հյուսիսա-
յին Ասորիքին վերաբերող հոգվածները²²⁵,

1137 թ. սեպտեմբերին Հովհաննես թ Կոմնենոսը Հյու-
սիսային Ասորիքից կրկին վերադառնում է Կիլիկիա²²⁶, ուր
պետք է շարունակեր Վահկայի պաշարումը և նվաճեր Լեռ-
նային Կիլիկիան։ Անտիոք-Կիլիկիա ճանապարհին կայսրը
դեսպանագնացներ է առաքում աթաքեկ Զանգուն²²⁷։ Հով-
հաննես թ Կոմնենոսի Կիլիկիա վերադառնալու անցուղարձերի
մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Անանուն
Եղիսացին։ «Մինչ կայսրը բանակ էր դրել Անտիոքի հարթա-
վայրում, և ֆրանկները ձևականորեն՝ առանց ուղղամտու-
թյան համագործակցում էին նրա հետ, հանկարծ Աղանա-
քաղաքից ցավալի գույժ ստացվեց՝ նրան (Աղանա քաղաքին—
Ա. թ.) հասած դառնագույն փորձանքի մասին»²²⁸։ Հստ Անա-
նուն Եղիսացու, Հովհաննես թ Կոմնենոսի Կիլիկիա վերա-
դարձի պատճառը թյուրքերի կողմից Աղանայի պաշարումն
էր։ Այս իրադարձությունը լի արձանագրվել ժամանակակից

224 M. S., t. III, p. 245.

225 Անտիոքի պաշարման և Հովհաննես թ.ի ու Ռայմոնդ Պուտիեի հարաբերությունների մասին տե՛ս Անանուն Եղիսացի, էջ 80—81, Իրեալ-
Ասիք, էջ 249, F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 129—133; R.
Grousset, Histoire, t. II, p. 88—99.

226 Այս մասին տե՛ս R. Grousset, Histoire, t. II, p. 98—99.

227 Տե՛ս նույն տեղում, էջ 99։

228 Անանուն Եղիսացի, էջ 81։

պատմագրության կողմից, սակայն այդպիսի հարձակում ըստ պասելի էր ու մեր կարծիքով նման հարված կարող էին հասցընել Իկոնիայի սուլթանության կամ Դանիշմանյան ամիրության զորքերը։ Այդ հարձակումը պետք է ունենար լոկ ստրատեգիական նշանակություն, քանի որ Իկոնիայի սուլթանությունը նման քայլով փակում էր բյուզանդական զորքերի հետդարձ ուղին։ Այդ է պատճառը, որ վախեցած Հովհաննես ԲԿոմնենոսը կիսատ է թողնում անտիքիների հետ բանակցությունները և շտապում է Աղանային օգնության։ Այս դեպքերի լույսի տակ կարելի է նորովի լուսաբանել աթարեկ Զանգու հետ Հովհաննես ԲԿոմնենոսի բանակցությունների մասին տեղեկությունները²²⁹։

1137—1138 թթ. աշնանը և ձմռանը Հովհաննես ԲԿոմնենոսը, սկզբնաղբյուրների վկայությամբ, զբաղվել է Լեռնային Կիլիկիայի ամրոցների նվաճմամբ։ Բյուզանդական պատմիչներն այդ ուղղմական գործողությունների մեջ կարևոր տեղ են հատկացնում Վահկա ամրոցի պաշարման և գրավման պատմությանը։ Հովհաննես Կիննամոսը Վահկան անվանում է չօդյօֆօչետօն, այսինքն՝ ապաստարան²³⁰, հավանաբար, նկատի ունենալով այն հանգամանքը, որ այնտեղ էին հավաքվել Կիլիկիայի հայկական իշխանության դեռևս զենքը վայր շդրած զորքերն ու մոտակա բնակավայրերի բնակչությունը։ Վահկա էր տեղակիոխվել պետության գանձարանը, այնտեղ էին ապաստանել թագավորական ընտանիքի դեռևս շրանտարկված մի շարք անդամներ։ Հովհաննես Կիննամոսը էպիկական շնչով նկարագրում է Կոստանդին անունով զինվորի քաջագործությունները, որը բացառիկ համառություն է ցուցաբերել ամրոցի պաշարման ժամանակ, սակայն վերջիվերջու գերվել է բյուզանդական իշխանությունների կողմից²³¹։ Կիլիկիայի իշխան Լեռնը հասկանալով հետագա դիմադրության անհուսալիությունը, հանձնվել է բյուզանդա-

²²⁹ F. Chalandon, Les Comnètes, t. II, p. 133—134.

²³⁰ I. C., p. 18.

²³¹ I. C., p. 18—20.

կան իշխանություններին. «առեալ գկին և զորդիսն և զզբատերսն լեռնի, և ինքն լեռն եկն առ թագաւորն, առաքեաց զնա կապանօք ի Կոստանդինուպոլիս, և զընտանիս նորա քնդ նմա, և զպատկերն Աստուածածնին այլ տարան»²³²; 1138 թ. գարնանը Կիլիկյան Ռութինյան իշխանության ողջ տարածքը փաստորեն վերջնականապես գրավվեց բյուզանդական բանակի կողմից: Սկզբնաղբյուրները հիշատակում են 1136—1138 թթ. Մսիսի, Աղանայի, Անավարզայի, Սարվանդիքարի, Վահկայի, Կապանի, Բագրասի, Ամայքի, Յախուտի և վաճանան մասին²³³:

1138 թ. գարնանը բյուզանդական բանակը, ավարտելով Կիլիկիայի նվաճումը, կրկին իր գործողությունները ծավալում է Հյուսիսային Ասորիքում: Այդ իրադարձություններին մանրամասնորեն անդրադարձել են բյուզանդագետները և խաչակրաց ու մուսուլմանական արևելքի պատմաբանները²³⁴, ուստի մեզ մնում է միայն ավելացնել, որ հայկական սկզբնաղբյուրները շեշտում են Հովհաննես Բ Կոմնենոսի Կիլիկիա-Հյուսիսասորիքյան առաջին ուղմարշավի անարդյունավետությունը, կայսեր մասին գրելով. «ոչ ինչ արութիւն եցուց»²³⁵:

Հովհաննես Բ Կոմնենոսի ձեռնարկած Կիլիկիա-Հյուսիսասորիքյան առաջին ուղմարշավը տեսք երեք տարի (1136—1138)²³⁶: Կիլիկիա-Հյուսիսասորիքյան ուղմարշավին այնքան մեծ ուշադրություն էր հատկացվում կայսրության արևելյան քաղաքականության մեջ, որ. «Հովհաց կայսրը արշավանքի

232 Սմբատ, 1956, էջ 160, Հմմտ., նաև Անանան Եղեսացի, էջ 80; Վահկայի պաշտպանության Հովհաննես Կիրինալմոսի նկարագրությունից կարելի է ենթադրել, որ լեռնը գերի է հանձնվել նախքան այդ ամրոցի առումը:

233 Սմբատ, 1956, էջ 160, Սմբատ, 1859, էջ 93, Գ. Գ. Միկաելյան, Իстория..., с. 104—106:

234 F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 134—150; R. Grousset, Histoire..., t. II, p. 100—123.

235 Սմբատ, 1956, էջ 161; F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 150.

236 А. П. Каждан, Еще раз о Киннаме и Никите Хоннате, BS, t. XXIV, p. 18.

էր ելել ահոելի զորքով ու անսպառ գանձերով, իր շորս որդիների, եղբայրների, փեսաների և ողջ շքախմբի հետ միասին Նա (Հովհաննես թ Կոմնենոսը—Ա. Բ.) ուխտել էր մինչեւ կյանքի վերջը ետ շդառնալ իր զորքերի, կեսարների, սեբաստոնների, պատրիկների և մյուս մեծամեծների հետ, քանի դեռ խոշոր հաղթանակ չի տարել²³⁷: Այս վկայությունը կարելի է դիտել երկու տեսանկյունից.

ա) Հովհաննես թ Կոմնենոսը իր հետ արևելք էր բերել բոլոր նրանց, ովքեր կարող էին հավակնել գահին և մայրաքաղաքում մնալով կարող էին իշխանությանը տիրանալու փորձեր կատարել: Այդ մասին է խոսում Աննա Կոմնենեի ամուսնու՝ Նիկեփոր Վրիենոսին հիվանդ վիճակում ուղմարշավին մասնակից դարձնելու միտք²³⁸:

բ) Կիլիկիա-Հյուսասորիթյան ուղմարշավին մասնակցում էր բյուզանդական արքունիքի, զինվորական և քաղաքական պաշտոնեության ծաղիկը, որը կարող էր օգտակար լինել Հովհաննես թ Կոմնենոսին ուղմական գործողություններ վարելիս:

Բյուզանդական կայսրության համար ուղմարշավի արդյունքները շոշափելի էին: Բյուզանդական բանակի հաջողությունների մեջ պետք է նշել Կիլիկիայի ողջ տարածքի նվաճումը, Ռուբինյան իշխանության վերացումը, Եղեսիայի և Անտիոքի լատին իշխանությունների հպատակեցումը: Մրանք կարենոր ձեռքբերումներ էին և դրանց արդյունքն այն եղավ, որ մինչև 1148 թ. Բյուզանդական կայսրությունը Կիլիկիայի դրեթե ողջ տարածքի միակ տերն էր, իսկ դրանից հետո մինչև 1152 թ. Կիլիկիայի բյուզանդական կառավարիչները իրենց իշխանությունը դուգորդում էին Ռուբինյանների վերահաստատած իշխանության հետ: Իհարկե 1152 թ. հետո իրադրությունը փոխվեց, սակայն մինչև ԺԹ դարի 70-ական թթ. Բյուզանդական կայսրությունը դեռևս կառավարիչներ էր նշանակում Կիլիկիայում և կարողանում էր միջամտել երկրամասի ներքին գործերին:

237 Աննան Եղիսացի, էջ 80:

238 Աննա Կոմնինա, Ալեքսանդր, ս. 55.

Հովհաննես Բ Կոմնենոսի իշխանության վերջին տարիներին ճգնաժամային վիճակ է ստեղծվում Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության գրեթե բոլոր օղակներում, հատկապես Փոքր Ասիայի երկու կարևորագույն շրջաններում։

ա) Հյուսիսային ծովափնյա մարզերում, որտեղից կայսրությունը շնայած 20—30-ական թվականներին վարած երկարատև պատերազմներին չկարողացավ դուրս մղել Դանիշմանյան ամիրությանը,

բ) Կիլիկիայի ու Հյուսիսային Ասորիքի այն շրջաններում, ուր 1136—1138 թթ. ուղղարշավի տարիներին Բյուզանդական կայսրությունը կարողացել էր տարածքային նվաճումներ կատարել²³⁹: Առաջին դեպքում Բյուզանդական կայսրության հիմնական հակառակորդներն էին Դանիշմանյան ամիրությունը և Իկոնիայի սովորականությունը, երկրորդում՝ Անտիոքի լատինական իշխանությունը և Հալեպ-Մոսուլի աթարեկությունը։

Բյուզանդական կայսրության մնացած փոքրասիական մարզերն էլ գտնվում էին գրեթե անպաշտպան վիճակում, պետք է ենթադրել, որ ԺԱ դարի առաջին կեսի հետ համեմատած այստեղ մեծ շափերով պակասել էր բնակչությունը²⁴⁰, Իկոնիայի սովորականության և Բյուզանդական կայսրության սահմանները ճշտորեն որոշված չէին և այդ էր պատճառը, որ քոչվոր թյուրքերը իրենց ասպատակություններով երբեմն խախտում էին դրանք, իսկ երբեմն էլ՝ թալանում և ավարառությունների ենթարկում Բյուզանդական կայսրության տիրապետության ներքո գտնվող շրջանները։ Արտաքին և ներքին քաղաքական գրեթե բոլոր հնարավոր լժակները հործի դրած երկիրը անզոր էր պայքարելու արտաքին թշնամիների նկատումների դեմ։

Կենտրոնական իշխանության հետ անբավարար տնտեսական և քաղաքական կապի հետևանքով Բյուզանդական

²³⁹ F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 175—185.

²⁴⁰ Sp. Vryonis, The Decline..., p. 119.

Կայսրությունը արևելքում զրկվել էր Տրապիզոնի շրջանից (հին Խալիֆա բանակաթեմ): Զնայած 1136—1138 թթ. Երկարատև և ծանր պատերազմներում ձեռքբերումներ էր կատարել Կիլիկիայում, սակայն այնքան ուժ չուներ, որ կարողանար պահպանել այդ նվաճումները: Անտիոքի լատինական իշխանությունը, որը 1136—1138 թթ. ուղղմարշավի ժամանակ ստորակայի երդում էր տվել Հովհաննես Բ Կոմնենոսին, կայսրական զորքերի հեռանալուց հետո, մերժում էր բյուզանդական գերակայությունը և պահանջում էր Դաշտային Կիլիկիայի որոշ տարածքները²⁴¹: Նման իրավիճակում, երբ կենտրոնական իշխանությունը զորու չէր վերահսկելու ծայրամասային տարածքների կառավարմանը, Բյուզանդական կայսրությանը մնում էր ստեղծել մի այնպիսի ուղղմարշական համակարգ, որի զորավար-կառավարիչները յուրաքանչյուր տարի ընտրվեին կայսեր կողմից, ունենալով իրենց վստահված տարածքներում արտաքին և ներքին զործերը վարելու որոշակի ամենախություն: Նման վարչական բարեփոխությունները օժանդակելու էին կայսրության ներքին և արտաքին ձեռնարկումներին:

Փոքր Ասիայում որոշակի տարածքի վրա նման քաղաքական-վարչական միավոր ստեղծելու գաղափարը Բյուզանդական պատմիչ Հովհաննես Կիննամոսը վերագրում է Հովհաննես Բ Կոմնենոսին²⁴²:

1137 թ. Կիլիկիան նվաճելուց հետո Բյուզանդական կայսրությունը կանգնեց նոր դժվարության առաջ: Իկոնիայի սովորականությունը և Դանիշմանյան ամիրությունը շեին կարող հանդուրժել Կիլիկիայի անցումը Բյուզանդական կայսրության տիրապետության ներքո և սկսեցին ոտնձգություններ կատարել Կիլիկիայի տարածքի նկատմամբ: Եթե մինչև 1141 թ. Բյուզանդական կայսրության ամենավտանգավոր թշնամին

²⁴¹ F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 184; R. Grousset, Histoire, t. II, p. 145—146.

²⁴² κατά νοῦν ἔχων τὴν Κελίκων καὶ Ἀντισχέων οὐν Ἀπόλλου καὶ Κόπρῳ εἰς αλῆρον ἀποδώσεσθαι τῷ Μανουήλ (I. C., p. 23; հմատ. F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 184—185).

արևելքում Դանիշմանյան ամիրությունն էր, ապա դրանից հետո Դանիշմանյան ամիրությունը ներքին երկպառակտչական պատերազմների հետևանքով սկսում է քայլայվել²⁴³: Կիլիկիան նվաճելուց հետո նոր ճեղքվածքներ են առաջանում Իկոնիայի սուլթանության և Բյուզանդական կայսրության դիվանագիտական փոխարարերություններում:

Դեռ Հովհաննես Բ Կոմնենոսը շէր հեռացել Կիլիկիայից, միայն զորաբանակով մոտեցել էր Անտիոքին, երբ Իկոնիայի սուլթան Մասուդը (²⁴⁴) 1137 թ. ներխուժեց Կիլիկիա և գրավեց Աղանան²⁴⁵: Սա ճկում տակտիկական քայլ էր և թիկունքից հասցված նախազգուշական հարված՝ Անտիոքի դաշտում գտնվող բյուզանդական բանակին, որի համար փակվում էր ետքարձի ցամաքային ճանապարհը: Բյուզանդական կայսրը ստիպված էր վերադառնալ Կիլիկիա և կրկին նվաճել Աղանան²⁴⁶: Սակայն դրությունը նորից բարդացավ, երբ Հովհաննես Բ Կոմնենոսը 1138 թ. մեկնեց Կոստանդնուպոլիս: Սմբատի Տարեգրության համառոտ և ընդարձակ տարբերակներում կարդում ենք. «Ի թուին ՇԶԷ (1138/9) եկն Ահմէտ մելեքն և էառ զկանի տեղիքն ի Հոռոմէն, զՎահկայն, զԿապանն և դայլոն»²⁴⁷: Նույն իրադարձությունը վկայող տեղեկության հանդիպում ենք նաև Միքայել Ասորու մոտ. «1450 (1138/9) Սելիք Մուհամեդը միավորեց իր զորքերը և մտավ Կիլիկիայի շրջանը: Նա Հույներից գրավեց երկու ամրոց. մեկը՝ Վահկան և մյուալ՝ Կապնուրերզը»²⁴⁸: Սակայն սրանով չի բավարարվում Դանիշմանյան իշխողը և վերադառնալով Սև ծովի ափերը ներխուժում է «Կասիանուսի երկիրը», «ավարառեց և գերեց ամբողջ բնակչությանը, որոնց վա-

²⁴³ F. Chalandon, Les Comnènes, t. I', p. 212–216.

²⁴⁴ Անանուն Եղիսացի, էջ 81,

²⁴⁵ Անանուն Եղիսացի, էջ 82,

²⁴⁶ Սմբատ, 1953, էջ 161: Վերոհիշյալ տեղանուններին Սմբատի Տարեգրության համառոտ խմբագրությունը ավելացնում է նաև «Կարմիր լեռն» տեղանունը (Հմմտ. Սմբատ, 1859, էջ 94):

²⁴⁷ M. S., t. III, p. 248:

ճառեց որպես ստրուկները²⁴⁸: Մուհամեդ Դանիշմանյանի ալս գործողությունները կրկին թուղացնում են Բյուզանդական կայսրության քաղաքական դիրքերը Փոքր Ասիայի Հյուսիսում և Հարավում: Այդ մասին վկայում է նաև Սմբատի Տարեգրության համառոտ խմբագրությունը. «Ի թուին ՇԶԹ (1140/1) ել Պերփեռոժէնն ի վերին կողմն Պոնտոսի եւ Գամբաց. և բնակիչք Տօրոսի ի նա ապաստան եղեն եւ մոտեցին ի Թուրքէն. եւ յորժամ գնաց թագաւորն՝ մնացին ցիր եւ ցան, և եղեն փախստական. և մնաց երկիրն Լևոնի աւերը²⁴⁹: Այս տողերից կարելի է ենթադրել, որ կայսրությունը նվաճելով Կիլիկիան, հույս ուներ աքցանի մեջ առնել Դանիշմանյան ամիրությանը: Մուհամեդ Դանիշմանյանի բացահայտ թշնամական դիրքը Կիլիկիայում Բյուզանդական կայսրության տիրապետությունը վերահաստատելու վերաբերմամբ կարելի է բացատրել այս շափազանց կարևոր հանգամանքով:

Բյուզանդական կայսրությունը ևս չէր ցանկանում նահանջել՝ Կիլիկիայում նվաճված դիրքերից: 1142—1143 թթ. Հովհաննես թ Կոմնենոսը նոր ուազմարշավ է ձեռնարկում դեպի Հյուսիսային Ասորիք և Կիլիկիա:

Կիլիկիա-Հյուսիսասորիքյան երկրորդ ուազմարշավի ծրագրերի մասին խոսելիս Հովհաննես Կիննամոսը տեղեկացնում է, որ բյուզանդական կայսրը մշակել էր մի ծրագիր, ըստ որի մտադիր էր. «Կիլիկիան և Անտիոքը Ատալիայի և Կիպրոսի հետ միասին ժառանգություն թողնել Մանուելին»²⁵⁰:

1142—1143 թթ. Հովհաննես թ Կոմնենոսը հսկայական բանակով կրկին հայտնվեց Կիլիկիայում²⁵¹, սակայն այս երկրորդ ուազմարշավը ոչ մի էական փոփոխություն չմտցրեց Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի քաղաքական իրավիճա-

248 M. S., t. III, p. 248;

249 Սյրատ, 1859, էջ 94:

250 I, C., p. 23; հմատ. F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 184—185:

251 Հովհաննես թ Կոմնենոսի Կիլիկիան երկրորդ ուազմարշավի մասին ան' ան' F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 183—193.

կի մեջ²⁵²: 1143 թ. ապրիլին Հովհաննես Բ Կոմնենոսը վախճանվեց Կիլիկիայում, իսկ կայսերական գահը ժառանգած Մանուկ Կոմնենոսը ստիպված էր շուտափույթ վերադառնալ մայրաքաղաք, ապահովելու գահի խաղաղ անցումը իրեն:

Եթե փորձենք պարբերացնել Հովհաննես Բ Կոմնենոսի արևելյան քաղաքականության ժամանակագրությունը նկատի ունենալով նաև կայսրության առաջնահերթ խնդիրները, կը ստանանք հետևյալ պատկերը.

ա) 1118—1130 թթ. Բյուզանդական կայսրությունը Փոքր Ասիայում շարունակելով Ալեքս Ա Կոմնենոսի քաղաքական կուրսը, փորձում էր իր տիրապետությունը վերականգնել Օպսիկիոն, Թրակիակոն և Կիրերայոտոն նախկին բանակաթեմերի տարածքում: Հովհաննես Բ Կոմնենոսի հիմնական հակառակորդը Փոքր Ասիայում իկոնիայի սուլթանությունն էր:

բ) 1130—1136 թթ. Բյուզանդական կայսրությունը ռազմական գործողություններ է ժավալում Պաֆլագոնիա և Արմենիակոն նախկին բանակաթեմերի տարածքում: Կայսրության հիմնական հակառակորդն է դառնում Դանիջմանյան ամիրությունը:

գ) 1136—1143 թթ. Բյուզանդական կայսրությունը իր առջև նպատակ է դրել վերագրավելու և իր տիրապետության տակ ներգրավելու Սելևկիան, Կիլիկիան և Հյուսիսային Ասորիքը:

Ինչպես տեսնում ենք բյուզանդական քաղաքականության անցումները այս կամ այն նպատակի իրականացմանը մշակվել է երկարատև քաղաքական պայքարի ընթացքում և յուրաքանչյուր փուլը կազմում է նախորդի (կամ հաջորդի) օրգանական շարունակությունը (կամ սկիզբը):

252 Զափազանց հետաքրքիր և արժեքավոր է այն վկայությունը, որ Հովհաննես Բ Կոմնենոսի Կիլիկիան երկրորդ ռազմարշավի ժամանակ (1142 թ. սեպտեմբեր), որպես Զենովայի հանրապետության գեսպաններ կայսերն են ներկայացնել Օբերտո դելա Տորեն և Գուգլիգելմո դելլա Բարկան Հյուսիսային Ասորիքում:

4. ՄԱՆՈՒԵԼ Ա ԿՈՄՆԵՆՈՍԻ ԱՐԵՎԵԼՏԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ
նկ ԿԱԼԽԿԻԱՆ

Հովհաննես թ Կոմնենոսի արևելյան քաղաքականությանը բնորոշ բազմաթիվ գործոններ կենսունակ մնացին նրա որդու՝ Մանուել Ա-ի (1143—1180) իշխանության տարիներին: Զնայած նրա կառավարության շրջանում ուժերի հարաբերակցությունը Փոքր Ասիայում²⁵³, Հյուսիսային Ասորիքում²⁵⁴, Իտալիայում²⁵⁵ և Բալկաններում²⁵⁶, փոխվել էր ի վեաս Բյուզանդական կայսրության, այնուամենայնիվ, Մանուել Ա Կոմնենոսը չէր դադարում լարել պետության վերջին ուժերը և շարունակում էր մեծ ճիգերի գնով Բյուզանդական կայսրությունից կախման մեջ պահել Կիլիկիան և նրան հարակից Հյուսիսասորիքյան շրջանները: Այդ երկրամասի նրկատմամբ Մանուել Ա-ի Հավակնությունների բացահայտման ճանապարհին հարկադրված ենք մեկ անգամ ևս անդրադանալ Բյուզանդիայի արևելյան քաղաքականությանը, այս անգամ ժի 40—70-ական թվականներին²⁵⁷:

Ինչպես արդեն նկատել են ուսումնասիրողները, Մանուել

253 Պանիշմանյան ամիրությունը Մուհամեդի մահից հետո (1141թ.) մասնաւովել էր: Իկոնիայի սուլթանությունը օգտագործելով Մուհամեդի ժառանգների միջև բորբոքված երկպառակտշական պատերազմները, նշանակալի տարածքային նվաճումներ կատարեց նրանց հաշվին և դարձավ Փոքր Ասիայում Բյուզանդիայի միակ հարևանը. (F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 242—258).

254 Cl. Cahen, La Syrie du Nord, p. 368—409.

255 F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 258—267.

256 F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 270—277.

257 Մանուել Ա Կոմնենոսի արևելյան քաղաքականության բազմակողմանի ուսումնասիրությանը անդրադառել են բյուզանդագետները, սակայն ազերի մանրամասն այդ հարցերը բնեարկվել են հետեւալ աշխատություններում. F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 239—258; 278—315; Փ. И. Успенский, История Византийской империи, М., 1948, т. III, с. 213—216, 272—293; նույնի, Восточная политика Мануила Комнина: турки-сельджуки и христианские государства Сирии и Палестины, Сообщения Российского Палестинского общества, т. XXIX, 1926.

Ա Կոմնենոսի իշխանության տարիներին Բյուզանդական կայսրությունը և արևմուտքում, և արևելքում վարում էր բավական բարդ և հակասական արտաքին քաղաքականություն²⁵⁸: Ընդհանրապես ուսումնասիրված չեն այդ քաղաքականության սոցիալ-տնտեսական հիմքերը. ցավում ենք, որ մենք էլ այօրինակ հարցերը մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս պիտի դնենք: Միայն նշենք, որ մինչեւ այժմ 1204 թ. Բյուզանդիայի անկման պատճառները ուսումնասիրող գիտնականները ելակետային են համարում 1180—1204 թթ. Բյուզանդական կայսրության մեջ կատարվող տեղաշարժերը²⁵⁹, իսկ այն որակական փոփոխությունները, որոնք կատարվում էին Հովհաննես Բ և Մանուել Ա Կոմնենոսների իշխանության տարիներին երկրի և ներքին, և արտաքին քաղաքականության ասպարեզում ներկայացվում են շափականց թուոցիկ և միայն ժամանակագրական հաջորդականությամբ են կապվում ԺԲ դարի վերջի և ԺԳ դարասկզբի Բյուզանդական կայսրության համար ողբերգական վախճանունեցող իրադարձությունների հետ:

Իհարեւ, վերոհիշյալ ժամանակաշրջանի պատմությունը շարադրող պատմաբանը որպես կանոն իր ձեռքի տակ ունի աղբյուրներ, ուր խոսվում են Հովհաննես Բ և Մանուել Ա Կոմնենոս կայսրերի հաղթական ռազմարշավների մասին: Ըստ նրանց կարծես թե երկիրը ամբողջովին հաղթահարել է ԺԼ դարի երկրորդ կեսի լճացման ժանր հետևանքները և հաղթական վերելք է ապրում: Այնուամենայնիվ, նշված ռազմարշավներից և ոչ մեկը վերջնական հաղթանակ լրերեց երկրին, շնայած նրան, որ բյուզանդական մատենագիրներ, Միքայել Խոալիկոսը, Թեոդորոս Պրոդրոմոսը և Հովհաննես

258 Այդ հանգամանքը նշել են վերոհիշյալ հարցերին անդրադաժողով հետազոտողները, ունի Փ. И. Успенский, История византийской империи, т. III, М.—Л., 1948, с. 227—253, 272—291.

259 К. Н. Юэбашян, Классовая борьба в Византии в 1180—1204 гг. и четвертый крестовый поход. Ереван, 1957, с. 11—48.

Գիննամոսը կիաստորեն գովերգում են թյուզանդական գենքի հաջողությունները²⁶⁰:

Մեզ հայտնի սկզբնաղբյուրների սակավության, հակա-սականության, իսկ որոշ երկերի էլ միտումնավորության հետևանքով դժվար է որոշել Մանուել Ա Կոմնենոսի արևելյան (նաև արևմտյան) քաղաքականության բոլոր շարժիչ գործոնները, իսկ բացատրել դրանք կարելի է միայն երկրի ներքին գործերի անմիտաբ վիճակով²⁶¹, այն կործանարար ազգակների ի հայտ գալով, որոնք վերջիվերջո հասցրեցին 1204 թ. Կոստանդնուպոլիսի գրավմանը և Բյուզանդական կայսրության վաթսունամյա բաժանմանը: Այդ վիճակի ողջ հակասականությունը կծու հումորով է ներկայացնում Նիկետաս Խոնիատեսը: Բյուզանդական պատմիչը այդ լուսի տակ է դիտում Մանուել Ա Կոմնենոսի ողջ գործունեությունը²⁶²: Այդ

260 *ՏԵՇ* PG, տ. 133, թ. 1352—1395, Հ. Մ. Բարբիլյան, Միրայել Խտալիկոսի «Ներբողեանը», ՊԲՀ, 1984, Ա 4, էջ 220—229, Ի. Ս., 16—22.

261 Բյուզանդական կայսրության ֆինանսական գործերի անմիտաբ վիճակի մասին ուղղակի վկայություններ է հաղորդում Նիկետաս Խոնիատեսը (*N. Ch.*, թ. 54—58):

262 Բյուզանդական պատմիչը երրեմն սպանիչ հումորով է ներկայացնում Մանուել Ա-ի ուղմարշավները: Նման հումորի տակայությունը Նիկետաս Խոնիատեսի մոտ նկատել է նաև օրինողոք և կաթոլիկ եկեղեցիների փախհարաբերությունների պատմաբան ն. Գրոսսոն: Սակայն պիտոնականը կարծում է, թե Նիկետասը միայն Մանուելի և լատինների հարաբերությունների առիթով է զիմում նման արտահայտչածին (տե՛ս *H. Grossu*, Օտношения византийских императоров Иоанна II (1118—1143) и Мануила I (1143—1180). Компьютер к вопросу об унионе с западом. Оттиск из журнала: «Труды Киевской духовной академии», 1912, с. 15).

Ընդհանրապես Մանուել Ա Կոմնենոսի ողջ շահաւականության նկատմամբ Նիկետաս Խոնիատեսի բացասական վերաբերմունքի բնորոշ արտահայտություն է «Մանուելի պատմության» երրորդ գրքի սկիզբը: «Այսպիսի վասնան ունեցավ Մանուել կայսեր պատերազմը Սիլիցիայում և Կալարրիայում. մի կողմից այն փայլուն (եղավ) և այնտեղ հսկայական ժախսեր կատարվեցին, մյուս կողմից օգտակար արդյունքի շնացվեց և հետագա ինքնակալների համար հոգ շտարվեց» (*N. Ch.*, թ. 100):

Նիկետաս Խոնիատեսի երկում Մանուել Ա-ի քաղաքականության նման գնահատականները առիթ են տվել Ֆ. Շալանդոնին խոսելու պատ-

իսկ պատճառով Մանուել Կոմնենոսի հաղթական ուսումարշավները պետք է դիտել որպես կայսրության արտաքին քաղաքական վարկը պահպանելու վերջին նիգ:

Բյուզանդական արտաքին քաղաքականությունը մշակող հիմնարկությունները Մանուել Ա-ի կառավարության տարիներին պետք է հաշվի առնեին Իկոնիայի սուլթանության հզորացումը և Մուհամեդ Դանիշմանյանի մահից հետո ամիրության տարածքի մասնառումը: Զնայած Մանուել Ա Կոմնենոսը շարունակում էր իրար դեմ հանել Իկոնիայի սուլթանությանը և Դանիշմանյան ամիրությանը²⁶³, սակայն այդ քաղաքական կուրսի մեջ կայսրը կատարել էր մի էական սրբագրում: Նկատելի է Բյուզանդական կայսրության ակընհայտ միտումը ավելի հաճախ կանգնել Դանիշմանյան ամիրների և Իկոնիան մասնառող ներքին ուժերի թիկումքում՝ բնդդեմ հզորացող սուլթանությանը²⁶⁴: Այս Արալանի և Յակուբ Արալանի հակամարտության մասին նիկետաս Խոնիատեսը բացահայտորեն գրում է. «Նրանց միջև շար դիտավորություն կար ոչ թի գաղտնի և ծածուկ, այլ հայտնի թագավորին և նրանց կողմից բացահայտ: (Կայսրը) ցանկանալով երկուսին էլ կործանել, ձգտում էր ոչ միայն բանսարկությամբ միմեանց զեմ

ժիշտ միտումնավորության մասին (տե՛ս F. Chalandon, *Les Comnènes*, t. II, p. XXXIII): Մանուել Ա Կոմնենոսին վերաբերող դեպքերի նկարագրության մեջ նիկետաս Խոնիատեսի կողմից քննադատական վերաբերումը ցույց տալու մասին տե՛ս նաև A. P. Կայջան, Եաւ բա օ Կիննամ և Հնկու Խոննատ, BS, t. XXIV/1 c. 25, 28–29; H. Hunger, Die Hochschprachliche Litteratur..., B. I, S. 435.

263 Մանուելի արտաքին քաղաքականության «բաժանիր որ տիրես կզբունք» մասին տե՛ս F. Chalandon, *Les Comnènes*, t. II, p. 208.

264 Մանուել Ա Կոմնենոսի իշխանության տարիներին Բյուզանդական կայսրությանը հաջողվեց միայն երկու անգամ բացահայտ դաշինք հաստատել Իկոնիայի սուլթանության հետ: Առաջին անգամ նման համաձայնության կարիք առաջացավ երկրորդ խաչակրաց արշավանքին նախօրեին (այդ մասին տե՛ս F. Chalandon, *Les Comnènes*, p. 257): Երկրորդ բարեկամական պայմանագիրը այս երկու տերությունների միջև կնքվեց 1161 թ., երբ Դանիշմանյան ամիրության հզորացումից վախեցած Այս Արալանը ժամանեց Կոստանդնուպոլիս (այդ մասին տե՛ս F. Chalandon, *Les Comnènes*, t. II, p. 464–466):

լարել և բաժանել, այլև զինելով ինչպես կարգն է՝ միմեանց դեմ հանել, որպեսզի ինքը հանգստության մեջ լինելով հըրձվի նրանց՝ այլազգիներին և ամբարիշտներին, հասած աղետներով։ Եվ մեկը մյուսի ետևից ուղարկելով գաղտնի դիսպաններ նրանց մղում էր միմեանց դեմ պատերազմի։ Սակայն, ակնհայտորեն հակված էր դեպի Յակուբասանը ...»²⁶⁵։

Նման «Հեռատես» քաղաքականությամբ Մանուել Ա Կոմնենոսը շկարողացավ կանգնեցնել Ղվիճ Արսլանի օրավոր հզորացումը և 1176 թ. սեպտեմբերին՝ Իկոնիայի սուլթանության հետ դիվանագիտական խաղը լիկատար ջախջախման ենթարկվեց Միրիոկեֆալեի մոտ տեղի ունեցած ճակատամարտում²⁶⁶։

Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում կոնկրետ քաղաքական նպատակներ հետապնդող Բյուզանդական կայսրությունը այլևս չէր կարող հաշվի շնուռել Հալեպի և Մոսուլի աթարեկության հետ, որի տիրակալ Զանգին 1144 թ. նրավաճեց Հյուսիսային Ասորիքի տնտեսական փոխհարարերությունների համար հանգուցակետային նշանակություն ունեցող Եղեսիա քաղաքը, ուղղակիորեն հարվածելով Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության ծրագրերին, որոնց համաձայն նախատեսվում էր տարածքներ զավթել Եփրատի արևմտյան ափին և ստեղծել միջերկրածովյան ազգեցության գոտի²⁶⁷։ Այս նույն տարածքներում հաստատվելու փորձեր էին կատարում նաև Իկոնիայի սուլթանությունը, Դանիշմանյան ամիրությունը և Ամիդի Արտուրյանները²⁶⁸, Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում Բյուզանդական կայսրության քաղաքականության իրագործման գործում նկատառելի էր նաև Անտիոքի իշխանության, Եղեսիայի

265 N. Ch., p. 117—118.

266 Այս ճակատամարտը բատ Ն. Լամբրոնացու տեղի է ունեցել «մերձյիկոնին, ի տեղուո՞ն՝ որ կոչի Մելիտենի» (Թ. Ը., 1871, էջ 168, Հմատ. նաև Սմբատ, 1956, էջ 193)։

267 N. Elisséeff, Nur ad-Din, t. II, p. 380—381.

268 Cl. Cahen, La Syrie du Nord, p. 372—373; 384—389; N. Elisséeff, Nur ad-Din, t. II, p. 448—452.

կոմսության և Երուսաղեմի լատին թագավորության ղերը, իսկ ԺԲ դարի 50-ական թվականներից Փոքր Ասիայի և Հյուսիսային Ասորիքում ծավալված պայքարի մեջ է մտնում նաև Կիլիկիայի Ռուբինյան իշխանությունը:

Խաչակրաց պետությունների, հատկապես Անտիոքի իշխանության և Երուսաղեմի թագավորության նկատմամբ Բյուզանդական կայսրության հարձակողական տակտիկան, որը գործի էր դրվել Հովհաննես թ Կոմնենոսի Կիլիկիա-Հյուսիսասորիքյան առաջին ռազմարշավի օրերին և շարունակվում էր Մանուել Ա Կոմնենոսի կառավարման սկզբում, կամաց կամաց վերածվեց մերձեցման միջոցով Անտիոքը և Երուսաղեմը Բյուզանդական կայսրությանը հպատակեցնելու ծրագրի: Նման ծրագրի գոյության մասին է վկայում այն փաստը, որ 1157/8 թ. Երուսաղեմի թագավոր Բալգուին Գ-ն ամուսնացավ բյուզանդական արքայատոհմիկ իշխանությներից մեկի հետ, իսկ 1161 թ. Մանուել Ա Կոմնենոսը կոմության առավ Ռայմոնդ Պուատիեի ավագ դստերը²⁶⁹; Ինչպես տեսանք վերևում, նմանօրինակ ծրագրեր կազմվում էին նաև նա-

269 Ամուսնության միջոցով Անտիոքը և նախկին նդեսիայի կոմության մերձեփրատյան տարածքները Բյուզանդական կայսրությանը միավորելու ծրագրը Մանուել Ա Կոմնենոսը փորձեց իրագործել դեռ 1151—1152 թվականներին:

1149 թ. Խակասաց արտօնական գործեց Անտիոքի իշխան Ռայմոնդ Պուատիեն, թափուր Թողնելով իշխանական գահը, իսկ մի քանի տարի անց (1151 թ.), գերի ընկազ նդեսիայի իշխան Ջուլին Բ-ը: Այս տարին Կիլիկիայում կրկին գլուխ բարձրացրեց Հակարյուզանգական շարժումը, որը զիխավորում էր Թորոս թ Ռուբինյանը: Այդ տարիներին թեև Բյուզանդական կայսրությունը պատերազմում էր Սիցիլիայի նորմանների և Հռոմեացիների դեմ, այնուամենայնիվ, Մանուել Ա Կոմնենոսը կարողաց զորք հավաքել և Անդրոնիկոս Կոմնենոսի գլխավորությամբ ուղարկել Կիլիկիա, պայքարելու Թորոս Ռուբինյանի գլխավորած իշխանության դեմ: Անդրոնիկոսի հետ Կիլիկիա է գալիս նաև նորմանական ծագում տևեցող Մանուել Ա-ի գետա Հովհաննես Կեսարը, որի կինը մահացել էր: Կայսրը նրան Անտիոք էր ուղարկում, որպեսզի ամուսնացնի Ռայմոնդ Պուատիեի այրի Կոստանցայի հետ, սակայն նախատեսված ամուսնությունը ձախողվում է (տե՛ս I. C., p. 122—123; F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 426—427; Cl. Cahen, La Syrie du Nord, p. 406):

խորդ կայսրեր Ալեքս Ա-ի և Հովհաննես Բ-ի իշխանության տարիներին, սակայն 1157 և 1161 թթ. բյուզանդական արքունիքի հաջողությունները խոսում են արևելյան քաղաքականության դիվանագիտական ճակատում Մանուել Ա Կոմնենոսի նշանակալի հաջողության մասին։ Միայն դրանից հետո, ԺԲ դարի 60-ական թթ. բյուզանդական արևելյան քաղաքականության փորձաքար դարձավ Եգիպտոսը, ուր նպատակադրվել էր ներխուժել նաև Հալեպի աթաբեկությունը։

Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության կարևոր օղակներից էր Կիլիկիայի և Եղեսիայի իշխանության միջև գտնվող մերձեփրատյան մանր իշխանությունների գոտին, ուր գեռս ուժեղ էր կայսրության ազգեցությունը։ Այդ տարածքների նկատմամբ բյուզանդական նվաճողական քաղաքականության ծրագրերը լիակատար շախչախման ենթարկվեցին 1144—1150 թթ., երբ Հալեպի աթաբեկ Զանգին վերացրեց Եղեսիայի կոմսությունը, իրեն ենթարկելով իւաշակրաց այդ իշխանության տարածքի նշանակալի մասը։ Դրանով անբուժելի հարված հասցվեց Բյուզանդիայի հյուսիսասորիքյան քաղաքականությանը։ Բյուզանդական կայսրության համար Եղեսիայի իշխանությունը անփոխարինելի դաշնակից էր Անտիոքի իշխանության ոտնձգությունների դեմ մղվող պայքարում։ Դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ Եղեսիայի կոմս Զոսլինի կին Բեատրիսան, մի շարք սկզբնաղբյուրների վկայությամբ, աթաբեկ Զանգու կողմից ամուսնու գերեվարությունից հետո Բյուզանդական կայսրությանն է վաճառում Եղեսիայի կոմսության թշնամիների կողմից դեռ շնչառված տարածքային մնացորդները²⁷⁰,

Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության ԺԲ դարի 50-ական թվականների կարևոր ձեռնարկումներից է դաշնակիցների հայթայթումը Կիլիկիայի հայկական իշխանության դեմ մղվող պայքարում։ 1148 թ. Թորոս Ռու-

²⁷⁰ W. T., XVII, 6; F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 425: Բյուզանդագիտ Ֆ. Շալանդոնը սխալմամբ ենթադրում է, թե այդ գործարքը կատարվել է 1151 թ. Կիլիկիայի դուքս Թոմասի զեկավարությամբ (F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 425, n. 1):

բինյանի կողմից Կիլիկիան վերանվաճելուց հետո՝ Մանուել Ա Կոմնենոսը մի շարք դիվանագիտական քայլեր ձեռնարկեց այդ երկրամասը կրկին իրեն ևնթարկելու համար։ 1154 և 1155 թթ. Մանուել Ա Կոմնենոսը Կիլիկիայի Ռուբինյան իշխանության դեմ էր հրահրում իկոնիայի սուլթանությանը, իսկ 1154 թ. Անտիոքի իշխանությանը, սակայն ուրիշների ձեռքով կրակից շագանակներ դուրս բերելու բյուզանդական քաղաքականությունը մեծ հաջողություններ լունեցավ։ 1158 թ. Մանուել Ա Կոմնենոսը ստիպված էր անձամբ շեկավարել Կիլիկիան ռազմարշավը։

Բյուզանդական արևելյան քաղաքականությունը ՞՞ գառի 60-ական թվականներին սևեռվում է Եգիպտոսի վրա²⁷¹, Բյուզանդական կայսրությունը փորձում է արկածախնդրական ռազմարշավի միջոցով վերականգնել կայսրության հեղինակությունը միջազգային ասպարեզում։ Այս անգամ էլ, հեռավոր Նեղոսի Հովտում, ուր բախվում էին Հալեպ-Մոսուլի աթարեկության, Երուսաղեմի թագավորության և Բյուզանդական կայսրության շահերը, մի նոր պարտություն է կրում երկրի արևելյան քաղաքականությունը։

Բյուզանդիայի արտաքին քաղաքականությունը մշակող գործիչները, ինչպես Հովհաննես Բ-ի, այնպես էլ Մանուել Ա Կոմնենոսի կառավարման տարիներին, շարունակում էին հաշվի նստել երկրի ներսում ձևավորված ընդդիմադիր կուսակցության հետ, որի պարագլուխը որպես կանոն դառնում էր կայսրական ընտանիքի անդամներից որևէ մեկը²⁷². Հետագայում այս քաղաքական գծի պարագլուխը և շարունակողը դարձավ Մանուելի հորեղբայր Խոահակի որդին՝ Անդրոնիկոս Կոմնենոսը, որի գործունեության ու բնավորության դիպուկ գնահատականը կարելի է գտնել Կ. Մարքսի «Ժամանակագրական գրառումներ» երկում։ «Արքայազն և արկածախնդիր, քաջ, ստոր, խորամանկ, երդմնաղանց, ասպետական, արտասովոր

²⁷¹ G. Schlumberger, Campagnes roi Amaury Ier de Jérusalem en Egypte, au XII siècle, Paris, 1906, F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 535—550.

²⁷² F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 215—216.

ուժեղ»²⁷³: Եթե հետևելու լինենք Անդրոնիկոս Կոմնենոսի կյանքի ուղղություն՝ կայսեր հարազատ, կայսրության պաշտոնյա, բանտարկյալ, իր երկրի սահմաններից հեռացած հալածյալ²⁷⁴, ներում ստացած հարազատ, կայսր, կերևա թե որքան երերում է եղել ԺԲ դարի երկրորդ կեսին Բյուզանդական կայսրության քաղաքական կյանքը: Անդրոնիկոսի ձգտումների իրավորժման խնդրում փոքր տեղ չեն գրավում ԺԲ դարի Բյուզանդիային սահմանակից Փոքր Ասիայի և Մերձավոր Արևելքի քաղաքական միավորումները: Անդրոնիկոս Կոմնենոսի կողմից գահի համար մզվող քաղաքական պայքարում հիմնական շեշտը գրվում էր արտաքին ուժերի հովանավորության և օգնության վրա, ինչպես և ժամանակին իր հայրը՝ Անդրոնիկոսը քաղաքական ապաստան էր ստացել Փոքր Ասիայի և Մերձավոր Արևելքի քաղմաթիվ երկրներում:

Բյուզանդական կայսրության և՝ արևելյան, և՝ արևելյան քաղաքականության համար մի շափազանց կարևոր օգակի գոյության փաստը իր մենագրության մեջ շեշտում է Ֆ. Շալանդոնը. Եթե Ալեքս Ա և Հովհաննես Բ Կոմնենոսների իշխանության տարիներին Բյուզանդական կայսրությունը հաստատում դաշինք ուներ Գերմանական կայսրության հետ, ապա Մանուկ Ա-ը, չնայած իր բոլոր շանքերին, շկարողացավ շարունակել այդ քաղաքական ավանդույթը, որը կարող էր ապահովել երկրի արևելյան սահմանների անձեռնմխելիությունը և ամուր հենարան ու պատնեշ դառնալ Սիցիլիայի նորմանական թագավորության հավակնությունների գեմ²⁷⁵: Մանուկ Ա Կոմնենոսի իշխանության տարիներին երկու կայսրությունների միջև դաշինքի անհնարինությունն էլ դարձավ այն կարևորագույն արտաքին քաղաքական հանգամանքներից մեկը, որի հետևանքով Բյուզանդական կայսրությունը չկա-

273 Архив Маркса и Энгельса, т. V, с. 191.

274 O. Jurewicz, Andronikos I. Komnenos.—Amsterdam, 1970.

275 F. Chalandon, Les Comnènes, т. II, p. 258.

րողացավ կողմնորոշվել միջազգային իրադրության փոփոխության պայմաններում և անխուսափելի՝ ռազմական ու դիվանագիտական պարտություններ կրեց և արևմուտքում և արևելքում:

* * *

Հովհաննես Բ Կոմնենոսի հանկարծահաս մահը 1143թ. ապրիլ ամսին Կիլիկիայում²⁷⁶ ստիպեց գահաժառանգ Մանուել Ա Կոմնենոսին, որը մասնակցում էր իր հոր 1142—1143 թ. Կիլիկյան ռազմարշավին, միաժամանակ լուծել երկու կարեռը խնդիր.

Առաջին՝ ապահովել իր գահակալությունը: Այդ գործի համար նա շուտափույթ մայրաքաղաք է ուղարկում Հովհաննես Աքսուխին և Վասիլիոս Ցինցիլուկեսին²⁷⁷:

Երկրորդ՝ կարգավորել Բյուզանդական կայսրության գործերը Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում²⁷⁸:

Ինչպես վերելում նշեցինք, Մանուել Ա Կոմնենոսի արեւելյան քաղաքականության դրույթները մեզ հետաքրքրող աշխարհագրական սահմաններում և՛ ժամանակագրորեն, և՛ տրամաբանորեն անպայմանորեն բխում են իր նախորդի (Հովհաննես Բ Կոմնենոսի) քաղաքական ձգտումներից և մինչ այդ Փոքր Ասիայում և Հյուսիսային Ասորիքում տեղի ունեցած ռազմական գործողությունների շարունակությունն էին: Բյուզանդիայի արևելյան քաղաքականության հեռահար նպատակների մասին մեր պատկերացումները ամբողջացնում է Հովհաննես Բ-ի, մահվանից առաջ արտասանված ճառը, որը տարբեր խմբագրություններով պահպանվել է Հովհաննես Կիննամոսի և Նիկետոս Խոնիատեսի պատմական երկերում²⁷⁹:

276 Մատքես Ատելայեցի, էջ 371, Մ. Տ., տ. III, թ. 254: Վ. Գրամմելը Հովհաննես Բ Կոմնենոսի մահը Բվագրում է 1143 թ. ապրիլի 8-ուն (V. Grumel, La Chronologie, Paris, 1958, p. 358):

277 N. Ch., p. 48; F. Chalandon, Les Comnènes, տ. II, թ. 196.

278 I. C., թ. 29.

279 Այս ճառի բովանդակությունից կարելի է ենթադրել, թե ինչպիսի լայն արտաքին քաղաքական ծրագիր էին առաջադրում լուծել Բյուզան-

Ինչպես պատմում է Հովհաննես Կիննամոսը, Մանուկ Ա Կոմնենոսը հոր մահից հետո 30 օր մնում է Կիլիկիայում և այնտեղի գործերը ապահով դարձնելուց հետո (չու ոչ Կ) (նա որպաշտած էն ով ձափակը ռատությունում)՝²⁸⁰ վերադանում է մալրաքաղաք։ Կիլիկիայի կամ Անտիոքի գործեր ասելով 1143 թ. համար բյուզանդական երկու պատմիչներն էլ (Կիննամոսը և Նիկետասը)²⁸¹ նկատի ունեն Բյուզանդական կայսրության փոխհարաբերությունները Անտիոքի լատինական իշխանության հետ և քաղաքական պայքարը, որը ծավալվել էր Ռայմոնդ Պուատիեի և Մանուկ Ա Կոմնենոսի միջև Դաշտային Կիլիկիան նվաճելու համար։ Այդ մասին ուշադրավ վկայություն է պահպանել Հովհաննես Կիննամոսը. «Անտիոքիները նախկինում, Հովհաննես կայսեր ժամանակ, սկսել էին արդեն դուրս գալ նրա իշխանության տակից, իսկ այժմ Մանուկ կայսրին (ղետպաններ) ուղարկելով պահանջում էին վերադարձնել իրենց երկրի տարածքները (ծրագ), որոնք ասում էին, որ իրենց քաղաքին է վերաբերում (պատկանում) և ուժով ու ոչ թե արդարությամբ (իրավունքով) է այն Հոռմեացիներին պատկանում»²⁸². Բյուզանդական պատ-

դական կայսրության արևելյան քաղաքականությանը Կոմնենոս կայսրեց Նրանց նպատակների մեջ էր մտնում ռազմական գործողությունների ծավալումը Եփրատի ու Տիգրիսի ափերին, շախզախումը իրենց բոլոր թշրիմիների, որոնք կապված էին Կիլիկիացիների հետ, կամ միացել էին Աղարի որդիների (Նկատի ունի մուսուլմանական պետությունները) հետ։ Բյուզանդական կայսրության նվիրական երազանքն էր զորաբանակով հասնել Պաղեստին (N. Ch., թ. 42—46; I. C., թ. 26—28):

Այս ճառում բերված կցկոտուր ակնարկներից իսկ կարելի է ենթադրել, թե ինչպիսի կարեոր տեղ էր գրավում Կիլիկիան Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության շրջանակների մեջ։ Նիկետաս Խոնիատին և Հովհաննես Կիննամոսի երկերում առկա այս ճառի բնագրի համեմատության արդյունքների մասին անց Ա. Ռ. Կայձակ, Եղեր ռազմական արդյունքների մասին անց։

280 I. C., թ. 29:

281 Նիկետաս Խոնիատեսը Կիննամոսի վերորերյալ հատվածի փոխարեն ունի հետեւալ արտահայտությունը. «Անտիոքի (գործերն) էլ շնայած կարճ ժամանակին, կազի բերելով» (N. Ch., թ. 50):

282 I. C., թ. 30:

միշտ պահպանել է նաև Մանուել Ա. Կոմնենոսի պատասխանը անտիոքիներին, ուր կայսրը անուղղակի կերպով կրկին հիշեցնում է Դեարոլի պայմանագիրը և 1136—1138 թթ. Հովհաննես Բ Կոմնենոսի Կիլիկիա-Հյուսիսասորիքյան առաջին ազգմարշավի ժամանակ Անտիոքի իշխանության վերցրած պարտավորությունները Բյուզանդական կայսրության նկատմամբ և հատկապես շեշտում է. «Եթե արդար է, որ ուրիշներից խլվածը պետք է վերադարձնել նրան, ումից խլվել է, ինչու՝ դուք նախօրոք Անտիոքը շվերադարձրիք Հռոմեացիներին, այլ բռնությամբ և ուժով այն խլեցիք իմ հորից, կամ մերը չէ՞ր նախքան պարսիկների կողմից խլվելը՝ ստրկացվելը, նաև այն, ինչ պահանջում եք վերցնել մեզնից ու՞մն է եղել։ Անտիոք քաղաքի՞նը, չէ որ մինչ այդ այն էլ (Անտիոք քաղաքն — Ա. Բ.) մեր իշխանության տակ է եղել, իսկ եթե դուք ամոթ շեք զգում ինքներդ խախտելով համաձայնագիրը, ինչու՝ եք արդարությունն անտեսելով շրջանցում մեր պահանջները, ապա առավել ևս մենք իրավունք ունենք պատժելու Չեզ։ Սակայն դրա համար դեռ կգա հարմար ժամանակը։ Իսկ հիմա հրամայում եմ ձերբազատվել պահանջներից (τῶν προσταχόντων)։ Քանզի այն, ինչ հորիցս եմ ստացել, պետք է ընդարձակել և ոչ թե փոքրացնելը²⁸³։

Գնայած այստեղ չի հիշատակվում որևէ տարածք, այնուամենայնիվ ակնհայտ է, որ պատմիչն ակնարկում է Դաշտային Կիլիկիայի, գուցե նաև Եփրատյան մարզի (Քեսոմ-Մարաշ) որոշ շրջաններ, որոնք Բյուզանդական կայսրությունը խլել էր Անտիոքի իշխանությունից, իսկ վերջինս մի երրորդ տերությունից (նկատի ունի Հյուսիսային Ասորիքի մուսուլմանական պետությունները)։ Դժվար է նման անուղղակի վկայությունների վրա հիմնվելով դատել Բյուզանդական կայսրության Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում ունեցած տիրությների մասին։ Նման անորոշությունից հնարավոր չէ խուսափել ԺԲ դարի Բյուզանդական կայսրության Հյուսիսասորիքյան և Կիլիկիան քաղաքականությունը ուսումնասիրելիս։

283 J. C. p. 30.

Դաշտային Կիլիկիայի համար պայքարում Անտիոքի լատին իշխանության և Բյուզանդական կայսրության հետ միասին պայքարում էին ևս երկու թշնամական ուժեր. դրանք Իկոնիայի սուլթանությունն ու Դանիջմանյան ամիրությունն էին, որոնցից առաջինին ահարեկելու և պայքարից դուրս հանելու համար Մանուել Ա Կոմնենոսը, հաշվի շառնելով սուլթանության սահմանների անձեռնմխելիությունը, 1143 թ. ապրիլին Կոստանդնուպոլիս է վերադառնում նրա տարածքի վրայով։ Հավանաբար այս ռազմարշավի նպատակն էր սուլթան Մասուդին ցույց տալ բյուզանդական բանակի հզորությունը, որովհետև, ինչպես պատմում է Հովհաննես Կիննամոսը, այդ տարածքով բյուզանդական բանակի տեղաշարժի մասին կայսրը նախօրոք շէր գգուշացրել Իկոնիայի սուլթանին։ Ըստ Կիննամոսի, այս ռազմարշավը շափազանց հաջող ընթացք է ունեցել և թյուրքերը շեն համարձակվել վնասել բյուզանդացիներին²⁸⁴. Սակայն ի տարբերություն Կիննամոսի, փոքր-ինչ այլ է Նիկետաս Խոնիատեսի կողմից նույն ռազմարշավի նկարագրությունը։ Ըստ նրա, այս ռազմարշավի ժամանակ են գերի ընկել Անդրոնիկոս Կոմնենոսը և Թեոդորոս Դասիոստեսը²⁸⁵,

Բյուզանդական կայսրությունը Կիլիկիան պաշտպանելու համար պետք է կենտրոնացրած լիներ բավական մեծ թվով զինված ուժեր, ու, մեր կարծիքով, հենց այդ է պատճառը, որ 1144—1150 թթ. Իկոնիայի սուլթանությունը որևէ փորձ չի կատարում ներխուժելու Կիլիկիա։ Այս հարցը մի առ լուծում էլ կարող է ունենալ. այն է՝ Իկոնիայի սուլթանությունը, շունենալով ռազմական նավատորմ, ստիպված էր բավարարվել Փոքր Ասիայի ցամաքային, ներքին տարածքներով և այդ պատճառով իսկ իր առջև նպատակ չէր դնում գրավել որևէ ծովային քաղաք։ Մեր կարծիքով, այս երկու կարևոր դրդապատճառներն էլ հավասարաշափ են ազդել ԺԲ գարի 40-ական թվականների Իկոնիայի սուլթանության վարած կիլիկյան քաղաքականության վրա։

²⁸⁴ I. C. p. 31.

²⁸⁵ N. Ch., p. 50.

Դաշտային Կիլիկիայի համար Անտիոքի լատին իշխանության և Բյուզանդական կայսրության պայքարը շարունակվում է մեկ տարի ևս: 1143 թ. ապրիլին Անտիոքի իշխանության ղետպաններին տրված խոստման համաձայն Մանուել Ա Կոմնենոսը զորքեր է ուղարկում Կիլիկիա: Ի տարրերություն իկոնիայի սուլթանության, Անտիոքի լատինական իշխանությունը իր արտաքին քաղաքականության հիմնական նպատակներից էր համարում սեփական իշխանության տարածումը մերձակա ծովափնյա քաղաքների վրա և պարբերաբար, մինչև ժթ դարի 40-ական թվականները, նրա ձեռքն էին անցնում Կիլիկիայի նավահանգստային քաղաքները, երբեմն էլ ողջ Դաշտային Կիլիկիան: Սակայն նման գրավումները Անտիոքի լատին իշխանության համար տեսական լինել չէին կարող, որովհետև ղեռս Բյուզանդական կայսրության ձեռքին էր գտնվում Կիպրոս կղզին, որն իր ստրատեգիական դիրքով գերիշխում էր Միջերկրական ծովի ողջ Հյուսիսարեւելյան ծովափի վրա:

Անտիոքի լատին իշխանության միտումների իրականացմանը խանգարող մի այլ քաղաքական հանգամանք ևս կար: Եղեսիայի և Անտիոքի լատին իշխանությունները միմյանց նկատմամբ թշնամարար էին տրամադրված: Այս թշնամանքը բացատրվում է Անտիոքի իշխանության գերակայական ձգտումներով Եղեսիայի նկատմամբ և վերջինիս ուզմադիվանագիտական դիմադրությամբ: Զնայած սկզբնաղբյուրները շափազանց քիչ տեղեկություններ են պահպանել, սակայն փորձենք մեզ հասած նյութի վրա հենվելով ստեղծել քաղաքական միտումների այն մոտավոր ցանցը, որը ձևավորվել էր Հյուսիսային Ասորիքում: Եղեսիայի կոմսությունը նկատի ունենալով Բյուզանդական կայսրության և Անտիոքի լատին իշխանության հակամարտությունը, տրամարանորեն՝ վերջինիս դեմ Հայտարարված պատերազմում, պետք է թե՛ ուղղակիորեն, թե՛ անուղղակիորեն նպաստեր Բյուզանդական արևելյան քաղաքականությանը Հյուսիսային Ասորիքում: Ռայմոնդ Պուտատիեն ամեն գնով փորձում էր թուլացնել Եղեսիայի իշխանություն, այդպես ավելի հեշտ էր Անտիոքի իշխա-

նության արտաքին քաղաքականության լժակներից մեկը դարձնել Եղեսիայի կոմությունը: Երկու լատին իշխանությունների միջև պայքարի սրությունը ակնհայտ է, երբ հետևում ենք նրանց միջև ծավալված պայքարին Մարաշի իշխանությանը տիրանալու համար: Մինչև 1136—1138 թթ. Բյուզանդական կայսրության ռազմական պատերազմում դեպի Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք կարծես մի պահ Ռայմոնդ Պուատիեն կարողանում է Մարաշում իշխան դարձնել Պաղտինին, որը Անտիոքի իշխանության հետ միասին պատերազմում էր Եղեսիայի կոմսության և Կիլիկիայի Ռուբինյանների դեմ: Սակայն 1137 թ. հետո, Բյուզանդական կայսրության ռազմական ճնշման հետևանքով, Մարաշի և Քեսունի տեր Պաղտինը ստիպված էր ճանաչել Եղեսիայի կոմսության գերակայությունը և այլև շմասնակցել Անտիոքի լատին իշխանության որևէ արտաքին քաղաքական ձեռնարկին: Միայն 1146 թ. հետո, երբ Զոսլին Բ-ի փեսան) կրկին անցնում է անտիոքյան ծառայության: Միայն նրա մահից հետո է, որ Եղեսիայի կոմսը փորձում է կրկին վերահստատվել Մարաշի և Քեսունի իշխանության տարածքում: Զնայած այս իրադարձության ժամանակ էլ Եղեսիայի կոմսությունը շատ էր թույլ, սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Անտիոքի իշխանությունը զրկվել էր գահակալ Ռայմոնդ Պուատիեից:

ԺԲ դարի 40-ական թթ. Եղեսիայի կոմսության ռազմական-քաղաքական թուլության և այդ իշխանության տարածքում ծաված երկպառակտական պատերազմների բնորոշ արտահայտություն էր Այնթապի համար մղվող պայքարը, որի մասին Գրիգոր Երեցը գրում է. «Ի թուին Հայոց ԵԶԹ (=1140/1 թ.) ոմն զօրական յազգէ Սիրիմահէ խէթ կալեալ ի սրտի իրում, որում անուն էր Սիմոն, գողացաւ զԱնթափի կոմսէն Ուհհայոց և կալեալ ընդ ձեռամբ ամ մի և ապա՝ միջնորդութեամբ բրնձին Անտիոքու, դարձոյց զԱնթափի ի

կոմսն»²⁸⁶: Նման վկայությունը ապացուց է այն բանի, որ Եղեսիայի կոմսը իր տարածքի ներսում ծայր առած միջավատատիրական վեճերը լուծելիս ստիպված էր դիմել Անտիոքի իշխանի դատական միջնորդությանը: Զնայած աղբյուրների սակավության պատճառով գրեթե անհնար է պարզել հիշատակված երեք ավատատերերի միմյանց նկատմամբ փոխարաբերությունների բոլոր երանգները, այնուամենայնիվ պարզ է, որ Անտիոքի իշխանը որոշ գերակայական իրավունքներ պետք է ունենար Եղեսիայի կոմսության նկատմամբ, լուծելու համար ստորակայի և գերակայի միջև ծագած պարագային վեճը:

Զնայած վերոհիշյալ խանգարիչ հանգամանքներին, Անտիոքի լատինական իշխանությունը շարունակում էր ոտքնագություններ կատարել Կիլիկիայի տարածքի նկատմամբ: Այս նպատակին հասնելու համար շափազանց հաջող խաղաքարտ էր Կիլիկիայի Ռուբինյան իշխանության և Բյուզանդական կայսրության թշնամական փոխարաբերությունները: Բյուզանդական կայսրության դեմ մղվող պայքարում հայերը փորձում էին ընդհանուր ճակատ ստեղծել նրա դեմ: Այդ է վկայում 1138—1143 թթ. թվագրվող Գրիգոր Գ կաթողիկոսի և Հռոմի պապ Ինոկենտիոս Բ-ի նամակագրությունը²⁸⁷: Եվ քանի դեռ Դաշտային Կիլիկիայում շկար մի այնպիսի քաղաքական ուժ, որը հակադրվեր բյուզանդական իշխանություններին, Անտիոքի իշխանությունը Ռայմոնդ Պուատիեի գըլխավորությամբ ոտնգություններ էր կատարում այդ տարածքների նկատմամբ:

Կայսր Հռակվելուց հետո, 1144 թ. Մանուել Ա Կոմնենոսը նոր ուազմարշավ է կազմակերպում դեպի Անտիոք: Կայսրն անձամբ չի մասնակցում այդ ուազմական գործողություններին, որովհետև Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում (Մելանգիայի շրջան) պատերազմում էր իկոնիայի սուլթան

286 Մատքես Ռամայեցի, էջ 370—371:

287 Ա. Տեր-Միքելյան, Միջին գարերի կաթողիկոսների ձգտումներն եկեղեցական խաղաղության համար, Արարատ, 1893, էջ 133—139, Վ. Օրմանյան, Ազգապատում, Հ. Ա., §§ 939—940:

Մասուղի դեմ²⁸⁸: Կիլիկյան այս ուազմարշավի մասին խոսող
 բյուզանդական պատմիշները կրկին գալիս են հաստատելու
 այն միտքը, որ Բյուզանդական կայսրության և Անտիոքի
 լատին իշխանության միջև ծագած պատերազմի առարկան
 և մարտարեմը Դաշտային Կիլիկիայի քաղաքներն էին: Նի-
 կետաս Խոնիատեսը հետեւյալ արտահայտությամբ է ներկա-
 յացնում հետաքրքրող ուազմարշավի պատճառը. «Նաև իր
 պարտքը համարելով վրեժ առնել Անտիոքի իշխան Ռայ-
 մոնդից, Կիլիկիայի քաղաքներին կապածից (ἐπιφυόλενον),
 որոնք պատկանում էին Հռոմեացիներին, (Մանուելը) զորք
 ուղարկեց²⁸⁹: Մանուել Ա Կոմնենոսի կազմակերպած այս
 առաջին ուազմարշավը՝ ընդդեմ Անտիոքի լատին իշխանու-
 թյան, նպատակ էր հետապնդում Ռայմոնդ Պուատիեին ցույց
 տալ բյուզանդական ուազմական ուժի հզորությունը: Արշա-
 վանքի ընթացքում զուգակցվում էին ցամաքային և ուազմա-
 ծովային ուժերի համատեղ գործողությունները: Ըստ բյու-
 զանդական պատմիշների ցամաքային զորքերը ղեկավարում
 էին Հռոմեաննես և Անդրոնիկոս Կոնտոստեֆանոսները ու պա-
 տերազմական գործին տեղյակ Պրոսուխը, իսկ նավատորմը
 ղեկավարում էր Դեմետրիոս Վրանասը²⁹⁰: Ցամաքային զոր-
 քերը հասնելով Կիլիկիա, վերանվաճում են անտիոքիների
 գրաված ամրոցները և ճակատամարտում փախուստի մատ-
 նում Ռայմոնդ Պուատիեին²⁹¹: Դժբախտաբար սկզբնաղբյուր-
 ներից և ոչ մեկը չի թվարկում այն բնակավայրերը, որոնք
 այս արշավանքի ընթացքում գրավել էին բյուզանդական զո-
 րավարները Անտիոքի լատիններից: Նավատորմիդի հետ ցա-
 մաքային ուժերի համագործակցությունը Հյուսիսային Ասո-
 րիքում և Կիլիկիայում, ինչպես վերևում նկատվեց, պետք է

²⁸⁸ *I. C.*, p. 32; *N. Ch.*, p. 52; *F. Chalandon*, *Les Comnènes*, I II, p. 247—248.

²⁸⁹ *N. Ch.*, p. 52: Հռոմեաննես Կինսամոսը և հավաստիացնում է, որ Բյուզանդական կայսրության և Անտիոքի իշխանության միջև ծագած վեճի առարկան Կիլիկիայի քաղաքներն էին (տե՛ս *I. C.*, p. 33—35):

²⁹⁰ *I. C.*, p. 33; *N. Ch.*, p. 52:

²⁹¹ *I. C.*, p. 33—34.

դիտել Հովհաննես թ Կոմնենոսի ռազմավարական ավանդների շարունակություն։ Կարելի է միայն ենթադրել, որ ինչպես նախորդ ռազմարշավների ժամանակ՝ բյուզանդական ցամաքային զորքերը կրկին Ատալիա-Սելևկիա-Տարսոն ծովափնյա ճանապարհով են ներխուժել Դաշտային Կիլիկիա, իսկ նավատորմը՝ ցամաքային զորքերի առաջխաղացման հետ զուգահեռ, ընթացել է ծովով, իր հետ բերելով բանակին անհրաժեշտ հանգերձանք ու պարեն։ Ի հակադրություն մյուս ռազմարշավների, ըստ բյուզանդական պատմիչների, ռազմական գործողություններին մասնակցել է նաև նավատորմը, որը Դեմետրիոս Վրանասի ղեկավարությամբ ամայացրել է Անտիոքի իշխանության ծովափերը, գերեվարել է մարդկանց²⁹²։ Նման գործողություններից հետո, նավատորմը իւարիսի է գտում Կիպրոսում²⁹³, իսկ ցամաքային ուժերը Պրոսուիսի հրամանատարությամբ հաջողությամբ հասնելով Անտիոք՝ վերադառնում են Կիլիկիա²⁹⁴։

Այս ռազմարշավի ուսումնասիրության տեսանկյունից էական նշանակություն ունեն երկու խնդիր. առաջին՝ ու՞մ էր պատկանում այս ռազմարշավից առաջ և հետո Կիլիկիան, երկրորդ՝ ո՞ր թվականին է տեղի ունեցել այս բախումը։

Նախորդ գլխի շարադրանքում կարողացանք ցույց տալ, որ 1136—1138 թթ. Հովհաննես թ Կոմնենոսի Կիլիկիա-Հյուսիսասորիքյան առաջին ռազմարշավից հետո, 1139 թ. Լեռնային Կիլիկիայի մի նշանակալի հատվածին տեր դարձավ Մուհամեդ Դանիշմանյանը, իսկ Դաշտային Կիլիկիան մնաց Բյուզանդական կայսրության հովանավորության ներքո։ Այդ վիճակը կայունացնելու մտահոգությամբ Հովհաննես թ Կոմնենոսը հանդես եկավ կիլիկյան երկրորդ (1142—1143) ռազմարշավով։ Այդ մասին է վկայում նրա մահից հետո Մանուել Ա Կոմնենոսի ռազմական գործողությունները Կիլիկիայում։

292 լ. Ը., էջ 35։ Այս ռազմարշավի ժամանակ բյուզանդացիները դերեվարել են նաև Անտիոքի իշխանության պետական հասույթների հարկավաքին (նույն տեղում)։

293 լ. Ը., թ. 35.

294 լ. Ը., թ. 35.

Ելնելով սկզբնաղբյուրներից կարելի է հավաստել, որ 1143թ. Կիլիկիայից բյուզանդական զորքերի հնուանալուց հետո Ռայմոնդ Պուատիեն նվաճել էր եթե ոչ ամբողջ Դաշտային Կիլիկիան, ապա՝ գոնե նրա մի նշանակալի մասը: Այդ է պատճառը, որ բյուզանդական պատմիլները Մանուել Ա Կոմնենոսի Կիլիկիա-Հյուսիսասորիքյան առաջին ռազմարշավի մասին (1144) խոսելիս շեշտում են, որ ռազմական գործուղությունները Բյուզանդական կայսրության և Անտիոքի լատինական իշխանության միջև տեղի էին ունենում Կիլիկիայում:

Ավելի բարդ է արշավանքը թվագրելու խնդիրը, քանի որ Նիկետոս Խոնիատեսը Մանուել Կոմնենոսի առաջին կիլիկյան ռազմարշավի մասին պատմում է Իկոնիայի սուլթան Մասուդի գեմ Բյուզանդական կայսրության ռազմական բախումից առաջ²⁹⁵, իսկ Հովհաննես Կիննամոսը՝ այդ բախումից անմիջապես հետո²⁹⁶; Այս, առաջին հայացքից միմյանց հակասող տեղեկությունները քննելիս Ֆ. Շալանդոնը եկել է այն ճիշտ եղանակացության, որ Իկոնիայի սուլթանության դեմ Մանուելի 1146 թ. ռազմարշավից առաջ 1144 կամ 1145 թ. տեղի է ունեցել ևս մի արշավանք²⁹⁷: Մենք հակված ենք Մելանգիայի շրջանում բյուզանդական զորքերի գործողությունները ժամանակակից համարել Մանուել Ա Կոմնենոսի կիլիկյան առաջին ռազմարշավին և այդ երկու պատերազմները թվագրել 1144 թվականով: Կիլիկյան այս ռազմարշավը թվագրելու գործը որոշ շափով հեշտացնում է Հովհաննես Կիննամոսի հայտնած տեղեկությունը՝ ըստ որի Անտիոքի իշխան Ռայմոնդ Պուատիեն բյուզանդական ռազմարշավից անմիջապես հետո ստիպված է լինում ժամանել Կոստանդոպոլիս²⁹⁸: Միքայել Ասորին գիտե այս իրազարձության մասին և Ռայմոնդ Պուատիեի այցը կայսրության մայրաքաղաք

²⁹⁵ N. Ch., p. 52.

²⁹⁶ I. C., p. 38—42.

²⁹⁷ F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 248.

²⁹⁸ I. C., p. 35:

թվագրում է Սելևկյան 1457 թ., որը համապատասխանում է մեր թվականության 1145/6 թ.²⁹⁹: Տարօրինակ է միայն այն հանգամանքը, որ Միքայել Ասորին ոչինչ չի պատմում Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայում 1144/5 թ. բյուզանդական զորքերի գործողությունների մասին: Ենելով Միքայել Ասորու հաջորդած տոմարական վկայությունից Ֆ. Շալանդոնը բյուզանդական ռազմարշավը ընդդեմ Անտիոքի լատին իշխանության թվագրում է 1143—1144 թթ.³⁰⁰, իսկ Ռայմանդ Պուատիեի ժամանումը Կոստանդնուպոլիսի՝ 1145 թ.: Մենք, ըստ էության, համաձայն ենք Ֆ. Շալանդոնի թվագրման հետ, այնուամենայնիվ, կարծում ենք, որ ավելի ճիշտ կլիներ Մանուել II Կոմնենոսի Կիլիկյան առաջին ռազմարշավը թվագրել 1144 թ., որովհետև, ըստ սկզբնաղբյուրների, այն կազմակերպվել է կայսեր պաշտոնական օծումից հետո³⁰¹, որը կարող էր տեղի ունենալ 1143 թ. օգոստոսի 20—Հոկտեմբերի 1 ժամանակամիջոցում³⁰²: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ բյուզանդական բանակը աշնանը հեռավոր ռազմարշավներ հազվադեպ էր կազմակերպում:

Ցամաքից և ծովից հասցված այս հզոր հարվածը Անտիոքի իշխանության թիկունքին դժվար կացության մեջ դրեց Ռայմանդ Պուատիեին այն պահին, երբ Հալեպի և Մոսուլի աթարեկ Զանգին հարձակում էր ձեռնարկել Եղեսիայի իշխանության վրա: Բյուզանդական ռազմական ուժերի գործողությունները թույլ չտվեցին Անտիոքի իշխանին Եղեսիայի կոմսի հետ միասնական ճակատով հանդես գալ Զանգու գործերի դեմ և 1144 թ. դեկտեմբերի 23-ին մուսուլմանները գրավեցին Եղեսիան: «Եւ ի տարբեպատն դեկտեմբերի ամսոյ քսան և երեք օրն՝ և օրն երեքշաբթի՝ ի տօնի սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, առաւ Ուոհա սրով ի Զանգէ...»³⁰³։

²⁹⁹ M. S., t. III, p. 267.

³⁰⁰ F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 241 n. 2.

³⁰¹ I. C., p. 33:

³⁰² F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 199—200.

³⁰³ Մատթեոս Ռոմայնցի, t. 371:

Հովհաննես թ Կոմինենոսի մահվանից հետո ուժերի հայրակալցությունը փոխվեց գրեթե ողջ Մերձավոր Արևելքում և Միքայել Ասորու այն տեղեկությունը, թե, «Հովհանների թագավորը և ֆրանկների արքան, մելիք Մահմուտը և Դառուդը մահացան նույն տարում»³⁰⁴ սոսկ իրադարձությունների պարզ թվարկություն չէ: Նման ընդհանրացնող դիտողությունները հատուկ են ժամանակի և ասորական, և հայկական ժամանակագիրներին³⁰⁵: Ճիշտ է, Գրիգոր Երեցը չի հիշատակում Դառուդի մահը, սակայն առաջին երեքի մասին խոսելիս, ամեն ինչ բացատրում է նախախնամությամբ, «Եւ յայսմ ամի նշան երեւցաւ յերկինս ի կողմն հիւսիսոյ, իրքեւ աիւն լուսոյ, յաւագ հինգշաբթւոց աւուրն և ութ օր միապէս երկեցաւ. և զինի այդ երեք թագաւորքդ փոխեցան»³⁰⁶: Նախախնամության հետ է կապում այս իրադարձությունները նաև Միքայել Ասորին³⁰⁷:

Սանր հետևանքներ ունեցավ Դանիշմանյան ամիրության համար Մուհամեդ մելիքի մահը: Նրա կյանքի վերջին տարիներին ամիրությունը արդեն բաժանվել էր մի քանի քաղաքական միավորների: Նրա եղբայրներ Յակուբ Արսլանը իշխում էր Սեբաստիայում³⁰⁸, իսկ Յոնոսը (Yaunos)՝ Մասարայում³⁰⁹: Երկպառակտչական երկարատև պայքարի հետևանքով Մուհամեդի մահից հետո ամբողջովին քայլայվեց երկրի տնտեսությունը և Դանիշմանյանների պետությունը թուլացավ: Միքայել Ասորին Կապադովկիայում տեղի ունեցող իրադարձությունների մասին գրում է. «1454 թ. կանուն I ամսի (գեկտեմբեր) ն-ին մահացավ Մելիք Մուհամեդը Կեսարիայում: Նա կարգադրեց, որ իր որդի Դանունը իշխի

304 M. S., t. III, p. 254, Հմմտ. նաև էջ 258:

305 Պատմական իրադարձություններին նման մոտեցում ցուցաբերեցու փաստեր կարելի է տեսնել Միքայել Ասորու, Բար Երրեսոսի, Գրիգոր Երեցի և Մատթեոս Առաքյացու ժամանակագրություններում:

306 Մատթեոս Առաքյացի, էջ 371:

307 M. S., t. III, p. 254:

308 M. S., t. III, p. 253:

309 M. S., t. III, p. 253:

(իր փոխարքեն): Սակայն նրա կինը եկավ (ամուսնու) եղբոր՝ Յակուբ Արալանի մոտ և նրա հետ ամուսնացավ, սա իշխում էր Սերաստիայում, և Դանունը փախավ Սիմնադա (Սամբնդավավ³¹⁰)³¹⁰: Մելիք Մուհամեդի տիրույթների բաժանման խընդրում իր ավանդն է մուծում նաև մյուս եղբայրը՝ Դոլահը (Daulah), որը դաշնակցելով Մասարայի տեր Ցոնոսի հետ արշավում է Մելիտենի վրա³¹¹, սակայն չկարողանալով տիրել քաղաքին, եղբայրները վերադառնում են Արկա: «Այն ժամանակ մելիք Մուհամեդի կինը ուղարկեց երկու հազար մարդ Մելիտինին պահպանելու համար: Սակայն, ովքեր քաղաքում էին կասկածեցին, որ նրանք բերել են իրենց և սեփական երեխաներին իրենց տներից քշելու հրաման, որպեսզի իրենց ուղարկեն Սերաստիա և գրավեն իրենց տեղը՝ այնժամ նրանք շարացան, զինվեցին և հանելով սրերը (սկըսեցին) վազել փողոցներով: ...Դա պահքի առաջին շաբաթն էր՝ Շեբաթի 17-ը (փետրվար)³¹²: Մելիտենեում ծագած այս ապստամբությունը հետաքրքիր դրվագ է Հայկական լեռնաշխարհում, քաղաքային իշխանության դերի ու նշանակության ուսումնասիրության համար: Ասորի պատմիչը Հիշատակելով քաղաքի կառավարչի անունը տեղի է տալիս մտածելու, որ նա կարող էր թյուրք լինել: Ըստ Միքայել Ասորու Մելիտենի ապստամբությունը ծանր հետևանքներ ունեցավ առաջին հերթին քաղաքի քրիստոնյա բնակչության համար³¹³: Քաղաքի թյուրք բնակչությունը հավաքվելով միջնաբերդի առաջ պահանջում էր իշխողից քաղաքի բանալիները, որպեսզի ճակատամարտ տան Մուհամեդի կնոջ ուղարկած զորքերինք Սակայն քաղաքի իշխողը դրանք չի տալիս և ապստամբները կոտրում են Բորիդիյեհյան աշտարակի դարպասը և օգնության կանչում Դոլահին, որը Մելիտենի մոտ ունեցած անհաջողությունից հետո ապաստանել էր Արկայում, իսկ Մուհամեդի կնոջ ուղարկած զորքերը վերադառնում են Սերաս-

³¹⁰ M. S., տ. III, թ. 253:

³¹¹ Նույն տեղում, էջ 253:

³¹² Նույն տեղում:

³¹³ Նույն տեղում:

տիա³¹⁴: Այս իրադարձություններից քիչ անց, Դոլաճը դաշնակցում է իր եղբայր Յակով Արսլանի հետ³¹⁵: Երկկողմանի այս դաշինքի և պայմանավորվածության արդյունք պետք է դիտել այն փաստը, որ Դոլաճը իր զորքերով շարժվում է դեպի Արլիստան և գրավում է նաև Ջահանի շրջանը³¹⁶: Մինչ այդ իրադարձություններին հեռվից հետեւող Իկոնիայի սուլթանությունը օգտագործում է առիթը և հարձակվում է Յակով Արսլանի տիրույթների վրա³¹⁷: Ինչ խոսք, որ Մասուդին անհանգուացնում էր դանիշմանյան եղբայրների (Յակով Ասլան, Դոլաճ) գաշինքը, որն իր սուր ծայրով ուղղված էր Իկոնիայի սուլթանության դեմ: Եթե անգամ նման մտադրություն իսկ չունեին դաշնակցած կողմերը, ապա Մասուդի նման քայլը պետք է բացատրել նրանով, որ Իկոնիայի սուլթանությունը իր աբտաքին քաղաքականության նպատակներից էր համարում Դանիշմանյան ամիրության մասնատումը: Հակված ենք ենթադրել, որ 1142 թ. Մուհամեդի մահից հետո, երբ նրա ժառանգը և եղբայրները պատերազմում էին Դա-

³¹⁴ Նույն տեղում:

³¹⁵ Նույն տեղում, էջ 254:

³¹⁶ M. S., է. III, էջ 254: Այս երկրները Դանիշմանյան ամիրությունը նվաճել էր զեր ամիր Ղազու իշխանության տարիներին (1118 թ. = = Սելևկյան 1430 թ.) (տե՛ս M. S., է. III, թ. 205): 1136 թ. (= սելևկյան 1148) այդ տարածքը գտնվում էր ամիր Մուհամեդի եղբայր՝ Դոլաճի ենթակայության ներքո: Միքայել Ասորին՝ տեղեկացնում է նաև, որ Մուհամեդ Դանիշմանյանը Դոլաճին դուրս է քշում այդ տարածքներից (M. S., է. III, թ. 246): Մուհամեդի իշխանության տարիներին՝ 1141 թ. (= սելևկյան 1452 թ.), մեզ հետաքրքրող տարածք են ներխուժում խաչակիրները, սակայն դուրս են շարուվում (M. S., է. III, թ. 249): Բոլոր փաստերը խոսում են այն մասին, որ մինչև մելիքի Մուհամեդի մահը տարածքը պատկանում էր Դանիշմանյան ամիրությանը: Մուհամեդի մահից հետո այս տարածքի ճակատագրի մասին ուշագրավ տեղեկություն է պահպանել Միքայել Ասորու հայերեն խմբագրությունը, որն արձանագրելով բյուզանդական կայսեր և Երուսաղեմի թագավորի մահը, ավելացնում է: «Եւ ի որյն ամի մեռաւ Դաւաւթ ամիրայն՝ տէրն Խարթումույն Արթուրի, և առ զիշխանութիւնն Խարտաւանն (Ղարա Արսլան) որդի իր: և Մասուդն առ զԱրլսթայնս (Միխայել Ասորի, 1871, էջ 418):

³¹⁷ Cf. Cahen, La Syrie du Nord, p. 365.

Նիշմանյան ամիրի թողած տիրույթների բաժանման համար, հկոնիայի սովորականը կարողացել էր տիրանալ Զահանի շըրջանին։ Այսպիսի ենթադրության համար մեր միակ փաստարկըն այն է, որ նվաճումից առաջ Դոլահը զգալով, որ Մասուդի դեմ միայնակ պատերազմելն անհնար է, հաշտության ձեռք է մեկնել իր եղրորք։ Չնայած երկու եղրայրների թշնամությանը, նրանք ունեին միայն մեկ լուրջ հակառակորդ, ուստի իկոնիայի սովորականը էր։ Իրականության հետ հաշվի նստելով էր, որ երկու եղրայրները համաձայնության եկան, և Դոլահը զրավեց Զահանի շրջանը։ Այս ուազմական գործողությունը առիթ դարձավ հկոնիայի սովորական Մասուդի համար ներխուժելու Յակուբ Արսլանի տիրույթները։ Վերջինս սփախչում է լեռները։ իսկ սովորական Մասուդը ամայացնում է Սեբաստիայի շրջանը³¹⁸, Այդ ուազմական գործողություններից հետո հկոնիայի սովորականը պահանջում է Դոլահից «իրեն ենթարկվել, (խոստանալով) մեծացնել նրա տիրույթները»³¹⁹։ Բանակցությունների համար Դոլահը Մասուդի մոտ է ուղարկում իր կնոջը, որը հկոնիայի սովորականի եղրորք դուստրն էր։ Սակայն Մասուդը մերժում է նրա խնդրանքը և 1143 թ. հունիսի 17-ին (=1454 թ. հազիռանի 17-ին) շրջապատում է Մելիտեննեն։ Երեք ամիս քաղաքը շրջապատված պահելուց հետո, սեպտեմբերի 14-ին (=1454 թ. էլուկի 14-ին), խաչի տոնի օրը, այրում է քարանետ մեքենաները և վերադառնում³²⁰, Մելիտենի երկարատև պաշարումը բավականին ժանր էր անզրադարձել քաղաքի բնակիչների վրա, որովհետև, ըստ Միքայել Ասորու, Դոլահը թալանում էր քաղաքի բնակիչներին, հատկապես ազնվականներին, որոնցից գանձված ապօրինի հարկերով վճարում էր մուսուլման զինվորականությանը։ Սովորանի հեռանալը, ըստ Միքայել Ասորու, «մեծ թեթևություն» բերեց քաղաքացիներին³²¹։ Իկոնիայի սովորականի հեռացումը հասկանալի կդառնա, եթե հիշենք, որ Մանուել Ա

³¹⁸ M. S., t. III, p. 254.

³¹⁹ Նույն տեղում։

³²⁰ Նույն տեղում։

³²¹ M. S., t. III, p. 254.

Կոմնենոսը 1143—1144 թթ. ուազմական գործողովյուններ էր վարում իկոնիայի սովորանովյան դեմ Մելանգիայի շրջանում³²²,

Միքայել Ասորին հաջորդ՝ Ժէ գրքի սկզբում կրկին անդրադառնում է վերօնիշյալ դեպքերին: ԺԲ դարի ասորի ժամանակափառ հիշատակելով Հովհաննես Բ Կոմնենոսի մահը և Մանուել Ա-ի իշխանության գլուխ բարձրանալը, Երուսաղեմի թագավորի ֆուլք Անժուացու մահը և անշափահաս Բալդուին Գ-ի գահակալումը³²³, Հեսնա Զիադի (Խարբերդ)³²⁴ տեր՝ արտուքյան Դառուդի մահը, շարունակում է իրադարձությունների թվարկումը և նշում է, որ Դառուդի մահից հետո կառավարման դեկը իր ձեռքն էր վերցրել նրա կրտսեր որդի Ղարա Արսլանը, իսկ ավագը՝ Արսլան-Թողմիշը, ապավինելով Հալեպի աթարեկ Զանգում, նրա աջակցությամբ գրավել էր Հանի (Hani) բնակավայրը³²⁵, Երկրորդ անգամ նույն դեպքերին անդրադարձող Միքայել Ասորին այս հատվածում այլ անցքերի հետ է կապում Մելիտենեի Երկրորդ շրջապատումը Իկոնիայի սովորանի կողմից. «...Մասուդը եկավ և տիրեց Աբլիստանին և Զահանի ողջ Երկրին: Ապա վերադարձավ շրջապատելու Մելիտենեն (Puis il revient mettre le siège devant Mélitène) և իր հետ բերեց Յակուբ Արսլանին, Դառուդի որդուն: Նա փախել էր նրա (Մասուդի—Ա. Բ.) մոտ, որի համար էլ նա նրան օգնեց (Il l'aide) Զանգու դեմ, որը շարժվել էր նրա վրա: Սովորանը նրան տվեց 20 հազար ձիավոր և նա շարժվեց Զանգու դեմ: Սա լսելով (Celui-ci ayant entendu parler) իր դեմ ուղարկված սովորանի զորքերի մասին, հրաժարվեց (իր պլաններից) և հեռացավ իր Երկիրը: Ղարա Արսլանը վերադարձավ տիրույթները, որոնք իրենից Խլվել էին: Սովորանը Երեք ամիս մնաց Մելիտենեի դիմաց, ճակատամարտ շտալով և օգոստոսի կեսերին, Աստվածամոր փոխակերպման (la transmigration de la Mère de Dieu) տո-

³²² F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 241.

³²³ M. S., t. III, p. 258,

³²⁴ M. S., t. III, p. 258:

³²⁵ M. S., t. III, p. 258,

Նի նախօրյակին, իր զորքերին հրամայեց, որ յուրաքանչ-
յուրը (վերցնի) ինչ անհրաժեշտ է համարում տանելու և
տռավոտյան նրանք հեռացան։ Նրանք գերելով տարան ողջ
Հրապանը³²⁶։

Միքայել Ասորին պատմում է նաև, որ երբ Մասուղը
շրջապատել էր Մելիտենեն, Եղեսիայի կոմս Զոսլին Բ-ը գա-
լիս է Մար Բար Սաումայի վանքը աղոթելու, սակայն Կլավ-
դիայի (Claudia-Կղաւղիաս^o)³²⁷ շրջանից փախածներից իմա-
նալով, որ սովորական մեծ է, վերադառնում է շուտա-
փուլթ իր երկիրը³²⁸։

Իկոնիայի սովորանության հզորացումը ի հակակշիռ Դա-
նիշմանյան ամիրության, և տարածքների գրավումը Եղեսիա-
յի իշխանության հյուսիսում (նկատի ունենք Զահանի շըր-
ջանի գրավումը Աբիստան կենտրոնով) Դանիշմանյան ամի-
րության հաշվին և աթարեկ Զանգու հզորացումը Եղեսիայի
իշխանության հարավում, արևելքում և հյուսիսում, ուր Հա-
լեպի տերը միջոցներ էր ձեռնարկում թուլացնելու Արտուր-
յանների իշխանությունը Ամիդում և Խարքերդում (Հեսնա
Զիադ), ստիպեցին Զոսլին Բ-ին դաշնակիցներ փնտրել շըր-
ջակա պետական միավորումների շրջանում։ Երկրի ներսում
Զոսլին Բ-ը Զանգիի հետ բախման ամենավերջին պահին,
ցանկանալով շահել հակորիկ ասորիների համակրանքը, բա-
նակցություններ սկսեց նրանց պատրիարք Աթանաս Լ-ի հետ,
և վերադարձեց նրան Բար Սաումա վանքից կողոպտված
իրերը, որի փոխարեն հակորիկ ասորիների առաջնորդը հա-
մաձայնվեց Եղեսիայի եպիսկոպոսությունը (հակորիկյան)
հանձնել Բարսեղ Բար Շումանային³²⁹, նույն թվականին
(1143/4) Զոսլին Բ-ը գնում է նաև Երուսաղեմ ներկայանա-

326 M. S., t. III, p. 258—259։

327 Հմմտ. Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ
VII դարի Հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզա-
գրական հիմքի վրա), Երևան, 1953, էջ 59։

328 M. S., t. III, p. 259։

329 M. S., t. III, p. 259—260։

լու նորընծա թագավորին³³⁰; Սակայն Զոսլինին պետք էին ավելի զորավոր դաշնակիցներ, որովհետև օրավուր հզորացող Մոսուլի և Հալեպի աթարեկությունը սպառնում էր կով տար գրեթե բոլոր կողմերից թշնամական օղակի մեջ գտնվող կոմսությանը: Տրամաբանական է նաև, որ Զանգիի դեմ պատերազմող Խարբերդի Արտուրյանները Հալեպի աթարեկության դեմ օգնություն պետք է փնտրեին նաև Զոսլին Բ-ի մոտ: Իրն ալ-Ասիրը Զանգու կողմից Արտուրյաններին պատկանող Դիար Բաբրի (Ամիգ) շրջապատումը համարում է տակտիկական քայլ «որպեսզի այն տպավորությունը թողնի, թե ժամանակ չունի նրանց երկիրը (նկատի ունի Եղեսիայի կոմսությունը — Ա. Բ.) արշավելու»³³¹: Միքայել Ասորին պատմում է, որ, երբ Զանգին հետապնդում էր Հեսնա Զիազի (Խարբերդի — Ա. Բ.) տիրոջը, վերջինս օգնություն է խընդրում Զոսլինից, որի համար նա փոխարենը տալիս է Բեյթ Բուլա (Բալլու)³³² ամրոցը, որպեսզի Եղեսիայի տերը հետագայում ևս օգնի նրան Զանգիի դեմ պատերազմելիս: Միաժամանակ Ղարա Արսլանը օգնություն էր խնդրել Խկոնիայի սովորական Մասուդից³³³, Այնուհետև ասորի պատմիչը ավելացնում է. «Զոսլինը չասկացավ, որ իր համար երբեք շահավետ չէր կովել թյուրքերի դեմ թյուրքերի շահերի համար: Նա Ղարա Արսլանին օգնական բանակ ուղարկեց»³³⁴: Աթարեկ Զանգին տեղեկանալով, որ Զոսլին Բ-ը մեկնել է Անտիոք

330 Նույն տեղում, էջ 259:

331 Իբն ալ-Ասիր, էջ 252:

332 Ժ.-Բ. Շաբոն Նույնացնում է այս երկու տեղանունները (տե՛ս M. S., տ. I, թ. 15+, 16+): Մեղ ավելի հավանական է թվում Բեյթ Բուլան նույնացնել Բաբուլայի հետ (այժմ Բիբուլ), որը գտնվում է Քեսունի և Խարբերդի միջև Օֆրատի ափին (տե՛ս Cl. Cahen, La Syrie du Nord, p. 126): Անանուն Ասորու ժամանակագրության մեջ այն կոչվում է «Կարկառի երկրում գտնվող Պետու բերդ» (Անանուն Ասորի, էջ 87, տե՛ս նաև ժամ. 272): Թարտեղագրական հիմքի վրա այդ ամրոցի տեղադրությունը տե՛ս Ա. Հ. Ճեղանիրենյան, Կիլիկիայի հայկական պետությունը (քարտեզ), Հայ ժողովրդի պատմություն, հ. 3:

333 M. S., տ. III, թ. 260:

334 Նույն տեղում:

1144թ. նոյեմբերի 28-ին շրջապատռմ է Եղեսիան³³⁵, իհարկե Միքայել Ասորու նման բացատրությունը այս իրադարձությունների կապակցությամբ զարմանալիորեն պարզամիտ է, որովհետև Եղեսիայի իշխանությունը գտնվում էր ստրատեգիական նշանակություն ունեցող ճանապարհների հատման հանգուցակետում³³⁶: Այդ էր պատճառը, որ Զանգին իր նըպատակին հասնելու համար հաշտություն է կնքում Արտուրյանների հետ: Վերջիններս նույնպես կողմնակից էին հաշտության, քանի որ «Զոսլինը շկարողացավ օգնել, ինչպես հույս ունեին»³³⁷: 1144թ. դեկտեմբերի 23-ին Զանգին տիրացավ Եղեսիային³³⁸: Այստեղ պետք է առանձնացնել Զանգուազարյան քաղաքականության երկու հատկանշական կողմերը: Հալեպի աթաբեկը քաղաքը գրավելուց հետո, հաշվեհարդար է տեսնում միայն լատին բնակչության հետ, իսկ մյուս քրիստոնյաններին ձեռք չի տալիս, նույնիսկ վերադարձնում է քաղաքի գրավման ժամանակ նրանցից բռնագրավված ունեցվածքը³³⁹: Սրանից բացի աղբյուրները հաղորդում են, որ Զանգին Եղեսիան բնակեցրել է մեծ քանակությամբ հրեական բնակչությամբ³⁴⁰:

Եղեսիայի անկումից հետո, 1145թ. հունվարին Զանգին գրավում է Սրումը, մարտին՝ Պիրը³⁴¹: Այդ նվաճումներից հետո, փաստորեն, վերանում է Եղեսիայի կոմսության իշխանությունը Եփրատի արևելյան ափի տարածքի վրա³⁴²:

Այս դեպքերը իրենց վրա հրավիրեցին քրիստոնյա արևմուտքի և մուսուլմանական արևելքի ուշադրությունը: Արև-

³³⁵ Նույն տեղում: Հճմտ. նաև Իրն ալ-Ասիր, էջ 252:

³³⁶ Cf. Cahen, La Syrie du Nord, p. 111; N. Elisséeff, Nur ad-Din, t. II, p. 378—381.

³³⁷ Անանուն Եղեսացի. էջ 88:

³³⁸ Մատր. Ռամ., էջ 371: Անանուն Եղեսացին այս դեպքերը թվագրում է գեկտեմբերի 24-ով (էջ 91):

³³⁹ N. Elisséeff, Nur ad-Din, t. II, p. 382—383.

³⁴⁰ N. Elisséeff, Nur ad-Din, t. II, p. 383.

³⁴¹ N. Elisséeff, Nur ad-Din, t. II, p. 380; Cf. Cahen, La Syrie du Nord, p. 370—371

³⁴² Cf. Cahen, La Syrie du Nord, p. 371.

մուտքում ծայր առավ Եղեսիայի փրկության մոլուցքով սնվող երկրորդ խաչակրաց արշավանքի գաղափարը։ Մի շաբթ քրիստոնյա ժողովուրդների գրականության մեջ երկեր ստեղծվեցին այդ քաղաքի աղետի մասին, որոնք պատկերում էին Եղեսիայի գերյալ վիճակը, իսկ մուսուլմանական արևելքը փառարանում էր և տիտղոսներ շնորհում հանդուզն ու տաղանդավոր աթարեկին³⁴³,

Աթարեկ Զանգու երկդիմի քաղաքականությունը քրիստոնեական համայնքների նկատմամբ շարդարացրեց իրեն 1145 թ. վերջին հայերը ապստամբում են Եղեսիայում և Զանգին հրամայում է Ալի Քուչուկին հաշվեհարդար տեսնել ապստամբների հետ³⁴⁴, 1146 թ. գարնանը, երբ արդեն վերջնականապես լուծված էր Եղեսիայի իշխանության հարցը, Զանգին հարձակվում է Արտուրյանների վրա և տարածքային նվաճումներ կատարում³⁴⁵, իսկ Դամասկոսի դեմ ձեռնարկած ուաղմարշավի ճանապարհին նա դավադրաբար սպանվում է 1146 թ. դեկտեմբերի 14-ին³⁴⁶. Զանգու մահը երկպատկտշական պատերազմների ազդանշան դարձավ Հալեպ-Մոսուլի աթարեկության տարածքի ավատատիրական վերնախավի համար և պետությունը որոշ ժամանակով կորցրեց իր միասնականությունը։ Աթարեկությունը երկու մասի բաժանվեց, որոնցից մեկը՝ Մոսուլ կենտրոնով անցավ նրա մեծ որդու՝ Սայֆ աղ-Դին Ղազու տիրապետության ներքո, իսկ Հալեպը իր շրջակայրով տրվեց Նուր աղ-Դինին³⁴⁷. Ամիդի (Դիար Բաբը) Արտուրյանները վերադրավեցին բոլոր այն տարածքները, որոնք աթարեկ Զանգին խլել էր նրանցից։ Եվնորը վերագրավեց Բաալբեկը և հպատակեցրեց Հոմսն ու ալ-Յագ-

343 N. Elisséeff, Nur ad-Din, t. II, p. 387—388.

344 Քրիստուկ Ալի Քուչուկին Զանգին 1144 թ. դեկտեմբերին հանձնել էր Եղեսիայի միջնարերդը (N. Elisséeff, Nur ad-Din, t. II, p. 380).

345 N. Elisséeff, Nur ad-Din, t. II, p. 383—384.

346 N. Elisséeff, Nur ad-Din, t. II, p. 385—386. Դամասկոսը դաշնակցում էր Երուսաղեմի թագավորությանը։ Այդ դաշինքը իր սուր ծայրով ուղղված էր Զանգու քաղաքականության դեմ։

347 N. Elisséeff, Nur ad-Din, t. II, p. 291—401.

Հիսանի տարածքները, իսկ Ռայմոնդ Պուատիեն սկսեց ավարառել Հալեպի և Համահի շրջակայքը³⁴⁸,

Եղեսիան Զանգիի կողմից գրավվելուց հետո, Ռայմոնդ Պուատիեն սկսեց քայլեր ձեռնարկել Հալեպի և Մոսուլի իշխանության դեմ զաշնակցություն ստեղծելու համար։ Բյուզանդական կայսրությունը նման դաշինքի մեջ ներգրավվելու փորձ կարելի է համարել 1145/6 թ. Ռայմոնդ Պուատիենի այցը Կոստանդնուպոլիս։ Միքայել Ասորին այդ այցի մասին գրում է այն իրադարձությունից հետո, երբ Զանգին, խաղաղություն հաստատելով ֆրանկների հետ, Մոսուլ է ուղարկում իր զորավար Ջեն աղ-Դինին ճնշելու համար Մուհամեդ սովորանի որդի Արփ Արևանի ապստամբությունը։ Ասորի պատմիչը Ռայմոնդ Պուատիենի Կոստանդնուպոլիս կատարած այցի մասին տեղեկացնում է. «1457 թ. (= 1145/6) ֆրանկները տեսնելով (իրենց) ամբողջովին թուլացումը, Թեղեվին (Ռայմոնդ Պուատիեն — Ա. Բ.)³⁴⁹ Անտիոքի տերը, գնաց գրտնելու հույների կայսրին՝ Մանուկին, Կոստանդնուպոլսում և նրանից ներողություն խնդրեց (իր գործած) մեղքերի համար, որ կատարել էր նրա հոր նկատմամբ, որովհետև լսել էր, որ վերջինս իր մահվան ժամանակ հրամայել էր իր որդուն վրեժ առնել ֆրանկներից։ Իր հպատակությունը ցուցադրելով, նա հարգանքի արժանացավ. նրան ուսկի տրվեց և մեծամեծ նվերներ ու նա վերադարձավ իր քաղաքը խոստում վերցնելով կայսրից, որ նա կդա քրիստոնյաներին օգնության»³⁵⁰։ Այս նույն այցելության մասին պատմող Հովհաննես Կիննամուր Ռայմոնդ Պուատիենի Կոստանդնուպոլիս կատարած այցելության պատճառը տեսնում է միայն 1143/4 թ. բյուզանդական զորքերի Անտիոքի իշխանության դեմ ծավալած հաջող ուղմական գործողությունների մեջ. «Այս իրա-

³⁴⁸ Cl. Cohen, La Syrie du Nord, p. 372—373; N. Ellsséeff, Nur ad-Din, t. II, p. 393—398.

³⁴⁹ Հայկական, առորական մի շարք սկզբնաղբյուրներում Ռայմոնդ Պուատիեն հաճախակի անվանվում է սորգոյ Պետերինո (Մատթեոս Ռոմայցի, էջ 372), Bedawi (M. S., t. III, p. 267) և Պուատվին (Անան Նվեսացի, էջ 104) ձևով.

³⁵⁰ M. S., t. III, p. 267.

դարձությունները (շաբաթական) ստիպեցին Ռայմոնդին ուղեգործել Բյուզանդիոն։ Երբ նա հասավ այնտեղ, կայսրը շահացավ ընդունել ավելի շուտ, քան նա կհարգեր մահացած կայսեր և հոր Հիշատակը, ապա՝ իր ստորական դարձեց³⁵¹։

Ռայմոնդ Պուատիեի այցը Կոստանդնուպոլիս շհասավ սպասված նպատակին, 1144—1145 թթ. ուղմական գործողություններից հետո Մանուել Ա Կոմնենոսը մինչև 1158 թվականը այլևս ուղմարշավներ չկազմակերպեց դեպի Կիլիկիա և Անտիոք, պատերազմ չհայտարարեց։ Հալեպի աթաբեկությանը, 1145—1147 թթ. Իկոնիայի սուլթանության դեմ մըղվող պատերազմներից հետո, բյուզանդական կայսրը 1147 թ. հաշտության պայմանագիր կնքեց Իկոնիայի սուլթան Մասուդի հետ։ Այդ համաձայնագիրը իր սուր ժայրով ուղղված էր երկրորդ խաչակրաց արշավանքի դեմ³⁵²։ Խաչակրաց բանակների անհաջողության մատնվելուց հետո էլ, Բյուզանդական կայսրությունը երկար ժամանակ, մինչև 1158 թ. հեռվից էր հետևում Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում իրադարձությունների դարգացմանը, նույնիսկ ուժեր չէր կենտրոնացնում Կիլիկիայից վտարելու այնտեղ վերահաստատված Ռուբինյան Թորոս Բ իշխանին։

Անտիօքի իշխանությունը հույսը դնելով Բյուզանդական կայսրության օգնության վրա փորձում էր արգելակել Հալեպի աթաբեկության հետագա առաջինադասումը։ Կոստանդնուպոլիս կատարած այցելությունից հետո է միայն, որ Ռայմոնդ Պուատիեն օգտվելով Հալեպի աթաբեկության ժամանակավոր թուացումից սկսում է ավարանել Հալեպի և Հոմսի շրջակայքը։ Ավելի վտանգավոր էր նոր աթաբեկ Նուր աղ-Դինի համար Եղեսիայում ծագած ապստամբությունը, որը կազմակերպել էին Եղեսիայի Զոսլին Բ Կոմսը և Պաղտին Մարաշացին։ Նուր աղ-Դինը ճնշեց այդ ապստամբությունը և սրի քաշեց ապստամբներին։ Պաղտին Մարաշացին սպանվեց այդ բախտախնդիր ձեռնարկի ժամանակ, իսկ Զոսլին

351 *I. C.*, p. 351.

352 *F. Chalandon*, Les Comnènes, t. II, p. 244—247; Cahen Cl. La Syrie du Nord, p. 379—380.

թ-ը փախավ Սամոսատ³⁵³: Այս դեպքերից հետո, ինչպես նկատել է Ն. Ելիսեևը, Եղեսիան կորցրեց իր կարևորությունը, իսկ Խառանը իր վրա ստանձնեց Զազիրեի շրջանի գլխավոր քաղաքի պարտականությունները³⁵⁴: Ռայմոնդ Պուտատիեի դեմ դուրս եկած Շիրկուն էլ ետ մղելով Անտիոքի իշխանի հարձակումը, կարողացավ հասնել մինչև Արտահ և Աֆրին³⁵⁵:

1146 թ. իրադարձություններից հետո ուժերի հարաբերակցությունը ամրողովին փոխվեց Մերձավոր Արևելքում: Եղեսիայի կոմսությունը վերջնականապես կորցրեց իր տարածքները Եփրատի արևելյան կողմում և դարձավ մի խումբ քնակավայրերի ավատատիրական սեփականության վրա հիմնը ված մի խղճուկ իշխանություն: Մահացավ Մարաշի և Քեսունի տեր գործունյա Պաղտին Մարաշացին³⁵⁶: Լատինական այս իշխանությունը, որը ստեղծվել էր Գող Վասիլի (հետագայում Տղա Վասիլի) իշխանության տարածքի վրա 1136 թ.³⁵⁷, քայլայվեց նույնքան արագորեն, որքան հանկարծակի ստեղծվել էր: Ճիշտ է, այս դեպքերից հետո Մարաշին տեր դարձավ Պաղտինի եղբայր Ռընաղտը (1146—1149), սակայն նրա կարճատև իշխանությունից հետո այդ տարածքները դարձան Եղեսիայի կոմսության, Արտուրյանների, Իկոնիայի և Հալեպի ոտնձգությունների առարկան³⁵⁸:

³⁵³ Cf. Cahen, La Syrie du Nord, p. 373.

³⁵⁴ N. Elisséeff, Nur al-Din, t. II, էջ 398: Սկզբնաղբյուրներում նկատվում են Եղեսիայի և Խառանի միշե մրցակցության արձագանքները Խառանը ամեն գնով փորձում է հարցած հասցեն Եղեսիայի տնտեսական և քաղաքական հզորությանը Մեզ թվում է, թե այդ մրցակցությունը առնադրական հասցեն է կամ առնելի է առանձին 1144 թ. Խառանի տիրոջ հանշերը ուղղված աթարեկ Զանգին, որից հետո Հալեպի աթարեկը դրավում և ավերում է Եղեսիան:

³⁵⁵ N. Elisséeff, Nur ad-Din, t. II, p. 395.

³⁵⁶ Մարքես Ալեքսյեցի, էջ 374: Cahen Cl. La Syrie du Nord, p. 373:

³⁵⁷ Այս դրույթի հետ համաձայն է նաև Բուտազը (Էմմա. The Cilician Kingdom of Armenia, p. 10—11):

³⁵⁸ Cf. Cahen, La Syrie du Nord, p. 385 - 398.

հկոնիայի սուլթանությունը այս դեպքերից հետո իր հայացքը ավելի թեքեց դեպի Մարաշ և նրա շրջակայքը, երբ Մանուել Ա Կոմնենոսի հետ Հաշտություն կնքեց 1147 թ.: Այդ պայմանագիրը իր սուր ժայրով ուղղված էր երկրորդ խաչակրաց արշավանքի դեմ³⁵⁹: Արևմտյան Եվրոպայի տիրակալների ռազմական միջամտությունը Մերձավոր արևելքի գործերին սպասված արդյունքը շտվեց, ավելի վատթարացավ խաչակրաց իշխանությունների քաղաքական վիճակը³⁶⁰: Խաչակրաց բանակների հեռանալուց անմիջապես հետո, 1149 թ. հունիսին Հալեպի աթարեկ նուր աղ-Դինը հնարի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ջախջախեց Անտիոքի իշխանի ղեկավարած կոռալիցիոն բանակը: Մարտում ընկան կոռալիցիայի ղեկավարներ Ալի թին Վաֆան, Ռընաղտ Մարաշացին և Ռայմոնդ Պուատիեն³⁶¹: Վերջինիս զլուսը, որպես ռազմավար, մատուցվեց Բաղդադի խալիֆին³⁶²: Ինարի ճակատամարտից հետո Անտիոքի բնակչությունը խուճապի մատնվեց: Կառավարման ղեկը իր ձեռքը վերցրեց իշխանունի Կոստանցան, Ռայմոնդ Պուատիեի այրին, Բոհեմոնդ Գ Անտիոքացու մայրը³⁶³: Ինարի ճակատամարտին հաջորդած դեպքերից հետո Հալեպի աթարեկության սահմանները մեծացան Հարիմի և Ապամեա-Արձան տարածքում և Օրոնտես գետից դեպի արևելք: Անտիոքի իշխանությունը զրկվեց իր տարածքների մի նշանակալի մասից³⁶⁴:

³⁵⁹ F. Chalandon, Les Comtés, t. II, p. 241—247. Cf. Cahen, La Syrie du Nord, p. 379—381.

³⁶⁰ Cf. Cahen, La Syrie du Nord, p. 380—384.

³⁶¹ Այս մասին տե՛ս Գ. Дмитриев, рец. на кн.: М. А. Зaborов. Введение в историографию крестовых походов (Латинская хронография XI—XIII веков). М., 1966.—ИФЖ, 1968, № 1, с. 263—264; Г. Дмитриев, О западных и восточных источниках истории крестовых походов, ИФЖ, 1971, № 3, с. 142—145.

³⁶² Cf. Cahen, La Syrie du Nord, p. 383—384.

³⁶³ Cf. Cahen, La Syrie du Nord, p. 389.

³⁶⁴ Cf. Cahen, La Syrie du Nord, p. 384—385.

Ինարի ճակատամարտում Ծընաղտ Մարաշցոյու մահը³⁶⁵ պատճառ դարձավ, որ սահմանակից մի շաբթ տերություններ փորձեն թափանցել նրա իշխանության տարածքները Ծընաղտի աներ ջուլին Բ-ը, որը կորցրել էր իր արևելակիրատյան տիրութեները, փորձեց գրավել Մարաշի և Քեսունի շրջանը։ Սակայն նրա առաջիաղացումը կանգնեցվեց։ Մարաշի դեմ ուազմական գործողություններ ծավալեց Իկոնիայի

365 Գրիգոր Երեցի մոտ ևս արձանագրված է այս իրագարձությունը՝ սակայն այստեղ բնագրի աղճատվածությունը պատմագիտական գրականության մեջ թյուրիմացության տեղի է տվել Ահա այդ հատվածը. «Իսկ ի վերանալ թուականութեան Հայոց ԾՂԸ սպանեալ եղեւ տէրն Անտիոքու բրինձն և անզլուի եղբայր Պաղտոյնին՝ ըստ ամբարտաւանութեան իւրեանց ...» (Մատթեոս Ռտեայեցի, էջ 395)։ Այս հատվածը է. Դյուլորիեն թարգմանել է. «En l'année 598 (12 février 1149—11 février 1150) pèrit le Prince d'Antioch, frère délaissé de Baudouin»։ Սակայն ժամանակության մեջ (RHC, hist. arm. t. I, p. 329) թարգմանիչը իրավացիորեն նշել է, որ այս հատվածը թյուրիմացության արդյունք է, քանի որ Թայմոնդ Պուատիեն Պաղտոյնի Մարաշցոյու եղբայրը չէր կարող լինել։ Թարգմանական այս նույն սխալը կրկնել է նաև երկի աշխարհաբար թարգմանության հեղինակ՝ Հ. Թարթիկանը. «Հայոց 598 թվականի (12 փետրվար 1149—11 փետրվար 1150) սկզբում սպանվեց պրինցը՝ Անտիոքի տերը, Պաղտոյնի անինքը եղբայր՝ իր ամբարտավանության երեսից ...» (Մատթեոս Ռտեայեցի, Երևան, 1973, էջ 267)։ Մեր կարծիքով, Գրիգոր Երեցը նկատի ունի Ինարի ճակատամարտը և նրա ժամանակ Թայմոնդ Պուատիեի և Պաղտոյնի Մարաշցոյու եղբայր՝ Ծընաղտի մահը։ Եթե գրաբար բնագրում սանգուիսաւից հետո բութի նըշշան զննենք և հասկանանք «անգլուի» (Եղն)՝ եղբայր Պաղտոյնին, բնագիրը ինչ որ շափով հասկանալի կդանեաւ։ ոՀայոց ԾՂԸ թվականի վերջին սպանվեց Անտիոքի իշխանը և զիխատվեց Պաղտինի եղբայրը։ Այս թարգմանությունը ավելի հավանական է, եթե հիշենք նաև, որ Թայմոնդ Պուատիեի գլուխը ուղարկվել է Բաղդադի խալիֆին (M. S., t. III, p. 289)։ Այս նույն գեպքերի մասին խոսում է նաև Գրիգոր Մարաշցին։ Սակայն նրա մոտ ևս պարզ չէ, թե ով ում է պարտության մատնել. «Արդ ի ԾՂԸ թվականիս, յորում մատնեցաւ քրիստոնեութիւնս ի ձևու թուրբաց, և Զանգէ որդին (իմա նուր ադ-Դին), որ էր ի Հալալցուան, զԱնտիոքոյ տէրն և Մարաշոյ» (Գ. Յովսեփեան, Հիշատակաբանք, հ. Ա, էջ 359, Ցուցակ ձեռագրաց վենետիկի Մատենագարանի, հ. Բ, էջ 1013)։ Թերված հատվածում ևս կաշարահյուսական անհամաձայնություն, այնուամենայնիվ ակնհայտ է, որ խոսքը կրկին վերաբերում է Անտիոքի և Մարաշի իշխանների կորսուանը։

սովորան Մասուղը, իսկ հյուսիս-արևելքից իշխանության սահմանները ներխուժեց Խարբերդի տեր Արտօքյան Ղարա Արսլանը³⁶⁶,

Եփրատյան մարզում կատարված փոփոխությունների մասին հետաքրքիր տեղեկություններ են Հաղորդում Գրիգոր Երեցը, Յեսուանց վաճքի վանական Գրիգոր Մարաշացին և Ներսես Շնորհալին։ Գրիգոր Երեցը նշում է. «...ի սոյն ամի, յորում ոչ ոք փայլէր գլուխ քրիստոնէից, բայց միայն կոմսն ծոսին»³⁶⁷, որն իր աթոռանիստը տեղափոխել էր Թլպաշար³⁶⁸. Ահա նրա իշխանության վրա էլ հարձակվում է Իկոնիայի սովորան Մասուղը 1149 թ. «ի տօն սրբոյ խաչին»³⁶⁹ (սեպտեմբեր): Իկոնիայի սովորանը «ոչ յերկարեալ ի վերայ քաղաքին Մարաշայ՝ էատ զնա, քանզի ոչ գոյին զօրք ի բերդին»³⁷⁰: Ապա Գրիգոր Երեցը և Գրիգոր Մարաշացին հիշատակում են Թլպաշարի ավարառումը Մասուղի կողմից: Գրիգոր Մարաշացին թվարկում է նաև մի շարք տուժած բնակավայրեր. «Ապա զինի այսորիկ զնաց ի Թլպաշարն և նոյնպես

366 Cf. Cahen, La Syrie du Nord, p. 385.

367 Մատքես Ռոմայեցի, էջ 395:

368 Նույն տեղում, էջ 396, Դ. Ավիշան, Շնորհալի և պարագայ իր, 42 220:

369 Մատքես Ռոմայեցի, էջ 396:

370 Նույն տեղում: Այս մասին Գրիգոր Մարաշացին գրում է. «Եւ ապա իմաստուն, որ էր Մելիք Իկոնիայ, շարժեցաւ յոլով բազմութեամբ և եկել ի Մարաշ և պաշարեաց. իսկ զերկիրս այրեաց, բայց զեռչ չէր ի կատարածիս: Եւ յետ այսորիկ զայլ ազգաց պաշարմուն և զաւերն և զկոտորածն աշխարհիս, զոր յառաջն յիշեցի՝ ոչ էր այն տեղի յիշատակարանի, այլ ժամուն տագնապն: Որ ի Մագք էին՝ զայն մխով խնդեցին, և զորս խարելով այրին՝ զայն սրով կոտորեցինք: Հետաքրքիր է Գրիգոր Մարաշացու տեղեկությունը, որի համաձայն Մասուղը շի կարողացել պրավել Մարաշի մոտ գտնվող Յեսուանց վանքը. ոնւ յորժամ զՄարաշ առին, խաղաղացաւ երկիրս. իսկ մերք, որ էաք ի Յեսուանց (անապատի), մնացաք ոզորմութեամբն Աստուծոյ, զի թէպէտն ամենայն աւուր գալին առ մեզ, սակայն ոչինչ կարացին գամայդիտ լինել՝ վասն ամբութեան տեղոյն, բայց ոչ էր այսպէս, այլ Աստուծոյ ներել մեզ. իսկ տեղիս հոտեցաւ բարգելմանէն, և գարեցաք իսկ զբաղարին հոտն, և զանանոցն, որ մեռան ի ծարաւու՝ զայն ասել չէ Ընար» (Գ. Յովանիիան, Ցիշատակարանը, էջ 359):

խարելով առին դբազում տեղիս՝ զորս մի ըստ միոցէ ասել՝ երկայն լինի ճառաբանիս ՌՊ (1800) մարդ ի ջաղխին սպանին, ՄԾ (250) Աճարն, Յ (300) յԱւելն, լԲ (38) ի ևումանուին, թ (9) ի Դեղնոյ տանն կրակ ձգեցին՝ տեղեցիքն, իսկ նոքայ ւկսան անցուցանել, և այնու բերեն զշալին՝ կրակով այրեցին լԲ (39) տեղի ընդ մեծ և ընդ փոքր, գերեցին զգաւարք զայս և զայն զշէն և զվաստակ իւրոյ ճարակ ետուն զամենայն»³⁷¹:

Այս դեպքերը երկու հեղինակներն էլ թվագրում են Հայոց ԵՂԸ (=1149—1150) թվականով, սակայն Գրիգոր Երեցը սուրբ Խաչի տոնով (1149 թ. սեպտեմբեր) է թվագրում Մարաշի գրավումը, իսկ Գրիգոր Մարաշացին հայտնում է, թե ինքը գրել է իր Հիշատակարանը, երբ Մասուղը վերադարձել է («զնաց ի ձմերոց և յետո»)³⁷². ուրդ գրեցաւ ի նոյն ամիս՝ ի Մարգաց իԸ (28) ի Յունուար Ե (5): Ուրեմն Էկոնիայի սուլթան Մասուղը գրավել և ավարառել է Թլպաշարը 1149 թ. աշնանը, իսկ իր տերության սահմաններն է վերադարձել 1150 թ. Հունվար ամսի սկզբին և իր Հետ տարել է բազմաթիվ գերիներ: Զնայած Գրիգոր Մարաշացին սկզբում գրում է թե. «Պհամար գերութեան ոչ կարացաք ստուգելո, սակայն թիշ Հետո անդրադառնալով այդ հարցին գրում է. «յետոյ լսեցի թէ աւելի քան ԽԸ (40000) համար գերութեանն, բայց դեռ դառնութեան պատերազմունքս առաջի կայ»³⁷³:

1150 թ. (փետրվար 12—մարտի 13) Էկոնիայի սուլթանությունը նոր ուղմարշավ է կազմակերպում, որն արձա-

371 Այս մասին Գրիգոր Երեցը գրում է. «և ասպատակ արարեալ գերեբն, որ կոչի Թիշ Աւատևաց, որ այժմ ասի Թլպաշար, և յամենայն սահմանս նորա սրոյ ճարակ արարեալ՝ զորս եզիտ յաշխարհին. և բազում այն էր, որ խարէութեամբ երդնուին յանուն մեծին Աստուծոյ և իշուցանէին յամերոցացն զբիստոննայսն՝ և գերի վարչեավ գամենեսնան. որ և տէր երկրին՝ ճօսլինն հանդիպեցաւ ի բաղաքին Թլպաշարայ, ոչ կարացեալ զդէմ ունիլ նորա, դարձոյց անդքէն յերկիր (զերնսս) իւր տանելով զառեալ գերեալոն յաշխարհն իւր, (Մարեսու Ութիայեցի, էջ 396):

372 Գ. Յովսեփիեան, Յիշատակարանը, էջ 359:

373 Գ. Յովսեփիեան, Յիշատակարանը, էջ 330:

նագրել են Գրիգոր Մարաշացին և Գրիգոր Երեցը: Գրիգոր Մարաշացին գրում է. «Իսկ ի մուտ նաւասարդիս (1150 թ. փետրվարի 12—մարտի 13) ժողով արար Խլիճ Ասլան, նորին որդին թուղքմանն ժողով արար զոր կարաց և գնաց յԱնտար, և անպատճաստ գտաւ զերկիրն և անաւգնական՝ առ և երեր ի Մարաշ անասուն բազում, մարդ ՌԾ (1500) և դտղայքն զորս ի վեց քարտէզ ծախէին և ապա Բ դահեկան, և զայլն տարան»³⁷⁴:

Ի տարբերություն Գրիգոր Մարաշացու, Գրիգոր Երեցը այս ուազմարշավի հրամանատար է Համարում Մասուդին: Բայտ նրա, Խկոնիայի սուլթանին է Հանձնվել Քեսունը (որի բնակիչները երդում են վերցրել նրանից և նրա որդուց՝ Ղլիճ Արսլանից), Պեհեսնին և Ռապանը: Սակայն ըստ Գրիգոր Երեցի անառիկ է զտնվել Թլպաշարը, «Քանզի որդի կոմսին ի քաղաքին էր՝ պինդ ունելով զօրս հօր իւրոյ»³⁷⁵, Այս այս արշավանքից հետո է, որ Մասուդը «զառեալ երկիրս ի քրիստոնէից ետ որդուց իւրոյ, որ էր աթոռակալ սուլթանութեան իւրոյ, և անուն նորա Խլիճ-Ասլան»³⁷⁶: Այս արյունուտ անցքերն նկատի ունի պատմիշը երբ գրում է. «Իսկ ի Ո թուականիս Հայոց եկն յերկիրն Զահանայ ձիւն կարմիր, յամսեանն նաւասարդի, որ օր քսան երեք էր ամսոյն. ի նմին աւուր յորժամ անդ կարմիր ձիւն երեկ, յերկիրս քրիստոնէից երեկ ձիւն սպիտակ և մոխրախառն որպես յանցեալ ամին»³⁷⁷: Ակնհայտ է պատմիշի միտումը. պատմական իրադարձությունը նախախնամության հետ կապելու փորձը:

Մինչև սելևկյան 1461 թ. (1149/50) մի շարք կարևոր փափոխություններ են կատարվում Եփրատի արևմտյան տարածքների քաղաքական քարտեզի վրա: Եղեսիայի խաչակրաց պետությունը դադարում է գոյություն ունենալուց: Նրա տարածքները միմյանց միջև են բաժանում Խկոնիայի սուլթան

374 Գ. Յովսեփեան, Ցիշատակարանը, էջ 360:

375 Մատթէոս Շտենայեցի, էջ 398:

376 Մատթէոս Շտենայեցի, էջ 398—399:

377 Մատթէոս Շտենայեցի, էջ 399:

Մասուղը, Հալեպի աթաքեկ Նուր աղ-Դինը, Խարբերդի տեր Ղարա Արսլանը և Ամիդի (^(*)) տեր Թիմուրթաշը^{378:}

Վերսրերյալ շարադրանքից երևում է, որ 1144 թ. Եղեսիայի գրավումով սկսվեց Եղեսիայի կոմսության աստիճանական քայլայումը, իսկ 1150/1 թ. լատինական այս պետությունը գաղարեց գոյություն ունենալուց։ Քաղաքական նման փոփոխության հետևանքով Կիլիկիան և Հյուսիսից, և արևելքից ընկավ մահմեդական պետությունների շրջապատման մեջ։

1148—1151 թթ. ընթացքում Կիլիկիայում կրկին վերածնվեց Ռուբինյան հայկական իշխանությունը վերականգնեցու գաղափարը։ Այս անգամ արդեն իրոք հող էր նախապատրաստվել կեռնի որդիների Կիլիկիա վերադառնալու համար։ Ռուբինյան իշխանության վերականգնման գործին լծվեց Թորոս Բ-ը և մեծ հաջողությամբ իրականացրեց այն։

³⁷⁸ M. S., t. III, p. 297։ Այս շրջանի դեպքերի մասին հետաքրքիր վկայություններ ունի նաև Գրիգոր Երեցը։ Սակայն և Միքայել Ասորու, և Գրիգոր Երեցի ու այդ ժամանակաշրջանի մյուս հեղինակների երկերը կազմիք ունեն մանրակրկիտ քննության, որը նեկա աշխատության հետապնդած նպատակներից գուրս է։

Գ Լ Ա Խ Ե Ե Ր Կ Բ Ո Բ Դ

ԱՌՈՒԹԻՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ԹՅՈՒՉԱՆԴԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԸ

1. ԹՈՐՈՍ Բ-Ը ԵՎ ԱՌՈՒԹԻՆՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԴԱԿՈՒՄԸ ԿԻԼԻԿԻԱՑՈՒՄ

ԺԲ դարի 40-ական թվականներին Ռուբինյան իշխանության վերահաստատումը Կիլիկիայում այդ ժամանակաշրջանի հայ ժողովրդի պատմության ուշագրավ դրվագներից մեկն է, որի ուսումնասիրությունը արժանի է մասնավոր քննության։ Այն նոր պատմափուլ է բաց անում Կիլիկիայում Ռուբինյան հայկական իշխանության պատմության ուսումնասիրության բնագավառում և կապվում է Թորոս Բ իշխանի քաղաքական գործունեության հետ։

Հոգհաննես Բ Կոմնենոսի (1118—1143) Կիլիկիա-Հյուսասորիքյան առաջին ռազմարշավից (1136—1138) հետո Կիլիկիայում Ռուբինյան հայկական իշխանությունը դադարեց գոյություն ունենալուց¹։ Բյուզանդական կայսրը գերե-

1 Այս ռազմարշավի ընթացքում Ռուբինյան հայկական իշխանության նկատմամբ Բյուզանդիայի վարած քաղաքականության մասին տե՛ս F. Chalandon, Les Cominènes, t. II, p. 110—118; R. Grousset, Histoire des Croisades et du royaume Franc de Jérusalem, v. II, Paris, 1935, p. 86—88; Cl. Cahen, La Syrie du Nord, p. 357—363; St. Runciman, A History of the Crusades, v. 2, p. 211—214, The Cilician Kingdom of Armenia/Edited by T. S. R. Boase, Edinburgh—London, 1978, p. 11—12; Փ. Ա. Սպենչիան. Իշխանության պատմության մասին տեսական գործունեության մասին պատմություններ, Երևան, 1988, 10—11 էջ։

վարեց Առն Ա-ին (1129—1137) և նրա երկու որդիներին՝ Ռուբենին ու Թորոսին։ Մյուս երկու զավակները՝ Ստեփանեն և Մլեհը փրկվեցին գերությունից, որովհետև գտնվում էին իրենց ազգական, Եղեսիայի կոմս Զոսլին Բ-ի (1131—1151) խնամակալության ներքո²։ Այս իրադարձությունից հետո Ռուբենյան իշխանության տիրապետությունը Կիլիկիայում ժամանակավորապես ընդհատվեց։ Որպեսզի մեր պատկերացումները Կիլիկիայի պատմության այս ժամանակահատվածի մասին ավելի ամբողջական լինեն, պետք է ավելաց-

չեան, Պատմութիւն Հայոց, Հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 58—61, Պ. Ալիշան, Սրբուան, էջ 51, Մ. Մրմանեան, Ազգապատում, Հտ. Ա, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 1363—1365։

² Մլեհը և Ստեփանեի Եղեսիայում հայտնվելու երկու հնարավոր վարկած կարելի է առաջարկել.

ա) Հնարավոր է, որ այս երկու իշխանազումները Եղեսիայում ապաստան էին գտել փախչելով բյուզանդական գերությունից։ Մինչև այժմ այսպես հետաձեռնության մեջ այս ինդրիքն անդրադարձ գրեթե բոլոր պատմաները,

բ) Երկրորդ հնարավոր վարկածը առաջադրելու համար հիմք ենք ընդունում Սմբատ Սպարապետի մի վկայությունը, որը ԺԴ զարի պատմից խոսելով 1136 թ. Կիլիկիայի իշխանության և Անտիոքի դքսության բախմանը հաշորդած տնօքերի մասին, որում է. «Եւ Պհմունդն (իմանալի Պուատիե—Ա. Բ.) յետ Բ ամսոյ առ զորդիսն Լեռնի պանդահան և Կիր (60000) դահնեկան զին, զՄսիս, զԱտանա, զՍարվանդի քարն, և արձակեաց զԼեռնի տուն իւրա Սմբատ, 1956, էջ 160, Հմմտ. նաև Սմբատ, 1859, էջ 93։» Վերը նշվածից հայտնի է դառնում, որ Ռայմոնդ Պուատիեն (1136—1149) Առն Ա Ռուբենյանին պարտության մատնելուց և գերեվարելուց հետո, երբ Եղիլիկիայում է հայտնվում այս երկու (Անտիոքի և Եղիլիկիայի) իշխանությունների համար հավասարաշափ վտանգավոր Հովհաննեսը և Կոմինոսը (Անանուն Եղեսացի, ժամանակագրություն, էջ 80) ազատ է արձակում Ռուբենյան իշխանին և փոխարենը պատանդ է վերցնում նրա որդիներին։ Մեր կարծիքով Հիշատակված պատանդները չեին կարող լինել Առնի ավագ որդիներ Ռուբենը և Թորոսը, որոնք 1137 թ. իրենց ձնողների և քույրերի հետ գերեվարվեցին Կոստանդնուպոլիսին, այլ կրտսերները՝ Ստեփանեն և Մլեհը։ Պետք է ենթադրել, որ Առն Ա-ի գերեվարությունից հետո, երբ պատմական թատերախմբից դուրս էր եկել Եղիլիկիայի Ռուբենյան իշխանությունը, նրանց իր խնամակալության տակ էր վերցրել Եղեսիայի լատինական իշխանության կոմս Զոսլին Բ-ը։

նել նաև, որ սխալ է գիտության մեջ քաղաքացիությունը ըստացած այն կարծիքը, թե ողջ Կիլիկիան 1137 թվականից հետո ամբողջովին մտել է Բյուզանդական կայսրության սահմանների մեջ³: Հովհաննես Բ Կոմնենոսի Կիլիկյան առաջին ռազմարշավի նկարագրությունից հետո, սելլակյան 1450 (մ.թ. 1138/9) թվականի դեպքերի շարադրանքում Միքայել Ասորին գրում է. «Մելիք Մուհամեդը միավորեց իր զորքերը և մտավ Կիլիկիայի շրջանը: Նա խլեց հույններից երկու ամրոց՝ մեկը Վահկան էր, մյուսը՝ Կապնաբերդը»⁴: ԺԴ դարի հեղինակ Սմբատ Սպարապետի Տարեգրության և Համառոտ,

Յ ժամանակագրական առումով այս կարծիքի ամենավերջին կողմնակիցը Բուազն է (տե՛ս T. S. R. Poase, *The History of the Kingdom.—In: The Cilician Kingdom of Armenia*, p. 12): Հայագիտության մեջ միայն Դ. Ալիշանն է, որ գիտէ բյուզանդական ռազմարշավից (1136—1138): Հետո գանիշմանյան թյուրքերի կողմից կեռնային Կիլիկիա կատարած ներխուժման և այն նվաճելու մասին (տե՛ս Դ. Ալիշան, Սիսուան, էջ 52): Խեղրո առարկա իրադարձությունը վրիսել է Կիլիկիայի Հայկական իշխանության պատմության այս ժամանակաշրջանին անդրադարձած գրեթե բոլոր ուսումնասիրողների ուշադրությունից, միայն արեգելքի խաչակրաց իշխանությունների պատմության մասնագետ Ստ. Ռունցիման է արձանագրել այն (տե՛ս St. Runciman, *A history of the Crusades*, t. II, p. 219).

4 M. S., t. III, p. 248: Միքայել Ասորու երկի հայերեն թարգմանության մեջ հասած երկու խմբագրություններն էլ ունին չեն հաջորդում այս իրադարձության մասին: Ոչ մի կասկած չի հարուցում այն փաստը, որ այդ ամրոցները Դանիշմանյան ամիրան խլել է կայսրությունից: Խշգած երկու ամրոցների 1137 թ. բյուզանդական նվաճման փաստը հիշատակում է նաև Հովհաննես կիննամոսը, «ո» Ետք ու ու Կառնուքերւ գրօնիւրա ու պատշտանության մեջ այս կառավարական սխալ է Կառնուքերւ գրությունը: Այդ ժամանակ պետք է հիմք ընդունել Միքայել Ասորու այդ տեղանվան գրությունը (Gabinoupert), որը մոտենում է ամրոցի անվան Հայկական արտասանությանը: Հնարավոր է, Հովհաննես Կիննամոսի մոտ Հանդիպող այդ անվանումը սբրագրել Կառնուքերւ (հմմտ. նաև M. S., t. III, p. 248, n. 5, t. IV, p. 622), որը կարելի է դիտել տեղանվան արտասանման տարրերակներից մեկը:

և ընդարձակ տարրերակներում մեզ հետաքրքրող դեպքերի մասին կարգում ենք. «Ի թուին ՇԶՀ (1138/9) եկն ԱՀմէտ Մելքն և էառ զկեւոնի տեղիքն ի Հոռոմէն զվահկայն, զկապանն, և զայլսն»⁵: Միքայել Ասորու և Սմբատ Սպարապետի հաղորդած տեղեկություններից հայտնի է դառնում, որ Հովհաննես թ Կոմնենոսի իշխանության տարիներին Կիլիկիայի նվաճումը Բյուզանդիայի կողմից վերջնական չէր: Հետաքրքիրն այն է, որ Մուհամեդ Դանիշմանյանը գրավում է Ռուբինյան հայկական իշխանության կորիզը հանդիսացող տարածքները՝ լեռնային Կիլիկիայի ամրոցներով հարուստ միհատվածը⁶ և դրանով իսկ հարցականի տակ դնում Կիլիկիա-

5 Սմբատ, 1856, էջ 161: Այստեղ հանդիպող ոզայլսն-ի փոխարեն Սմբատի համառոտ խմբագրությունը ավելացնում է նաև ոզկարմիր լեռնա- (Հմմտ. Սմբատ, 1856, էջ 81, Սմբատ, 1859, էջ 94): Այս վկայությունը քննելիս պետք է նկատի ունենալ, որ Սմբատի մոտ հիշատակվող ունմէտ Մելքնն, նույն Դանիշմանյան ամիրա Մուհամեդն է: Այդ հաստատող ամենադիպուկ վկայությունը վերոբերյալ բնագրում «Մելքն» պատվանունն է, որը Դանիշմանյան ամիրաները ստացել էին Բաղդադի խալիֆից և Խորասանի սուլթանից, քրիստոնյաների դեմ ձեռնարկած Հաղթական ուղղմարշավների համար, Ղազի ամիրայի իշխանության տարիներին (տե՛ս M. S., տ. III, թ. 237): Ժի՞ դարի հայկական սկզբնադրյուրներում Մուհամեդ Դանիշմանյանը երբեմն անվանվում է «Մահմետ» (Հմմտ. Մատրես Ռուբինյի, 1898, էջ 368), կամ, «Մահմետ» (նույն տեղում, էջ 369, 370, 371): Թվում է, որ Սմբատ Սպարապետի Տարեգրությունից քաղված վերոբերյալ հատվածում, գրշագրական վրիպման հետանքով, ընկել է Դանիշմանյան ամիրայի անվան առաջին՝ Մ սկզբնատառը:

Սմբատի մեզ հետաքրքրող վկայությունը գիտական շրջանառության մեջ է դրել Պ. Ալիշանը (Սիսուան, էջ 52, ծան. 3), սակայն շիյտեանինու անվանի հայագետը համառոտ Սմբատից վերցրած տեղեկությունը վերագրում է Հեթում պատմիչն: Սմբատ Սպարապետի վկայությունը օդագրործել է նաև Մ. Հ. Յեղանիբերյանը (Տե՛ս Մ. Հ. Յեղանիբերյան, Միջնադարյան Կոսիտառան և Ռուբինյանները, ՊԲՀ, 1981, № 4, էջ 193):

6 Աւշագրավ է Դանիշմանյան ամիրաների գրաված տարածքների, հատկապես Վահկայի գրավման մասին վկայությունը: Պետք է նկատել, որ նշված տարածքը Ռուբինյան իշխանների սկզբնական ավատի կորիզն էր կազմում: Հովհաննես թ Կոմնենոսի Կիլիկիա-Հյուսիսառորիքյան առաջին սազմարշավի ժամանակ դրանց գրավումը մեծ դժվարությունների առաջ էր կանգնեցրել բյուզանդական Պորքերին (I. C., թ. 20; N. Ch., թ. 22-25; F. Chalandon, Les Comnènes, տ. II, թ. 116—117):

յում բյուզանդական նվաճումների գոյությունը։ Սակայն Դամիշմանյան ամիրությունը չկարողացավ օգտագործել իր նոր գրավումների ստրատեգիական դիրքը։ Մելիք Մուհամեդի՝ կյանքի վերջին տարիներին Դանիշմանյան ամիրությունը եռատվել էր։ Մուհամեդի եղբայր Յակուբ Արսլանը իշխում էր Սեբաստիայում⁷, իսկ որդին՝ Յոնոսը (Յասոս), Մասարայում⁸: Ամիրության իշխող շրջանների ներդասակարգային հակամարտությունը պատճառ հանդիսացավ, որ պետությունը մասնատող ուժերը գլուխ բարձրացնեն Մելիք Մուհամեդի մահվանից (1142 թ. դեկտեմբերի 6) հետո։ Նրա որդի Դհուկ Նոմը⁹, որը ժառանգել էր իշխանությունը, հալածվեց Յակուբ Արսլանի կողմից և փախավ Մամնդավ (բնագրում՝ Սիմանդա), Կեսարիան և Մելիտենն թողնելով Յակուբ Արսլանին¹⁰։ Մելիք Մուհամեդի տիրույթների բաժանման խնդրում իր ավանդն է մուծում նաև նրա եղբայր Դոլահը։ Դաշնակցելով Յակուբ Արսլանի հետ, նա Դանոմից խլում է Զահանի շրջանը՝ Ապլիստան կենտրոնով¹¹։ Մինչև այս իրադարձությունը գեպքերին հեռվից հետեւող հկոնիայի սովորականությունը պատճառարանելով այս վերջին գրավման անօրինականությունը հարձակվում է Յակուբ Արսլանի տիրույթների վրա, ապա՝ ծնկի բերում Դոլահին¹²։ Այս իրադարձություններից հետո, Լեռնային ելիլիկայի այն հատվածը (Վահկա և Կապան բերդերի շրջանը), որը գրավել էր Մելիք Մուհամեդը բյուզանդացիներից (չնայած աղբյուրները լուս են այդ մասին)՝ պետք է անցներ հկոնիայի սովորականության տնօրինության տակ, քանի որ Զահանի շրջանը ԺԲ դարի պատմիչների հաղորդումների համաձայն 1143—1144 թթ. պատկանում էր

7 M. S., t. III, p. 253:

8 Նույն տեղում, 253, տե՛ս նաև, էջ 223, ծան. 16:

9 Դէռլ Նույնը Միքայել Ասորու հայերեն թարգմանության մեջ կոչվում է Տանու (տե՛ս Մ. Ա., էջ 439, 448 և այլն):

10 M. S., t. III, p. 253:

11 Նույն տեղում, էջ 254; Այս տարածքը Դանիշմանյան ամիրությունը գրավել էր 1118/9 թ. (տե՛ս նույն տեղում, էջ 205):

12 Նույն տեղում, էջ 254:

Իկոնիայի սուլթանությանը¹³, իսկ այդ տարածքը անջրպետում էր Լեռնային Կիլիկիան Ցակուր Արսլանի և Դոլահի տարածքներից: 1145—1150 թթ. Իկոնիայի սուլթանությունը տարածքներ գրավեց նաև Կիլիկիայի արևելյան սահմաններում՝ Գերմանիկե-Մարաշի շրջանում: Այս նվաճումների շընորհիվ, Իկոնիայի սուլթանությունը և Լիկանդոնի Դանիշմանյան ամիրությունը (Դանունի գլխավորությամբ) հյուսիսից և Հարավից արցանի մեջ առան Կիլիկիայի ողջ տարածքը:

Բացի Դանիշմանյան ամիրությունից և Իկոնիայի սուլթանությունից, Կիլիկիայի տարածքների նկատմամբ հնուց ի վեր Հավակնություններ ուներ Անտիոքի լատինական իշխանությունը, որն ի դեպ Հովհաննես թ Կոմնենոսի Կիլիկիահյուսիսասորիքյան առաջին ուղղմարշավից հետո փորձեց նվաճումներ կատարել Դաշտային Կիլիկիայում: Մեզ համար պարզ է, որ այս տարածքներում Անտիոքի իշխանի հայտնվելու գործում իրենց «մեղքն» ունեն դանիշմանյանների նվաճումները Կիլիկիայի լեռնային հատվածում, ուր հետզհետե թուլանում էր բյուզանդական վերահսկողությունը նաև երկրամասի դաշտային շրջանների նկատմամբ: Սակայն հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ կայսրությունը իր ուժերը առաջին հերթին մորիլիզացնում է Անտիոքի իշխանությանը հակահարված տալու և ոչ թե Դանիշմանյան ամի-

¹³ Տե՛ս նաև F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 244; 1148—1149 թթ. դեպքերի մասին խոսելիս Միքայել Ասորին արձանագրում է, որ Մասուդի որդի Ղլիճ Արսլանը, «տէրն էր Արլաստանի և շրջանի» M. S., t. III, p. 290, հմտ. նաև p. 258): Ո՞ւ (1155/6) տարվա դեպքերի շարդրանքում Գրիգոր Երեցը գրում է. «...Աղուա-Ասլանն, եկն գաղտագողի յիրկիրն Զահանայ և մայրագաղաքն Ապլասթայ ... մոռացեալ ըզզութ հայրենի տիրութեան սուլտանին ...» (Մատքես, էջ 408—409): Միքայել Ասորու Աի այլ վկայությունից (M. S., t. III, p. 253) հայտնի է դառնում նաև, որ Դհուլ Նունը, Մուհամեդ Դանիշմանյանի ժառանգը անցնելով Իկոնիայի սուլթանության հոգանավորության տակ, իշխում էր Լիկանդոնի երկրում, և հրաժարվել էր Զահանի շրջանի նկատմամբ Դանիշմանների ունեցած հավակնություններից:

բությանը Կիլիկիայից վտարելու համար¹⁴: Քաղաքական այս գիծը ակնհայտորեն երևում է Հովհաննես թ-ի Կիլիկիա-Հյունականության երկրորդ ռազմարշավի ընթացքում: Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության հեռահարժրագրի մասին պատկերացումները ամրողացնում են Հովհաննես Կիննամուը և Նիկետաս Խոնիատեսը: Նրանք իրենց երկերում մեջրերում են Հովհաննես թ Կոմնենոսի ճառը՝ արտասանված մահվանից (1143 թ. ապրիլի 8) մի քանի օր առաջ¹⁵: Ապա բյուզանդական պատմիչները շեշտում են, որ Մանուկ Ա Կոմնենոսը (1143—1180) հոր մահից հետո 30 օր շարունակում է մենալ Կիլիկիայում: Այդ երկրամասի ու Անտիոքի իշխանության հետ գործերը կարգի բերելուց հետո վերադառնում է Կոստանդնուպոլիս¹⁶:

Բյուզանդական կայսրությունը 1142—43 թթ. Կիլիկյան ռազմարշավի ընթացքում բախման մեջ չի մտում Դանիշ-մանյան ամիրայության հետ, որը 1139 թ. գրավել էր Լեռնային Կիլիկիան: Նման քաղաքական ընթացքը կարելի է բացատրել հետեւյալ ենթադրելի պատճառներով.

14 Բյուզանդական կայսրությունը 1139—1141 թթ. պատերազմում էր Մուհամեդ Դանիշմանյանի բանակի դեմ, սակայն ոչ թե Կիլիկիայում, այլ Ակ ծովի ափին, ուր մահմետական ամիրը փորձում էր ծովափ գուրս գալ Կաստամոն ամրոցի շրջանում (այդ պատերազմների մասին ավելի մանրամասն տե՛ս F. Chatandon, Les Comnènes, t.II, p. 177—180; M. S., t. III, p. 248—249).

15 I. C., p. 23—28; N. Ch., p. 42—46: Այս ճառի երկու մատուցումների համեմատությունը և դրանց մասին եղակացությունը տե՛ս A. P. Կաշեն, Եղեր թագավորությունը և առաջարկը (1963, p. 22—23).

16 Հովհաննես Կիննամուը մեզ հետաքրքրող միտքը հաղորդելու համար օգտագործում է հետեւյալ արտահայտությունը. «Կիլիկիայի գործերն էլ ապահով զարձեց» (չու ու Կիլիկյան որդիկանական պատճենությունը տե՛ս I. C., p. 29, իսկ Նիկետաս Խոնիատեսը. «Անտիոքի (գործերն) էլ, չնայած կարճ ժամանակին, կարգի բերելով» (ու ու Կատ' Անտιօχեան, ու ու շատ էնձինս, կատաշեամենոս տե՛ս N. Ch., p. 50₅₃).

ա) Բյուզանդական կայսրությունը չէր կարող և չէր ցանկանում երկրի կենտրոնական շրջաններից բավական հեռու Կիլիկիայում, միաժամանակ պատերազմել երկու ճակատով՝ Դանիշմանյան ամիրության և Անտիոքի լատին դքսության դեմ:

բ) Բյուզանդական կայսրությունը դիտողի դիրք էր գրավել Մուհամեդ Դանիշմանյանի մահվանից հետո Խոնխայի սովորականության տարածքում սկսված ներքաղաքական պատերազմների նկատմամբ և շգիտեր ո՞ր կողմում հանգեստալ (Մասուդի, Յակուբ Արսլանի, Դոլաշի, թե՞ Դուլ Նունի), քանի որ նա հետևելով այդ պայքարին, չէր կարողանում կողմնորոշվել թե կողմերից որը կհասնի հաղթանակի:

գ) Խնչպես արդեն վերելում նկատեցինք, Բյուզանդական կայսրության ողջ ժք դարի փոքրասիական քաղաքականությանը առանձնահատուկ էր ուրույն մի գիծ, որի մեջ և կարող ենք տեսնել մեզ հետաքրքրող հարցի պատասխանը: Կայսրությունը ժք դարի առաջին կեսին բավարարվում էր հիմնականում Միջերկրական և Սև ծովերի ափամերձ շրջանների գրավումով, չծգտնլով տեր դառնալ Փոքր Ասիայի ներքին գավառներին: Բյուզանդական քաղաքականության այս յուրահատկությունը բխում էր ուազմական ու առետրական նավագնացության նկատմամբ կայսրության քաղաքագետների հատուկ վերաբերմունքից:

Սրանք էական հանգամանքներ են ժք դարի 30—40-ական թվականների Բյուզանդիայի արտաքին քաղաքականության ուսումնասիրության տեսանկյունից: Դրանք էին հիմնականում այն պատճառները, որոնք ստիպում էին Հովհաննես Բ Կոմնենոսին և նրա որդի Մանուել Ա-ին «շտեսնելու» տալ Կիլիկիայում Դանիշմանյանների կատարած նվաճումները: Սակայն, Բյուզանդական կայսրերը անհանդուրժող էին Անտիոքի իշխանության նկատմամբ, քանի որ լատինները նպատակադրվել էին իրենց ենթարկել Կիլիկիայի ծովամերձ շրջանները, այդ իսկ պատճառով Բյուզանդական կայսրության և Անտիոքի իշխանության բախումը անխուսափելի էր դարձել: 1144 թ. Մանուել Ա Կոմնենոսը Կիլիկիա է ուղարկում՝

ցամաքային և ծովային ուժերից բաղկացած մի զորաբանակ¹⁷, որը բաղաքական և ուազմական տեսանկյունից ծանր կացության մեջ է դնում Անտիոքի իշխան Ռայմոնդ Պուատիեին (1136—1149)¹⁸. Արևելքի խաչակրաց իշխանությունների գոյության համար ճակատագրական այդ տարում, երբ Հալեպի և Մոսուլի աթաբեկ Զանգին (1128—1146) հարված հարվածի ետևից էր հասցնում արևելքի խաչակրաց իշխանություններին, Բյուզանդական կայսրության ուազմարշավը փաստորեն երկատում էր Անտիոքի իշխանության ուազմական ուժերը, որոնք զբաղված էին Հալեպի աթաբեկության հարձակումներից Անտիոքի իշխանության սահմանների պահպանումով։ Ռայմոնդ Պուատիեն գիտակցում էր, որ երկու ճակատով՝ Հալեպի աթաբեկության և Բյուզանդական կայսրության դեմ, անհնար է պատերազմել, Այդ է պատճառը, որ Անտիոքի իշխանը Զանգու կողմից Եգեսիայի առումից անմիջապես հետո քայլեր է ձեռնարկում Հալեպի աթաբեկության դեմ դաշնակցություն ստեղծելու գործում։ Դրա համար Ռայմոնդ Պուատիեն գոնե ժամանակավորապես պետք է հրաժարվեր Դաշտային Կիլիկիայի նկատմամբ Անտիոքի իշխանության հավակնություններից։ Բյուզանդական կայսրությանը Զանգիի դեմ կազմակերպվող դաշինքի մեջ ներգրավելու փորձ կարելի է համարել 1145/6 թ. Ռայմոնդ Պուատիեի այցելությունը Կոստանդնուպոլիս¹⁹։ Հատկանշական է, որ այդ այցելությունից հետո, բավականին երկար ժամանակ Անտիոքի լատին իշխանությունը չի փորձում միջամտել Կիլիկիա երկրամասի ներքին գործերին։ Այս պարագային, ինչպես վերո-

17 *I. C.*, p. 33; *N. Ch.*, p. 52; Տարօրինակ է, որ այս ուազմարշավի մասին ոչինչ լգիտեն հայկական, տառական և լատինական սկզբնաղբյուրները:

18 *F. Chalandon*, *Les Comnènes*, p. 240—241; *R. Grousset*, *Histoire des Croisades*, t. II, p. 172—174; *S. Runciman*, *A history of the Crusades*, v. 2, p. 334.

19 *M. S.*, t. III, p. 267; *I. C.*, p. 35; Այս իրադարձության մասին հայկական և լատինական սկզբնաղբյուրները տեղեկություններ չեն հապորգում։

բերյալ շարադրանքից պարզ դարձավ, պետք է ավելացնել Ղ. Ալիշանի ճիշտ հետևությունը. «Ռուբինեանց իշխանութիւնն գրեթե բոլորովին ջնջուած էր Թորոսի գերութեան ատեն. Յոյնք, Թուրքք, և Լատինք գրաւեր էին Ա. Թորոսի և իր եղբօր Լունի Նուանած երկիրները²⁰, Եթե վերոշարադրյալ կըրակացությունների համաձայն սրբագրենք Ղ. Ալիշանի միտքը, ստիպված կլինենք բազմավաստակ մխիթարյան գիտեականի բնագրից հանել «և Լատինք» արտահայտությունը, որից հետո կստանանք Թորոս Բ Ռուբինյանի կողմից Կիլիկիայում հայկական իշխանության վերականգնման նախօրեին Կիլիկիային տեր դարձած ուժերի ավելի ճշմարիտ պատկերը: Տարրեր պետությունների միջև ծավալված քաղաքական պայքարի շիկացած մթնոլորտում կրկին վերածնվեց Ռուբինյան հայկական հարստությունը վերականգնելու գաղափարը: Այդ գործին լծվեց, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքի ընթացքում, Կիլիկիայի բազմազգ բնակչության մեծագույն մասը: Այս երկրամասում Բյուզանդական կայսրության և խաչակրաց պետությունների թուլացմամբ հող էր նախապատրաստվել Լուն Ա. Ռուբինյանի որդիների Կիլիկիա վերադառնալու համար: Պետք է նշել, որ Թորոս Բ-ի կողմից Ռուբինյան իշխանության վերահաստատման պատմությունը շափականց թուղթիկ և հակասական տեղեկությունների վրա է կառուցվում պատմագրության մեջ, և կրկին Կիլիկիան հայկական իշխանության պատմության այդ դրվագի քննարկմանը դիմելով ելնում ենք ընդհանուր պատմագրության շահերից:

Եթե ի մի բերենք պատմագրության մեջ քաղաքացիություն ստացած դրութները մեզ հետաքրքրող հարցի մասին, ապա մոտավորապես կստացվի հետևյալ պատկերը.

ա) Թորոսը Հովհաննես Բ Կոմինենոսի մահվանից հետո միախել է Կոստանդնուպոլիսից (1144 կամ 1145 թ.) և 1145 թ. վերահաստատել է Կիլիկիայում հայկական Ռուբինյան իշխանությունը²¹:

20 Ղ. Ալիշան, Ծնորհալիք և պարագար իւր, Վենետիկ, 1873, էջ 287:

21 Հայտ Մ. Զամշյանի, Թորոս Բ-ը 1143 թ. նավով ծածուկ եկել է Անտիոք, այնտեղից էլ՝ Կիլիկիա, իսկ 1144 թ. վերագրավել է իր իշխանությունը:

բ) գալով Կիլիկիա, ինչ-որ ժամանակ գաղտնի է պահում իր ինքնությունը, ապա հենվելով տեղի հայկական բընակչության վրա և դաշնակցելով այդ երկրամասի հակոբիկ ասորիների և լատինների հետ²² գրավում է Ամուղան, ապա՝ Վահկան, Սիմանկլան և Առյուծերդը:

գ) հայագիտության մեջ ընդունելություն է գտել այն կարծիքը, թե Թորոս Բ-ը իր բոլոր տարածքները խլել է բյուզանդացիներից:

Պատմագրության մեջ դեռևս հստակություն չի մտցվել մեզ հետաքրքրող խնդրի հետևյալ հարցերում.

ա) քննարկման նյութ չի դարձել Թորոս Բ-ին սատարկանգնած Կիլիկիայի ներքին և արտաքին քաղաքական ուժերի

թյունը (Պատմութիւն Հայոց, էջ 63): Չ. Ալիշանը այս իրադարձություններին անդրագունակիս հետևում է Մ. Զամշյանին, գրելով, որ Թորոս Բ-ը Կիլիկիա է փախել «յետ յօթնամեայ անիշխանութեանե»՝ այն է 1144 թ. (1137+7) (Միտուան, էջ 52), թեև «Շնորհալի և պարագայ իւրա աշխատության մեջ նշում է, որ Թորոսը 9 տարի գերի է հղել, սակայն իշխանության վերականգնուած թվագրում է 1145 թ. (էջ 287, ժան. 1): Մ. Օրմանյանը գրեթե չի հեռանում վերոհիշյալ գիտնականների կարծիքց, սակայն շեշտում է, որ «1144-ին նա (Թորոս Բ—Ա. Բ.) գործի սկսած էր և 1145-ին արդէն վերականգնած էր հօր իշխանությունը» («Ազգապատում» § 943): Յ. Շալանդոնը քննելով իրեն ծանոթ աղբյուրները ընդհանուր հայտարարի չի եկել (F. Chalandon, Les Comnènes, t. II p. 418—419), իսկ Ֆ. Թուրնեների զետեւմ, սակայն ակընհայտորեն հետևում է Մ. Զամշյանին (Fr. Tournebize, Histoire politique et religieuse de l'Arménie p. 175): Ս. Պապիկյանը, որի հոգվածաշարի հիմքում զրված է թ. Գրուսեի մենագրությունը, մեզ հետաքրքրորոշ հարցում հերանից՝ թվագրելով Թորոս Ռուրինյանի վերադարձը 1143—1145 թթ. (Ս. Պապիկյան, Հայերը և Խաչակիրները, ՀԱ, 1964, էջ 71): Գ. Միքայելյանը, որի գրությունը ընդունելություն են գտել սովորական պատմագրության մեջ, իրադարձությունը թվագրում է 1145 թ. (Г. Микаелян, История Киликийского..., с. 106): Թորոս Բ Ռուրինյանի կողմից Ռուրինյան իշխանության վերականգնումը 1152 թվականով է թվագրում խաչակրաց պետությունների պատմության նորագույն ուսումնասիրություններից մեջում (A history of the Crusades/General editor Kenneth Setton, v. I. London, 1969, p. 704).

22 Լատին քնակության հետ Թորոս Բ-ի դաշնակցելու փասով մերժում է Գ. Միքայելյանը (История Киликийского..., с. 111):

Հարցը, նրանց դերը Ռուբինյան իշխանությունը վերականգնելու դործում:

բ) ո՞ր քաղաքական միավորումներից են Ժարի 40—50-ական թվականներին Ռուբինյանները վերագրավել իրենց առաջին ամրոցները:

գ) ո՞ր սկզբնաղբյուրներին պետք է տալ առաջնությունը վերոբերյալ հարցերին պատասխանելիս:

Թորոս Բ Ռուբինյանի Կիլիկիա վերադառնալու և այնտեղ հայկական իշխանությունը վերականգնելու մասին սկզբնաղբյուրների հակասական տեղեկությունները թյուրիմացությունների տեղիք են տվել պատմագրության մեջ:

Կիլիկիայում Ռուբինյան հայկական իշխանության վերականգնման իրադարձություններին անդրադարձած Միքայել Ասորին Թորոս Բ-ի իշխանության գլուխ բարձրանալը թվագրում է սելևկյան 1459 թ. (=1147/8)²³: Հատկանշական է այն փաստը, որ ժամանակագրից այդ մասին խոսում է միայն 1146 թ. Եղեսչայի երկրորդ առման առիթով, Մանուկը Ա Կոմնենոսի ու Իկոնիայի սուլթան Մասուդի 1147 թ. երկրորդ խաչակրաց արշավանքի դեմ միմյանց հետ կրնքած հաշտության պայմանագրից հետո, երկրորդ խաչակրաց արշավանքի իրադարձությունների մասին խոսելիս: Միքայել Ասորին մեզ հետաքրքրող քաղաքական անցուդարձերի ճշշմարտապատում արձանագրողներից է: Նա հայ մատենագիր Գրիգոր Երեց Քեսոնցու հետ դեպքերին և՝ ժամանակով, և ապրելատեղով մոտիկ կանգնած մատենագիր է: Այնուամենայնիվ Թորոս Բ Ռուբինյանի անունը ավելի ուշ է երևում

23 M. S., տ. III, թ. 281—282: Այս երկի հայերեն թարգմանությունը, որը կատարված է ժամանակում, մեզ հետաքրքրող իրադարձությունը նեւլիսես թվագրում է սելևկյան 1459 թվականով (տե՛ս, Միքայել, 1871, էջ 422), սակայն հայկական թվականի փոխադրելիս թարգմանիլը նույն դեպքի մասին խոսում է մի խմբագրության մեջ Ե22 (=1137/8) տարվա իրադարձությունների շարքում (տե՛ս նույն տեղում, էջ 422), մյուսում՝ 574 թվականի (=1125/6) դեպքերի կապակցությամբ (Միքայել, 1870, էջ 427): Այսուհետև Միքայել Ասորու ժամանակագրության երկու խմբագրություններն էլ կհղվեն Մ. Ա. համառոտագրությամբ, միայն կնշվի յուրաքանչյուր հրատարակության տարեթիվը:

Գրիգոր Երեցի Տարեգրության մեջ, քան Միքայել Ասորության աշխատությունում: Անցնելով Հայոց Ո (=1151/2) թվականի դեպքերի նկարագրությանը հայ ժամանակագիրը գրում է. «Եւ եղեւ յաւորս Փոքր Ճուղին երեւցաւ ոմն պատանի, Թէոդորոս անուն»²⁴: ԺԲ դարի բյուզանդական պատմիչ Հովհաննես Կիննամոսը ևս խոսելով Թորոս թիվ մասին 1151—1152 թթ. դեպքերի կապակցությամբ գրում է «(Թորոսը—Ա. Բ.) փախավ Բյուզանդիոնից, եկավ Կիլիկիա և ապատամբելով, համոզեց» (²⁵) Հոռմեացիներին (իմա բյուզանդացիներին—Ա. Բ.) հրաժարվել իշխանությանից, (և) նվաճեց այնտեղի քաղաքները²⁶: Երբ Ընդհանուր հայտարարի ենք բերում ԺԲ դարի պատմիչների հաղորդումները, պարզ է դառնում, որ Միքայել Ասորին է միայն Թորոսի իշխանության առաջին տարիների դեպքերը թվագրում 1147/8 թ., մյուս երկուաը՝ Ուոհայեցին և Կիննամոսը Ռուբինյան այս իշխանին հիշատակում են միայն 1151/2 թթ. իրադարձությունների կապակցությամբ²⁶:

ԺԴ դարի մատենագիրներից յուրաքանչյուրն արդեն մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ ունի սեփական տեսակետ: Սմբատ Սպարապետի «Տարեգրի» համառոտ խմբագրությունները իրադարձությունը թվագրում են Հայոց ՇԴ

24 Մատքես Ռոմայեցի, էջ 399:

25 «...Փայծ էն ԵւՀանտիւ ևու Կիլիկիան նլիւ ուն առտասաւն նեւույթաւ ունի Պարաւան շարօն ձարտէն նուշչիւր ունէւս ուն ուն» (I. C., p. 121):

26 Որ Թորոս թ Ռուբինյանը, իրոք, 1151/2 թ. Կիլիկիայում էր, հայտնի է դառնում նաև Ներսէս Շնորհալու մի ոտանավոր հիշատակարանից. պարզվում է, որ ամենայն հայոց կաթողիկոսարանը այդ թվականին կարճ ժամանակով ապաստան է գտնել Թորոս թին պատկանող ռԱյլասեռ Քարք ամրոցում (տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1540, թղ. 174ա): 2. Տեր-Ղազարյանը այս ամրոցը նույնացնում է Կոպիտառի հետ (տե՛ս Յ. Տեր-Ղազարեան, Հայկական Կիլիկիա. Տեղագրութիւն. Անթիլիաս, 1966, էջ 33): Այս առումով մեզ ավելի հավանական է թվում Պ. Անանյանի ենթադրությունը, ըստ որի վերոհիշյալ Այլասեռ Քարք նույնացվում է Տաճիկ Քար ամրոցի հետ (տե՛ս Աննեան Պ., Ս. Ներսէս Շնորհալի կաթողիկոս հայոց, Թագմագիպ, 1974, թիվ 3-4, էջ 238—239):

(= 1141/2) թվականով²⁷, իսկ ընդարձակը՝ ՇԶԴ (= 1145/6)՝ թվականով²⁸: Վարդան Արևելցին, որի Պատմության սկզբանաշրջուրը մեզ հետաքրքրող հատվածում Գրիգոր Երեցն է, Թորոս Բ Ռուբինյանի գահակալումը թվագրում է Հայոց Ո (= 1151/2) թվականով²⁹: Մեր կարծիքով հետսամուտ են նաև Սամուել Անեցու Ժամանակագրության մեջ Հանդիպող Թորոս Բ-ի Կիլիկիայում Հաստատվելու մասին խոսող բոլոր հինգ պատումները³⁰: Դրանցից առաջինը իր բովանդակությամբ հետևում է Միքայել Ասորու Հայերեն թարգմանությանը, սակայն ի հակադրություն այդ բնագրի, դեպքը թվագրված է Հայոց ՇԶԴ (1134/5) թվականով³¹: Միակ էական շեղումը³², որ

27 Միքատ Սպարապետ, 1856, էջ 81—82, Միքատ Սպարապետ, 1859, էջ 94:

28 Միքատ Սպարապետ, 1956, էջ 164:

29 Վարդան, 1871, էջ 164, Վարդան, 1862, էջ 125:

30 Սամուել Անեցու Ժամանակագրության հրատարակության համեմատական բնագրում մեզ հետաքրքրող իրադարձության մասին խոսող պատումները (տե՛ս Սամուել, 1893, էջ 130—131 և 135—136):

31 Սամուել Անեցու և Միքայել Ասորու Ժամանակագրությունների Հայերեն խմբագրությունների համեմատական բննությունը ցույց է տալիս, որ մեզ հետաքրքրող հատվածը աղերսներ ունի Մ. Ա. 1870 թ. հրատարակված խմբագրության հետ (էջ 427—428) և Միքայելի այդ հրատարակությունում Հանդիպող թվականը՝ «Հինգ Հարիւր հեթանասուն և չորս»-ի փոխարեն պետք է սրբագրել «Հինգ Հարիւր ութանասուն և չորս»: Գևայած երկու թվականներն էլ հավասարաշափ սխալ են, այնուամենայնիվ, մենք առաջնությունը տալիս ենք Սամուել Անեցու «Հաւաքմունք»-ում հանդիպող ընթերցմանը, քանի որ այնտեղ Հիշյալ ընդհշարկությունը կատարվել է ժԴ դարում, իսկ Միքայել Ասորու 1870 թ. հրատարակությունը կատարվել է 1480 թ. բնօրինակված ձեռագրից: Բացի այդ, Միքայել Ասորու այս հրատարակության մեզ հետաքրքրող հատվածում, դրանից առաջ և հետո Սելնկյան թվականով թվագրումը, որպես կանոն, առաջ է ընկնում Հայոց թվականից 21 տարով:

32 Այս հատվածում ուշագրության արժանի է նաև այն Հանգամանքը, որ Կ. Պոլսի փոխարեն Սամուել Անեցու «Հաւաքմունքի» բնագրում հանդիպում ենք «Ստամբուլայ» տեղանվան ձևին, որը մեր մատենագրության մեջ բաղադրի նմանօրինակ անվանման հնագույն վկայություններից մեկն է: Տեղանվան այդօրինակ գրությունը ժԴ—ժԴ դարերից սկսած հարազատ է գառնում նաև արարակեզու մատենագրության համար (տե՛ս

ունի Սամուել Անեցին մատնանշված սկզբնաղբյուրից (Մ.Ա., 1870) այն է, որ ժԴ դարում հավելում կատարողը Աթանաս մետրոպոլիտին ներկայացրել է որպես «Աթանաս պատրիարքն Յակոբկաց»^{33:} Սամուել Անեցու «Հաւաքմունք» ներմուծված հաջորդ երկու պատումները ևս³⁴ բնագիր են մտել ժԴ—ժԴ դարերում։ Աղրյուրագիտական համեմատությունը ապացուցում է, որ դրանք վերցված են Վահրամ Բարունու «Ուտանաւոր Պատմութիւն Ռուրինեանց» աշխատությունից³⁵, իսկ չորրորդ պատումը առանձնահատուկ է նրանով, որ իրադարձությունը թվագրված է ՇԴԿ (=1144/5) թվականով։ Քիչ անց, հինգերորդ պատումում նույն դեպքը թվագրվում է ՇԶԳ (1134/5) թվականով և նշվում է նաև, որ Թորոսը գերությունից փախել է հոր մեռնելուց երեք տարի հետո^{36:} Վերջին երկու պատումներն էլ Սամուել Անեցունը շեն կարող լինել, որովհետեւ դեպքերի արձանագրողը գիտե կոնք թ իշխանի թագավորը օծվելու իրադարձության մասին։ Հետեւաբար, Սամուելի «Հաւաքմունք»-ում Թորոս թ Ռուրինյանի իշխանության վե-

գոճ ջ օ ց. „ՆՅԱ-ՑԵՐԵԼՈՒ” Տաջլուս ցանթօհ ՑԵՐԵԼՈՍԵՐՁՈՅՆ, „ՏԱՅՆՑՐԵԼՈՎՈՅ ՏԵՐԵՆ-ՑԵՐԵՆՑ” Օ, Ա, տօ. 1973. ՑՅ. 153: Հը. Բարբիկիյան, Հ. Ղազարյան, Կոստանդնուպոլիս, ՀԱՀ, հ. 5, էջ 617, սյուն 2):

33 Մենք բնավ չեինք անդրագառնա թյուրիմացության արդունք կարձած Միքայել Ասորու ժամանակագրության այս հատվածին, եթե Ֆ. Շալանդոնին էլ նույն սիսալը կատարած Աններ (F. Chalandon, Les Comnènes, հ. II, թ. 419), Բազմավատակ բյուզանդագետը այսուղ շփոթել է ժԲ գարի երկու ժամանակակից գործիշների. Անավարզայի մետրոպոլիտ Աթանասին, որը ձեռնապրվել է հակոբիկյան պատրիարք Հովհաննես ԺԲ-ի կողմից (1130 փետրվարի 17—1137 թ. նոյեմբեր) և թեմակալել է 33 տարի, ու Աթանաս Ը Հակոբիկյան պատրիարքին (1138 թ. դեկտեմբերի 4—1166 թ. հուլիս): Այս գործիշների մասին մանրամասն տե՛ս (E. Honigmann, Le couvent de Barsauma et le patriarcat Jacobite d'Antioche de Syrie, Louvain, 1967, թ. 110; Միքայել Ասորու բնադրում, որից օգտվել է մեզ հետաքրքրող հատվածը Սամուելի բնագիրը մուծողը, խոսքը վերաբերում է Անավարզայի մետրոպոլիտ Աթանասին:

34 Հմմտ. Սամուել, էջ 131:

35 Վահրամ Բարունու «Ուտանաւոր Պատմութիւն Ռուրինեանց», Փարիզ, 1859, էջ 201—202:

36 Սամուել, էջ 135—136:

բականգնման մասին պատմող բոլոր վկայությունները հետ-
սամուտ են³⁷: ԺԴ դարի ժամանակագիր Հեթում Կոռիկոսին
(ըստ Վ. Հակոբյանի՝ Հեթում Բ թագավորը) այս իրադար-
ձությունը թվագրում է 593 (=1144/5) թվականով³⁸, իսկ
ԺԴ դարի Անանուն ժամանակագրությունը, մեզ հետաքրքրող
դեպքի մասին, խոսում է ՇԴԴ (=1145/6) տարվա իրադար-
ձություններին անդրադառնալիս³⁹: Թորոս Բ Ռուբինյանի
կողմից Կիլիկիայում հայկական իշխանության վերականգ-
նման մասին հաղորդում են նաև այլ սկզբնաղբյուրներ⁴⁰:
Թորոս Բ Ռուբինյանի իշխանության գլուխ անցնելու թվակա-
նի մասին հակասական վկայությունների վրա ուշադրություն
է դարձրել զեռմա ԺԴ դարի հեղինակ Ներսես Պալիանենցը
«Իշխանազումք և թագավառք Հայոց» (անվանումը Վ. Հակոբ-
յանինն է) աշխատության մեջ, գրելով. «Լուսն, եղբայր Թո-
րոսի, ամս ԺԵ (15): Յետ սորայ կայսրն Փէրփոժէն (իմա
Հովհաննես Բ Կոմնենոս—Ա. Բ.) էառ զԿիլիկիայ և Ահմատ
տաճիկ ամիրայ ոմն, որք և տիրեցին ամս Ա և այլք ասեն
լինել ամս ԺԱՔ⁴¹:

37 Գ. Միքայելյանին ծանօթ է միայն մեր կողմից առանձնացված
Սամուել Անեցու ժամանակագրության Բ և Գ պատումները, սակայն այն
փաստը, որ դրանք գալիս են Վահրամ Բարունու «Ռոտանավոր պատմու-
թյունից», հեղինակավոր պատմաբաննը չգիտե: Մեր ենթադրությունը հաստա-
տում է այն փաստը, որ Վահրամ Բարունու շափածո պատմության խոսքի
որոշ տարրեր ազգել են Սամուել Անեցու «Հաւաքմունք»-ում ԺԴ դարում
կամ նրանից հետո ներմուծված հատվածի ոճի վրա (հմմտ. «Ի սոյն
ամի եկն... ի սպառ վանեց» Սամուել, էջ 131 և ուստի յԱնտիոք նաւու
և եալ... զօրսն վանեալ» Վահրամ, էջ 202—203): Կարելի է մատնանշել
ևս մեկ հանգամանք: Սամուել Անեցու «Հաւաքմունք»-ում առկա հատ-
վածը Ա. Տեր-Միքայելյանը ներմուծել է ԺԲ դարի ժամանակագրի երկի
1597 թ. ընդօրինակված ձեռագրից (ՄՄ № 1486), որով կարելի է ճշտել
նշված մուծումների ժամանակագրական ամենավերջին սահմանը՝ այն է
1597 թ.:

38 Մանք ժամանակագրություններ XIII—XVIII դդ., կազմեց՝ Վ. Ա.
Հակոբյան, հ. 1, Երևան, 1951, էջ 75 (Այսուհետև՝ Մ. Ժ.):

39 Մ. Ժ., հ. 1, էջ 257:

40 Տե՛ս Սամուել, Հավելված, Գ և Դ, էջ 206, 216, հմմտ. նաև Մ. Ժ.,
հ. 2, էջ 101:

41 Մ. Ժ., հ. 2, էջ 205:

առարածքի վրա, պահելով երկրամասում ռազմական ուժերը Դրությունը չէր փոխվել նաև 1147 թ. հետո, երբ կայսրությունը պայմանագիր կնքեց Իկոնիայի սովորական Մասուդի հետ՝ քնդեմ երկրորդ խաչակրաց արշավանքի⁴⁴: Դրանով իսկ Բյուզանդական կայսրությունը հեղինակագրկվեց Մերձավոր Արևելքի խաչակրաց իշխանությունների և եվրոպական պետությունների շրջանում:

Խաչակրաց արշավանքն ավելի ակտիվացրեց քաղաքական պայքարը Հյուսիսային Ասորիքում և կարևոր խթան դարձավ այդ տարածաշրջանի քրիստոնյա ժողովուրդների քաղաքական ուժերի աշխատացման համար: Կարելի է նկատել, որ Կիլիկիայի Ռուբինյան իշխանությունը վերականգնելու համար ամենահարմար պահը երկրորդ խաչակրաց արշավանքի հետևանքով Փոքր Ասիայում և Հյուսիսային Ասորիքում ըստեղծված բարդ քաղաքական իրադրությունն էր: Եթե առաջին խաչակրաց արշավանքի⁴⁵ հիմնական կոչը Բյուզանդական կայսրությանը օգնություն ցուց տալն էր և սուրբ վայրերի ազատագրումն էր մուսուլմանական իշխողներից, ապա երկրորդ խաչակրության քաղաքական ծրագիրը որոշ փոփոխությունների էր ենթարկվել: Այն առաջ էր քաշել երկու քաղաքական ծրագրային կոչ.

ա) պայքար թյուրքերի դեմ, որոնք նվաճել էին Եղեսիան և սպառնում էին մյուս խաչակրաց պետություններին,

բ) պայքար բյուզանդացիների դեմ, որոնք դավաճանում են Մերձավոր Արևելքի քրիստոնյա բնակչության շահերին:

Երկրորդ խաչակրաց արշավանքին հատուկ այս երկու քաղաքական ծրագրային կոչերն էլ առկա են Կիլիկիայում Ռուբինյան Հայկական իշխանության վերականգնման մասին խոսող սկզբնաղբյուրներում: Միը այս կարծիքի օգտին են խոսում նաև Ժ դարի բոլոր սկզբնաղբյուրները, որոնցում Թորոս թ Ռուբինյանի կողմից Հայկական իշխանության վերականգնումը թվագրվում է 1147/8, կամ 1151/2 թվականով: Միայն Ժ դարի և հետագա ժամանակաշրջանի պատմագիր-

⁴⁴ F. Chalandron, Les Communes, t. II, p. 379–380.

Սկզբնաղբյուրների վերոհիշյալ վկայությունները համեմատելուց հետո պարզվում է, որ Թորոս Բ-ի կողմից Ռուբինյան իշխանության վերականգնման պատմությունը շարադրելիս ամենակարևոր հեղինակներն են Միքայել Ասորին, Գրիգոր Երեց Քեսունցին, Սմբատ Սպարապետը, Վահրամ Բարունին և Հովհաննես Կիննամոսը, իսկ մյուս սկզբնաղբյուրները պետք է օգտագործել միայն որոշ մանրամասնություններ ճշգրտելու համար: Ենելով վերևում կատարված աղրյուրագիտական քննությունից, ստիպված ենք հակադրվելու պատմագրության մեջ քաղաքացիություն ստացած կարծիքին, ըստ որի Թորոս Բ Ռուբինյանը իշխանության գլուխ կարող էր անցնել 1148 թվականից առաջ: Այս խնդրում մենք լիովին հետևում ենք Միքայել Ասորուն: Ինչո՞ւ հատկապես 1148 թվականով պետք է թվագրել Ռուբինյան իշխանության վերականգնումը Կիլիկիայում: Այս հարցին պատասխան տալու համար պետք է վերջիշել ԺԲ դարի 40-ական թթ. Փոքր Ասիայում և Հյուսիսային Ասորիքում տեղի ունեցող հիմնական իրադարձությունները և այդ լույսի տակ դիտել Թորոս Բ Ռուբինյանի գործունեությունը: Հալեպի աթարեկ Զանգիի կողմից Եղեսիայի իշխանության արևելանիրատյան տարածքների գրավումից (1145 թ. հունվար) հետո⁴² անհուսալի վիճակի մեջ ընկան Հյուսիսային Ասորիքի լատինական իշխանությունները: Անտիոքի իշխան Ռայմոնդ Պուատիեն փորձ կատարեց Հալեպի և Մոսուլի աթարեկ Զանգու դեմ դաշնակից պետությունների ճակատ ստեղծել:

Բյուզանդական կայսրությունը դեռևս չէր կորցրել իր դիրքերը Փոքր Ասիայում և Հյուսիսային Ասորիքում, այդ իսկ պատճառով Ռայմոնդ Պուատիեն 1145/6 թ. այցելեց Կոստանդնուպոլիս⁴³: Մեր կարծիքով այս այցելությունը խոսում է այն մասին, որ Բյուզանդական կայսրությունը տիրում էր ամբողջապես՝ Դաշտավային և մասամբ՝ Լեռնային Կիլիկիայի

⁴² F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 244–247, Cl. Cahen, La Syrie du Nord, p. 370–371; N. Elisséeff, Nur ad-Din, t. III, p. 380.

⁴³ Այս մասին տես, M. S., t. III, p. 267; J. C., p. 36:

ներն ու ժամանակագիրներն են, որոնք իրադարձությունը թը-վագրում են 1148 թվականից առաջ ընկած ժամանակաշրրշանով և կապ չեն տեսնում երկրորդ խաչակրաց արշավանքի և Թորոս Բ-ի գործողությունների միջև:

Թորոս Բ Ռուբինյանի Կիլիկիա գալու մասին սկզբնաղբյուրները հաղորդում են մի շարք հակասական վարկածներ.

ա) Թորոս Բ Ռուբինյանը փախել է Կոստանդնուպոլսից⁴⁵;

բ) Թորոս Բ-ը ինքն է վերադարձել Կիլիկիա^{46ա};

գ) Թորոս Բ Ռուբինյանը մասնակցել է Հովհաննես Բ Կոմնենոսի երկրորդ Կիլիկիա-Հյուսիսասորիքյան ուղմարշավին, որից հետո չի վերադարձել Բյուզանդիա և մնացել է Կիլիկիայում^{46բ};

Ինչպես տեսնում ենք, այս փոնդրում, ԺԲ դարի երկու սկզբնաղբյուրները՝ Հովհաննես Կիննամոսի Պատմության և Միքայել Ասորու ժամանակագրության տեղեկությունները համընկնում են, այդ իսկ պատճառով ընդունելի է վերոշարադրյալ վարկածներից առաջինը. այն է՝ Թորոս Ռուբինյանը փախել է Կոստանդնուպոլսից:

Աղբյուրների հաղորդած հակասական տեղեկությունները երկընտրանքի առաջ են կանգնեցնում ուսումնասիրողին նաև այն հարցում, թե ինչպես և ո՞ր քաղաքական միավորներից է Թորոս Բ Ռուբինյանը գրավել Կիլիկիան։ Այդ հարցին անդրադառնում է Միքայել Ասորին, ըստ որի Թորոս Բ Ռուբինյանը փախելով Կոստանդնուպոլսից, եկել է Անավարդայի մետրոպոլիտ Աթանասի մոտ^{46գ}, Ասորի մատենագիրը նաև շեշտում է. «որ նա (Թորոսը — Ա. Բ.) ոչնչի տեր էր»⁴⁷, այ-

45 I. C., M. S., Մ. Ա., 1870, Սամուել, էջ 130, Սմբատ, 1856, 1859, 1956; Միայն ԺԴ դարի մատենագիր Վահրամ Բաբոնին է, որ հայտնում է, թե Թորոս Բ Ռուբինյանը նավով եկել է Անտիոք, իսկ այնտեղից էլ պնացել է Կիլիկիա (տե՛ս Վահրամ, էջ 202):

46ա Մ. Ա., 1871, Վարդան, 1861, 1862, Սամուել, Հավելված Դ, Մ. Ը., հ. 1, էջ 75:

46բ Մ. Ժ., հ. 2, էջ 101, Սամուել, Հավելված, Դ, էջ 205—206, Վահրամ Բաբոնի, էջ 201—202:

46գ M. S., է. III, թ. 281:

47 M. S., է. III, թ. 281:

սինքն՝ տիրույթներ և հարստություն շուներ: Պատմիլը հարկ է համարում նաև նշել, որ Թորոս Բ Ռուբինյանը «վատահում էր այդ ծերունուն (մետրոպոլիտ Աթանասին—Ա. Բ.), իր հոր ժամանակներից»^{48:} Միքայել Ասորու տեղեկությունները հետաքրքիր են նրանով, որ ԺԲ դարի պատմիլը Թորոս Բ Ռուբինյանի կողմից Կիլիկիայում Հայկական իշխանության վերականգնումը կապում է հակոբիկ ասորական կղերի հետ Թորոս Բ-ի համագործակցությանը^{49:} Կիլիկիայում հայկական իշխանության վերականգնումը մի քանի տարում Թորոս Բ

48 Հայկական սկզբնաղբյուրները, բացի Միքայել Ասորու հայերեն թարգմանություններից (և Սամուելի Ժամանակագրության մեջ հետաքրքրող իրազարձության մասին պատմող առաջին պատումից), չեն խոսում նման համագործակցության մասին: Ընդհակառակը, նրանք վկայում են հայքահանյի հետ Թորոս Բ Ռուբինյանի համագործակցության մասին (Սամուել, Հավելված, Դ, էջ 206): Ժամանակակից պատմագրության մեջ Միքայել Ասորու պատմածը իրապատում են համարում Ֆ. Շալանդոնը (Les omissions, I, II, թ. 419) և Գ. Միքայելը Ռ. Ռ. Մակարյան, Իстория Կոկոնիակского..., ս. 110).

49 Իհարկե, պետք չէ բացարձակացնել Աթանաս մետրոպոլիտի դերը այս խնդրում: Պարզ է, սակայն, որ Հյուսիսային Ասորիքի և Փոքր Ասիայի քաղաքական պատմության այս փուլում ասորական հակոբիկ եկեղեցու և Կիլիկիայի հայկական իշխանության քաղաքական շահերը նույնանում էին միմյանց հետ: Այս համագործակցությունը փոխադրվել էր նաև եկեղեցական հարաբերությունների մթնոլորտ: Այդ համագործակցությունը բարգավաճեց ԺԲ դարի 50—70-ական թթ. և միայն 1180 թ. հետո, երբ Կիլիկիայում հակաթոռ հակոբիկյան պատրիարք է գտնում Բար Վահրամը: Միքայել Ասորին (հակոբիկ Ասորիների այդ ժամանակաշրջանի ընդհանրական պատրիարքը) թշնամական դիրք է ըստում հայոց եկեղեցու և Կիլիկիայի հայկական իշխանության նկատմամբ (այդ մասին տե՛ս Եկեղեցիանեց, Հայոց եկեղեցու յարաբերությունները ասորուց եկեղեցիների հետ, Էջմիածին, 1908, էջ 281—282): Կիլիկիայում հակոբիկյան եկեղեցու դեկապարներին ձեռնոտու էր հայերի իշխանությունը, որովհետև երկարեակ հույները հալածում էին նրանց ասորի դավանակիցներին, իսկ հայկական իշխանության հովանավորության պայմաններում հեշտ էր ընդհանուր ճակատ ստեղծել Բյուզանդական կայսրության պաշտոնական դավանանքի դեմ: Իհարկե սա միայն հարցի զուտ եկեղեցաղավանաբանական կողմն է: Կիլիկիայում հայկական իշխանությունը վերականգնողին ցույց տրված նյութական և բարոյական օգնությունը մեզ տեղի է տալիս խորհելու, որ իշխանության գլուխ անցնելուց հետո, Թորոս Բ Ռուբինյանը պետք է

Ռուբինյանի կողմից բացառիկ դժվար խնդիր էր: Ռուբինյանը իշխանագունը պետք է կարողանար շահել Կիլիկիայի բազմազգ բնակչության համակրանքը: Այս առումով հետաքրքիր է Միքայել Ասորու վկայությունը, ըստ որի իշխանությունը վերականգնելու գործում Թորոսին օգնել է Անավարզայի մետրոպոլիտ Աթանասը: Ասորի պատմիչի տեղեկությունների համաձայն, բացի ասորիներից Թորոսին են միացել նաև «քաջմաթիկ» հայեր և ֆրանկները⁵⁰: Ժթ դարում Կիլիկիանցի կարելի դիտել միատարր բնակչություն ունեցող շրջան⁵¹: Գնայած երկրամասում հայերը սկսել էին մեծամասնություն կազմել, իրենց ձեռքը վերցնելով քաղաքական իշխանությունը, սակայն նրանք շարունակում էին իրենց համարել տարագրվածները⁵²: Այդ է պատճառը, որ Թորոս Բ Ռուբինյանը, բացի հակոբիկ ասորիներից, փորձում է շահել նաև խաչակիրների համակրանքը⁵³, և ամուսնանում է Ռապանի տեր՝

վարձահատուց լիներ: Ցավոք, մեր վերջին եզրակացությունը հաստատող կամ ժխտող պատմական սկզբնազրյուրներ չեն պահպանվել:

50 Թորոս Բ Ռուբինյանին ֆրանկների ցույց տրված օգնության գաղափարը բացարձակորեն ժխտում է Գ. Միքայելյանը (История Киликийского..., էջ 111):

51 M. S.-ից և U. A.-ուց բացի որևէ այլ բնագիր, չի հիշատակում ֆրանկների հետ Թորոս Բ Ռուբինյանի համագործակցության մասին:

52 Կիլիկիայում հայերը նույնիսկ ժթ դարում իրենց Կիլիկիայի իսկական տերեր չեն համարում: Այդ մասին հետարքիր տեղեկության ենք Հանդիպում Գևորգ Սկնուացու վարքում: «Յորժամ նուազեցաք մեղաւք և իրատու իտեառնէ աստուծոյ, իրաւահարկ դատաստանաւ տարագրեցաք ի րուն Հայոց աշխարհէն և ընդ լծով մտաք տէրանց այլասեսից և անարինաց, պարսից ասեմ և մոգուց՝ մոլորելոցն զհետ Մահմետի, ի խնամոցն առտուծոյ նշոյլ յազատացն հայոցն փախստեայք եկեալ՝ ամրացան ի գաւառն Կիլիկիացոց, և փոքր մի ծաղկեալ ծաւալեցաւ յետին յայս և յերեկոյացեալ ժամանակս, և թագաւորք երեսցան հայոց ազգին» (Ե. Թաղթասարյան, Գևորգ Սկնուացու ովարքը, Բանքեր Մատենադարանի, № 7, էջ 412):

53 M. S., t. III, p. 282: Միքայել Ասորու 1871 թ. հրատարակության մեջ, հազանաբար, թարգմանական (գուցե և միտումնավոր) սխալի հետեւանքով բնագիրը հետեւալ տեսքն է ստացել. «Եւ ասեն... երթայրնա (իմա՞ Թորոս Բ Ռուբինյանը) ... յիշապան առնուլ կին զգուստը Զօնինին (Ժոն Ալեքսանդր) (իմա՞ Եղիսիայի կոմս Ջուլին Բ—Ա. Բ.)» (էջ 422—

ֆրանկ Սիմոնի դստեր հետն⁵⁴, իհարկե, դեռ Կիլիկիայի Հայկական իշխանության և Անտիոքի լատին իշխանության քաղաքական փոխհարաբերությունների մասին անհնար' որևէ ենթադրություն կատարել, որովհետև այդ մասին որևէ տեղեկություն չեն հաղորդում Հայկական և օտարալեզու սկըզբնագրությունները, սակայն մեր կարծիքով Անտիոքի իշխանությունը թշնամանք պետք է տածեր Թորոս Բ-ի նկատմամբ, որը ժտադրվել էր վերագրավել այն տարածքները, որոնք երկար ժամանակ պատերազմի թատերաբեմ էին դարձել ^{Անտիոքի} լատին իշխանության, Կիլիկիայի Հայկական իշխանության և Բյուզանդական կայսրության միջեւ⁵⁵: Իսկ Եփրատի արևմտյան կողմում հաստատված Զոսլին Բ-ի և նրա ստորականների համար Թորոս Բ Ռուբինյանը բնական դաշնակից էր, որովհետև այդ ժամանակ վերջինիս թշնամիների մեջ էր Իկոնիայի սուլթանությունը, որը տեր էր դարձել (Զահանի շրջանի հետ միասին) Լեռնային Կիլիկիայի մի շարք կարևոր ամրոցներին, իսկ արևմտաեփրատյան շրջանում փորձում էր Եղեսիայի իշխանությունից գրավել Մարաշը և Հարակա շրջանները⁵⁶; Նուր ադ-Դինի համար ևս Իկոնիայի հպորացումը ձեռնտու չէր վերոհիշյալ տարածքում և հատկանշական է, որ նա 1148 թ., ինարի ճակատամարտից առաջ, դաշինք է կնքում Զոսլին Բ-ի հետ⁵⁷: Սակայն Եղեսիայի վեր-

423): Զոսլին Բ-ի (1131—1151) դստեր հետ չեր կարող ամուսնանալ, որովհետև Եղեսիայի կոմոց նրա քեռին էր (տե՛ս, Վանեամ Բաբոնի, էջ 198):

54 M. S., t. III, p. 282:

55 Անտիոքի լատինական իշխանությունը ինչպես վերելում տեսանք 1145 յ. թ. Հյաժարգվել էր Կիլիկիայի առաջարկների նկատմամբ ունեցած հավակնություններից, քանի որ Հականուեպյան կուլիցիայի մեջ էր փորձում եերգավել Բյուզանդական կայսրությանը: Ինարի ճակատամարտից (1149 թ. Հունիս) հետո այդ խնդիրը չէր կարող դրվել Անտիոքի իշխանության արտաքին քաղաքականության առնե, որովհետև իշխանությունը զրկվել էր դեկավարից:

56 Մատթեոս Ռոմայեցի, էջ 396, Գ. Յովսեփեան, Ցիշատակարանք ձեռագրաց, էջ 359:

57 M. S., t. III, p. 282: Միթայել Ասորին ընդգծում է, որ Եղեսիայի կոմության և Հալեպի աթարեկության միջև հաստատված դաշինքը հար-

շին կոմսը ընտրել էր քաղաքական բախտախնդրության ճանապարհը և հետաք ճակատամարտից հետո (1149 թ. հունիս), որի ժամանակ սպանվեցին Անտիոքի դուքս Ռայմոնդ Պուատիեն և Քեսունի տեր Ռընազուր, Զոսլին Բ-ը դաշնակցում էր Իկոնիայի սուլթանության հետ⁵⁸, այս անգամ իր դաշինքը հակադրելով նուր ադ-Դինի քաղաքական ճնշմանը: Սակայն Իկոնիայի սուլթանությունը և Հալեպի աթաբեկությունը կառողացան ընդհանուր լեզու գտնել և արևմտահիրատյան տարածքները միմյանց միջև բաժանեցին⁵⁹: Եղեսիայի վերջին կոմսի քաղաքական նման անհօպատեսությունն էլ դարձավ կոմսության կազմակուծման հիմնական պատճառներից մեկը, որի հետեւանքով լատինական այդ իշխանությունը վերացավ պատմության թատերաբեմից: Իկոնիայի սուլթանությունը, Հալեպի աթաբեկությունը, Մարզինի և Խարբերդի Արտուրյանները միմյանց միջև բաժանեցին Եղեսիայի կոմսության արևմտահիրատյան տարածքները⁶⁰:

Կիլիկիայի Հայկական իշխանությունը, ամենայն հավանականությամբ քաղաքական մեկուսացման մեջ էր ընկել Եղեսիայի իշխանի գերեվարությունից և կոմսության մասնատումից հետո: Այնուամենայնիվ, մինչև Զոսլին Բ-ի գերեվարությունը, Թորոս Բ Ռուբինյանը կարողացել էր Կիլիկիայի ասորական բնակչության օժանդակությամբ 1148—1151 թթ. տիրանալ լեռնային Կիլիկիայի մի նշանակալի Հատվածին, տարածքներ գրավելով Բյուզանդական կայսրությունից (Ամուղածում էր Անտիոքի իշխանության կենսական շահերին: Սակայն եթե ելնենք նաև իրադրությունների հետագա ընթացքից, կարող ենք ենթադրել, որ այս քաղաքական միությունը ուղղված էր նաև Իկոնիայի սուլթանության միտումների դեմ:

58 M. S., t. III, p. 290:

59 M. S., t. III, p. 297: Ուշագրավ հանգամանք է, որ այդ դաշինքը հաստատված է Իկոնիայի սուլթանի դստեր և նուր ադ-Դինի ամուղածումը:

60 M. S., t. III, p. 297: Այդ տարածքներում մնաց նաև ամենայն Հայոց Կաթողիկոսարանը, որը վեց Հռոմեական ամրոցը և 1151 թ. տեղափոխվեց այստեղ: Կաթողիկոսարանը այդ տարածքների վրա մնաց մինչև 1293 թվականը:

գան և Սիմանկլան) և Խոսնիայի սուլթանությունից (Վահկան և Առիծաբերդը)⁶¹: Հայկական սկզբնաղբյուրներում միտում է նկատվում Թորոս Բ Ռուբինյանի հաջողությունները քացատելիս ի շիք դարձնել Կիլիկիայի ասորի և լատին բրնձակչության դերը, շեշտելով, որ այդ գործում միայն հայերն էին ազակցում Ռուբինյաններին: Այս միտումը հարազատ է ԺԴ դարի Կիլիկյան ողջ պաշտոնական մատենագրությանը:

Կիլիկիայում Ռուբինյան իշխանության վերականգնումը մի քանի տարում բարդ քաղաքական խնդիր էր, մանավանդ որ բյուզանդական իշխանություններն ամեն գնով խոշքնդումում էին այդ քայլերին: Թորոս Բ Ռուբինյանը պետք է կարողանար շահել Կիլիկիայի բազմազգ բնակչության համականքը, օգտագործեր նրանց քաղաքական և տնտեսական հզորությունը: Այդ առումով հետաքրքիր է Միքայել Ասորու վկայությունը, թե Թորոս Բ Ռուբինյանին իշխանությունը վերականգնելու գործում աջակցել է Անավարզայի հակոբիկյան մետրոպոլիտ Աթանասը: Ռուբինյան իշխանին են միանում նաև Լեռնային Կիլիկիայի «բազմաթիվ հայեր և ֆրանկներ»: Կիլիկիա երկրամասը երբեք շի կարելի դիտել միատարր բընակչությամբ բնակեցված շրջան, քանի որ այնտեղ ԺԴ դարում կողք-կողքի բնակվում էին Հույներ, հայեր, ասորիներ, նույնիսկ տեղ-տեղ սելջուկ թյուրքեր: Ինչ խոսք, ԺԱ դարի երկրորդ կեսին հայկական տարրի Կապաղովկիա և եփրա-

61 Տե՛ս, Սմբատ, 1956, էջ 165, 1856, էջ 82, 1859, 95: Իհարկե մեզ հասած սկզբնաղբյուրներում տեղեկությունները հակասական են Թորոս Բ Ռուբինյանի գրաված առաջին ամրոցների մասին: ԺԴ դարից մեզ հասած «Պատմութիւն ազգին Ռովբիննեանց թէ որպէս տիրեցին Կիլիկիոյ աշխատության հեղինակը Թորոս Բ-ի գրաված առաջին ամրոցը համարում է Վահկան. և անտի զօրացեալ էաւ գրազում գաւառու» (Սամուել Անեցի, Հաւաքմունը, հավելված, էջ 207): Նույն դարի մի ուրիշ սկզբնաղբյուր, որն ավելի հանգամանորեն է ծանոթ սկզբնաղբյուրներին, մեզ հետաքրքրող իրադարձությունների մասին գրում է. «տիրեաց նախ Վահկացին, և ամենադարձությունների մասին գրում է. «տիրեաց նախ Վահկացին, և ամենաՓոփոխյութը եւ յետ սակաւուց Անարզարոյ և ամենայն զաշտակողմանն ավագանակ գալատեանն ի Կոստանդնուպոլսէ և գտիրելոյն Կիլիկիայ՝ զորոյ զյեղանակ գալատեանն ի Կոստանդնուպոլսէ և գտիրելոյն Կիլիկիայ՝ այլ և այլ օրինակաւ պատճեն գիրք» (Սամուել Անեցի, էջ 216, Մ. Ժ., հ. 1, էջ 75):

տամերձ շրջանները տեղափոխվելուց հետո, երբ ստեղծվում է Փիլարտոս Հայի, և ապա Գող Վասիլի, Ռուբինյան ու Օշինյան իշխանությունները նշված տարածաշրջանում հայախոս բնակչությունը գերազանցիո դարձավ իր քանակով, իսկ ԺԲ դարի երկրորդ կեսին Կիլիկիան դարձավ հայոց հոգեոր մշակույթի ճանաչված կենտրոններից մեկը Այնուամենայնիվ, Կիլիկիայի հայկական իշխանությունը, որը տարածքային առումով կտրված էր Մեծ Հայքի ազգային մշակութային հողից և չուներ այդ տարածքում պետականություն ստեղծելու և վարչական ապարատ կազմակերպելու երկարատև ավանդներ, չէր կարող, միայն հայկական համայնքի մեջ պարփակված, պետականություն հաստատել և իր իշխանությունը պարտադրել հարևան ժողովուրդներին: Հիշենք թեկուզե խաչակրաց պետությունների ստեղծման փորձը Այդ պետությունները չնայած պարբերաբար զինական և նյութական համարում էին ստանում Արևմտյան Եվրոպայի երկրներից, այնուհանդերձ անզոր կլինեին, եթե տեղաբնակ ժողովուրդների մեջ դաշնակիցներ լգտնեին: Այս առումով բացառություն չի կարող կազմել Կիլիկիայի Ռուբինյան հայկական իշխանությունը, որի ստեղծումը և հետագա գոյությունը չի կարելի պատկերացնել առանց հաշվի առնելու արտաքին քաղաքական ամենակարևոր հանգամանքներից մեկը՝ խաչակրաց շարժումը: ԺԲ դարի 40-ական թվականներին, արդեն ակրնհայտորեն, նկատվում էր խաչակրաց իշխանությունների թուլացումը: Դա բնական պատմական պրոցես էր, որը պայմանավորված էր այդ պետական միավորումների ներքին և արտաքին քաղաքականությամբ ու միջազգային քաղաքական բարդ իրադրությամբ: Չնայած այն հանգամանքին, որ խաչակրաց պետությունները, նկատի ունենալով միայն իրենց արտաքին քաղաքական շահերը պատմության այս կամ այն փուլում դաշնակցում էին իրենց հարևան որևէ քաղաքական միավորի հետ, միշտ չէ, որ հաշվի էին առնում մյուս քրիստոնյա ժողովուրդների ակնկալիքները, «ընդհանուր քրիստոնեության» շահերը: Այդպիսի քաղաքական գործարքներից կարելի է հիշատակել երուսաղեմի թագավորության դա-

շինքը երկրորդ խաչակրության նախօրեին Դամասկոսի ամիրության հետ, կամ Անտիոքի իշխանության քաղաքական միությունը սյունի մահմեդականների հետ, ընդեմ Զենգյանների: Եղեսիայի իշխանության դաշինքները երբեմն Իկոնիայի սուլթանության, երբեմն Զենգյան ամիրության, երբեմն էլ Ամիդի ու Խարբերդի Արտուրյան ամիրությունների հետ: Այնուհետեւ խաչակրաց իշխանություններից յուրաքանչյուրն իրենց պետությունների ներքին կյանքում վարում էր տեղական ժողովուրդների ղեմ ուղղված թշնամական քաղաքականություն: Միայն իրենց իշխանությունների պատմության ամենածանր պահին էին գիտակցում այդ իշխանությունների տարածքում ապրող ազգային ընդհանրությունների համախմբման կարեռությունը: Այս տեսանկյունից հատկանք շահական են Եղեսիայի կոմսության պատմության վերջին ժարինները⁶²:

Կիլիկիայի տարածքում բնակվող ասորիների (ավելի ճիշտ հակորիկ ասորական եկեղեցու ներկայացուցիչների) համար Կիլիկիան իշխանության հզորացումը մի գործոն էր, որը ասովզ պտուղներ էր խոստանում Բար Սաումա վանքում հաստատված հակորիկ ասորական պատրիարքությանը: Հիշելու, բե այդ շրջանի հակորիկ հեղինակները ինչպիսի վշտով էին ներկայացնում մահմեդականների ոտնձգությունները իրենց եկեղեցու ունեցվածքի նկատմամբ, Զոսլին Բ-ի ավարական ուզմարշավները ղեպի Բար Սաումայի վանքը, որը այդ ժամանակ դարձել էր Անտիոքի հակորիկյան պատրիարքության նստավայրը⁶³: Այս ղեպերի լուսի տակ թվում է, թե Ռուբինյան իշխանությունը Կիլիկիայի իշխանության սահմաններում անձեռնմխելի էր հայտարարում հակորիկյան եկեղեցու ունեցվածքը և հայկական եկեղեցուն համահավասար իրավունքներ էր ընձեռում: Սրանք երկրորդական մըտահոգություններ չէին հակորիկյան եկեղեցու պաշտոնյաների համար: Միմյանց հարեանությամբ Կիլիկիայում գոր-

⁶² *Sé'z Cl. Cahen, La Syrie du Nord*, p. 370.

⁶³ *M. S.*, t. III, p. 283—288.

ժում էին տարրեր եկեղեցական թեմեր. օրթոդոքս-հոմական, Հայկական, կաթոլիկ-լատինական, Հակոբիկյան: Դրանցից յուրաքանչյուրի հետ քաղաքականության ուրույն գիծ մշակելն իսկ մեծ բարդություն էր ներկայացնում: Այդ թեմերից յուրաքանչյուրը, արտաքուստ, ժամանակ առ ժամանակ, մեկը մյուսի հետ բարեկամանում էին, սակայն իրենց ձգումներով թշնամաբար էին տրամադրված միմյանց նկատմամբ: Կիլիկիայում Ռուգինյան իշխանությունը այն քաղաքական ուժն էր, որը պիտի կարողանար հաշտության եզրեր գտնել տարրեր եկեղեցական ավանդություններ ունեցող ժողովուրդների հետ փոխհարաբերություններ մշակելիս:

2. ԿԻՄԿԻԱՅԻ ԹՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՑՆԵՐԸ ԵՎ ՌՈՒԲԻՑԱՆ
ԽԵՆԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԺՔ ԴԱՐԻ 40—70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԺՔ դ. բյուզանդական փոքրասիական գավառների վարչական կառուցվածքը ուսումնասիրված է միայն պմենարնդհանուր գծերով: Չնայած, որ ստրատեգոս-ավտոկրատորի, ստրատեգոսի, դուքսի և այլ վարչական տեղական պաշտոնները լայն տարածում էին ստացել Կոմնենոսների կառավարման դարաշրջանի Բյուզանդական կայսրության փոքրասիական գավառներում, այնուամենայնիվ զոյություն չունի այդ պաշտոններին վերաբերող ընդհանրացնող ուսումնասիրություն, որի վրա հիմնվելով կարելի լիներ բնութագրել այդ պաշտոններից յուրաքանչյուրը մեզ հետաքրքրող դարաշրջանի գավառական վարչության շրջանակներում: ԺՔ դարի բյուզանդական գավառական պաշտոնյաների իրավասությունների շրջանակների մասին սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները աղքատիկ են և ցարուցրիվ, այդ իսկ պատճառով Կիլիկիայի (բյուզանդական ծայրագավառի) կառավարիներին նվիրված ուսումնասիրությունը կարող է համեմատական նյութ տալ փոքրասիական այնպիսի ծայրագավառների վարչության ուսումնասիրության համար, ինչպիսիք էին Կոմնենոսների դարաշրջանում Խալդիան (Տրապիզոն կենտ-

րոնով), Կիրերայոտոնը (Ատալիա կենտրոնով), Կիպրոսը, Սելևկիան և այլն:

ԺԹ դարի 40—70-ական թթ. Կիլիկիայում կառավարած բյուզանդական պաշտոնյաների մասին տեղեկություններ են հաղորդում Հունական, Հայկական, լատինական, ասորական և արարական սկզբնադրյուրները: Սակայն դրանք դեռևս ի մի շեն հավաքված և մենք պատկերացում իսկ շունչնք այդ պաշտոնյաների իրավասությունների ոլորտի, գործունեության տարածքի, և որ մեր աշխատանքի համար ամենակարևորն է, Կիլիկիայի բյուզանդական կառավարիչների ժամանակագրության մասին⁶⁴:

64 Զանազան պատմական իրադարձությունների կապակցությամբ պատմագրության մեջ, սկսած Մ. Պամլանից ու Լըրուից, Հիշատակվում են Կիլիկիայի կառավարիչներից մի քանիսը՝ Անդրոնիկոս Կոմնենոսը, Անդրոնիկոս Ֆերրենոսը և Ալեքս Աքսուիը (տե՛ս Մ. Պամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Գ. Վենետիկ, 1786, էջ 68—74, 76—77, 97—99; *Histoire du Bas-Empire* par Lebeau, nouvell édition, revue entièrement, corrigée et augmentée d'après les historiens orientaux, par M. De Saint-Martin, et continuée par M. Brosset Jnc, t. XVI, Paris, 1834, p. 142, 219, 227; Fr. Tournebize. *Histoire politique et religieuse de l'Arménie*.—Paris, (1900), pp. 176, 180—181, 239—240; R. Grossot, *Histoire des croisades et du royaume franc de Jerusalem*, t. II, Paris, 1935, p. 333, 505, 566; St. Runciman, *A History of the Crusades*, vol. II, London—New York—Melbourne, p. 332, 364, 377; Գ. Գ. Միկաելյան, *История Киликийского армянского государства*, Ереван, 1952, с. 111—113, 125.

Մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ նորություն են Ֆ. Շալանդոնի դիմուղությունները (տե՛ս F. Chalandon, *Les Comnènes*, t. II, Paris—Picard, 1912, p. 426, 427—428, 529—530): Ֆրանսիացի բյուզանդակետը, ի հակագրություն վերոհիշյալ հեղինակների, գիտե միեւ այդ գիտությանը անհայտ Կիլիկիայի բյուզանդական կառավարիչներ (տե՛ս նույն տեղում, էջ 526—527, ծան. 2): Ըստ Ֆ. Շալանդոնի, ժԹ դարի 60-ական թթ. Կիլիկիայում իշխել են հետեւյալ դուքսները. 1160 թ. Միքայել Վրանասը, 1162 թ. Անդրոնիկոս Ֆերրենոսը (Եգիսիոս), 1163 և 1164 թթ. Կոստանդին Կալամանոսը (Կոլոման), 1165 թ. Ալեքս Աքսուիը. Այժմամանակագրությունը կազմելիս Ֆ. Շալանդոնը նիշտ չի հասկացել Հովհաննես Կիննամոսի վերջին վկայությունը Կիլիկիայի բյուզանդական կա-

Մինչև ԺԲ դարի 30-ական թթ. Ռուբինյան հարստության ներկայացուցիչները Բյուզանդիայի կողմից դիմում էին որպես Կիլիկիայի իշխողներ և կայսրության ստորականներ, թեև կայսրության գերակայությունը հունական սկզբնաղբյուրներում արտացոլված է միայն Դեսպոլյան հաշտության պայմանագրի մեջ, իսկ Հայկական սկզբնաղբյուրներում Թորոս Ա-ը և Լոռն Ա-ը երբեմն կրում են բյուզանդական սևաստոս պատվանունը⁶⁵: Հիշատակված տիտղոսով պատվում էին նաև Լամբրոնի տերերը մինչև ԺԲ դարի 80-ական թթ.: Պրոտոսևաստոս և սևաստոս տիտղոսները պատահում են Հայկական սկզբնաղբյուրներում, երբ խոսքը վերաբերում է Թորոս Ա-ին: Այնուամենայնիվ, չի կարելի պնդել, որ նշված տիտղոսը կրող Ռուբինյան պայազատը այդ պահին ճանաշում է կայսրության գերակայությունը և ենթարկվում Բյուզանդիայի ներքին վարչատեսական համակարգին: Մինչև ԺԲ դարի 30-ական թթ. Կիլիկիան փաստորեն չէր մտնում կայսրության տարածքի մեջ: Խնդիրն այլ է Բյուզանդական կայսրության արտաքին քաղաքականության տեսանկյունից: Բյուզանդիայի համար իրավաբանական ապացուց էր, որ հնում Կիլիկիան մտել է նրա սահմանների մեջ. այդ իսկ պատճառվ, չնայած Կիլիկիայի և այդ ժամանակվա բյուզանդական տարածքների կտրվածությանը, Ռուբինյան իշխողները դիմում էին իրուն կայսեր ստորականներ և կայսրությունը չէր համաձայնում ընդունել այդ երկրամասի անկախությունը:

1137 թ. Կիլիկիան գրավելուց հետո, երբ Հովհաննես ԲԿոմնենոսը (1118—1143) և Ա (1129—1137) Ռուբինյան իշխանին գերեվարելով տարագի Կոստանդնուպոլիս, Բյուզանդական կայսրությունը ստուգած պատված էր Կիլիկիայում կազմականացների մասին (տե՛ս I. С., թ. 286), և խաննել է բյուզանդական պատմիչի հիշատակած Կիլիկիայի կառավարիների հերթականությունը:

⁶⁵ Այս պատվանգան մասին տե՛ս L. Bréhier, Les institutions de l'Empire byzantin.—Paris, 1949, p. 139, 142. Աւագրագ է, որ նույն տիտղոսը կրում էին նաև Բուզարիայի վարչական համակարգի գեկավար ներկայացուցիչները (տե՛ս П. Хр. Петров, О титулах «севаст» и «протосеваст» в средневековом болгарском государстве.—ВВ, т. XVI (1959), с. 52—64).

կերպել երկրամասը կառավարող վարչատնտեսական համակարգ, որը ու միայն պիտի ենթարկվեր ու համապատասխաներ Բյուզանդիայի կառավարման համակարգին (և արտաքին ու ներքին քաղաքական շահերին), այլև հարմարեցված պետք է լիներ Կիլիկիայում բյուզանդական հովանավորության տակ անցած իշխանների ձգտումներին: Մինչև ԺԲ դարի 50-ական թթ. Կիլիկիայում բյուզանդական իշխանությունների գոյության, նրանց գործողությունների, այդ երկրամասը կառավարելու բյուզանդական համակարգ ստեղծելու միտումների ու փորձերի մասին միայն հատուկենտ վկայություններ են պահպանվել:

Հովհաննես Կոմնենոսի կառավարության վերջին տարիներին Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության հիմնական մտահոգություններից մեկն էր դարձել Կիլիկիան արտաքին ուժերի ոտնձգություններից պաշտպանելու հարցը, քանի որ այդ երկրամաս էին ներխուժում արևմտաքից հկոնիայի սովորականությունը, Հյուսիսից՝ Դանիշմանյան ամիրությունը, Հարավից՝ Անտիոքի խաչակրաց իշխանությունը: Կոստանդնուպոլսի կենտրոնական վարչություններն ի վիճակի չեին վերահսկելու ժայրամասային ամենահեռավոր տարածքի՝ Կիլիկիայի գործերը: Ուստի, կայսրությունը փորձ արեց ստեղծել ուազմավարշական կառավարման մի այնպիսի համակարգ, որն իրեն ենթարկվող տարածքների արտաքին ու ներքին քաղաքականության գործերում որոշակի անկախություն ունենալով հանդերձ, շառանձնանար կայսրությունից և օժանդակեց բյուզանդական արևելյան քաղաքականության ձեռնարկումներին: ԺԲ դարում Կիլիկիայի տարածքի վրա նման վարչական միավոր ստեղծելու միտքը պատկանում է Հովհաննես Բ-ին:

Անդրադառնալով Կիլիկյան երկրորդ ուազմարշավը (1142—1143) ծնող քաղաքական պատճառներին, բյուզանդական պատմիչ Կիննամոսը գրում է. «Երբ իմացավ (Հովհաննես Կոմնենոսը—Ա. Բ.), որ Անտիոքի իշխան Ռայմոնդը խորհում է ապստամբել (νεωτερίζειν), ուղղակիորեն և կրկին շարժվեց դեպի Կիլիկիա, մտադրվելով Կիլիկիան և Անտիոքը

Ատալիայի և Կիպրոսի հետ, որպես ժառանգություն, հանձնել Մանուկին»⁶⁶; Այս տողերից կարելի է ենթադրել, որ Հովհաննես Բ Կոմնենոսը փորձել է կառավարչական միևնույն համակարգի մեջ համախմբել իրենց ստրատեգիական դիրքով կապակցված մի շարք շրջաններ, որոնք Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ելուստում կարևոր ռազմական դիրք ունեին⁶⁷: Այս տարածաշրջանի (քեցի) ստեղծումը նշանակում էր մի զորահրամանատար-կառավարչի (տվյալ դեպքում՝ Մանուկի) իշխանության տակ համախմբել նշված շրջանների ոլ միայն ցամաքային բանակները, այլ նաև ռազմածովային ուժերը, քանի որ Ատալիան և մասնավանդ Կիպրոսը հին ռազմածովային շրջաններ էին⁶⁸: Պետք է շեշտել, որ այդ տարածաշրջանի տնտեսական և ռազմական հնարավորությունների առանձնացումը ծառայելու էր կայսրության արևելյան քաղաքականության նպատակներին և կանգնեցնելու էր Իկոնիայի սուլթանության, Դանիշմանյան ու Հալեպ-Մոսուլի ամիրությունների առաջինադացումը դեպի կայսրությանը պատկանող և նրա հովանավորության ներքո գտնվող փոքրասիական և հյուսիս-ասորիքյան շրջանները: Միևնույն ժամանակ այդ վարչական միավորը կարող էր հենակետ դառնալ նշված պետությունների վրա հարձակումներ կազմակերպելու դեպքում: Ուշագրությունից շպետք է վրիպի նաև այն, որ Ատալիա-Կիլիկիա-Կիպրոս-Անտիոք տարածաշրջանի կառավարումը հանձնվելու էր ոչ թե սոսկ որևէ պետական պաշտոնյայի, այլ կայսերական ընտանիքի անդամ, Հովհաննես Կոմնենոսի կրտսեր որդի Մանուկին, հավանաբար ժամանակավոր ավա-

66 J. C., pp. 22—23:

67 Նման հսկայածավալ տարածքը ընդունվող շրջանի միավորումը մեկ ամբողջական վարչական համակարգի մեջ չէր համապատասխանում Ալեքս Ա-ի ներքին քաղաքականության տրամարանությանը, որին բնորոշ էր ռազմավարչական մարզերի ստեղծումը փոքր տարածքների վրա, կամ էլ մեկ քաղաքի շրջանակներում (տե՛ս H. Ahrweiler, Byzance et la mer. La marine de guerre la politique et les institutions maritimes du Byzance au VII—XVe siècles.—Paris, 1966, p. 423—424):

68 H. Ahrweiler, Op. cit., p. 186.

տի իրավունքով⁶⁹; Այս հանգամանքը խոսում է այն մասին, թե որքան մեծ նշանակություն էր տալիս Հովհաննես Բ Կոմ-նենոսը այդ շրջաններին՝ կայսրության արևելյան քաղաքա-կանությունը կարգավորելու խնդրում։ Սակայն նա չկարողացավ իրականացնել իր մտահղացումը, քանի որ մահացավ նշված ուազմարշավի ժամանակ՝ 1143 թ. ապրիլի 8-ին, իսկ նրան հաջորդած Մանուելը այդ տարածքները միասնական վարչական համակարգի մեջ միավորելու փորձ անդամ ըր-կատարեց։ Այնուամենայնիվ Կիլիկիայում Բյուզանդիայի ուազմական ուժերը ավելացնելու և, Հովհաննես Բ-ի նմանությամբ, Կիլիկիայի ու Կիպրոսի տարածքների վրա ուազմա-վարչական միավոր ստեղծելու միտումը նկատելի է նաև Մանուել Ա Կոմնենոսի (1143—1180) կառավարման առաջին տարիներին ձեռնարկված անտիռքան ուազմարշավի ժա-մանակ։ Անտիռքի խաչակրաց իշխանության հակաբյուզան-դական նկրտումներին հակահարված տալու համար նա Կի-լիկիա է ուղարկում և՛ ցամաքային, և՛ ծովային ուազմական ուժեր⁷⁰, որոնց ղեկավարներին (Պրոսուխին և Դեմետրիոս Վրանասին) մենք հակված ենք համարել Կիլիկիայի ու Կիպ-րոսի և՛ զինվորական, և՛ վարչական ղեկավարներ։ Նման են-թագորության համար հիմք կարող է ծառայել այն փաստը, որ և՛ Պրոսուխը, և՛ Դեմետրիոս Վրանասը Անտիռքի իշխանի զեմ ուազմական գործողություններ վարելուց անմիջապես հե-տո վերադառնում են ոչ թե Բյուզանդիա, այլ առաջինը՝ Կի-լիկիա⁷¹, երկրորդը՝ Կիպրոս⁷²։ Պրոսուխի ղեկավարությամբ

⁶⁹ Կիննամոսի վկայությունից չի կարելի եզրակացնել, թե Հովհան-նես Բ Կոմնենոսի իշխանության տարիներին կայսրությունը կայսեր որ-դիների միջև մասնատելու ձգտում է նկատվում (տե՛ս Իտորիա Բիզանտիոն, տ. II, մ. 1967, ս. 300):

⁷⁰ I. C., p. 33—35; N. Ch., p. 52.

⁷¹ I. C., p. 35; N. Ch., p. 52.

⁷² I. C., p. 35; Հետաքրքիր է, որ երբ Թբիլիսի Անտիռքացին 1156 թ. ավարառում էր Կիպրոսը, այնտեղի գուքաց մի ուրիշ Վրանաս էր, Սի-քայել անունով (I. C., p. 178):

ցամաքային բանակների վերադարձը Կիլիկիա, ու միևնույն ժամանակ Դեմիտրիոս Վրանասի ղեկավարությամբ ռազմածովային նավատորմի Կիպրոսում հանգրվանելը նշանակում էր, որ Բյուզանդական կայսրությունը Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ելուստում ստեղծում էր մասնագիտացված «բանակաթեմեր» Կիպրոսը⁷³, որպես ռազմածովային ուժերի կենտրոն⁷⁴, Կիլիկիան՝ ցամաքային բանակների: Բյուզանդական բանակների համար ինչպես հնում, այնպիս էլ Կոմնենոս կայսրերի իշխանության տարիներին օրինաշափ երևույթ էր ռազմավարչական մարզերի (հնում՝ բանակաթեմեր) և քաղաքացիական, և ռազմական ղեկավարությունը կենտրոնացնել մեկ պաշտոնյայի ձեռքում, որին ենթարկվում էին մարզի բոլոր՝ վարչատնտեսական, իրավական և ռազմական իշխանությունները⁷⁵: Ռազմավարչական նման վերակառուցումների պատճառը Անտիոքի խաչակրաց իշխանության հարձակողական գործողություններն էին Կիլիկիայի տարածքի նկատմամբ: Այդ իսկ պատճառով անսպասելի չէ, որ Կիլիկիայի նոր բյուզանդական կառավարչի մասին աղբյուրները խոսում են միայն այն ժամանակ, երբ Կիլիկիայում հայտնվում է Ռուբինյան իշխան Թորոս Բ-ը. վերջինս սպառնում էր վերացնել Բյուզանդիայի իշխանությունը Կիլիկիայում: Բյուզանդական զորավար-կառավարիչների հիմնական պարտականությունն էր հակահարված տալ Ռուբինյաններին և ապահովել Կիլիկիայի ենթակայությունը կայսրությանը:

Կիլիկիայում բյուզանդական առաջին կառավարիչը ըսկը գրանադրյուրներում հիշատակվում է 1151/2 թ. ղեպքերի

73 Կ. Կազենը իրավացիորեն նշում՝ է, որ մինչև ԺԹ դարի 50-ական թթ. Կիպրոսի մասին բացարձակապես ուշինչ լգիտենք (*Cf. Cahen, La Syrie du Nord*, p. 392).

74 Կիպրոսը ռազմածովային ուժերի կենտրոններից մեկն էր նաև Ալեքս Ա-ի իշխանության տարիներին (տե՛ս *H. Ahrwälder*, Op. cit., p. 186).

75 *L. Bréhier*, Op. cit., p. 229, 234.

շարադրանքում։ 1148—1151 թթ. Թորոս Բ-ը գժվարին պայքարից հետո կարողանում է բյուզանդացիներից և սելջուկ-թյուրքերից վերագրավել Ամուղան, Վահկան, Անավարզան, Սիմանկան, Առյուծաբերզը։ Ինչո՞վ կարելի է բացատրել այն փաստը, որ մինչև 1151/2 թ. բյուզանդացիները պատերազմ չեն սկսում Թորոս Բ Ռուբինյանի դեմ։ Պետք է այստեղ շեշտել երկրորդ խաչակրաց արշավանքի բարենպաստ ազդեցությունը Կիլիկիայում Ռուբինյան իշխանության վերականգնման գործում։ Այդ տարիներին բյուզանդացիները պատերազմում էին Սիցիլիայի նորմանների ու սերբերի դեմ և հրսկայական ռազմական ուժեր էին կենտրոնացրել կայսրության արևմուտքում⁷⁶։ Առա այդ կարճատև ժամանակամիջոցում Թորոս Բ-ը «ոչ միայն դհայրենիս իւր գրաւեաց լինքեան, այլ առաւել ևս տիրեաց բերդից և քաղաքաց քան զնախնիսն իւր»⁷⁷։ Կայսրությունը վախսցած Կիլիկիայի ամրողական կորսուից, կրկին ռազմական ուժեր է առանձնացնում Թորոս Բ-ի դեմ պատերազմելու համար։ Մեզ հայտնի է այդ պայքարի միայն վերջը։ Խոսքը վերաբերում է Կիլիկիայի Թումակամ Թումաս դքսին, որի մասին մեզ հայտնի միակ վկայությունը պահպանվել է ԺԴ դարի հեղինակ Սմբատ Սպառապետի Տարեգրում։ Ըստ այդ հիշատակության՝ «Ի սոյն ամի (ի թուին Հայոց Ո=1151 թ. փետրվարի 12—1152 թ. փետրվարի 11—Ա. Բ.) Թորոս որդին լկոնի էառ ի Հօռմէն զՄսիս և զԹիլն, և կալաւ զտուին Թումաս»⁷⁸։

Կիլիկիայում բյուզանդական պաշտոնյայի՝ դուքսի կառավարման փաստը շափականց ուշագրավ է, որովհետև, ինչպես գիտենք, ԺԱ դարի երկրորդ կեսին թյուրքերի, նորման-

⁷⁶ F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 320, 342.

⁷⁷ Տե՛ս Մատթեաս Առնայեցի, էջ 400։

⁷⁸ Սմբատ, 1956, էջ 170։ Անհյուն է բյուզանդացիտության մեջ ընդունելություն գտած կարծիքը, ըստ որի նդեսիայի իշխանության որոշ տարածքներ կայսրության հռվանավորության տակ է առել Թումաս դուքսը (տե՛ս F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 424—425; St. Runciman, A History of the Crusades, vol. II, p. 329)։ Այս դեպքերի մասին խոսող սկզբանապրուները նման ենթադրության տեղիք չեն տալիս։

ների և պեշենեգների հարձակումներից հետո կայսրության բանակաթեմային կառավարման համակարգը ամբողջովին փլուզվեց⁷⁹: Ալեքս Ա-ը ևս չկարողացավ ամբողջովին վերականգնել կայսրության հեռավոր շրջանների վարչակառավարման համակարգը: Այնուամենայնիվ նրա իշխանության տարիներին միտում է նկատվում որոշ քաղաքների ու ոչ մեծ տարածքների կառավարումը հանձնել զինվորական պաշտոնյաների՝ նրանց ձեռքում կենտրոնացնելով նաև այդ շրջանների քաղաքացիական վարչության գործերը⁸⁰: Կայսերական տարածքների վարչական բաժանման այս սկզբունքը լայն տարածում ստացավ Հովհաննես Բ Կոմնենոսի իշխանության տարիներին. դրանով է բացատրվում այն փաստը, որ նրա կառավարման տարիներին մեզ հայտնի են ավելի շատ վարչատարածքային շրջաններ, որոնց դեկավարում էր դուքս-գորահրամանատարը⁸¹:

1151/2 թ. Կիլիկիայում Թումաս դքսի անհաջողությունը և դաշտավայրային երկու կարևոր քաղաքների՝ Մսիսի (Մոպսուեստիա) և Թիլի (Թիլ Համտուն)⁸² կորուստը, բյուզանդացիներին ստիպեց առավել ուշադիր լինել այդ տարածքների նկատմամբ և թարմ ուժեր կենտրոնացնել, Ռուբինյան իշխանությանը ծնկի բերելու համար: Այդ նպատակով Մանուել կայսրը, որը դեռևս զբաղված էր արևմուտքում տեղի ունեցող ռազմական գործողություններով⁸³, Կիլիկիա է ուղարկում Անդրոնիկոս Կոմնենոսին՝ Թորոսի դեմ պատերազմ վարելու համար:

Ըստ Կիմնամոսի, Մանուել Ա Կոմնենոսը Անդրոնիկոսին ուղարկել էր Կիլիկիայի ու Խոավրիայի տարածքները և

⁷⁹ H. Ahreweiler, Op. cit., p. 222.

⁸⁰ Նույն տեղում, էջ 223:

⁸¹ Նույն տեղում, էջ 273—274:

⁸² Ֆ. Շալանդոնը, անդրադառնալով այս նույն գեղքերին, սխալ-մամբ դրում է, թե իբր Թորոսը Թումաս դքսին ձերբակալելով գրավել է Տարսոնը (այսպիս) և Մոպսուեստիան (հմտ. F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 426).

⁸³ Okt. Jurewicz, Andronicos I Comnenos.—Amsterdam, 1970,

նշանակել էր թորոս Բ-ի դեմ մղվող պատերազմի «ինքնիշխան զորավար» («ՏՐԱԴԵՐԱՎՈՐ» անուշառածություն)՝⁸⁴։ Անդրոնիկոսին զորահրամանատար է կոչում նաև Միքայել Ասորին, գրելով. «Հույների կայսր Մանուելը մտահոգվեց և Կիլիկիա ուղարկեց զորահրամանատար Անգրոնիկոսին, կայսերական բնտանիքից»⁸⁵. — շեշտում է հակորիկ եկեղեցու պատրիարքը: ԺՅ դարի ժամանակագիր Գրիգոր Երեցը Անգրոնիկոսին անվանում է «կողմնապահ մեծի քաղաքին Տարսոնի և Մըսսայ»⁸⁶: Կողմնապահի պաշտոնը համապատասխանում էր այդ ժամանակաշրջանի բյուզանդական զուրսի ինստիտուտին: Այդ պաշտոնյալի իրավասությունը տարածվում էր հատկաց-

⁸⁴ I. C., p. 121.

- 85 M. S., t. III, p. 310; Միքայել Ասորու երկի հիշյալ հատվածը (ասորերին) հրատարակիչը լրացնում է Բար Երրեսու «Ժամանակագրության» բնագրով, քանի որ մեզ հետաքրքրող յասում Միքայել Ասորու «Ժամանակագրության» ձեռագրից մոտ տաս էլ պակասում է (M. S., t. III, p. 309, n. 3): Միքայել Ասորու երկի հայերեն թարգմանության խմբագրությունները այս հատվածում համանշյուն են Բար Երրեսու երկի բնագրի հետ: Ընդարձակ խմբագրությունը հետեւալ կերպ է նկարագրում դեպքը. «Եւ լուեալ զայս թագաւորն Յունաց (Մանուէլ) և բարկացաւ ի վերայ Պարոն Թորոսի և յառաքեաց զԱնդրոնիկոս զօրագլուխն մեծ ամբոխի ի Կիլիկիա» (Մ. Ա., 1871, էլ 426), իսկ համառոտը՝ «Եւ թագաւորն Յունաց բարկացաւ ի վերայ Թորոսին զի առ զամենայն երկիրն ի ձեռաց Յունաց, և առաքեաց զԱնդրոնիկոս զօրագլուխն իւր ժանր ամբոխի ի վերայ նորաց» (Մ. Ա., 1870, էլ 432): Ուշագրագ է, որ ասորերին բնագրի ֆրանսերեն թարգմանության le general-ի (այստեղ բերում ենք ֆրանսերեն թարգմանությունը, որովհետեւ Բար Երրեսու ասորերեն բնագիրը ձեռք տակ չունենք) դիմաց հայերեն խմբագրությունը ունի «զօրագլուխ» տերմինը, որը համապատասխանում է հունարենի տρշտղի: անուշառածությունը շինվելով Միքայել Ասորու ժամանակագրության վրա Անգրոնիկոսին զօրագլուխն է անվանում նաև Վարդանը (տե՛ս Վարդան, 1861, էլ 164): Զինվորական այս տիտղոսի մասին ահ՛ս H. Ahrweller, Recherches sur l'administration de l'Empire Byzantin IXe—Xe siècles (ահ՛ս հոգվածը հեղինակի հոգվածների հետեւալ ժողովածուում՝ Etudes sur les structures administratives et sociales de Byzance, London, 1971, VIII, p. 56, n. 3).

86 Մատրիոս, էլ 400:

ված երկրամասի քաղաքացիական և զինվորական իշխանությունների վրա։ Դուքս և կողմնապահ պաշտոնների նույնության մասին վկայում է Սմբատ Սպարապետը, որը բացի Գրիգոր Երեցից, մեզ հետաքրքրող դեպքերի մասին ունեցել է ինչ-որ անծանոթ սկզբնաղբյուր։ «Դուքսն Անդրոնիկէ, որ ունէր զարգացանութիւն Կիլիկեցոց աշխարհիս», — գրում է նա⁸⁷։ Անդրոնիկոսին դուքս են անվանում նաև ԺԴ դարի ուրիշ հեղինակներ⁸⁸։ Բերյալ սկզբնաղբյուրներից պարզ է դառնում, որ բյուզանդական տրանշան անուշանդան պարագաներ է նույնացնել Միքայել Ասորու հիշատակած զորահրամանատար («զօրագլուխ») և հայկական աղբյուրներում հանդիպող կողմնապահ ու դուքս պաշտոնների հետ։

Սկզբնաղբյուրները կցկտուր տեղեկություններ են հաղորդում նաև այն մասին, թե որ տարածքների վրա էր պաշտոնավարում Կիլիկիայի դուքսը ԺԲ դարի 50-ական թթ. սկզբ-րին։ Հովհաննես Կիննամոսը վկայում է, որ Անդրոնիկոս Կոմնենոսի իշխանության տակ են եղել Կիլիկիան և Խավրիան⁸⁹։ Բյուզանդական պատմիչն շեն հակադրվում, սակայն նրա իշխանությունը տարածքային ավելի փոքր շրջանի վրա են տեղադրում հայկական և ասորական սկզբնաղբյուրները։ Միքայել Ասորին Անդրոնիկոսի դործունեության տարածքը կապում է Կիլիկիայի հետ⁹⁰, իսկ Գրիգոր Երեցը՝ Տարսոնի և Մսիսի (Մոպսուստիայի)⁹¹։ Կարելի է ենթադրել, որ Անդրոնիկոս Կոմնենոսի փաստական իշխանությունը տարածվում էր Կիլիկիայի այն հատվածի վրա, ուր դեռ չէր հասցրել հաստատվել Թորոս Բ Ռուբինյանը, սակայն կայսրությունը իր

87 Սմբատ, 1956, էջ 170։

88 Սամանի, էջ 215։

89 I. C., p. 121։

90 M. S., t. III, p. 310։ Միքայել Ասորու ժժամանակագրությանը հայերեն թարգմանության խմբագրությունները հետևում են ասորերեն բնագրին։ ԺԴ դարի գրեթե բոլոր հայկական սկզբնաղբյուրները Անդրոնիկոսի իշխանությունը տարածում են միայն Կիլիկիայի վրա (Հմմատ. Սմբատ, 1956, էջ 170 և այլուր)։

91 Մատթեոս, էջ 400։

զորահրամանատարի առջև խնդիր էր գրել հպատակեցնել ողջ Կիլիկիան, այդ իսկ պատճառով Անդրոնիկոսը չէր ցանկանում ճանալել Թորոս թ Ռուբինյանի իշխանությունը, չնայած վերջինս բազմիցս հավաստիացնում էր, թե «ճորտ եմ թագաւորին և քո, մի՛ բարկանար»⁹²: Ժամանակագրի այս վկայությունը ցույց է տալիս, որ Թորոս թ Ռուբինյանը փորձում էր ստանալ կայսեր ստորագայի կարգավիճակ, քանի որ բյուզանդական դուքսը «նեղէր զնոսա. և նորա առ սէր և ահի մեծի թագաւորին Յունաց ոչ համարձակէին տալ ընդ նմա պատերազմ, այլ հանապազ սիրոյ աղագաւ աղաշէին մնալ նմա ի հնագանդութիւն»⁹³: Դուքսին շահագրգուելու փորձերը վկայում են այն մասին, որ բյուզանդական իշխանությունները դեռ բավական ամուր դիրքեր ունեին Կիլիկիայում: Դրան նպաստում էին մասնավորապես մի քանի հանգամանքներ. ա) Կիլիկիայում հնուց ի վեր բնակվում էին հույներ, որոնք շահագրգոված էին այդ տարածքի վրա վերականգնել Բյուզանդիայի իշխանությունը, թ) Կայսրությունը զորամիավորումներ էր պահում Կիլիկիայում: Այս առումով ուշագրավ է Գրիգոր Երեցի վկայությունը, թե՝ Անդրոնիկոս Կոմնենոսը Մսիսի մոտ Թորոսի դեմ է հանել տասներկու հազարանոց զորաբանակ⁹⁴, գ) Բյուզանդական կայսրությանը օգնում էին բյուզանդամեծ հայ իշխանները, որոնք Ռուբինյաններին հակագրելով կայսրությանը, դեռևս պահպանում էին իրենց անկախությունը:

Վերոհիշյալ ուժերը կարող էին միայն նեցուկ լինել Կիլիկիայում բյուզանդական եկեղեցական, կառավարչական, իրավաբանական իշխանությունների գոյատեմանը: Թորոս թ-ը ստիպված էր հաշվի առնել այդ ուժերը և ամեն զնով կանխել Բյուզանդիայի հետ նոր բախումը: Սակայն Անդրոնիկոսը շի հաշտվում Ռուբինյանների հետ և շրջապատում է Մսիսը⁹⁵, Թորոս թ-ը այդ բաղաքի պարիսպների մոտ շախ-

92 Նույն տեղում:

93 Նույն տեղում:

94 Նույն տեղում, էջ 401:

95 I. C., p. 123, Մատքես, էջ 400—401:

շախում է բյուզանդական բանակին, որի կազմում կովում էին նաև հայ իշխաններ Լամբրոնի տեր Օշինը, Պապեռոնի տեր Սմբատը, Բարձրարերդի տեր Վասիլը, Պուականի տեր Սմբատը: Ուշագրավ է, որ Թորոս Բ-ը բյուզանդացի գերիներին զինաթափելով, ազատ է արձակում; իսկ հայ իշխաններին, մանավանդ Օշին Լամբրոնացուն, պարտադրում է ռազմատուգանք վճարել և պատանդ թողնել⁹⁶: Թորոս Բ-ի նպատակն էր կախման մեջ պահել բյուզանդամետ հայ իշխաններին և նրանց պարտադրել Ռուբինյանների իշխանությունը, ի հակադրություն բյուզանդացիների, որոնք շարունակում էին տիտղոսներ շնորհել Հակառուրինյան ավատատերերին, համարելով նրանց կայսրության պաշտոնյաներ⁹⁷: 1151/2 թ. դեպքերը ցույց են տալիս, որ Կիլիկիայի բյուզանդամետ իշխանների զինավոր պարտականություններից մեկը՝ իրենց զինված ուժերով բյուզանդական բանակին օգնություն ցույց տալն էր: Այդ իսկ պատճառով Թորոս Բ-ը փորձում էր ինամիական կապեր հաստատել նրանց պարագլուխ Օշին Հեթումյանի հետ և այդ ճանապարհով լուծել Կիլիկիայի Ռուբինյան իշխանության առջև կանգնած դժվարությունները:

1151—1152 թթ. Կիլիկիայի համար մղվող համառ պայքարում կայսրությունը տանով տվեց և ստիպված էր ժամանակավորապես հրաժարվել Կիլիկիան վերանվաճելու պլաններից: Խակապես, մինչև 1158 թ. Կիլիկիայում լի հիշատակվում որևէ բյուզանդական կառավարիլ, ավելին՝ Թորոս Բ Ռուբինյանը այդ ժամանակամիջոցին Վիլհելմ Սուրացու կողմից անվանվում է Տարսոնի տեր⁹⁸ (այդ քաղաքը Կիլիկիայի բյուզանդական մարզի վարչական կենտրոնն էր և կայսերական դուքսի նստավայրը): 1154—1156 թթ. Մանուել Ա-ը փորձում էր ընկնծել Թորոս Ռուբինյանին, նրա դեմ հրահրելով մերթ Իկոնիայի սուլթանությանը, մերթ Անտիոքի լատի-

96 Մատքեսու, էջ 401: Սմբատ, 1956, էջ 170—171: Սամուել, էջ 216: Ն. Ակինեան. Եերսէս Լամբրոնացի, էջ 427—428:

97 Ազրյուրները վկայում են, որ Լամբրոնի Հեթումյանները բյուզանդական պատվանուն էին կրում. ուղարտուեցաւ ի Յունաց արքայէն Ալեքսէնդրաստու անուամբ» (տե՛ս Ն. Ակինեան, Եշվ. աշխ., էջ 411):

98 W. T., pp. 834, 859:

նական իշխանությանը։ Սակայն երբ ձախողվեց նաև այդ մտահղացումը և այս երեք պետությունների միջև քաղաքական դաշինք հաստատվեց, ավելին, Կիլիկիայի և Անտիոքի տերերը ռազմարշավ ձեռնարկեցին դեպի Կիպրոս (1156 թ.), Մանուել Ա Կոմնենոսը որոշեց կրկին ներխուժել Կիլիկիա և Անտիոք։

Գրիգոր Երեցը բյուզանդական 1158—1159 թթ. ռազմարշավից հետո Թորոսին կոչում է «Պանսեւաստիոս»⁹⁹: Դրժվար է միայն այս սկզբնաղբյուրի վրա հնավելով դատել այս տերմինի կիլիկյան գործածության բուն նշանակության մասին¹⁰⁰: Համենայն դեպս աղբյուրները մինչև 1162 թ. բյուզանդական որևէ դուքսի անուն չեն հիշատակում, ու մեզ թվում է, թե «Պանսեւաստիոս» տիտղոսը կիլիկյան պայմաններում պետք է նշանակեր Կիլիկիայի բոլոր սերաստուներից առաջին¹⁰¹, իսկ այդ պատվանվան կրողը՝ կառավարեր երկրամասը։ Միայն նման ենթադրությամբ կարելի է բացատրել այն իրողությունը, որ մինչև 1162 թ. Կիլիկիայում չի հիշատակվում որևէ բյուզանդական պաշտոնյա։

Մեզ հայտնի հաջորդ բյուզանդական դուքսի մասին Հայոց ՈժԱ (1162 թ. փետրվարի 9—1163 թ. փետրվարի 8) թվականի դեպքերի շարադրանքում վկայություն ունի Գրիգոր Երեցը. «Յայսմ ամի սպանաւ Ստեփանէ եղբայր Թորոսի սեւաստիոսի մեծի՝ որդուց Լոռին նենդութեամբ և դատով տուկին անօրինի խեղդամահ արար զայնպիսի քաջ և երկելի զօրականն քրիստոնէից»¹⁰²: Այս նույն իրադարձությանը Միքայել Ասորին անդրադառնում է սելիկյան 1473 թ. (1161 թ. հոկտեմբեր — 1162 թ. հոկտեմբեր) դեպքերի նկարագրության

⁹⁹ Մասնիքն, էջ 423:

¹⁰⁰ Բյուզանդական կայսրության սահմաններում այս պատվանվան օգտագործման մասին տե՛ս L. Bréhier, Op. cit., p. 138—143:

¹⁰¹ Քանի որ խոսք եղավ Թորոս Բ-ի կարգավիճակի մասին, պետք է նկատի ունենալ Միքայել Ասորու ասորերին բնագրում առկա *Magē agerū* կոչումը։ Այս տերմինի վրա հատուկ ուշագրություն է հրավիրում Ժ. — Բ. Շաբոն, որն այն թարգմանում է *dominus mercedis** (*M. S.* t. III, p. 304, n. 2):

¹⁰² Մատթեոս, էջ 428:

մեջ: Նրա շարադրանքից (Միքայել Ասորու բնագրի այս հատվածը Բար Երրեսոսի բնագրով է վերականգնված) պարզվում է, որ Կիլիկիայի ղուկար Անդրոնիկոսն է, Տարսոնի հունական կառավարիլ (prefet grec de Tarse)¹⁰³, Երբ համադրում ենք դեպքերին ժամանակակից այս երկու հեղինակների վկայությունները, հայտնի է դառնում, որ իրադարձությունը եղած պետք է լինի 1162 թ. փետրվար-Հոկտեմբեր ժամանակամիջոցին: Հովհաննես Կիննամոսն իր վկայությամբ հստակություն է մտցնում Անդրոնիկոսի ինքնության խընդրում, նշելով, որ Մանուել Ա Կոմնենոսը Կիլիկիա է ուղարկած եղել իր ազգական Անդրոնիկոս Ֆերրենոսին (‘Ανδρονίκος Φερθήνος), որը Կիլիկյան ղորքերի հրամանատարն էր: Բյուզանդական պատմիչը տեղեկացնում է նաև, որ Թորոս Բ-ը գրավում էր կայսեր ենթակա իսաւրական քաղաքները՝ մեղադրելով Անդրոնիկոս Ֆերրենոսին ինչպես ուրիշ շատ գործերում, այսպես էլ իր եղբայր Ստեփանեի սպանության մեջ¹⁰⁴: Եթե Անդրոնիկոս Ֆերրենոսին վերաբերող տրամադրություններում պայմանական է կառավարիլ անդրամապատասխանի ղորավարին (տրամադրությունների մեջ): Այս տերմինին նորից հումանիշ է դառնում հայկական աղքյուրի տուկը (ղուքս), իսկ ասորական սկզբնաղքյուրում կառավարիլ (ֆր. թարգմ. «ցրելու») (բնագրի հայերեն թարգմանության մեջ փոխարինվել է «իշխան» տերմինով): Սկզբնաղքյուրները Անդրոնիկոս Ֆերրենոսին կոչում են. ա) Կիլիկիայի ղորահրամանատար¹⁰⁵, բ) Տարսոնի կառավարիլ¹⁰⁶, գ) ղուքս «Յունաց», յաշխարհն Կիլիկեցւոց»¹⁰⁷, դ) Համուսի ղուքս¹⁰⁸:

¹⁰³ M. S., t. III, p. 319; Հմմտ. նաև Մ. Ա., 1871, էջ 445—446: Միքայել Ասորու բնագրի այս հատվածը հրատարակիչը լրացնում է Բար Երրեսոսի «Ժամանակագրության» միջոցով (Հմմտ. Մ. Ա., 1870, էջ 448):

¹⁰⁴ I. C., pp. 227—228.

¹⁰⁵ I. C., p. 228.

¹⁰⁶ M. S., t. III, p. 319:

¹⁰⁷ Միքատ, 1856, էջ 186:

¹⁰⁸ Միքատ, 1859, էջ 98, 1856, էջ 86: Միքայել Միքատի Տարեգրության համառոտ խմբագրություններում հանդիպող այս կոչումը, մեր կար-
204

Ինչպես տեսնում ենք, Անդրոնիկոս Ֆերրենոսի իշխանությունը տարածվել է ոչ միայն Դաշտային Կիլիկիայի վրա, այլ նաև, ինչպես կարելի է եզրակացնել Կիննամոսի բնագրից, Էսավրիայի, որը, թերեւ, նրա իրավասությունների ոլորտում է եղել¹⁰⁹: Անդրոնիկոս Ֆերրենոսի ձեռքից Թորոս Բ-ը կարողացել է խլել Անավարդան և Թիլը (Թիլ Համտում)¹¹⁰ Նշանակում է, որ թեև մինչև 1162 թ. Կիլիկիայում որևէ բյուզանդական դուքսի անվան չենք հանդիպում, այնուամենայնիվ կայսրության իշխանության տակ էին Դաշտային Կիլիկիայի հսկայական տարածքներ, որոնք 1158 թ. Մանուկը կայսրը խլել էր Թորոս Բ-ից: Ուշագրավ է, որ դրանց մեջ է եղել Լեռնային Կիլիկիայի մայրաքաղաք Անավարդան: Հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ Անդրոնիկոս Ֆերրենոսի և Թորոս Բ-ի միջև ուազմական բախումից հետո, որպես հաշտարար դատավոր կամ, ինչպես միշագային իրավունքի լիզվով են ասում՝ դատական միջնորդ, Կիլիկիայի դուքսը կանչում է ոչ թե Բյուզանդիայի կայսրին, այլ Երուսաղեմի թագավորին¹¹¹: Թվում է, թե այդ քայլից հետո Թորոս Բ-ը ամբողջովին պետք է մերժեր իր տնօրինության տակ գտնվող տարածքների նկատմամբ Բյուզանդական կայսրության գերակայությունը:-

Կիլիկիայի ժամանակագրութեն հաջորդ դուքսը, որի մասին վկայություններ են պահպանել սկզբնաղբյուրները, Կոստանդին Կալամանոսն է: Բյուզանդական այս կառավարչի

ժիքով, Սմբատի երկի ընդարձակ խմբագրության անփույթ ընդօրինակման արդյունքն է, ուր այդ հատվածը հետեւալ տեսքն ունի. տանօրէն տուեմբն Յանաց, յաշխատեն Կիլիկեցաց, ապէ. Համբամին (Սմբատ, 1956, էջ 186): Եթե դուքս նետենք ընդգծված հատվածը, նույնությամբ կստանանք Սմբատի համառոտ խմբագրությունների մատուցած տարրերակը:

109 I. C., p. 228:

110 Մ. Ա., 1871, էջ 446:

111 Մ. Ա., 1871, էջ 446: Միշագային հարաբերություններում Կիլիկիան Հայաստանը հաճախ էր օգտվում դատական միջնորդության ինստիտուտից, մանավանդ թագավորության շրջանում: Այդ հարցերի մասին ան Յ. Գ. Барсегов, Арбитраж в международных отношениях Армении эпохи античности и средних веков, ИФЖ, 1982, № 1, с. 39—54:

Հիշատակությանը հանդիպում ենք Վիլհելմ Սուրացու աշխատության բնագրում, Հարիմի ճակատամարտին (1164 թ. օգոստոս) մասնակցած իշխանների անունների մեջ: Նրա մասին լատին ժամանակագիրը գրում է. «Կալամանոսը՝ Կիլիկիայի կուսակալը (praeses), տեր կայսեր ազգականը և կայսերական ողջ մարզի (նկատի ոմի Կիլիկիան —Ա. Բ.) գործերի կառավարիչը (procuator negotiorum)»¹¹²: Նույն բնագրի հին ֆրանսերեն տարբերակում Կալամանոսն անվանվում է «Կիլիկիայի պայլ» (li bailliz de Cilice)¹¹³: Այս անգամ Կալամանոսին դուքս են անվանում Հոմական, արաբական և ասորական սկզբնաղբյուրները: Հովհաննես Կիննամոսը այս կառավարչի մասին գրում է. Նույր ադ-Դինը «ճակատամարտ պարտադրեց Կիլիկիայի դուքս Կոստանդինին, որին Կալոմանոս էին կոչում, տեսքով երիտասարդ, քաջ և գործունյա պատերազմում»¹¹⁴: Ապա Հույն պատմիլը խոսում է Հարիմի ճակատամարտի մասին և հավաստում, որ Կալամանոսը այդ ժամանակ գերի է ընկել: Այս նույն դեպքին անդրադարձած իրն ալ-Ասիրը¹¹⁵, Անանուն Եղեսացին¹¹⁶ և Միքայել Ասորին¹¹⁷ միաբերան Կոստանդին Կալամանոսին դուքս են անվանում:

Ամփոփելով այս դուքսի մասին մեր ասելիքը, նշենք, որ մեզ Հետաքրքրող պաշտոնյան Հոմարեն, արաբերեն և ասորերեն բնագրերում անվանվում է Կիլիկիայի դուքս, իսկ լատիներեն բնագրում՝ Կիլիկիայի կուսակալ (praeses Ci-

¹¹² Տե՛ս W. T., p. 896:

¹¹³ Նույն տեղում, էջ 896, 897:

¹¹⁴ I. C., p. 216:

¹¹⁵ Extrait de la chronique intitulée Kamel-Altevarey kh par Ibn Alatyur.—RHC, hist. orient., t. I, Paris, 1872, pp. 538—539.

¹¹⁶ Անանուն Եղեսացի, էջ 123, 227, ծան. 362:

¹¹⁷ Հարիմի ճակատամարտին վերաբերող մեզ Հետաքրքրող կտորը և Միքայել Ասորու «ժամանակագրության» մեջ վերականգնվում է ըստ Բար Օրենոսի մոտ պահպանված հատվածի (տե՛ս M. S., t. III, p. 324): Ասորական սկզբնաղբյուրում «դուքս» տիտղոսը անուն է ընկալվել: Այդպիսի սխալ կատարել է նաև լատինական սկզբնաղբյուրը (տե՛ս F. Chalandon-Lec Comnènes, p. 525, ո. 2).

liciae), «ողջ մարզի կայսերական գործերի կառավարիչ» (Imperialum in alla provincia procurator negotiorum), «Կիլիկիայի կառավարիչ» (Ciliciae procurator), հին ֆրանսերեն թարգմանության մեջ՝ «Կիլիկիայի պալլ» կամ «Կիլիկիայի տարածքների պալլ» (Il bailiz de Cilice, bailiz en la terre de Cilice)՝¹¹⁸. Այս բազմաթանակ հովանիշների տակ, մեր կարծիքով, մեկ պաշտոն է թաքնված և նրանցից յուրաքանչյուրը միայն պարզաբանում է այդ պաշտոնի իրավասությունների շրջանակները:

Ինչպես միաբերան հաղորդում են բոլոր սկզբնաղբյուրները, Կոստանդինը այդ ճակատամարտում գերի ընկավ, իսկ Մանուել Ա Կոմնենոսը, որ այդ ժամանակ պատերազմում էր հովարձների հողում, Կոստանդին Կալամանոսի հայրենիքում, զորք է ուղարկում Կիլիկիա, կայսրության այդ մարզը թշնամիներից պաշտպանելու համար¹¹⁹:

Կիլիկիայի հաջորդ դուքսի մասին ժամանակագրական տեղեկություններ են հաղորդում հայկական սկզբնաղբյուրները: «Պատճառ խնդրոյ միաբանութեան» ժողովածուում պահպանված «Գիր հաւատոյ խոստովանութեան» թղթի գերնագրից տեղեկանում ենք, որ այն գրվել է «ի խնդրոյ գերապատիւ փեսայի ինքնակալ թագաւորին Հոռոմոց Մանուէլի Ալեքսի մեծի Պոտոստուատոսի, յորժամ էլ յարենելս եւ էր ի Մամեստիա մայրաքաղաքին Կիլիկիցւոց, ի թուականութեան Հայոց՝ վեց հարիւր շորեքտասան»¹²⁰: Նշանակում է, թե Ալեքս «Պոտոստուատոր» Կիլիկիայում պաշտոնավարել է 1165/6 թ.¹²¹: Վերևում տեսանք, որ Կոստանդին Կալամանոսի գերի

¹¹⁸ Աշխագրավ է, որ նույն դեպքերի շարագրանքում Թորոս Բ-ը անվանվում է «հայերի զար իշխան» (Armeniorum princeps potentissimus), իսկ հին ֆրանսերեն բնագրում՝ Il puissant prince d'Ermins (տե՛ս W. T., p. 896).

¹¹⁹ I. C., p. 217:

¹²⁰ Թ. Ը., 1871, էջ 87: Հմմտ. նաև Կիրակոս Գանձակեցի, էջ 121—122:

¹²¹ Ալեքս Աքսովսի գալուստը Կիլիկիա 1165/6 թվականով է թվագրում նաև Կոստանդին Մեկիոսը (տե՛ս Μέχιος Κ. Ο' μέγας δομεστίκος,

ընկնելուց հետո Մանուել կայսրը զորք է ուղարկել Կիլիկիա: Գիտությանը հայտնի չէ 1164/5 թ. իշխած դուքսի մասնը, սակայն պետք է ենթադրել, որ Մանուել Կոմնենոսը նշված թվականին նաև զորահրամանատար է առաքել Կիլիկիա:

«Պատճառ խնդրոյ միաբանութեան» ժողովածուում ներսես Լամբրոնացին Ալեքսի զբաղեցրած պաշտոնի մասին գրում է. «իշխան ոմն (խոսքը Ալեքսի մասին է — Ա. Բ.)՝ դուքս կարգեալ կողմանցու արեելեայց: Քանզի այս սովորութիւն է Հոռոմոց՝ ըստ շրջագայութեան ամի կարգեալ Վերատեսուզ աշխարհաց հանել և փոխանակ նորա զայլ ոք առաքել: Եւ այս այլ իրեն զկորովամիտ և զիմաստուն յայնժամ եկեալ էր՝ փեսայ գոլով թագաւորին, և պատուվ առաջին գոլ հեծելագորացն՝ որ կոչի յունարեն Պոօտոստոատո»¹²²:

Այս վկայությունը շափաղանց ուշագրավ է այն առումով, որ հեղինակը՝ Տարսոնի եպիսկոպոս Ներսես Լամբրոնացին հաղորդում է, թե Բյուզանդական կայսրության մեջ սովորություն է տարին փոխվելու հետ միասին վերատեսուշ-դուքսին պաշտոնից ազատել և նրա փոխարեն այլ անձնավորություն նշանակել (հանգամանք, որը հավանաբար, հատուկ շէր Բյուզանդիայի վարչական ապարատի պատմության նախորդ՝ նախակոմնենույան փուլում):¹²³ Ուրեմն, յուրաքանչյուր տարի նոր դուքս էր ուղարկվում Կիլիկիա (այս իրողությունը հաստատվում է նաև մեր ուսումնասիրությամբ): Քանի որ բյու-

τοῦ Βοζαντίου Ιωάννης 'Αξοῦχος; καὶ ὁ πρωτοστράτωρ ὁιδες αὐτοῦ 'Αλέξιος. 'Εν 'Αθήναις, 1932, σ. 44):

122 Թ., Ը., 1871, էջ 86—87:

123 ՏԵ՛ս օրինակ Վ. Հարությունովա — Ֆիդանյանի կազմած Իրերիա թեմի կառավարչների ցուցակը (Վ. А. Арутюнова-Фиданян, Византийские правители фемы Иверия.—ВОИ, 1973, № 2, с. 77; ее же, К вопросу о термине «Восток» в конце X—XI вв. (по данным о высших военных должностях Византийской империи).—ВО, М., 1982, с. 137). Համար. Կ. N. Yuzbashyan, L'Administration Byzantine en Arménie aux Xe — XIe siècles.—REArm., t. X (1973—1974), p. 182—183; Ahrweiler H. Recherches..., p. 45.

զանդական տավա սկիզբը սեպտեմբերի մեկն էր¹²⁴, ուրեմն դուքսերը պաշտոնատեղի էին ուղարկվում այդ ամսին, իսկ մի տարի անց, նույն ժամանակ, իրենց իրավասությունները հանձնում էին հաջորդ դուքսին։ Նման կարգ կայսրությունը հաստատել էր ապահովության համար, քանի որ նույն մարդում երկար պաշտոնավարելով դուքսերը կարող էին Բյուզանդիայից անջատվելու փորձ կատարել¹²⁵:

Բյուզանդական պատմիչ Հովհաննես Կիննամոսը Ալեքս Աքսուխի նշանակման մասին գրում է. «Իսկ Ալեքսին՝ դոմեստիկոսի (նկատի ունի Հովհաննես Աքսուխին —Ա. Բ.) որդուն, որը պրոտոնոտարի պաշտոն էր վարում, ինչպես բազմից հիշատակեցի, հիշարժան պատրաստությամբ ուղարկեց (Մանուել Ա Կոմնենոսը —Ա. Բ.) Կիլիկիայի երկիրը, այնտեղի պատերազմի ինքնիշխան զորահրամանատար (տրատղոն անտէքրάտօրա) նշանակելով»¹²⁶. Հետևապես՝ դուքս վերատեսուչ «տրատղոն անտէքրատօր» պաշտոնների անունները կրկին որպես Հոմանիշներ են օգտագործվում։ Դրանց զորագույն Ալեքս Աքսուխը կրում է նաև «պրոտոստրատոր» տիտղոսը¹²⁷. Բյուզանդական այս դուքսի կառավարման տարրում կայսրության ուղամական և վարչական իշխանությունները Կիլիկիայում ուժեղացել էին։ Ալեքսի խնդիրների մեջ էր մտնում ետ մզել նույր աղ-Դինի կողմից ծրագրվող արշավանքը դեպի Անտիոք և հակահարված տալ Կիլիկիայում հզորացող Թորոս Բ-ի իշխանությանը¹²⁸. Այդ քաղաքականության կոնկրետ արտահայտությունն էր Թորոս Բ-ի և Օշին-

¹²⁴ V. Grumel, La Chronologie. Traité d'études byzantines, t. I, Paris, 1958, p. 176.

¹²⁵ Տե՛ս Ի. Պ. Медведев, Минстра, очерки истории и культуры поздневизантийского города.—Л., 1973, с. 24.

¹²⁶ J. C., p. 227.

¹²⁷ Այս տիտղոսի մասին տե՛ս R. Guilland, Etudes de titulature et de prosopographie Byzantines. Le protostrator.—REB, t. VII, f. 2, 1950, pp. 156—179.

¹²⁸ J. C., p. 227—228.

Համբրոնացու ռազմական բախումը, քանի որ վերջինս հավատարիմ էր մնում Բյուզանդական կայսրությանը¹²⁹: Հայկական սկզբնաղբյուրներում, Ռուբինյանների և Հեթումյանների միջև հիշատակված պայքարում որպես դատական միջնորդ է հանդես գալիս ոչ այլ ոք, քան Հայոց կաթողիկոսի ֆղբայրը՝ Ներսես Շնորհալին: Ալեքս Աքսուխի պաշտոնավարության հատկանշական կողմերից մեկն էլ Բյուզանդիայի ակնհայտ միտումն է՝ հայերի հետ բաղաքական հաշտությունն ամրապնդել եկեղեցիների միության դաշինքի գաղափարով¹³⁰:

Կիլիկիայի բյուզանդական հաջորդ դուքսը կրկին կայսեր ազգական Անդրոնիկոս Կոմնենոսն էր: Նա մինչև 1165 թ. գտնվում էր Գալիլում¹³¹, որտեղից վերադառնալով, ուղարկվում է Կիլիկիա: Անդրոնիկոսի այս երկրորդ դըքառության տարրում Մանուել Ա Կոմնենոսը ընդլայնում է Կիլիկիայի դուքսի իրավասությունների շրջանակները, նրա պարտականությունների մեջ մտցնելով նաև Կիպրոսից հար-

129 1165/6 թ. Թորոս Բ-ը պատերազմում էր բյուզանդամետ իշխանների և Կիլիկիայի կայսերական պաշտոնյայի դեմ՝ պատմառ բռնելով իր Ֆղբայր Ստեփաննեի սպանությունը: Այդ մասին է վկայում նաև Սմբատ Սպարապետի Տարեգիրը (1953, էջ 186), որի հեղինակը, սակայն, սխալ վում է, երբ Ստեփաննեի մահը ևս թվադրում է 1165 թ. (ՈժԴ): Վերոհիշյալ հատվածում ժամանակագրական սխալ է թույլ տալիս նաև Հովհաննես Կիննամուսը: Նրա մոտ դիպլոմներին այնպիս են ներկայացված, որ կարծես թե Ալեքս Աքսուխից առաջ Կիլիկիայի դուքսը Անդրոնիկոս Ֆերրենոսն է եղել, մինչդեռ, ինչպես վերևում տեսանք, Հովհաննես Կիննամուսը ևս պիտի, որ այդ երկու դուքսերի միջև իշխել է Կոստանդին Կալամանոսը:

130 Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների մասին տե՛ս 1. Զեքինան, Համամելութենական տրամախօսութիւն մը ԺԲ դարուն «Բազմավագիպ», 1977, № 3—4, էջ 591—636: Ա. Բոզյան, Հայ-բյուզանդական դիվանագիտական հարաբերությունները ԺԲ դարի 60—70 թթ., «Պատմաբանական հանդես», 1981, № 2, էջ 150—163: A. Keshishian, The problem of church Unity in Twelfth century.—«Հասկ», հայոգիտական տարեգիրը, նոր շրջան, Ա տարի, Անթիւաս, 1980, էջ 91—106:

131 Okt. Juriewicz. Op. cit., p. 56—70.

կեր հավաքելու իրավունքը¹³²: Եթե Կիննամոսի բնագրում շեշտված է՝ այդ հանգամանքը, ապա Նիկետաս Խոնիատեսը ընդդժում է Անդրոնիկոս Կոմնենոսի կառավարիչ-զորահրամանատար (նշեցնած) լինելը¹³³: Պարզ է, որ Անդրոնիկոսը ոչ միայն Կիլիկիայի վերատեսուղն էր, այլև Կիպրոսի հարկերի գանձողը: Այս նորամուծությունը՝ Կիլիկիայի և Կիպրոսի կառավարչական խնդիրներում, խոսում է այն մասին, թե որքան մեծ տեղ էր հատկացնում կայսրությունը Կիլիկիայի գործերին: Նիկետաս Խոնիատեսի պատմածից երևում է, որ Անդրոնիկոսը ևս չի կարողանում իրեն ենթարկել Կիլիկիան ու անհաջողության է մատնվում¹³⁴: Անդրոնիկոսը, սակայն, կարճ ժամանակ է մնում իր պաշտոնում և 1166 թ. նրան տեսնում ենք Անտիոքում, իսկ 1167 թ.՝ Պաղեստինում¹³⁵: Այդ տարիների նրա գործունեության մասին տեղեկություններ է հաղորդում Վիլհելմ Սուլացին, շեշտելով, որ նա բյուզանդական ազնվականական է՝ իշխան և կայսեր ազգականը¹³⁶:

Կիլիկիայի հաջորդ դուքսի մասին վկայություն է թողել միայն Նիկետաս Խոնիատեսը: Ըստ նրա, Մանուել Ա Կոմնենոսը, լսելով Անտիոքի իշխանադուստր Ֆիլիպպի հետ Անդրոնիկոսի սիրային կապի մասին և իմանալով, որ նա չի արդարացրել իր հույսերը Կիլիկյան Հայաստանի վերաբերմամբ, կրկին Կիլիկիա է ուղարկում սերաստոս Կոստանդին Կալամանոսին: Վերջինս Կիլիկիա է շտապում որպես «հայերի գործերի վերատեսուղ» (τοῖς χατ' Ἀρμενίαν μὲν ἐπιστρατήγοντα πράγματι)¹³⁷: Կայսրը նոր դուքսի առջեւ խնդիր էր դրել կնության առնել Անտիոքի իշխանադուստր Ֆիլիպ-

132 *I. C.*, p. 250;

133 *N. Ch.*, p. 137—138:

134 Եռոյն տեղում, հմատ. նաև *F. Chalandon*, *Les Comnènes*, t. II, p. 529—530.

135 *N. Ch.*, p. 139—141; *I. C.*, p. 250—251; *F. Chalandon*, *Les Comnènes*, t. II, p. 529—530.

136 *W. T.*, p. 943:

137 *N. Ch.*, p. 140:

պեին, սակայն Կոստանդին Կալամանոսի ամուսնական առաջարկությունը մերժվում է Ֆիլիպպեի կողմից¹³⁸: Այս մտահղացումը ևս գալիս է հաստատելու այն միտքը, որ Մանուել Ա Կոմնենոսը փորձում էր ամեն գնով կախման մեջ պահել Անտիոքի խաչակրաց իշխանությունը: Զախողված անտիոքյան ուղևորությունից հետո Կոստանդին Կալամանոսը ձեռնամուխ է լինում Կիլիկիայում ծավալված պատերազմական գործերին¹³⁹: Իր իսկ սանձազերծած պատերազմում Կոստանդինը գերի է ընկնում, և կայսրը նրան ազատելու համար մեծ փրկագին է վճարում¹⁴⁰: Ուշադրության արժանի է, որ Կիլիկիայի տարածքի կենտրոնը, ըստ Նիկետաս Խոնիատեսի, կրկին Տարսոն քաղաքն է: Կոստանդին Կալամանոսը իշխում էր Կիլիկիայում Թորոս Բ Ռուբինյանի իշխանության վերջին և Մլեհի կառավարման առաջին տարում՝ 1167/8 թ.:

Կիլիկիայի հաջորդ դուքսերի մասին սկզբնաղբյուրները պահպանել են կցկտուր վկայություններ: Դրանց մեջ ամենակարևորը Կիննամոսի տեղեկությունն է¹⁴¹: Նա ցավով է արձանագրում, որ Բյուզանդիայի գործերը Կիլիկիայում գնալով վատանում էին. փաստորեն երկրամասի ողջ տարածքի վրա տնօրինում էին Ռուբինյանները: Կայսրությունը ոչինչ շշահեց և այն ժամանակ, երբ մահացավ Թորոս Բ-ը և իշխանության կառավարումը ստանձնեց նրա եղբայր Մլեհը (1167/8 թ.): Վերջինս իշխանության գլուխ էր անցել նուր աղդինի օգնությամբ և մինչև իր կյանքի վերջը հավատարիմ ըլնաց Հայեալի աթաբեկությանը: Մլեհի կառավարման տարիներին, ինչպես հավաստում է Կիննամոսը, բազմաթիվ դուքսեր են ուղարկվել Կիլիկիա, որոնցից միայն երեքի անունն է հիշատակում պատմիչը: Դրանք են՝ Միքայել Վրանասր, Անդրոնիկոս Ֆերենցոսը և Կոստանդին Կալամանոսը¹⁴², որոնց

138 Նույն տեղում, էջ 140:

139 Նույն տեղում:

140 Նույն տեղում:

141 J. C., p. 286:

142 Հովհաննես Կիննամոսի Պատմության հենց այս հատվածն էլ

բյուզանդական պատմիչը անվանում է օրգառոց՝¹⁴³ Եթե Հետեւնք Կիսնամոսի շարադրանքին, և հիշենք, որ Կիլիկիայի դուքսը փոխվում էր «ըստ շրջադայութեան ամի», ապա կարելի է ենթադրել, որ Միքայել Վրանասը Կիլիկիայում պաշտոնավարել է 1168/9 թ., Անդրոնիկոս Ֆերրենոսը (երկրորդ անգամ) 1169/70 թ., իսկ Կոստանդին Կալամանոսը (երրորդ անգամ)՝ 1170—1175 թթ. միջեւ:

Սկզբնաղբյուրները հազվագեց են հիշատակում հաշորդ տարիների Կիլիկիայի դուքսերին, բյուզանդական պատմիչները մոռացության են մատնում Կիլիկիայի գործերը։ Այդ առումով եղակի վկայություն է պահպանել Նիկետաս Խոնիատեսը, որը Մանուել Ա Կոմնենոսի իշխանության վերջին տարում հիշատակում է Կիլիկիայի բյուզանդական ևս մեկ կառավարչի՝ Խսահակ Կոմնենոսին, որը, ինչպես նախորդ դուքսերը, կրկին պատերազմի մեջ է մտնում Ռուբինյան իշխանության դեմ և գերի է ընկնում¹⁴⁴։ Նշանակում է, թե արդեն այդ ժամանակ՝ Ռուբինյան իշխանությունը բացարձակապես անկախ էր կայսրությունից։ Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Խսահակ Կոմնենոսին գերությունից ազատում են Երուսաղեմի խաչակիրները¹⁴⁵։ Բյուզանդական մի այլ դուքսի հիշատակության էլ ժանոթ է Ֆ. Շալանդոնը¹⁴⁶, Մրանցով ավարտվում են ԺԲ դարի երկրորդ կեսին Կիլիկիայում իշխած բյուզանդական դուքսերի մասին վկայությունները։

սխալ է հասկացել Ֆ. Շալանդոնը, մտածելով, թե այստեղ խոսքը վերաբերում է ընդհանրապես ԺԲ դարի 60-ական թթ. Կիլիկիայում կառավարած դուքսերին։ Այդ պատճառով էլ Միքայել Վրանասի դրսությունը թվագրում է 1160 թ. (ան' «F. Chalandon, Les Comnènes, 1. II. p. 526—527, n. 2»).

143 I. C., p. 286;

144 N. Ch., p. 290; F. Chalandon, Les Comnènes, 1. II, p. 526.

145 N. Ch., p. 290; F. Chalarden, Les Comnènes, 1. II, p. 527.

146 F. Chalandon, Les Comnènes, 1. II, p. 527։ Բյուզանդագետությունը է Հաթակ Կ. Ա. Մետաւուշտ Վիճլօֆդիշի. — Venedig, 1872—77 հրատարակության երկրորդ հատորից (էջ 3), որը մենք լենք կարողացել ձեռք բերել։

Փորձենք կազմել ԺԲ դարի 40—70-ական թթ. Կիլիկիա-յում իշխած բյուզանդական դուքսերի ժամանակագրական ցուցակը.

1144/5 թ. Պրոսուխ

1151/2 թ. (") Թումա

1152/3 թ. (") Անդրոնիկոս Կոմնենոս, առաջին դքսություն:

1153—1158 թթ. Թորոս Բ-ը կարողանում է Կիլիկիայում վերացնել բոլոր բյուզանդական իշխանությունները:

1159—1162 թթ. Կիլիկիայում որևէ դուքսի անուն չի-շատակվում: Թվում է, թե Թորոս Բ-ը, դառնալով Բյուզանդական կայսրության ստորական և ստանալով պահսկաստիոնի պատվանուն, համաձայնության է եկել կայսրության հետ Կիլիկիայում այլևս դուքսեր չնշանակելու մասին:

1162/3 թ. Անդրոնիկոս Ֆերբենոս, առաջին դքսություն:

1163/4 թ. Կոստանդին Կալամանոս, առաջին դքսություն:

1164/5 թ. դուքսի անունը անհայտ է:

1165/6 թ. Ալեքս Աքսուխ:

1166/7 Անդրոնիկոս Կոմնենոս, երկրորդ դքսություն:

1167/8 թ. Կոստանդին Կալամանոս, երկրորդ դքսություն:

1168/9 թ. Միքայել Վրանաս:

1169/70 թ. Անդրոնիկոս Ֆերբենոս, երկրորդ դքսություն:

1170—1175 թթ. Թեև շգփտենք Միքայի կառավարման տարիներին Կիլիկիայում իշխած բոլոր դուքսերի անունները, այնուամենայնիվ դրանցից մեկի՝ Կոստանդին Կալամանոսի (երրորդ դքսություն) անունը հայտնի է:

1179/80 թ. Խաչակ Կոմնենոս:

Եթե ի մի հավաքենք Կիլիկիայի կառավարիչների մասին այլալեզու սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները, հայտնի կդառնա.

ա) Հայկական սկզբնաղբյուրները գերազական մեծամասնությամբ նրանց անվանում են դուքս¹⁴⁷, Բյուզանդական աղք-

147 Մատթեոս, էջ 428: Ներսես Շնորհալի, էջ 86: Սամանի, էջ 214:

յուրներից միայն Կիննամոսն է մեկ անգամ Հիշատակում այդ կոչումը¹⁴⁸: Պաշտոնի այդ անվանմանը հանդիպում ենք նաև ասորական և արարական սկզբնաղբյուրներում¹⁴⁹:

բ) Հայկական սկզբնաղբյուրներում Կիլիկիայի կառավարիները անվանվում են նաև վերատեսուչ¹⁵⁰: Այս իմաստով պետք է հասկանալ նաև Վիլհելմ Սուրացու մոտ հանդիպող procurator (լատիներեն բնագիր) և bailliz (հին ֆրանսերեն բնագիր) տերմինները¹⁵¹ և բյուզանդական պատմիչ Նիկետաս Խոնիատեսի մոտ պատահող էռւտաւութարայական ձեզ¹⁵²:

գ) Հայկական աղբյուրները դուքսերին անվանում են նաև կողմնապահ¹⁵³, որին զուգահեռ ենք համարում լատիներենի (praezes) տերմինը¹⁵⁴:

դ) Հունական սկզբնաղբյուրներում ավելի հաճախ պատահում է ստրաτηց ավտօχրάտօր ձեզ¹⁵⁵, որն ասորերեն սկզբնաղբյուրներում ունի գեներալ (ըստ ֆրանսերեն թարգմանության)¹⁵⁶, իսկ նույն երկի գրաբարյան թարգմանության մեջ օգազգուխ¹⁵⁷ համարժեքները: Հունական սկզբնաղբյուրներում հանդիպում է նաև պաշտոնի սոսկ ստրատηց անվանումը¹⁵⁸:

ե) Նիկետաս Խոնիատեսը իր Հիշատակած Կիլիկիայի ամենավերջին դուքսին անվանում է Դյեւլան¹⁵⁹, որի ասորական ձևն է, որ մեր կարծիքով ժարի հայերեն թարգմանության

148 I. C., p. 216:

149 Անանան Եղիսացի, էջ 123; M. S., t. III, p. 324; PHC. hist. or. t. I, p. 538, 540.

150 Խերես Շնարհալի, էջ 86:

151 W. T., p. 896, 897;

152 N. Ch., p. 140:

153 Մատրիս, էջ 400, 1956, էջ 170:

154 W. T., p. 896:

155 I. C., p. 227:

156 M. S., t. III, p. 310:

157 Մ. Ա., 1871, էջ 426, Մ. Ա., 1870, էջ 43:

158 I. C., p. 286:

159 N. Ch., p. 137:

մեջ փոխարինվել է իշխան¹⁶⁰ համարժեքով, իսկ նորագույն ֆրանսերեն թարգմանության մեջ՝ prefeet հոմանիշով¹⁶¹:

Այժմ, խնդիրն ամբողջության մեջ պատկերացնելու համար, մոտավորապես սահմանագծենք այն տարածքները, որտեղ կառավարում էին Կիլիկիայի դուքսերը։ Սկզբնաղբյուրները վերևում հիշատակված բոլոր պաշտոնյաների գործունեության տարածքը համարում են Կիլիկիան։ Սակայն Վիլհելմ Սուրացին, հավանաբար օգտվելով անտիկ աշխարհագրական տեղանվանակարգից (հոմենկլատուրա), գիտե երկու Կիլիկիա՝ առաջին և երկրորդ, որոնցից մեկի մայրաքաղաքն էր Տարսոնը, մյուսինը՝ Անավարզան¹⁶², Այս վիճակը արձանագրված է նաև է գարի հայերեն «Աշխարհացոյց»-ում։ «Կիլիկիա ... Երրունս ունի զՏարոս, եւ գետս վեց, եւ մայրաքաղաքս երկուս՝ զՏարսոն և զԱնավարզարա...»¹⁶³։ Աղբյուրները տեղեկացնում են նաև, որ մինչև 1162/3 թ. Կիլիկիայի կողմնապահության կազմի մեջ պետք է մտներ նաև Խավրիան՝ Սելեկիա մայրաքաղաքով, որովհետև մինչև Անդրոնիկոս Ֆերդինոսի առաջին պաշտոնավարությունը այդ տարածքը հիշատակվում է Կիլիկիայի դուքսի իրավասության ներքո։

Փորձենք նաև սկզբնաղբյուրների հատուկենտ վկայությունների հիման վրա պարզել դուքսերի իրավասությունների ոլորտները։ Դրանցից առաջինը զինված ուժերի զորահրամանատարի՝ զորավարի պարտականություններն են, այդ է պատճառը, որ նրան էին ենթարկվում ոչ միայն Կիլիկիայում (մինչև 1163 թ. նաև Խավրիայում) գտնվող կայսրու-

160 Ա. Ա., 1871, էջ 446, Ա. Ա., 1870, էջ 448.

161 M. S., t. III, p. 319.

162 Տե՛ս W. T., p. 695: Ուշագրավ է ևս մի հանգամանք. Ներսես Լամբրոնացին, «Պատճառ խնդրու միարանութեան» ժողովածուի առաջարանում օգտագործելով «գաճ՝ Կիլիկիոյ» հասկացությունը և՛ Թորոս Բ-ին, և՛ Օշին Հեթումյանին անվանում է. «տէր ... լեռնային կողմանցն Փռուգիոյ», որը ևս, մեր կարծիքով, անտիկ տեղանվանակարգի լուսաբանություն է (տե՛ս Ներսես Շնորհալի, էջ 86):

163 Անանիա Շիրակացու մատենագրությունը, պատրաստեց՝ Ա. Գ. Արքանամյան, Երևան, 1944, էջ 346—347:

թյան ուղմական ուժերը, այլև այն իշխանական ընտանիք-ները, որոնք ընդունում էին թյուղանդական կայսրության գե-րակայությունը։ Այդ հանգամանքը ընդգծված է սկզբնաղբյուրներում 1152 թ. դեպքերի կապակցությամբ։ Կիլիկիայի դուքսը կարող էր ուղմական գործողություններ ծավալել նաև իր կառավարչությանը հանձնված տարածքից դուրս, այդ իմաստով հատկանշական է Կոստանդին Կալամանոսի մաս-նակցությունը Հարիմի ճակատամարտին։ Կիլիկիայի դուքսը իրեն հանձնված տարածքում անսահմանափակ զինվորական իշխանություն ուներ։ Նա նաև քաղաքացիական պաշտոնյա էր, սակայն այդ պարտականությունների մասին սկզբնաղբյուրները որպես կանոն լուսմ են։ Դասելով Անդրոնիկոս Կոմ-նենոսին արված՝ Կիպրոսում հարկ հավաքելու արտոնությունից, պետք է կարծել, որ դուքսերը նաև Կիլիկիայից ստացված եկամուտներն էին տնօրինում։ Կիլիկիայի դուքսը կայսեր ներ-կայացուցիլն էր Միջերկրական ծովի հյուսիսարելլյան ելուս-տում և կարող էր տնօրինել նույնիսկ համապետական, հա-մաեկեղեցական և միջազգային քաղաքական խնդիրներ։

Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Ր Ո Ր Դ

ՀԱՅ-ՔՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԲ ԴԱՐԻ 60—70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԺԲ դարի երկրորդ կեսի վավերագրերը և պատմական սկզբնաղբյուրները հետաքրքիր վկայություններ են պահպանել Բյուզանդական կայսրության հետ Հռոմեայի կաթողիկոսական աթոռի վարած դիվանագիտական հարաբերությունների մասին։

Բյուզանդական կայսրությունը ժԲ դարի լինթացքում և մասնավանդ Մանուել Ա Կոմնենոսի իշխանության տարիներին, ենելով կայսրության արտաքին քաղաքական նպատակներից, բազմիցս փորձում է սերտ դիվանագիտական փոխհարաբերություններ հաստատել Հռոմի պապական եկեղեցու, Հռոմեայի Հայոց կաթողիկոսարանի և ասորիների հակոռիկյան պատրիարքարանի հետ։ 1171 թ. Կոստանդնուպոլսի Միքայել Անքալոս պատրիարքի օրոք, հրավիրվել է Հռոմի և բյուզանդական-օրթոդոքս եկեղեցիների միավորման անհրաժեշտությունը հաստատող կղերական ժողով¹։ Սակայն, և՛ Հռոմը, և՛ Կոստանդնուպոլիսը դավանանքով ու ծեսով այնքան էին հեռացել միմյանցից, որ եկեղեցական այս տարրերություններին էլ գումարվելով քաղաքական հակամարտությունը, եկեղեցական միության հարցը դրական լուծում չէր ստանում։ Բյուզանդական կայսրության և Հռոմի պապական եկեղեցու

¹ H.—G. Beck, Kirche und theologische Literatur im byzantinischen Reich, München, 1959, S. 58.

միջև ԺԲ դարի 60—70-ական թթ. բանակցությունների քաղաքական շարժառիթը Գերմանական կայսր Ֆրիդրիխ Բարբարոսայի հտալական պատերազմն էր, որը Բյուզանդական կայսրությունը և Հռոմի պապությունը ակամա դաշնակիցներ էր գարճրել Գերմանական կայսրության դեմ²:

Եփրատյան գավառի անառիկ ամրոց Հռոմելայում հաստատված Հայոց կաթողիկոսարանը ԺԲ դարի 50-ական թվականներից Հալեպի աթաքեկությանը ստորակա առանձին քաղաքական միավոր էր, և տիրում էր կաթողիկոսանիստ բերդաքաղաքին ու նրա շրջակայքին: Երբեմն, նորընտիր կաթողիկոսն աթոռին տիրում էր գերակա Հալեպի աթաքեկության միջնորդությամբ³, սակայն, այս հանգամանքը շէր խանգա-

² Տե՛ս F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 563—570, 653—654.

3 Հայոց կաթողիկոսարանի ստորակա վիճակի մասին վկայությունն է պահպանել «Գլխակարգությունը Հռոմոց» զորս պահանջեն առ ի մէջն է պէտու խաղաղութեան: Ընդ որս և լուծմունք առընթեր եղեալո (Կղեմն Գալանա, Միարանութիւն Հայոց սուրբ Էկեղեցւոյն... Ընդ եկեղեցւոյն Հռոմաց, հ. Ա., Հռոմ, 1650, էջ 331—345 (այսուհետեւ՝ Պալանոս), հմմտ. նաև Ա. Պալանան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայո եւ միտութեան նոցա ընդ հոռմեական Էկեղեցւոյ ի Փորեանեան սիւնուդոսի, Վիեննա, 1878, էջ 290—266 (այսուհետեւ՝ Պալճյան): 1178 թ. Հռոմելայի առաջին ժողովին վերաբերող փաստաթուղթը Վավերագրի մեզ հետարքերող հատվածում խոսվում է 1171 թ. մագիստրոս Թեոդրիանոսի կողմից Հռոմելա բերդած «Գլխակարգեալք Խնդիրը առ ի Հռոմոց ...» (Թ. Ը., 1871, էջ 156—157) վավերագրի իններորդ կետի շուրջ, որտեղ Մանուել Ա. Կոմեննոս կայսրը և բյուզանդական կղերը պահանջում էին Հայոց կաթողիկոսարանից ընդունել «...գառաջարկութիւն կաթողիկոսին միայն ի թագաւորէն Հռոմոցը կետը: 1178 թ. Հռոմելայի Ա ժողովի համար զրված վերաբերության փաստաթղթում Բյուզանդական կայսրության պահանջը կենսագործելու անհնարինության մասին ասված է. «... ծառայ գոլով այլ ազգաց ըստ մեղաց մեր, և ընդ իշխանութեամբ նոցին բնակեալ. զիա՞րդ հնար է ձգտել առ թագաւոր հռոմոց, և առաջարկութիւն կաթողիկոսի պահանջել: Երանի, եթէ էր հնարյ (Պալճյան, էջ 343, հմմտ. Պալճյան, էջ 266):

Գրիգոր Դ Տղայի կաթողիկոս ձեռնադրվելու իրադարձությունների մասին Միքայել Ասորի պատրիարքի հաղորդումը Հռոմելայի կաթողիկոսարանի հանդեպ գերակայության փաստարկ է (տե՛ս M. S., t. III, p. 353—354, հմմտ. Ա. Ա., 1871, էջ 472): Ասորի պատմիչի վկայությամբ ումշէն էաւ զնա (Գրիգոր Դ Տղային — Ա. Թ.) և տարաւ առ նորպինն, և նորին օգնականութեամբն եմոյժ զնա ի Հռոմելայի. և նստաւ յաթու

րում, որ ԺԲ դարի 60—70-ական թթ. Հայոց եկեղեցին փորձեր մտնել եկեղեցական հարաբերությունների միջազգային ոլորտ, բանակցությունների վարեր բյուզանդական, պապական և հակորհիկյան եկեղեցիների առաջնորդների հետ:

Հայոց կաթողիկոսարանը մեղ հետաքրքրող պատմաշըրքանում հայերին միավորող համազգային միակ կազմակերպությունն էր, այն փաստորեն պետություն էր պետականությունը կորցրած ժողովրդի համար: Նրա իշխանության մյուս առանձնահատուկ կողմն էլ այն էր, որ այն տարածվում էր հայազգի բոլոր հավատացյալների վրա. «...որք յարեկիս՝ ի սեփական աշխարհօ Հայուստաննեալց բնակեալք, և որք յարեմտեան կողմանսդ սահեալք նշդեհութեամբ, և որք ի Միջերկրայս ...»⁴:

Քյուզանդական պետական իշխանությունները շարունակում էին հարատեել Կիլիկիայում և Կիպրոսում: Կայսրությունը ԺԲ դարի առաջին կեսին, մինչև 1176 թ. Միրիոկեֆալեի ճակատամարտում⁵, Ղիճ Արսլանի դեմ մղած պատերազմում պարտություն կրելը կարողանում էր ուղղարշավներ կազմակերպել Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք: Մերձավոր Արևելքի այս հատվածում (նկատի ունենք Կիլիկիայի, Կիպրոսի, Միջերկրական ծովի ափամերձ լատինական իշխանությունների տարածքը) ստեղծվել էր Բյուզանդական կայսրության գերակայությունը ընդունող իշխանությունների բավական լայն

Հայուսապետության հորեղբօրն՝ Գրիգոր անունո (Մ. Ա., էջ 472): Հայմատենազրության մեջ այս վկայությունը մեկ անգամ էլ կրկնում է Ժէ դարի մատենադիր Դաւիթ Բաղիշեցին («Մանր ժամանակազրություններ», XIII—XVIII դժ., հ. II, 1956, էջ 342): Նույն վկայությունը տե՛ս նաև «Մանր ժամանակազրություններ», հ. I, էջ 35:

4 Թ. Ը., 1871, էջ 1: Հիմնականում օդտագործել ենք այս հրատարակությունը, մյուսներից օգտվելու դեպքում նշում ենք թվականը:

5 Միրիոկեֆալեի ճակատամարտի և Բյուզանդական կայսրության պատմության մեջ այդ իրադարձության նշանակության մասին տե՛ս R.—J. Lilié, Die Schlacht von Myriokephalon (1176). Auswirkungen auf das byzantinische Reich im ausgehenden 12. Jahrhundert.—REB, t. 35, p. 257—275.

մից ցանց, որը որպես կանոն գործում էր Տարսոնում նստող բյուզանդական զինվորական հրամանատարի հետ դաշնակցած: Այս առումով կարելի է մասնագետների ուշադրությունը հրավիրել Կիլիկիայում գործող կամքրոնյան, Նաթանայելյան և այլ իշխանական տների բյուզանդամետ ճգուտմների վրա: Նրանց քաղաքական թերին պատկանող մյուս հայ իշխանական տների մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանել հայկական պատմական սկզբնազբյուրները⁶:

Մանուել Ա Կոմնենոս կայսրը 1158—1159 թթ. Կիլիկիայի վրայով Հյուսիսային Ասորիք կատարած ռազմարշավի ժամանակ կարողացավ ստորակայական կախման մեջ գնել Թոռոս Բ Ռուբինյանին, նրան առով սկսածուի պատվանուն: Ռուբինյան իշխանության Բյուզանդական կայսրությունից կախվածության մասին հետաքրքիր վկայություններ են պահպանել հույն պատմիչներ Հովհաննես Կիննամոսը⁷, Նիկետաս Խոնիատեսը⁸, Սմբատ Սպարապետը⁹ և «Պատճառ խընդրոյ միաբանութեան»¹⁰ ժողովածուն: Սակայն Ռուբինյան իշխանական տունը Թոռոս Բ-ի ղեկավարությամբ ժի դարի 60-ական թվականներին էլ շարունակում է Կիլիկիայում գլխավորել հակարյուղանդական քաղաքական թերը, որի ծրագրերը և փայտայած հույսերը բխում էին ժամանակի պատմական և փայտայած հույսերը բխում էին ժամանակի պատմական:

6 Նշենք միայն այդ՝ իշխաններից ոմանց անունները. ա) պարոն Սմբատ՝ տէր Պապեռոնին, բ) պարոն Վասիլ՝ տէր Բարձրաբերդոյ, զ) պարոն Տերին, դ) պարոն Տիգրան (տե՛ս, Սմբատ, 1859, էջ 83): Ժֆ պարոն Տերին, էլ շարունակում է Կիլիկիայում գլխավորել ընդարձ ժամանակադիրներից մեկը բյուզանդական գերակայությունը ընդարձ տոնմերին կոչում է. ոզշայկաղունեան, գնաթանելեանսն, զտեարսն դրւիած տոնմերին կոչում է. ոզշայկաղունեան, գնաթանելեանսն, զտեարսն Ասկուսայ... (Ն. Ալիշան, Հայապատում, էջ 345): Սմբատի Վենետիկյան Ասկուսայ... հիշատակված Տիգրանը կոչվում է. «զտէրն Պակունու զՏիգրանագրում հիշատակված Տիգրանը կոչվում է. (Սմբատ, 1956, էջ 171): Պետք է նշել, որ Պապեռոնի տեր Սմբատը կամքրոնի տեր Օշինի եղբայրն է (Սմբատ, 1956, էջ 187):

7 I. C., p. 186:

8 N. Ch., p. 102—103:

9 Սմբատի Տարեգրի ընդարձակ տարբերակում այս ռազմարշավը թվագրված է 1159 թ. (տե՛ս Սմբատ, 1956, էջ 177—178): Այս իրադարձության մասին տե՛ս նաև Մատրեսու, էջ 417—419:

10 Թ. Ը., 1871, էջ 86:

Ֆրադրությունից: Դրանց արգարացիությունը հաստատեց պատմության ողջ հետագա ընթացքը: ԺԲ դարի 60—70-ական թվականներին Բյուզանդական կայսրության նվաճողական միտումները Կիլիկիայում աներկրա են, քանի որ շէին դադարում բյուզանդական զորահրամանատարների հետ դաշնակցած հունամետ կողմի և Ռուբինյան իշխանության միջև բորբոքվող ռազմական բախումները: Նման ընդհարումները թույլ շտալու միտումով էր, որ 1165 թ. Կիլիկիայի զորահրամանատար նշանակված Ալեքս Աքսուսը և Գրիգոր Գ կաթողիկոսի եղբայր Ներսես Ծնորհալին բանակցություններ են սկըսում եկեղեցական միության խնդրի շուրջ: Սկսված երկխոսությունը շարումակվեց մինչև 1178 թ.: Այդ դիվանագիտական փոխհարաբերությունների ընթացքում Բյուզանդական կայսրությունը փորձում է Հայոց կաթողիկոսարանի վզին փաթաթել եկեղեցական միության մի այնպիսի ծրագիր, որը հայոց կաթողիկոսական աթոռը կախման մեջ դներ Կոստանդնուպոլսի պատրիարքությունից¹¹: 1165—1178 թթ. հայությանդական եկեղեցական միությանը վերաբերող վավերագրերում բյուզանդական կայսրը և Կոստանդնուպոլսի պատրիարքը հայերի հետ տարվող բանակցությունները և եկեղեցական միության խնդրը երբեք չեն փորձում կապել Հոռմի պատության նկատմամբ կայսրության վարած դիվանագիտական հարաբերությունների հետ: Մակայն, հակառակ միտումն է նկատվում Ներսես Ծնորհալու թզթերից մեկում, որը Սմբատ Ներքինու 1166 թ. Հոռմկլա բերած պաշտոնական նամակի պատասխանն է: Հոռմի և Կոստանդնուպոլսի եկեղեցական հարաբերությունների նկատմամբ կաթողիկոսի շահագրգությունը ակնհայտ է. «Նա զի և լուաք՝ թէ հայրապետն Հոռմայ և փոխանորդն Պետրոսի առաքելոյ յիւրոց անտի իմաստնոց առաքեաց խօսել առաջի սուրբ թագաւորութեան ձերոյ վսան միաբանութեան հաւատոյ»¹²:

11 Այս միտումի լավագույն ապացույցն է 1171 թ. մադիստրոս Թեոդիկանոսի կողմից Հոռմկլա բերված «Գլխակարգութեան» պահանջներից իններորդը:

12 Թ. Ը., 1871, էջ 117: Հայոց եկեղեցին ժԲ դարի սկզբներից ըա-

ինչ վերաբերում է Հայոց եկեղեցուն, ապա նա շահագրգությունների ոլորտի մեջ ներգրավել նաև ասորիների հակոբիկ եկեղեցուն, որի մասին Սմբատ Ներքինու բերած թղթում ասվում է. «...առաքեցան առ մեզ երկու եպիսկոպոսք վասն միաբանելոյ ընդ ազգիս մերում, ոոր և ընկալաք սիրով և սահմանեցաք ի պատշաճ ժամու ժողով լինել առաջի մեր և խօսել առ միմեանս յաստուածաշունչ գործ, զի թէ գտանիցի աւանդութիւն ինչ ի միջի մերում արտաքրութիւնի աստուածադիր կանոնաց, բարձրութ յերկոցունց կողմանց, և ղնուազութիւնն լցուք միաբանական սիրով ...»¹³:

Հարց է առաջանում, թե ինչո՞վ կարելի է բացատրել Հայոց կաթողիկոսարանի նման քաղաքական գիծը: Մեր կարծիքով, այս հարցի լավագույն պատասխան կարող է հանդիսանալ Հռոմեայի կաթողիկոսարանի անմիտիթար¹⁴ վիճակը: Հայոց հոգևոր բարձրագույն իշխանության նոր նստավայրը

վականին սերտ դիվանագիտական փոխարարներություններ է պահպանել Հռոմի պապական եկեղեցու հետ, այս տեսակետից հետաքրքրական է Խռովի անդամական նամակը (անդ Ա. Տէր-Միլելյան, Միջին դարերի կաթողիկոսների ձգումներն եկեղեցական խաղաղութեան համար, Արարատ, 1893, էջ 133—138) Հայոց Գրիգոր Դ կաթողիկոսին, սակայն, Արարատ, 1893, էջ 133—138) Հայոց Գրիգոր Դ կաթողիկոսին, սակայն, ինչ վերաբերում է անընդունակ հարաբերություններին, մեր ձեռքի տակ ինչ վերաբերում է անընդունակ հարաբերություններին, մեր ձեռքի տակ ինչ այսութք շափականց սակագ է և թույլ չի տալիս լրացնել տասնամյակներ ոչ մի տեղեկություն չհաջորդող սկզբնաղբյուրների բացը:

13 Պ. Ը., էջ 117: Հայ-ասորական եկեղեցական հարաբերությունների մասին տե՛ս Ե. Տէր-Մինասեանց, Հայոց եկեղեցու յարաբերությունները ասորուց եկեղեցիների հետ, էջմիածին, 1908:

14 Այս գրության մասին անգիտահատելի փաստաթուղթ է Ներսես Դ Նորհալու 1163 թ. գրած Ընդհանրական թուղթը. «Եւ քաղաք թագաւորական և քաղաքածողով ոչ գոյ ապդի մերում, որպէս զի անդանօր նստելով յաթոռ հայրապետութեան և վարդապետութեան՝ ուսուցանէաք ժողովը բարձրագույն մերում յաստուածային պատուիրանս ըստ առաջին հայրապետացն եւ վարդապետաց. Այլ մեք իրրե զայթեամն յորսորդաց և ի շանց փախուցեալը ի քարանձաւ յայս բնակելով. յորում ոչ և մարմնական հարկաւոր պիտոյիք շատացեալը ի գիւղից, կամ յագարակաց, յորոց ունիմք և ոչ մի, նաև ոչ անդաստան հողոյ, զի վաստակօք և աշխատութեամբ դպչուած մեր լուսաք, և ոչ օգնութիւն ուստէք՝ որպէս արժանի էր ի թագաւորաց և յիշանաց ի քրիստոս Հաւատացելոց» (Պ. Ը., 1871, էջ 6—7):

Հրջապատված էր Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի մուսուլմանական և բազմատարր քրիստոնեական բնակչությամբ, որոնց հետ առօրյա շփման մեջ էր այս տարածքներում հաստատված հայկական էթնիկ տարրը՝ հասարակ ժողովուրդը, իշխող դասակարգերը և եկեղեցին։ Երջապատի հետ հայերի փոխհարաբերությունները, պատմիչների վկայությամբ, մերթ քարեկամական էին, մերթ՝ թշնամական։ Հայոց եկեղեցու հոգևոր պետերն զգում էին, որ առանց հարեան ժողովուրդների հաստատման, անհնար է հասնել քաղաքական և պետական ինքնուրույնության։

Հայոց կաթողիկոսարանը այս պատմաշրջանում հայ ժողովրդին միավորող միակ իրավական իշխանությունն էր, պետություն էր պետականությունը կորցրած ժողովրդի համար։ Կաթողիկոսարանը վեր էր կանգնած Կիլիկիայում և այլուր իշխանության հասած բոլոր հայկական իշխանական տներից և երբեմն միջնորդ դատավորի դեր էր ստանձնում միմյանց դեմ կովող հայ իշխանների միջն բորբոքված երկպառակտչական պատերազմները դադարեցնելու մտահոգությամբ։ Հռոմեայի իշխան Հայոց կաթողիկոսը գերագահ դիրք ուներ բոլոր հայ իշխանությունների նկատմամբ։ Այս դրությունը թույլ էր տալիս նրան հանդես գալ ողջ ժողովրդի անունից¹⁵, միավորել հայկական իշխանությունների ուժերը՝ իրագործելու համար պետականությունը կորցրած ժողովրդի քաղաքական գլուխությունը։ Կաթողիկոսարանը քրիստոնյա և մահմեդական պետությունների հետ բանակցություններում օգտագործում էր բոլոր հնարավորությունները իր առջև դրված եկեղեցական և քաղաքական խնդիրները լուծելու համար։ Այդ քաղաքականության հեռավոր նպատակն էր, ըստ մեզ՝ պետականության վերականգնումը։

Եկեղեցական միության համար բանակցություններ ըսկըսելով, Բյուզանդիան մտադիր էր Հայոց կաթողիկոսարանը Ենթարկել իրեն և հետապնդում էր երեք հիմնական նպատակ.

15 թ. Ը., 1871, էջ 1:

ա) ձեռք բերել երկրի ներքին գործերում հայերի աշակեցովունը (հայտնի է կայսրության սահմաններում հայկական տարրի առկայությունը և նրա դերը երկրի կառավարման հարցերում)¹⁶,

բ) եկեղեցական միության դաշինք կնքելով համաձայնության դալ հայկական գաղթօջախների բնակչության հետ, որը մինչ այդ հակադրվում էր բյուզանդական պաշտոնական եկեղեցուն և դրա համար մեղադրվում էր աղանդավորության մեջ¹⁷;

գ) հաջորդ և հիմնական նպատակը Բյուզանդիայի արեւելյան քաղաքականության հանգուցակետերից մեկում՝ Կիլիկիայում, հայերի աշակեցության ձեռքբերումն էր:

Բանակցությունների սկիզբը թելազրված էր Բյուզանդական կայսրության երրորդ նկրտմամբ: Այդ մասին հետաքրքրքիր վկայություններ է պահպանել ներսես Համբառնացու կազմած «Պատճառ խնդրոյ միարանութեան» ժուղածուն¹⁸, որը

16 Տե՛ս A. H. Կայձան, Армяне в составе господствующего класса византийской империи в XI—XII вв.—Երևան, 1975; Նուզնի, Социальный состав господствующего класса Византии XI—XII вв.—Մ., 1974 P. Charanis, The Armenians in the Byzantine Empire.—Lisboa, 1963.

17 Բյուզանդական մատենագրությունը հարուստ է հայոց աղանդի դեմքությամբ: Գրանցեց շատերին կարելի է հանդիպել H.-G. Beck, Kirche und theologische Literatur im bizantinischen Reich, S. 609—663: Տե՛ս նաև, Պ. Սուրայյան, Եվլիմիոս Զիգարենոսի «Պաνուղիա Հօ բաւութի», երկի հին վրացերեն թարգմանությունը, «Մարդ և հայոցիտության հարցերը», Երևան, 1968, էջ 266—295, Վ. Ա. Հառուրյանովա, Գրիգոր Պակուրիանը (Թակուրյանը) և Պետրիծիոնում վանք Հիմնելու նրա նպատակները, Խույն ժողովածուում, էջ 175 և հետևյալը:

Բյուզանդական կայսրության արևմտաքրում հայադավան գաղթօջախներից մեծագույնը Փիլիպուսը կամ էր (այժմ՝ Պէտրիկ): ԺԱ-ԺԲ դդ. այդ տարածքի հայ բնակչության մասին տե՛ս H. Я. Marr, Аркаун—монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах.—Спб., 1905, с. 25; Հ. Մ. Բարբիկյան, Մամիկոնյան («) սուրբ Մարիամ Նորավեկայի (+902—903 թթ.) բյուզանդական վարքը, ուշմիածինը, 1975, ԺԲ, 39—44:

18 Ի. Ը., 1871, էջ 85—201:

սկսվում է Կիլիկիայում երկու հակամետ քաղաքական ուղղության իշխանների բախման իրադարձությունների մասին շարադրանքով: Միմյանց դեմ են ելել Թորոս Բ Ռուբինյան (սկզբնաղբյուրում որպես կանոն հիշատակվում է Թէոդորոս Ճեռվ) և Օշին Հեթումյան իշխանները: Հատվածն ընթերցելիս՝ անհնար է չնկատել ներսես Լամբրոնացու ընդգծված հակակրանքը Թորոս Բ Ռուբինյանի նկատմամբ («իշխանն՝ որոյ անուն Թէոդորոս»)՝ կամ «իսկ ամբարտաւան իշխանն Թէոդորոս»)¹⁹ և ընդհակառակը՝ ցայտուն համակրանքը իր հայր, Լամբրոնի իշխան Օշինի հանդեպ (գրեթե միշտ նրան հիշատակում է «բարեպաշտ իշխանն Օշին» ձևով)²⁰: Հետաքրքրեցիր է նաև Կիլիկիայի երկու մեծ հայկական իշխանական տների ընդհարման գրդապատճառը, որի մասին ներսես Լամբրոնացին գրում է. «...իսկ ամբարտաւան իշխանն Թէոդորոս ի խոռվութիւն շարժէր ընդ բարեպաշտ իշխանին Օշինին վասն անրիծ հաւատոցն հաւատարմութեան՝ զոր ունէր առ թագաւորն Հռոմոց, վասն այսր պատճառի ոչ սակաւ խոռվութիւնը լինէր և հեղմունք արեան ի մէջ երկուց իշխանացն...»²¹: Ճիշտ է, Թորոսն էլ ժամանակին հնադանդության գիր էր ստորագրել²² և այդ փաստաթղթի համաձայն ենթարկվում էր Բյուզանդիայի գերիշխանությանը, սակայն «...տէր գուլով լեռնային կողմանց փոխագացոց և բազում գաւառաց, և

19 Թ., Ը., էջ 86:

20 Թ., Ը., էջ 86:

21 Նույն տեղում: Այսաեղ և ԺԲ դարի 70—80-ական թթ. գրած մյուս երկերում՝ ակնհայտ է ներսես Լամբրոնացու թշնամական վերաբերմունքը դեպի Ռուբինյան իշխանական ընտանիքը:

22 Հ. Տ. Թ. Regesten der Kaiserurkunden des oströmischen Reiches von 565—1453, bearb. von F. Dölger, 2. Teil. Regesten von 1025—1204, München und Berlin, 1925, վավերագիր 1431, որը նշանագործության դադար պատճենություններ է 1159 թ.: Այս փաստաթղթի գոյության մասին բազմաթիվ վկայություններ են պահպանվել: Բերենք գրանցից միայն մեկը. «Եւ զայլ երկիրն պարզեցաց (Մանուկ Ա Կոմնենոսը — Ա. Բ.) Թորոսի մշտենցնաւոր և ամբացոյց արքունական սիգեղի ...» («Պատմութիւն ազգին Ռովբինանց» թէ որպէս տիրեցին Կիլիկիոյ տէ՛ս «Սամուկը, 1893, հաւելուած, Դ, էջ 207):

թեկն ածէր ընդդէմ թագաւորին Հռովմոց պէսպէս պատճառաւ, մոռացեալ զերդմնակուու դաշինսն՝ որ ի միջի, և զնազանդութիւն նորա»²³: Հետաքրքիր է, որ Ներսես Լամբրոնացին չի անդրադառնում բախման իսկական պատճառին, որի մասին կխոսենք մի փոքր հետո:

Օշին Հեթումյանին («...որ և սա տէր գոլով լեռնային կողմանց Փոխացւոց և բազում գաւառաց՝ որ ի գահ Կիւլիկիոյ, ունելով զանառիկ դղեակն ի թիկումս Տօրոս լերինն վերադիտակ մայրաքաղաքին Տարսոնի, հաւատարմապէս մընացեալ ի Հնազանդութիւն արքային Հռովմոց»)²⁴ և Թորոս Բ Մուգինյանին հաշտեցնելու նպատակով Գրիգոր Գ կաթողիկոսի հորդորներով Կիլիկիա եկած Ներսես Շնորհալին կարողանում է. «...անքակ սիրով կապակցելով զսոսա ընդ միմեանս»²⁵ դադարեցնել սկսված ընդհարումը և արյունահեղությունը: Այս առաքելությունն ավարտելուց հետո Հյուրընկալվում է Օշին սեաստոսի տանը, քանի որ վերջինիս կինը նրա եղրոր դուստրն էր («քանչի դուստր եղրօր որա էր օրինաւոր ամուսին Օշնի»)²⁶: Լամբրոն զնալու ճանապարհին, ինչպես պատմում է Ներսես Լամբրոնացին. «պատահէր նոցաըստ դիպուաժոյ ճանապարհին ի Մամեստացւոց քաղաքն մտանել, ուր էր թագավարմ իշխան ոմն՝ դուքս կարգեալ կողմանցս արևելեացց»²⁷: Բյուզանդական դուքսի անունը և գեպքի թվականը պահպանել է Ներսես Շնորհալու «Գիր հաւատոյ խստովանութեան» թղթի վերնագիրը²⁸: Նրա անունն էր Ալեքս²⁹, իսկ թղթի գրման թվականն է ՈժԴ՝ 1165 թ. միետրվար—1166 թ. սեպտեմբեր ժամանակամիջոցը:

23 Պ. Ը., էջ 87:

24 Պ. Ը., 1871, էջ 86:

25 Նույն տեղում, էջ 86:

26 Նույն տեղում, էջ 86:

27 Նույն տեղում, էջ 86:

28 Նույն տեղում, էջ 87—107: Այս թղթի բնագիրն ամբողջությամբ քերել է իր Պատմության մեջ Կիրակոս Գանձակեցին, մե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 121—147:

29 Ալեքսի մասին Ներսես Լամբրոնացին գրում է. «փեսայ գոլով թագաւորին և պատով առաջին գոլ հեծելազօրացն ...» (Պ. Ը., 1871, էջ 87):

Հայ պատմական մատենագրության մեջ հիշատակվող ո՞ր դեպքերի հետ է կապվում խնդրո առարկա իրադրությունը։ Ըստ բյուզանդական պատմիչ Հովհաննես Կիննամոսի վկայության, Մանուել կայսրը Կիլիկիայի բյուզանդական զորքերի ընդհանուր հրամանատար է նշանակել Հովհաննես Աքսուխի³⁰ ավագ որդի Ալեքսին, որը մինչ այդ պրոտոնոտարի պաշտոն էր վարում։ Այս նոր նշանակման անհրաժեշտությունը պատմիչը բացատրում է երկու հանգամանքով։ Նախ՝ նախկին հաղթանակներով ներշնչված նոր ադ-Դինը հույս էր փայլփայում շուտով տիրել Անտիոքին։ Երկրորդ՝ Թուրուսը հաճախ խարեւությամբ տիրում էր թագավորին ենթակա իսավրական քաղաքներին՝ թշնամացած լինելով թագավորի ազգական, Կիլիկիայի նախկին զորահրամանատար Անդրոնիկոս Ֆերերենոսին³¹, քանի որ վերջինիս մեղադրում էր մի շարք հարցերում, և հատկապես՝ իր եղբայր Ստեփանեի սպանության մեջ³²։ Հայկական և ասորական սկզբնաղբյուրներում ևս արձանագրված է Ստեփանեի մահը և Թորոսի ու Մէհմի վրիժառությունը։

Սմբատի «Տարեգրքի» վենետիկյան ձեռագրում այդ դեպքերի մասին կարդում ենք. «ի թուին ՈժԴ (1165 թ. փետրվարի 8—1166 թ. փետրվարի 7) սպանաւ Ստեփանէ որդին Լեռնի, եղբայր Թորոսի սեւաստոսի, դաւով նենգութեամբ անօ-

30 Բյուզանդական ժագում ունեցող և բյուզանդական կառավարության բարձունքներին հասած այս ընտանիքի մասին տե՛ս Կ. Մ. Mekios, 'Օ մέγας ծորատίκος τοῦ Βυζαντίου' [ιωάννης Ἀξεῦχος] και ὁ πρωτοστράτωρ ὁιός αὐτοῦ Ἀλέξιος.—'Εν 'Αρχήσις. [1932] A. P. Каҗедан, Социальный состав господствующего класса Византии XI—XII вв., с. 98.

Մեծ դոմեստիկոս Հովհաննես Աքսուխը բյուզանդական մատենագրության հայտնի է որպես սուրբ հոգու մասին դավանաբանական երկի հեղինակ (տե՛ս H.-G. Beck, Kirche und theologische Literatur, S. 625)։

31 Բյուզանդական այս գորահրամանատարին ֆ. Շալանդոնը իրավամբ առանձնացնում է Անդրոնիկոս Կոմնենոսից (տե՛ս F. Chalandon. Les Comnènes, t. II, p. 526—527).

32 I. C., p. 227—228։

բէն տուկին Յունաց, յաշխարհն Կիլիկեցւոց, առջև Համուսին. զի կոչեցին զնա սիրոյ աղագաւ, և կալեալ շարաշար մահուամբ հանին ի կենցաղոյս, խաշելով ի կատսայ, ոչ խնայելով անաստուած Յունացն յայնպիսի քաջ զօրականն: ... և կ եղբարք նորա Թորոս և Մլեհն, զայրացեալ ընդ դորդ նենգաւորացն, առին զվրէժ արեան նորա յանմեղ Յունաց հազարապատիկ, որոց արեանցն պարտական տուկն էր»³³: Ժամանակով իրադարձություններին ավելի մոտ կանգնած Գրիգոր Երեցը վերոհիշյալ զեպքերը թվագրում է ՈժԱ (1162 թ. փետրվարի 9—1163 թ. փետրվարի 8) թվականով³⁴: Ժ.—Բ. Շարոյի վերականգնած Միքայել Ասորու ժամանակագրության բնագրում Ստեփանեի մահվան թվական է ընդունված սենկյան 1473-ը (մեր թվարկության 1162 թ.)³⁵: Կարծում ենք չենք սխալվի, եթե հետեւնք Գրիգոր Երեցին և Միքայել Ասորուն ու Ստեփանեի մահը թվագրենք 1162 թվականով:

33 Տե՛ս Սմբատ, 1956, էջ 186: Այս դեպքերը Սմբատի երկի մուսկովյան (Սմբատ, 1856, էջ 86) և փարիզյան (Սմբատ, 1859, էջ 98) հրատարակություններում թվագրված են ՈժԳ (1164 փետրվարի 9—1165 փետրվարի 7) թվականով: Դ և Դ տառերի շփոթը հատուկ է հայկական մատենագրությանը: Սակայն աղբյուրների անբավարարությունը մեզ հիմք չի տալիս նախընտրությունը տալ թվականներից որևէ մեկին: Կարելի է միայն նշել, որ Դ. Ալիշանը հետեւում է Սմբատի վենետիկյան ձեռագրին և Ստեփանեի մահվան թվական է համարում 1155-ը (Դ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 55):

34 Մատրես, էջ 428:

35 Այսպես է նաև Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանության բնագրում (տե՛ս Ա. Ա., էջ 444—446): Ժամանակագրական սխալի արդյունք է Սամուել Անեցու օժմ՛ՍՌ ի ԶԲ՛ թվականները (տե՛ս Սամուել Անեցի, էջ 134): Կիրակոս Գանձակեցին ավելի է մեծացնում շփոթը. «Զոր լուսալ կայսրն Յունաց, որ Ալեքս (այսպես — Ա. Բ.) կոչեր, առաքէ բազում զօրօք ի վերայ իշխանացն Հայոց՝ Ստեփանեայ և Թորոսին զԱնդրոնիկոս: Եւ ըմբռնեալ զՄտեփանէ խարէութեամբ՝ հետ սպանանելը (Կիրակոս Գանձակեցի, էջ 109—110): Ակնհայտ է, որ այս զեպքը Ալեքս Ա Կոմեննոսի իշխանության տարիներին զնելը ժամանակագրական թյուրիմացություն է:

Մեզ անհայտ սկզբնաղբյուրի հիման վրա Միքայել Չամչյանը Ստեփանեի մահը թվագրում է 1157 թ., իսկ Թորոսի և Մլեհի վրիժառությունը՝ 1158 թ. (Պատմութիւն Հայոց, հ. 9, էջ 76—77):

• նկատի ունենալով նաև, որ Անդրոնիկոս Ֆերբենոսը Կիլիկիայի դուքս է եղել հենց այդ ժամանակ³⁶:

Այս բոլոր վկայությունները համադրելով, փորձենք ըստ-
տեղծել պատմական դեպքերի զարգացման կապակցված
պատկերը:

1148—1150 թթ. Թորոսի կողմից վերականգնված Կիլիկիայի Ռուբինյան իշխանությունը օրեցօր հզորանում էր և իր սահմանները ընդարձակում բյուզանդական իշխանություններին ենթակա տարածքների հաշվին։ Նման գործունեությունը հակասում էր 1158 թ., Մանուել Կայսեր Անտիոք կատարած արշավանքի ժամանակ, Բյուզանդական կայսրության գերիշխանությունը ճանաչելու, Թորոս Բ Ռուբինյանի խոստանը, ըստ որի, «...զԱնարզաբայ խնդրեաց ի նմանէ կայսրն և էառ, և զայլ երկիրն պարզեցաց Թորոսի մշտնշենաւոր և ամրացոյց արքունական սիգեղիւ»³⁷։ Ռուբինյանների առաջխաղացումը կանգնեցնելու համար բյուզանդացիները նոր միջոցներ են փնտրում, շեն խորշում նույնիսկ խարենությունից և 1162 թ. նման խարդավանքներից մեկի զոհն է դառնում Թորոսի ու Մլեհի եղբայր Ստեփաննեն³⁸, որը «...Ճեռնտուութեամբ եղրօր իւրոյ՝ զնաց ի Սեաւ լեառն և տիրեաց ամենայն կողմանցն այնոցիկ. այլ և կալաւ զԴերմանիկէ և զՊեհսնիւ»³⁹։

36 Հմեմա. F. Chalandon, Les Comnènes, I. II, p. 127.

37 Սամուել Անեցի, էջ 207։ Այս մասին Վահրամ Բաբունին «Ռուտանաւոր պատմութիւն Ռուբինեանց» երկում գրում է.

ԶԱՆԱՐՁԱԲԱՅ՝ յինքն գրաւեալ,
Կայսրն ի Թորոսէ՝ մեծէն առեալ,
Եւ զայլ երկիրն՝ զոր կալեալ,
Ոսկի բուլով՝ նմա շնորհնեալ

(Տե՛ս Սմբատ Սպարտապետ, Տարեգիրք, Փարիզ, 1859, «ավելված, էջ 205»)։

38 Բացի վերևում հիշատակված երկերից, Ստեփաննի մահվան մասին հիշատակություններ են պահպանել Վահրամ Բաբունին՝ «Ռուտանաւոր պատմութիւն», (Սմբատ, Փարիզ, 1859, էջ 209), «Պատմութիւն ազգին Ռուբինաց թէ որպէս տիրեցին Կիլիկիոյ» (Սամուել Անեցի, էջ 207), «Համառու Պատմութիւն Ռուբինեան իշխանաց» (Եղիշե տեղում, էջ 217)։

39 «Համառու պատմութիւն Ռուբինեան իշխանաց» (Սամուել Անեցի, էջ 217)։

Այս դեպքից հետո Ռուբինյանները նոր թափով են վերսկսում պայքարը բյուզանդացիների և նրանց կողմում կանգնած իշխանական տների դեմ, որոնցից ահենահղորը լամբրոնի Հեթումյաններն էին. Ինչպես երկում է, Թորոս Բ-ը և Մլեճը երկար ժամանակ գժտված են եղել Կիլիկիայի բյուզանդական իշխանությունների հետ, քանի որ ըստ Ժ.-Բ. Շաբոյի վերականգնած Միքայել Ասորու ժամանակագրության բնագրի Ստեփաննեի մահվան պատճառով գժտված հայերին և հույներին հաշտեցնելու համար Կիլիկիա է եկել Երուսաղեմի թագավորը⁴⁰: Միքայելի հայերն թարգմանությունն այս տեղեկությունը համեմված է հետաքրքիր մանրամասներով. «Եւ Անդրոնիկոս Երդնոյը՝ թէ չէ պատճառ սպանման հղորն և աղաշեաց զթագաւորն Երուսաղէմի գալ և առնել խաղաղութիւն, և խոստանայր նմա բազում ոսկի ի Կոստանդինուպոլսէ: Եւ լուաւ նմա թագաւորն (*Պետուին Գ*)⁴¹ և եկն աղաշեաց զպարոն Թորոս և զորդին Ստեփիանեայ, և դադարեցին ի կոտորելոց զՅոյնսն: Եւ յետ այնորիկ էառ պարոն Թորոս զԱնաւարզա և զԹիլն»⁴²: Իրողությունը շատ հետաքրքիր է, իսկ ե՞րբ է տեղի ունեցել այն, ո՞րն էր Երուսաղեմի թագավորի շահագրգության բուն պատճառը:

1159 թ. Մանուելի և Երուսաղեմի թագավորի⁴³ ու Նուրադինի միջև կնքված հաշտության պայմանագրերից հետո, մինչև 1163 թ., Հալեպի Զենգյանների և Երուսաղեմի

40 M. S., t. III, p. 319.

41 Հրատարակելու վերականգնել է Բագավորի անունը, նկատի ունենալով, որ նույն թվականի տակ, այս դեպքերի նկարագրությունից քիչ հետո, խոսվում է Պաղտին Գ-ի մահվան և նրա եղբայր Ամորի Ա-ի գահակալման մասին:

42 Միքայել Ասորի, 1871, էջ 446: Այս վկայությունը գրեթե նույն է Սամվել Անեցու Պատմության համապատասխան հատվածի հետ և թվում է, թե նա օգտվել է Միքայել Ասորուց, այնուհանդերձ նա մյուս ացրյուրների վրա ավելացնում է. «...և աղաշեաց զթագաւորն Երուսաղեմի և ետ նմա ոսկի բազում ի Կոստանդնուպոլսէ և նա արարեալ խաղաղութիւն ի մէջ նոցաւ (*Սամուել Անեցի*, էջ 134):

43 Մատթեոս Ռունիայիցի, էջ 423—424, R. Grousset, *Histoire des croisades*, t. II, p. 416—417.

թագավորության միջև լուրջ բախումներ տեղի չեն ունեցել⁴⁴: Միայն 1162 թ. վերոհիշյալ պայմանագիրը կարճ ժամանակով խախտվում է Ռընազոտ Շատիլոնցու մեղքով⁴⁵, որն իր արկածախնդրության համար վճարում է 16 տարվա բանտարկությամբ: Ե՛վ զատինները, և Հալեպի աթարքեկությունը ուժեր էին կուտակում նոր հարձակումների համար: Նուր ադ-Դինի սարսափազդու բանակի բարոյական ճնշումը երուսաղեմի թագավորին ստիպում էր արտաքին վտանգը դիմագրավելու համար գիմել գաշնակից քրիստոնյա պետությունների և ժողովուրդների օգնությանը, հարթել նրանց միջև ծագած գժառությունները: Մեզ համար պարզ չէ, թե ո՞ր թվականին է Երուսաղեմի թագավորը իրականացրել հաշտարարի իր առաքելությունը, որովհետև ինչպես տեսանք, 1165 թ. Կիլիկիայի կառավարիլ նշանակված Ալեքս Աքսուխին ևս հանձնարարված էր պայքարել Թորոսի դեմ, որը Ստեփանեի սպանության պատրվակով գրավում էր կայսերը ենթակա իսակրական քաղաքները: Խշետ, Երուսաղեմի թագավորի միջնորդությամբ կայացած հաշտությունը կարող էր ժամանակավոր լինել, կամ, ավելի հավանական է թվում, փոխարինված լինել Ռուբինյան և Օշինյան իշխանական տների միջև բորբոքված քաղաքական պայքարով, որոնց միջև հաշտության միջնորդ է դառնում ներսես Շնորհալին⁴⁶:

Ալեքս Աքսուխի առաքելության հատկանշական կողմերից մեկն էլ բյուզանդական կողմի ակնհայտ միտումն է, ըստ որի փորձ է կատարվում հայերի հետ քաղաքական հաշտությունն ամրապնդել եկեղեցիների միության դաշինքով: Քննվող ժամանակաշրջանում այս մտահղացումը կյանքի կոչելու առաջին փաստը Ալեքս Աքսուխի և ներսես Շնորհալու

⁴⁴ R. Grousset, Histoire des croisades, t. II, p. 417—449.

⁴⁵ Մարտի և Տլուքի վրա նրա ավագակային հարձակումից և հրասակախմբի գերեվարությունից (զա թվագրելով 1160 թ. նոյեմբերի 23-ով) բացի, որին մեծ բախում շղիտե նաև Ռ. Գրոսսետ, Histoire des croisades, t. II, p. 424—425):

⁴⁶ Թորոսի և Օշինի այս բախումը Ստեփանեի սպանության հետ է կապում նաև Ղևոնդ Ալիշանը (Միուան, էջ 55):

միջև ընթացած բանակցություններն են: Ներսես Լամբրոնացին այսպես է նկարագրում Մամեստիալի հանդիպումը. «Եւ այս այր իրեւ զկորովամիտ և զիմաստում յայնժամ եկեալ էր՝ փեսայ գոլով թագաւորին, և պատուով առաջին գոլ հեծելազօրացն՝ որ կոչի հունարէն պոտոստատու, որոյ տեսեալ զխո՞ւական առաջնորդն Հայոց՝ մեծաւ ուրախութեամբ ցնծաց, յայտ առնելով՝ եթէ իղձք տենչանաց ունէի ի բաղում ժամանակաց հետէ խօսել ընդ ձեզ յաստուածաշուն զրոյ և ուսանել զպատճառ պառակտելոյ միոյ եկեղեցոյ Քրիստոսից⁴⁷: Բյուզանզական կողմի շահագրգովածությունն ակնհայտ է, Առաջին Հայացքից թվում է, թե Ալեքս Աքսուխը, Ներսես Շնորհալու պատմած հայոց եկեղեցու դավանանքին հանպատրաստից ժանոթանալով, խնդրել է նրան. «զի զդաւանութիւն Հայաստանեալց բանիւ ասացեալն՝ գրով պարունակեալ տացէ նմա»⁴⁸: Սակայն, իրականությունն այն է, որ Ալեքս Աքսուխը պատրաստված է եղել նման հանդիպման: Ներսես Շնորհալու «Գիր հաւատոյ խոստովանութեան»⁴⁹ թղթի ուսումնասիրությունը պարզում է, որ Ներսեսը Ալեքսին հանձնվելիք այս փաստաթուղթը գրել է ի պատասխան դուքսի կողմից իրեն տրված գրավոր մեղադրանքների, որտեղ բերված են եղել Հայոց դավանանքի և ծեսի նկատմամբ բյուզանզական եկեղեցու վերաբերմունքն արտահայտող գիւղարգված խնդիրները⁵⁰:

47 Պ. Ը., 1871, էջ 87:

48 Նույն տեղում, էջ 87:

49 Նույն տեղում, էջ 87—107: Հմմտ. Կիրակոս Գանձակեցի, էջ 121—147: Գանձակեցու աշխատության մեջ բերված բնագիրը երբեմն տալիս է լավագույն ընթերցումը և լրացնում է «Պատճառ խնդրոյ միաբանութեան ժողովածու մտած բնագրի թղթիները»:

50 «Գիր հաւատոյ խոստովանութեան» թղթով հնարավոր է վերականգնել այդ վագերագրի մոտավոր տեսքը, որովհետեւ Ներսես Շնորհալին իր թուղթը գրել է հետեւով իրեն ներկայացված փաստաթղթի շարադրանքի հերթականությանը: Փորձենք բերել թղթի այն հատվածները, որոնք ուղղակիորեն կապված են Ալեքսի ներկայացրած փաստաթղթի հետ.

Ա) Ներսես Շնորհալուց պահանջվել է ներկայացնել Հայոց եկեղեցու հավատամքը. ոյազագս սրբոյ երրորդութեանն և տնօրէնութեանն Քրիս-

Այստեղ ոչ մի քաղաքական պահանջի մասին ակնարկ անդամ չկա: Պետք է միայն նշել, որ արծարծված հարցերից մի քանիսը երկարնակ-քաղկեդոնական եկեղեցիների հետ Հայոց եկեղեցու բազմաթիվ բախումների պատճառ դարձած ծիսադավանաբանական խնդիրներ են, որոնց շուրջ դարերի ընթացքում կուտակվել է Հսկայական գրականություն: Թղթում շոշափիվել է 14 ծիսադավանաբանական խնդիր: Դրանցից շատերը, ինչպես կտեսնենք, քննության առարկա են դար-

առսի ... ճշմարիտ խոստովանութիւն հաւատոյ (հարցերի այս խմբի քացարությունները թ. Ը., էջ 88—93):

Բ) Ապա Ներսեսը անցնում է. «վասն կարգաց եկեղեցւոյ և տօնից և այլոց ևս հարցմանց» (թ. Ը., էջ 94—107):

ա. «գրեալ էր առաջին թէ, ի յունվարի ի հինգն՝ տօնեն վաղին աւետեաց, և երեկոյն ծննդեանն և միւս վաղին՝ որ է վեց յունվարի, մկրտութեան Քրիստոսի» (պատասխանը՝ թ. Ը., էջ 94—95):

բ. «Ճերդս սրբոյ Աստուածածնին՝ գրեալ էր ի թղթի աստ, ոչ ասել չեկեղեցիս մերս» (պատասխանը՝ թ. Ը., էջ 95—96):

գ. «Դարձեալ ի թղթի աստ գրեալ էր վասն մեր և այս ինչ, եթէ մի քնութիւն գոււանեն բանին և մարմնոյն, յորմէ Ապողինար ասեն ի մէնչ ամբաստանի, և այս յորոքց բանից կարօտանայր պատասխանւոյ ...» (պատասխանը՝ թ. Ը., էջ 96—97):

դ. «Դարձեալ՝ գրեալ էր ի գիրս, ի բուսարեր ձիթոյ՝ զոր շուշմայ անուանեն, լինել միւսոնի մերու և ոչ ի ծառոց ձիթենեաց» (պատասխանը՝ թ. Ը., էջ 97):

ե. «էր ի գիրս ասացեալ և վասն սրբոց պատկերաց՝ եթէ ոչ ընդունին հայք ամեննեինս (պատասխանը՝ թ. Ը., էջ 98):

զ. «Գրեալ էր և դայս ինչ թէ՝ զամենայն խաչս բեկուն» (պատասխանը՝ թ. Ը., էջ 98):

է. «Վասն երից սրբասացութեանցն գրեալ էր, զի՞ն խաչեցար ասեմք և թէ մեր զսրասացութիւնս զայս ի զէմս երբորդութեանն երդէաք՝ որպէս և դուքք» (պատասխանը՝ թ. Ը., էջ 98—99):

ը. «Նաև այս ևս ամբաստանութիւն գրեալ էր զմէնչ, թէ ի սուրբ քառասնորդս զկիթս անասնոց և զձու ճաշակեն ի շաբաթ և ի կիրակէ» (պատասխանը՝ թ. Ը., էջ 99—100):

թ. «Ճերձեալ էր ի գիրս վասն մեր և այս ինչ, եթէ՝ գինեաւ միայն առանց քրոյ իւառնման մատուցանեն զպատարգն» (պատասխան՝ թ. Ը., էջ 100—101):

ձել Հայ-բյուզանդական հետագա եկեղեցական փոխհարաբերություններում ևս: Բանակցությունների ընթացքի մասին մեզ հասած սկզբնաղբյուրները ուրիշ մանրամասնություններ չգիտեն: Ներսես Լամբրոնացին Ալեքս Աքսուխի և Ներսես Շնորհալու հանդիպման մասին հաղորդման շարադրանքը ավարտում է հետևյալ խոսքերով. «Զայս ընկալեալ իմաստուն առնն (Ալեքս Աքսուխի —Ա. Բ.) և օժտաբեր ընծայիւք պատուեաց գերանեիին, և առաքեաց խաղաղութեամբ ի դղեակն Լամբրօն հանդերձ գերապատիւ իշխանիւն Օշնիւ, որ եկեալ մնայր ժամանակս ինչ և վերստին դարձ առնէր ի հայրապետական աթոռն՝ առ նախապատիւ եղրայրն»^{51:}

Արշակ Տեր-Միքելյանն իր հանրածանոթ աշխատության գերմաներեն տարբերակում Ալեքս Աքսուխին հանձնած Ներսես Շնորհալու «Դիր հաւատոյ խոստովանութեան» նամակը համարում է նույն հեղինակի 1150 թվականին գրած «Բան հաւատով երկի բարեխիզճ ընդարձակումը (eine sorgfältige Erweiterung seines schon 1150 geschriebenen Bekennnisses «Über den Glauben»)^{52:} Ներսես Շնորհալու

Ժ. «Դարձեալ էր ի գիրս և ծիծաղական իրս, թէ զամենայն խալս իրեանց յամենայն ամի նորոգ մկրտեն և օրհնենք (պատասխանը՝ Թ. Ը., էջ 101—102):

Ժա. «Եցոյց մեզ գրեալքս և զայս ինչ, թէ՝ լոււաթ յումանց ի նոցանէ՝ ասել, թէ՝ Թրիստոս մարմին համագոյակից մեզ թանձր մահկանացու շարչարելի երկրային ապականացու և եղանելի ոչ առ ի կուտէն, այլ անտապական անօսր անշարժարելի և անեղանելի. և թէ՝ երեւեցաւ մարդ որպէս կամեցաւ, եկեր և արր իրքն առ Աբրահամուռ (պատասխանը՝ Թ. Ը., էջ 102—104):

ԺԲ. «Դրեալ էր վերստին զմէնչ, եթէ՝ զամն, այնորիկ ասեն մի ընութիւն Թրիստոսի, որպես թէ ամեննին ընկղզմեցաւ մարդկութիւնն յաստուածութիւն անդր: ըստ օրինակի՝ զի կաթիլ մի քացախոյ և մեղեր ի ծով անեկեալ աներեսութանայ ...» (պատասխանը՝ Թ. Ը., էջ 104):

ԺԳ. «Ասասցուր փոքր ինչ և վասն առաջարացն ի մէնց անուանեալ պահոց՝ զոր հայոյէք տղիտարար, Սարգսի ուրումն ասելով կախարդի էշ և սկունդ ունողի ի յապստամբելոցն ի հաւատոյս մերոյ առասպելարանելով ի զանազան իրս վասն սորին, և պատմելով ստայօդ բանիւ առաջի ձերք (պատասխանը՝ Թ. Ը., էջ 105—106):

51 Թ. Ը., 1871, էջ 107:

52 A. Ter-Mikellian, Die Armenische Kirche in ihren Beziehungen zur byzantinischen (vom IV bis zum XIII Jh.), Leipzig, 1892.

«Բան Հաւատոյ»-ն⁵³ մեզ հետաքրքրով թղթի նախատիպը լինել չի կարող, որովհետև, ինչպես արդեն տեսանք վերեռում, Ալեքս Արսուխի միջոցով Կոստանդնուպոլիս առաքված ծիսաղավանաբանական թուղթը քննարկում է 14 ծիսադավանաբանական խնդիր, իսկ խնդրո առարկա ոտանավորն անդրադառնում է այդ հարցերից միայն մեկին՝ «սուրբ երրորդության» ընկալման և խոստովանության հարցին:

Ալեքս Աքսովիսը ավարտելով իր պաշտոնավարության ժամկետը վերադառնում է Կոստանդնուպոլիս. «Իսկ դժունի ի լուր ամի իշխանութեան իւրոյ՝ դարձ արարեալ ի թագաւորական քաղաքն Կոստանդնուպոլիս, տարեալ ցուցանէր զնամակ հաւատոյ Հայաստանեալց՝ բարեպաշտ արքային, որոյ անուն Մանուչը, և Հայրապետին իւրեանց, հանդերձ ամենայն կղերիկոսօք մեծի եկեղեցւոյն»⁵⁴:

Մանուչը կայսրը չի հապաղում և ահա թագավորական ժառա Սմբատ ներքինին, մինչև 1166 թ. սեպտեմբերը, Մանուչը Ա Կոմնենոսի թղթով հասնում է Հռոմեական Կայսերական պաշտոնական թուղթը թվագրված է. «Գրեցաւ յամսեանն սեպտեմբերի՝ յընդիքտիոնին ի տասն և հինգն»⁵⁵: Սա համապատասխանում է 1166 թ. սեպտեմբեր ամսին: Ներսիս Լամբրոնացին այս դեսպանագնացության մասին պատմում է. «և վաղվազակի զայր ոմն ի ներքինեաց պալատան՝ թագաւորական հրամանաւ առաքէ ի խնդիր սրբոյ եպիսկոպոսին, գրեալ թուղթ առ նախապատիւ եղբայրն տէր Գրիգորիս կաթոլիկոս ...»⁵⁶, իսկ դեսպանագնացը. «փութանակի անցեալ զրազում գաւառօք, զայր հասանէր յաշխարհն Միջագետաց,

թ. 88: Գրիգորի Հայերին թարգմանության մեջ (Ա. Տէր-Միքելեան, Հայաստանիալց Եկեղեցին և Թիւղանդեան ժողովոց պարագայթ, Մոսկովա, 1892, էջ 161) այս մտքի որմէ համարժեք չկա: Ֆ. Շալանդոնն ավելի հեռու է տարել ալդ միտքը. «verses n'aurait ici fait que copier de ses ouvrages, écrit en 1151», (F. Chalandron, Les Comnènes, t. II, p. 655, n. 1)

53 Տէ՛ս Ներսիսի Ծնորհալույ թանք շափաւ, Վենետիկ, 1928, էջ 181—238:

54 թ. Ը., 1871, էջ 107:

55 թ. Ը., 1865, էջ 147, 1871, էջ 109:

56 թ. Ը., 1871, էջ 107:

ի հայրապետական աթոռն՝ զոր ի սկզբանն նշանակեցաք (իմա՝ Հոռմէկլա—Ա. Բ.) և գտանէր վախճանեալ յայնմ ամի զկաթողիկոսն տէր Գրիգորիս՝ ի վեց հարիւր տասն և շորս⁵⁷ թուականին Հայոց. և բոլոր ազգիս ընտրութեամբ յաջորդ յաթոռն կարգեալ զարժանաւոր եղրայրն նորին զտէր Ներսէս⁵⁸:

Դ. Ալիշանն այս դեսպանագնացի մասին գրում է. «Հրովարտակը հանձնեց Սմբատ Արուխ անուամբ պատուաւոր պալատականի մը, որ յանուանէն կ'իմացուի մեզի ազգակից ըլլալ»⁵⁹; Մեծանուն հայագետի վերոբերյալ տողերի հիմքը Սմբատի միջոցով Ներսէս Շնորհալու Կոստանդնուպոլիս ուղարկված պատասխան նամակի հետևյալ հատվածն է. «...և արժանաւոր իսկ էք՝ որպէս լուաք ի բազմաց, մանաւանդ ի սուրբ թագաւորութեանդ հաւատարիմ ծառայէ՝ յԱրուխէդ»⁶⁰, Կարելի է ենթադրել, որ այս հատվածում Ներսէս Շնորհալին նկատի ունի Մանուկել Ա-ի փեսա Ալեքս Աքսուխին, առաւել ևս՝ Սմբատի միջոցով՝ Հոռմէկլա հասած թղթում նրա մասին կայսրը գրում է. «...զոր ծանեաւ թագաւորութիւնս մեր ի սիրեցեալ փեսայէն մերմէ պոստոստուատօէն»⁶¹; Եթե նկատի ունենանք, որ 'ԱԷօ՛ջ անվան չ-ին սիալ տառադարձման հետևանքով կարող էր ընկալված լինել իբրև ք, ապա պետք է հավանական համարել մեր ենթադրությունը, թէ Ներսէս

57 Թ. Ը.-ի. Երուաշեմի 1871 թ. հրատարակության մեջ ծանոթագրված է. «Հինգ օր. տասն և հինգ» (էջ 109); Այս ընթերցումը պետք է համարել վավերագրի պրման ճիշտ թվականը, որն արդարացիորեն ընդունում է նաև Դ. Ալիշանը (Շնորհալի և պարագայ իւր, էջ 415):

58 Թ. Ը.-ի. էջ 109; Գրիգոր Գ-ի մաշվան և Ներսէս Դ-ի կաթողիկոս օծվելու թվականի մասին տես, Պօղոս Անանեան, Ս. Ներսէս Շնորհալի կաթողիկոս Հայոց, «Թագմավէպ», 1975, էջ 351, ծան. 83; Հեղինակն արդարացիորեն նշում է, որ «նախընտրելին պետք է նկատվի Ոժե Հայոց թւականը»: Սակայն լզիտենք, թէ ինչպես է Պօղոս Անանեանը որոշել Սմբատ Ներքինու բերած նամակի օրը (սահպատ. 14-ը), որը և անվերապահորեն ընդունել է Առն Զեքիյանը (տե՛ս Անն Զեքիյան, Համամիութենական տրամախօսութիւն մը ժմբ դարուն, Բազմավէպ, 1977, թիւ 3-4, էջ 633):

59 Դ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 415:

60 Թ. Ը.-ի. էջ 116:

61 Թ. Ը.-ի. էջ 108:

Ծնորհալու թղթում հանդիպող Արուխսը նույն Ալեքս Աքսուխ գորահրամանատարն է⁶²: Ներսես Ծնորհալու այս նամակում Ալեքս Աքսուխի և նրա հետ Կոստանդնուպոլիս ուղարկված թղթի մասին մի ակնարկ ևս կա. «...որպէս զի զերքեմն աւանդեալ գրով բան հաւատոյ դուզնաքեայ ինչ՝ ի խնդրոյ Քրիստոսասէր ոգոյ և արժանաւոր սուրբ թագաւորութեանդ փեսայի պոտոսատոփին»⁶³:

Ինչպես վկայում է ամենառեցը 1166 թ. սեպտեմբերին Հռոմկլա հասած Մանուել Կոմնենոսի թուղթը, Սմբատի դեսպանագնացության նպատակներից մեկն էլ ներսես Ծնորհալուն Կոստանդնուպոլիս ուղեցցելն էր. «....առաքեաց առ ձերդ պատուականութիւն զապասաւոր պալատանս զՍմբատ՝ յաղագս եկաւորելոյ եղօրն ձեր ...»⁶⁴: Սակայն, ինչպես բացատրում է ներսես Լամբրոնացին, «անհնար էր յայնժամ զինդիր թագաւորին կատարել»⁶⁵, որովհետեւ Գրիգոր Գ-ի մահից հետո կաթողիկոս օծված ներսես Ծնորհալին ծանրաքեռնըված էր եկեղեցական գործերով:

Մանուել Կոմնենոսի Սմբատի միջոցով Հռոմկլա ուղարկված թղթում դավանարանական և ծիսական ոչ մի հարց չի շոշափվում, շեշտվում է միայն եկեղեցական միության անհրաժեշտությունը. «...զոր առաւել ևս մանաւանդ Աստուած պահանջէ յիմում թագաւորութենէս, և բան աշխարհական աթոռոյս բազմապատիկ հոգոց՝ այսմ մանաւանդ հոգ տանել աթոռոյ հաստատութեան, և որբան կարողութիւն է, փոյթունել և ջան յաղագս ուղղութեան ամենայն քրիստոնէից»⁶⁶: Սակայն այս զուտ «քրիստոնեական» բանակցություններն էլ պիտք է գաղտնի կամ զգուշավորությամբ կատարվեր. «Եւ

62 Տարբեր կարծիք ունի Միքայել Զամշանը. տառաքեաց վաղվաղակի զմի ունի ի ներքինեաց իւրոց՝ Սմբատ անուն՝ հայ ազգաւ, ընդ նմին և զմի ի ծառայից իւրոց Արուխ անուն հայ ...» (Մ. Զամշեան, Պատմութիւն Հայոց, հ. 4, էջ 99),

63 Թ. Ը., 1871, էջ 110.

64 Թ. Ը., 1871, էջ 109.

65 Թ. Ը., 1871, էջ 109.

66 Թ. Ը., 1871, էջ 108:

արդ՝ խորհուրդ առեալ ձեր արագ առաքել առ թագաւորութիւնս մեր հանդերձ ամենայն զգուշութեամբ և պատրաստութեամբ զրանաւոր եղայրդ ձեր...»⁶⁷: Հետաքրիր է, թե ումից կամ ո՞ր քաղաքական միավորից պետք է զգուշանար կաթողիկոսի կողմից Կոստանդնուպոլիս գնացող Ներսես Շնորհալին. Հայպի աթարեկությունից, Խկոնիայի սուլթանությունից, Ռուբինյան իշխանությունից, արևելքի լատիններից, թե բոլորից էլ: Մանուելի թղթում Սմբատի մասին նաև ասվում է. «որում և հրամայեցաւ պատմել ձեզ զամենայն բանս զայս. կարող էք հաւատալ առ ի դմանէ ասացելոցն...»⁶⁸: Ուրեմն, բացի նամակից, Սմբատը Մանուել Ա Կոմնենոսի անունից բանավոր խոսելիք ուներ հայոց կաթողիկոսի հետ: Ուսումնասիրության ներկա փուլում հարց է առաջանում. արդյոք Սմբատի պատմելիքը վերաբերում էր եկեղեցածիսակա՞ն հարցերի, թե՞ քաղաքական խնդիրների:

Ներսես Շնորհալու պատասխանը, որը պահպանել է «Պատճառ խնդրոյ միաբանութեան» ժողովածուն, բաղկացած է երեք մասից⁶⁹: Ներսես կամբրոնացու կազմած ժողովածուի մեջ հիշատակված չէ, թե ով է այն Կոստանդնուպոլիս հասցրել, թեև Ղ. Ալիշանը կարծում է. «Շնորհալին յանձնեց կայսեր նուիրակին (իմա՝ Սմբատին—Ա. Բ.)՝ անոր բերած թղթին պատասխանը»⁷⁰: Ներսես Շնորհալին էլ, Մանուելի օրինակով, ինչ-ինչ բանավոր ցուցումներ է տվել Կոստանդնուպոլիս վերադարձող դեսպանագնացին. «Կարող էք սակաւուքս զբագումս իմանալ մտաւորական տեսութեամբ, և զոյ

67 Թ. Ը., 1871, էջ 108:

68 Թ. Ը., 1871, էջ 109:

69 Առաջինը պաշտոնական թուղթն է՝ նման վավերագրերին յուրահատուկ թղթառաջրով և վերշարանով, երկրորդը՝ «Եահմանը հաւատոյ Հայութանեայց եկեղեցւոյ» դավանարանական գրվածքը, երրորդը՝ «յաղագս աւանդութեան եկեղեցւոյ» ծիսակարգին վերաբերող գրությունը (Թ. Ը., 1871, էջ 109—143):

70 Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, էջ 418: Այս տեսակետը ամենահավանականն է, քանի, որ, ինչպես տեսանք, Սմբատի առաքելության հիմնական նպատակն էր Կոստանդնուպոլիս վերաբառնալ ներսես Շնորհալու հետո:

պարունակեալսն գրով՝ բանականքդ պատմեսցեն բանիւ առաջի սուրբ թագաւորութեանդ⁷¹:

Պաշտոնական թղթում ներսին Դ-ը շնորհակալություն է հայտնում նամակի համար, «որով պատառեցաւ քուրձն սգոյ առ ի մէնջ», խոսում է Կոստանդնուպոլիս մեկնելու բյուզանդական հրավերի և դրա անիրազործելիության մասին և դրա փոխարեն ինքն է կայսրին հրավիրում արեելք⁷², քանի որ «ու այնքան բարբարոսական պատերազմաց յաղթութեամբք և ամրագոյն քաղաքաց առմամբ՝ անուն թագաւորութեան ձերոյ բարձրանայ, որչափ եկեղեցւոյ Քրիստոսի առնելով խաղաղութիւն ընդ տիեզերս, և զպատերազմասէր թշնամոյն խորտակելով զգէնսն մինչ խպառ, որ է հեռ և նախանձ շարեաց և բանակուն լինել ի վնասակար իրս, յորոց միջի է հայհոյութիւն անուանն Աստուծոյ»⁷³:

Նամակի ամբողջ ոգին շարադրված է հետևյալ տողերում. «Ճեզ արժան է առնել, ոչ թագաւորական ահարկու զօրութեամբ, այլ քաղցրագոյն խոնարհութեամբ ճեզ առ ճեզ զհեռացեալս»⁷⁴ և լինի «որպէս մինչև ցայժմ, պատճառ փախչելոյ մերոց ի ճէնջ՝ աւերումն եկեղեցեաց և սեղանոյ Աստուծոյ կործանումն և նշանաց Քրիստոսի խորտակումն և բազում նեղութիւնք պաշտօնէից և պէսպէս զրպարտութիւնք, որպէս և ոչ ի մէջ թշնամեաց Քրիստոսի՝ յորս մերձ եմք»⁷⁵: Որպէս մեկն իր ժամանակի խորագետ քաղաքագետներից, Շնորհալին նկատում է. «Թանզի, զոր օրինակ բարկութիւն աստուծոյ՝ որ մատնեաց զեկեղեցի ի Ճեռու հեթանոսաց՝ վասն բաժանման եղև, և յետ բաժանելոյն՝ նոյն և գթութիւն Աստուծոյ առ քրիստոնեայս, և զօրացուցանել վերստին զթագաւորս և զզօրս քրիստոնէից, ոչ այլ իւիք լինիցի, բայց միաւորութեամբն դարձեալ ամենայն եկեղեցեաց Քրիստոսի»⁷⁶: Այս-

71 Թ. Ը., 1871, էջ 120:

72 Խնչպիս այս պահին, նույնպիս և հետագայում, Հայոց կաթողիկոսները փորձում են խոսափել Սանուելի հետ հանդիպումից:

73 Թ. Ը., 1871, էջ 112:

74 Թ. Ը., 1871, էջ 113:

75 Թ. Ը., 1871, էջ 115:

76 Թ. Ը., 1871, էջ 119:

տեղ է, որ Ներսես Շնորհալին եկեղեցիների միության հողի վրա առաջ է քաշում Կիլիկյան Հայաստանի քաղաքական դրությունից բխող հետարրքիր հարցադրում. բազմատարբարիստոնեական բնակչության համախմբումը կարող էր նպաստավոր հանգամանք լինել այդ տարածքի քաղաքական միավորման համար⁷⁷: Այս ցանկության արդյունքն է նաև այն, որ Ներսես Շնորհալին գրում է, թե իրեն հայտնի է, որ միության խնդրով Հռոմից գեսապանություն է այցելել Կոստանդնուպոլիս⁷⁸; իսկ հայերն ու ասորիներն արդեն պայմանավորվել են խոսել համատեղ այդ հարցի շուրջը: Ներսես Շնորհալին նաև գգուշացնում է. «զի թէ տնօրինեսցէ Աստուած խօսել մեզ առ միմեանս, մի՛ եղիցի որպէս տեսան առ ծառայս և ծառայից առ տեսարսօն⁷⁹: Հետաքրքիր է նաև, որ պակասել են բյուզանդացիների ծիսական պահանջները և Ներսես Շնորհալին պատասխանում է միայն 10 վիճելի հարցի⁸⁰: Նկատելի է, որ Ալեքսի միջոցով Կոստանդնուպոլիս ուղարկված թղթի համեմատությամբ, հարցերի հերթագայությունը փոփոխված է:

Առաջին ծիսական հարցը, որին անդրադառնում է Ներսես Շնորհալին, պատարացի հացի խնդիրն է. «զոր մեք և

⁷⁷ Այս դրույթը շատ ավելի ընդդժված է Կիլիկիայի Հետ սերտ առջնշնություններ ունեցող մի շարք հոգևոր գործիչների (Ներսես Լամբրոսացի, Վարդան Այգեկցի) երկերի մեջ, ի հակագրություն Հյուսիսային Հայաստանի վարդապետների, որոնց համար ծիսադապանարանական հարցերում չնշին զիշումն անդամ հավասար էր ազգային նկարագրի և մշակութային ինքնատիպության խաթարման ու ինքնուրուցնության կորսույան:

⁷⁸ *Schr. H.-G. Peck, Kirche .., S. 626.*

⁷⁹ Թ. Ը., 1871, էջ 117:

⁸⁰ Այդ հարցերն են. Ա) «յաղագս համագոյ երրորդութեանն և միաստուածութեանն և վասն տնօրինութեան որդույ ...» (ամբողջովին այս խնդիրն է նվիրված «Սահմանք հաւատոյ» վերնագրված թուղթը, Թ. Ը., 1871, էջ 120—130); Բ) Ծիսական հարցերից, քննվել են հետեւալները. ա) պատարագի հացի, բ) գինու բաժակի, գ) ծննդյան և մկրտության տոների, դ) զատիկի օրվա, ե) խալեցարի, զ) խաչի օրհնութեան, ը) պատերապաշտության, թ) առաջավոր պահքի և սուրբ Սարգսի (այս հարցերի մասին խոսվում է «յաղագս աւանդութեանց» թղթում, հմմտ. Թ. Ը., 1871, էջ 130—143):

Հոռվմայեցիք բաղարջ՝ և այլ եկեղեցիք՝ խմորուն կատարեն, և իւրաքանչիւր ոք յիւրումն փութայ արդարանալը⁸¹: ԺԲ դարի երկրորդ կեսի բյուզանդական և պապական եկեղեցիների պայքարում սա ամենակարևոր խնդիրներից մեկն է, որի շուրջ զրվում են բազմաթիվ աշխատություններ⁸²: Յավոք, ժիստական խնդիրներ շոշափող այս թուղթը հույների հետ բանական խնդիրներում հայոց կաթողիկոսների Կոստանդնուպոլիս ուղարկած և մեզ հասած քննվող ժամանակաշրջանի վերջին վավերագիրն է: Հետաքրքիր կլիներ իմանալ, թե հետապայում ինչպիսի մոտեցում են ցուցաբերել այս կետին Հայոց կաթողիկոսարանում⁸³: Ինչեւ, նկատվում է, որ կաթողիկ եկեղեցու հետ հայոց եկեղեցու այս հարցում ունեցած նույն ավանդությունը ներսին Դ Ծնորհալին փորձում է օգտագործել բյուզանդացիների դիմ:

Հաջորդ երկու դիվանագիտական առաքելությունները 1169—1170 և 1171—1172 թթ. ղեկավարում էր «Եփիոն թագաւորութեան», «Ճայիստո» Թեորիանոսը: Այս ղեկավանագրնացությունների մասին Հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել և հայկական, և բյուզանդական սկզբնադրյուրներում: Մեզ է հասել Հռոմեայի Հայոց կաթողիկոսարանում կաթողիկոսի և հավաքված եպիսկոպոսների, աստվածաբանների հետ Թեորիանոսի վիճաբանությունների գրառված բր-

81 Պ., Ը., 1871; էջ 130:

82 H.—G. Beck, Kirche..., S. 609—629.

83 Օրինակ ներսին կամբրոնացու «Ատենաբանության» մեջ նահանջէ նկատվում հարցի լուսաբանման ներսին Դ Ծնորհալու նախագծած ուղղությունից: Կամբրոնացին կասկածի տակ է առնում և խմորուն, և անխմոր պատարագի հացի խնդիրը, համարելով, որ դա սոսկ ավանդություն է. «Ական ուրեմն ապահանացու նիւթ՝ խմորեալն և անխմորն. սակայն եղեալ ի նոցանէ զիւրաբանչիւրն առաջի Աստուծոյ՝ Քրիստոսի մարմնոյն յիշատակ, և ազօթիւրն սրբեալ, հաւատամք ի ձեռն ներգործութեան հոգւոյն լինել առականացուին՝ միութեամբ հոգովին Աստուծոյ և աման, լատին եկեղեցին ևս որգեղել է նույն ավանդությունը» (Ներսին կամբրոնացության մասին անդամ շկա, որ Հայոց եկեղեցու նման, լատին եկեղեցին ևս որգեղել է նույն ավանդությունը).

նագիրը⁸⁴: Թեորիանոսը հկել է Հռոմկլա 1170 թ. իր հետ բերելով Մանուել կայսեր պաշտոնական թուղթը՝ թվագրված երրորդ ինդիքտիոնի նոյեմբեր ամսով⁸⁵: Մեզ հետաքրքրող այս ինդիքտիոնի երրորդ տարին, ըստ Դյուլգերի⁸⁶ և Զեքիլանի⁸⁷ համապատասխանում է 1169 թ. սեպտեմբերի 1—1170 թ. օգոստոսի 31 ժամանակահատվածին: Ուրեմն՝ Թեորիանոսը կարող էր դեսպանախմբով դուրս գալ Կոստանդնոպոլսից 1169 թ. նոյեմբերին, կամ դրանից հետո: Թեորիանոսի առաջին «Տրամախոսության» բնագիրը հայտնում է, որ նրա գլխավորած դեսպանախմբը Հռոմկլա է հասել աշխարհի արարշագործության 6678 թ., Մանուել կայսեր թագավորության 28-րդ, իսկ ինդիքտիոնի⁸⁸ երրորդ տարում, մայիսի տասնհինգին, այն է՝ 1170 թ. մայիսի 15-ին: Այս թվականի ճշտությունն է հաստատում նաև Մանուել կայսեր վերը հիշատակված թղթի հայերեն տարբերակը, որը, ըստ մեր կարծիքի, կրում է կաթողիկոսական դիվանատանը արձանագրվելու թվականը. «յամսեանն մայիս, յընդիքտիոնին յերեքն»⁸⁹:

Հարց է առաջանում, թե ինչու⁹⁰ 1166—1170 թթ. ժամանակամիջոցում Հռոմկլայի և Կոստանդնոպոլսի միջև դեսպանագնացություն չի փոխանակվել: Այս հարցադրման լավագույն պատասխանը «Պատճառ խնդրոյ միաբանութեան» ժողովածուի Ներսես Լամբրունացու հետևյալ ժանոթագրությունը է. «զի թագաւորն՝ արևմտական աշխարհին շփոթմամբք զբաղեալ՝ անկարանայր զելսն յարեւելս ըստ հայցուածոյ հայ-

⁸⁴ Թեորիանոսի մատենադրական ժառանգության մասին տե՛ս A. Ehrhard, Theologie: In K. Krumbacher Geschichte der byzantinischen Literatur von Justinian bis zum Ende des oströmischen Reiches (527—1453).—München, S. 88—89; H.-G. Beck, Kirche und kirchliche..., S. 628; PG, t. 133, p. 113—298:

⁸⁵ PG, t. 133, p. 120—121: Հայերեն բնագիրը տե՛ս թ. Ը., 1871, էջ 144—145: Փաստաթղթի սկզբում հայերեն և հունարեն բնագրերը համապատասխանում են միմյանց, իսկ երկրորդ մասում՝ հիմնավորապես տարբերութեալ:

⁸⁶ Regesten der Kaiserurkunden, գագ. 1489.

⁸⁷ թ. Զեքիլան, նշան. տղա., էջ 633:

⁸⁸ թ. Ը., 1871, էջ 145:

բապետին»⁸⁹: Արևմտյան աշխարհի ռշվոթումները ասելով Ներսես Լամբրոնացին, Հավանաբար, նկատի ունի Մանուել Ա Կոմնենոսի պատերազմները Բալկաններում, մասնավորապես՝ Հունգարիայում⁹⁰:

Թեորիանոսի դեսպանագնացության հատկանշական կողմըն այն է, որ այդ առաքելությանը մասնակցում է «զհայր վանաց Հայոց՝ որ ի Փիլիպուազօլսեաց աշխարհէն, զՅովհաննէս, մականուն Ութման»⁹¹; Բանակցություններում Հովհաննեսի մասնակցությունը ցույց է տալիս, որ Մանուելն արդեն հաշվի է նստում Փիլիպպուազօլսի շրջանի Հայ բնակչության հետ, որը նույն դարի 80-ական թվականներին վճռորոշ դեր է ստանձնում Բյուզանդիայի Բալկանյան քաղաքականության մեջ: Թեորիանոսի և Ներսես Դ Շնորհալու միջև բանակցությունները շարունակվել են մինչև 1170 թ. Հոկտեմբեր ամիսը, քանի որ կաթողիկոսի պատասխան թուղթը ունի «Գրեցաւ ի թւականութեանս Հայոց վեց հարիւր ինն և տասն, յամսեանն Հայոց՝ արեգ և Հոռոմոց՝ Հոկտեմբեր»⁹² թվագրումը: Պահպանվել է Ներսես Շնորհալու այս թղթի հունարեն թարգմանությունը⁹³: Բարերախտաբար Հունարեն բնագրում պահպանվել է նամակի վերջին պարբերությունը, որտեղ կաթողիկոսը Հայտնում է, որ թշնամիների դեմ պատերազմելու համար կայսրին ուղարկում են մի փոքրիկ նվեր: Երեք արաբական հովատակ և աղեղներ (օւշուն և էնակուուն տիտղոս և աղայուս տիտղոս) և մեցալեռություն փέրույն ու առաջական աղայուս տիտղոս և աղայուս տիտղոս:

89 Թ. Ը., 1871, էջ 144:

90 F. Chalandon, *Les Comnènes*, տ. II, 487—492: Այս արշավանքների մասին գիտեն նաև Միքայելը (Մ. Ա., 1871, էջ 452, հմմտ. M. S., տ. III, էջ 326): Հետարքիր է, որ Միքայել Ասորու և բնագրում, և Հայերեն թարգմանության մեջ Մանուել Ա-ն պատերազմում է բուլղարների թագավորի դեմ:

91 Թ. Ը., 1871, էջ 144: Հունարեն բնագրում: «επύν ἀλα τῷ οὐδηγούμενῳ τῆς Ἀρμενικῆς μονῆς τῆς ἐν Φιλιππούπόλει τῷ Ἀτράνῳ...» (PG, տ. 133, թ. 120).

92 Թ. Ը., 1871, էջ 153:

93 Տե՛ս PG, տ. 133, թ. 213—224:

Θικᾶ ἄλογα καὶ τοξάρια μουσικοτειχῖ, ἀτινχ εἰ καὶ μικρὸν τί εἰσιν, ἀλλ' οὖν μυστικὸν, ὅτι ἐπιβήτη ἐπὶ τοὺς ἵππους σου καὶ συντρίψῃς τὰ τόξα τῶν ἑχθρῶν σου⁹⁴: Λέστω φριφῆτε ξ, οὐρ «Φωτιδιανὴ μηνηρογια μημαρινοπιθεων» δηλοψιδοποιιμ πριεξ αἰγαλητικῶν δημαριμ λέγω αյσον ινψερη μασην: Ζη φωτιδιανοψελ ινακι ινερισει φωτιδινη βητηρη, ορη μασην ινηροψιμ ξ θητηριανουσι ιρητηρη «Σραմαխոսութեան» բնագրում⁹⁵:

Թեորիանոսը 1171—1172 թթ. նոյեմբեր-փետրվարին կատարած այցելության ժամանակ «օժտաբեր ընծայիւք»⁹⁶ իր հետ բերում է 4 փաստաթուղթ: Վավերագրերից մեկը գաղտնի էր (μատուցած) ⁹⁷, մյուսը՝ պաշտոնական⁹⁸, մեկը պատրիարքի նամակն էր⁹⁹, մյուսը՝ ներսեսի թղթի պատասխանը, որը Մանուկի անունից գրել էր Միքայել Անքարայոս պատրիարքը¹⁰⁰: Այս դեսպանագնացության ժամանակ վիճարանության նյութ դարձած հարցերին թեորիանոսն անդրադառնում է երկրորդ «Տրամախոսության» բնագրում: Թեորիանոսի երկրորդ այցելությունը ավարտվում է Քեսուն կատարած ուղևորությամբ, ուր հանդիպում և վիճարանում է Հակոբիկ եկեղեցու աստվածաբան Թեոդոր Բար-Վահրոմի հետ և համձնում Մանուկը կայսեր Միքայել Ասորուն ուղղված նամակը¹⁰¹: Ինչպես տեղեկանում ենք թեորիանոսի «Ճանաչության վկայությունից», այդ դեսպանագնացությանն մասնակցում էին նաև Հովհաննես Ութմանն և թարգմանիլ («Իրադա»)¹⁰² երեց (παπάς) ¹⁰³ Միքայելը:

«Փատճառ ինդրոյ միաբանութեան» ժողովածուն պահ-

94 PG, t. 133, p. 221:

95 PG, t. 133, p. 248 C 1—4:

96 Պ. Ը., 1871, էջ 154:

97 PG, t. 133, p. 233—236:

98 Նույն տեղում, էջ 236, հմմա. Պ. Ը., 1871, էջ 154—156:

99 PG, t. 133, p. 237—240, հմմա. Պ. Ը., էջ 157—159:

100 PG, t. 133, p. 224—222:

101 Հակոբիկյան ասորիների հետ բանակցությունների մասին տե՛ս PG, t. 133, p. 277—297; M. S., t. III, p. 335:

102 PG, t. 133, p. 236:

103 Նույն տեղում, էջ 248:

պանել է այս դեսպանագնացովթյան հետ Ներսես Շնորհալու Կոստանդնուպոլիս ուղարկած երկու նամակները. մեկը Մանուել Կոմնենոսի պաշտոնական թղթի պատասխանն է, մյուս՝ պատրիարքական նամակի:

1173 թ. ամռանը մահանում է Ներսես Շնորհալին¹⁰⁴, Ներսես Լամբրոնացին նրա մահը թվագրում է Թեորիանոսի հետ երկրորդ հանդիպման տարով. «...ի նոյն ամի վերափոխէր զերանելի հայրապետն սուրբ՝ փոխադասեալ յանվախճանն խաղաղութիւն՝ յամսեանն օգոստոսի որ օր երեքտաւան. էր՝ յաւուր հինգշաբթուց, և ի թուականիս հայոց ի վեց Հարիւր քսան և երկու...»¹⁰⁵; Պետք է նշել, որ 1173 թ. օգոստոսի 13-ը հինգշաբթի չի եղել, հետեւապես և անհնար է դրա վրա ժամանակագրական ճշտում կատարելը¹⁰⁶.

Մանուել Ա Կոմնենոսը, լսելով Ներսեսի մահվան և Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի օծման մասին, երրորդ անգամ է Հռոմելա ուղարկում Թեորիանոսին. «որպէս զի սկսեալն, ասէ, ի նախնոյն և յերանելի հօրէն քո ի ձեռն քո կատարեսցի»¹⁰⁷; Իսկ դեսպանագնացը. «եկեալ յարեւելս, ի խռովութենէ ճանապարհացն արգելաւ, և ոչ կարաց հասանել ի հայրապետական աթոռն՝ առ նորապսակ հայրապետն, այլ միայն զնամակն թագաւորական առաքեաց ի ձեռն հետիոտաց ոմանց ճարտարաց և հմտից ճանապարհին»¹⁰⁸; Կարծում ենք, որ վրկայված խոռվությունը բցուզանդական և լատին իշխանությունների դեմ Մլեհի իշխանության պատերազմական վիճակում գտնվելն էր¹⁰⁹:

104 Ներսես Շնորհալու մահվան թվականի ժամանակի ճշգրտման համար մանրակրկիտ աշխատանքը է կատարել Առողջ Զեքիլանը (Հմատ. Առողջ Զեքիլան, Համամիութենական Տրամախօսութիւն մը ժթ գարուն, էջ 17, ծան. 13):

105 Թ. Բ., 1871, էջ 165:

106 Այս հանգամանքը նկատել է Լ. Զեքիլանը:

107 Թ. Բ., 1871, էջ 166:

108 Նույն տեղում, Այս հատվածում հետաքրքիր է «հետիոտաց ոմանց ճարտարաց և հմտից ճանապարհին» արտահայտությունը, որը խսում է այդ ժամանակի միջազգային դիվանագիտական պրակտիկայում կիրառվող երկույթի մասին:

109 R. Grousset, Histoire des Croisades, t. II, p. 568—569.

Նորընծա Գրիգոր Դ Տղա կաթողիկոսը, ընթերցելով Մանուկ Ա Կոմնենոսի թուղթը¹¹⁰. «առաքեաց պատասխանի ընդիմաստուն քահանայ ոմն Հոռոմ ազգաւ Կոստանդին անում՝ որ ի նոյն քաղաքէ Հոռոմկլայէ էր և առաջի իւրեանց սրնեալ»¹¹¹: Կոստանդին քահանային Կոստանդնուպոլիս ուղարկելու նպատակն էր. «որպես զի ձեռնադրեսցի արքեպիսկոպոս շրջաբնակ գաւառացն ի մայրաքաղաքն Յերապօլիս...»¹¹²: Արքեպիսկոպոսական այս թեմը պատկանում էր Անտիոքի պատրիարքական աթոռին և ուներ ինն եպիսկոպոսություն¹¹³: Հերապոլիս-Մալեճը Հոռոմկլային մոտ գտնվող քաղաքներից էր և կաթողիկոսի հովանավորյալին այդ տարածքի արքեպիսկոպոս նշանակելը, մեր կարծիքով, հավասարագոր էր թեմը կաթողիկոսին ենթարկելուն կամ նրա հետ սերտորեն համապործակցելուն:

Այս ենթադրությունն ավելի փաստացի կլիներ, եթե հիշենք, որ վաղուց ի վեր լատինների և հույների միջև պայքար էր գնում Անտիոքի պատրիարքական աթոռի համար: Խաչակրաց առաջին երկու արշավանքներից հետո հույները կորցնելով Անտիոքի պատրիարքական աթոռը անընդհատ փորձում էին վերադարձնել այն. 1165 թ. Մանուկ Կոմնենոսին հաջողվեց Անտիոքում նորից հույն պատրիարք նստեցնել¹¹⁴, սակայն վերջինիս գործունեությունը Անտիոքում կարճ տևեց: Թեպքերի զարգացման նման պայմաններում աշք է զար-

110 Ո՞ւ ինքնագիրը, ո՞ւ էլ թարգմանությունը շեն պահպանվել:

111 Պ. Ը., 1871, էջ 163:

112 Նույն աեղում, էջ 166:

113 Հերապոլիսի արքեպիսկոպոսական թեմի մասին 1143 թ. գրված և 1178 թ. հայերեն թարգմանված նեղոս Դորսապատճուսի երկի հայերեն բնագրում կարդում ենք. «զՅեռապավիս, որ կոչի Մըմպէճ, որ ունի եպիսկոպոս թ.» (Խեղոսի Դորսապատճի կարգագրութիւն պատրիարքական աթոռոցն, հրատ., Ֆ. Ֆինկ, Վաղարշապատ, 1902, էջ 69): Պետք է միայն ավելացնել, որ այս երկի հայերեն թարգմանիշները վերոհիշյալ Կոստանդինը և Ներսես Լամբրոնացին են:

114 Cf. Cahen, La Syrie du Nord, p. 412.

նում այն փաստը, թե ինչո՞ւ հայոց կաթողիկոսը իր թեկնածուին Հերապլսի արքեպիսկոպոս ձեռնադրելու համար խընդրում էր ոչ թե Անտիոքի լատին պատրիարքին, այլ հեռու Կոստանդնուպոլսում նստող Անտիոքի հույն պատրիարքին, «...և ազաշեմք, զի առցէ զա (Կոստանդինը—Ա. Բ.) զձեռնադրութիւն արքեպիսկոպոսութեան մայրաքաղաքին Յերապօսի և կողմանցս Եփրատայ, ի պատրիարքէն Անտիոքայքանդի և արժանի իսկ է սրբութեամք և իմաստութեամք և հասակաւ կատարեալ գոլով»¹¹⁵; ինչպես տեղեկանում ենք Դրիգոր Դ կաթողիկոսի թղթի առիթով Ներսես Լամբրոնացու գրած ծանոթագրությունից, Տիշատակված դեսպանագնացի հետ Կոստանդնուպոլիս են մեկնել. «Իշխանք ի տիրական աթոռոյն»¹¹⁶; Կաթողիկոսական դեսպանախումբը Մանուելին հանդիպում է «յորժամ ել»¹¹⁷ յարկելս ի պատերազմ ընդդէմ այլազգի սուլտանին Խկոնիոյ»¹¹⁸; Մանուել Կոմնենոսը Զլիճ Արսանի դեմ պատերազմելը սկսել էր 1175 թ.¹¹⁹; Այս պատերազմի մասին Գրիգոր Դ Տղան իր թղթում գրում է. «որպէս և տեսանեմք, զի արկիք հիմն ի պէտու փրկութեան եկեղեցից՝ ելեալ ի հանդէս ընդդէմ անօրինաց, և ազօթեմք զտեսանել զյաղթութեան կատարումնն»¹²⁰; Կաթողիկոսը կայսրից խնդրում է. «թեթեացուցանել խնդրեմք ի նախակարգեալ գլխոցն...»¹²¹; Խոսքը վերաբերում է բյուզանդական Թ պահանջներին, որոնք դիմադրության ալիք էին բարձրացրել հայոց եկեղեցական թեմերի մի մասում:

Կայսրը Կոստանդինին ուղարկում է. «ի քաղաքն թագաւորական՝ մինչև ի դարձն իւր ի պատերազմէն իսմայէլական ազգին»¹²²:

¹¹⁵ Թ. Ը., 1871, էջ 167—168:

¹¹⁶ Նույն տեղում, էջ 168:

¹¹⁷ Թ. Ը., 1871, թ. Հրատարակության մեջ տողատակում կարդում ենք. «Հինգ օր. էր» (էջ 168):

¹¹⁸ Թ. Ը., 1871, էջ 168:

¹¹⁹ F. Chalandon, Les Comnènes, t. II, p. 503.

¹²⁰ Թ. Ը., 1871, էջ 167:

¹²¹ Նույն տեղում, էջ 197:

¹²² Նույն տեղում, էջ 168:

Կոստանդին քահանայի Կոստանդնուպոլսում գտնվելու շրջանում, 1176 թ. սեպտեմբերից ոչ ուշ՝ այն օրերին, երբ կայսրն արևելքում էր, Գրիգոր Դ Տղան Մանուել Ա կայսրին առաքում է ևս մեկ բուղթ: Խնշպես ժամանակին ապացուցել ենք, «Արարատ»-ում Արշակ Տեր-Միքելյանի հրատարակած «Թուղթը գրված է կամ 1175 թ. վերջին, կամ էլ, որն ավելի հավանական է թվում մեզ, 1176 թ.՝ մինչև սեպտեմբերի 17-ը»¹²³: Կարելի է միայն ենթադրել, թե Մանուել Կոմնենոսը չի գոհացել Կոստանդին քահանայի միջոցով ուղարկված թղթի այն մտքով, որ Գրիգոր Դ Տղան ներսես Գ Շնորհալու ասածներին համամիտ է: Կայսրը նամակ է գրել և Գրիգոր Դ Տղային պարտադրել՝ շարադրել դավանաբանական խնդիրների վերաբերյալ իր տեսակետները¹²⁴:

Բյուզանդիայի և հկոնիայի միջն ժադած պատերազմը ողբերգական հետևանքներ ունեցավ կայսրության համար. «և յաղթեցաւ բարեպաշտ թագաւորն յայլաղգի սուլտանէն

123 Տե՛ս Ա. Բողոյան, Գրիգոր Գ Փոքր Վկայաւուրին վերագրված մի թղթի մասին, «Արարեր», 1978, Ա 3, էջ 96: Արշակ Տեր-Միքելյանի հրապարակած փաստաթուղթը Հայագիտության մեջ առաջին անգամ Գրիգոր Դ Տղային վերագրել է Մազարիս Օրմանյանը (Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 1473—1474): Նրանցից անկախ նույն տեսակետն է պաշտպանել կերպարանը (տե՛ս Էջմ. աշխ., ծան. 2): Նրանց կատարածին մենք ծանոթացել ենք միայն վերոհիշյալ հոգվածը հրապարակելուց հետո: Մազարիս Օրմանյանը սխալմամբ այս թուղթը նույնացնում է «Թուղթ Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց ձանակցութեամբ ընդհանուր ժողովոյ հայոց» պատասխանի թագաւորին հոռոմոց Մանուելի, յորում և ուղղափառ դաւանական թիմարում ըստ խնդրոյ արքային՝ ձայնակցութեամբ և ձեռնադրով ամենայն Հայաստանեալց եպիսկոպոսաց (Թ. Ը., 1871, էջ 181—192) նամակի հետո Այս գրուղթը քննադատության շի դիմանումը և Արարատ»-ում հրապարակված թուղթը սոսկ պաշտոնական նամակ է, պատասխանը՝ Մանուելի իշլ-որ նամակի, իսկ «Պատճառ խնդրոյ միարանութեան» ժողովածուի մեջ տեղ գտած թուղթը պատասխանն է «Թուղթ բարեպաշտ թագաւորին հոռոմոց էմանուելի» զոր գրեաց պատասխանի Գրիգորի Կաթողիկոսի Հայոց (Թ. Ը., 1871, էջ 169—175): Ավելի մանրամասն տես մեր հրապարակած Հոգվածում:

124 Ա. Բողոյան, Գրիգոր Գ Փոքր Վկայաւուրին վերագրված մի թղթի մասին, էջ 97:

հիմասուանայ մէրձ յիկոնիոն, ի տեղւոցն՝ որ կոչի Մելիտենի, յամսեանն սեպտեմբերի, և թուարերութեանն Հայոց ի վեց հարիւր քասն և հինգ¹²⁵: Ինչպես տեղեկանում ենք ներսէս Համբրոնացու կազմած ժողովածուից, Կոստանդին քահանան մեկ տարի մնացել է մայրաքաղաքում. ուն եղել յամել թագաւորին ի պատերազմ զամ մի, և նորա մնալ ի քաղաքին¹²⁶: Ուրեմն Կոստանդինը 1175—1176 թթ. Կոստանդինուպոլսում մնացել է, ապա՝ «յորժամ ժամանեաց բարեպաշտ թագաւորին ի թագաւորականն քաղաք, ետ ձեռնադրել սրբազն պատրիարքին զքահանայն Կոստանդին՝ արքեպիսկոպոս, ըստ խնդրոյ կաթուղիկոսին, և կոչեալ առաջի գրեաց պատասխանի ինքն և մեծ եկեղեցին հանդերձ պատրիարքօրն և գումարեալ ժողովովն զայսոսիկ»¹²⁷:

Միրիոկեֆալեի մոտ բյուզանդական գորքի ջախջախումից և ինդրած հաշտությունն ստանալուց հետո, Մանուել Ա Կոմնենոսը վերադառնում է մայրաքաղաք, Կոստանդին քահանային արքեպիսկոպոս օծում: Հայոց եկեղեցու հետ եկեղեցական բանակցությունները քննարկելու նպատակով հրավիրված եկեղեցական ժողովը վավերացնում է պատրիարքական նամակը, որի հետ Մանուել Ա Կոմնենոսը Հռոմեական ուղարկում նաև իր անունից գրված պաշտոնական թուղթը՝ թվագրված. «զրեցաւ յամսեանն ի յունվարի և յընդիքտիոնին ի տասն»¹²⁸: Ուրեմն պետք է Ենթադրել, որ Կոստանդինը Հռոմեական է հասել ամենաուշը 1177 թ. հունվարին: Այս թղթերից երեսում է, ինչպես նկատել է Մ. Օրմանյանը, որ բյուզանդացիները արդեն միայն մեկ պահանջ են ներկայացնում Հայոց եկեղեցուն, այն է՝ ընդունել Քրիստոսի երկու բնությու-

125 Թ. Ը., 1871, էջ 168: Մեր բնագրում Մելիտենեի է կոչվում բյուզանդագիտության մեջ բաշ հայտնի Միրիոկեֆալեի ճակատամարտը, որը տեղի է ունեցել 1176 թ. սեպտեմբերի 17-ին: Այն Մելիտենեի է անվանում նաև Սմբատը (Սմբատ, էջ 193):

126 Թ. Ը., 1871, էջ 168:

127 Նույն տեղում, էջ 169:

128 Նույն տեղում, էջ 175:

նը: Կոստանդնուպոլիսի և Անտիոքի պատրիարքների հետ պատրիարքական նամակը ստորագրել է 18 մետրոպոլիտ:

1178 թ. կատարելով «զիրկագործ աւուրս շարշարանաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի միասին»¹²⁹, հրավիրյալներն սկսում են Հռոմկայի հայտնի ժողովը, որի մեջ հաստատված թղթերը դեսպանագնացների ուղեկցությամբ «հասեալ...ի Կեսարիա՝ արգելան վասն խոռվութեան ճանապարհի և դարձան յետս»¹³⁰: Հռոմկայի ժողովին մասնակցել են նաև ցյիպիսկոպոսապետն ասորւց, վարդապետք և իմաստուն արքք¹³¹: Ապա հասնում է Մանուել կայսեր մահվան լուրը, որով և ընդհատվում է հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական բանակցությունների այս բուռն շրջանը:

Նկատի ունենալով Բյուզանդիայի քաղաքական շահերը, դիվանագիտական հարաբերությունների այս ժամանակաշրջանը պայմանականորեն հնարավոր է բաժանել մի քանի փուլի:

ա) 1165—1166 թթ. հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական հարաբերությունների սկզբնավորման փուլ: Բյուզանդիայի միտումն է ամրապնդել իր դիրքերը Կիլիկիայում, շահագրգուել հայկական բնակչությանը: Այդ պատճառով իսկ քննվում են դավանածիսական հարցեր, սակայն բյուզանդացիները որևէ պահանջ չեն պարտադրում: Բանակցությունները վարում են բյուզանդական աշխարհիկ պաշտոնյաները:

բ) 1166—1169 թթ. Բյուզանդիան իր ուշադրությունը սեպենել է արևմուտքին, հայոց եկեղեցու հետ հարաբերությունները ժամանակավորապես դադարեցվում են:

գ) 1169—1175 թթ. Մանուել Ա Կոմնենոսը վերսկսում է բանակցությունները հայերի հետ: Քաղաքական տեսանկյունից Մանուելին կրկին հրապուրում է արևելքը: 1169 թ. Երուսաղեմի թագավորի հետ արկածախնդրական արշավանք է ձեռնարկվում դեպի Եգիպտոս, սրվում են հարաբերություն-

129 Նույն տեղում, էջ 180:

130 Նույն տեղում, էջ 200:

131 Նույն տեղում, էջ 180:

Ները Ֆրիդրիխ Բարբարոսայի դաշնակից հկոնիայի սովորանության հետ: Բյուզանդիան քայլեր է ձեռնարկում մոտենալու Հռոմի պապական եկեղեցուն: Մանուել կայսրը որոշում է հարձակման անցնել Հայոց եկեղեցու դեմ և պարտադրում է 9 ծիսադավանաբանական պահանջ: Բյուզանդական դեսպանագնացությունները դեկավարում է թագավորական ժառանչությունը: Բանակցություններին մասնակցում է նաև Փիլիպուպոլսի Հայկական վանքերից մեկի առաջնորդ Հովհաննես Ութմանը:

գ) 1175—1176 թթ. Մանուելն արշավում է արևելք՝ պատերազմելու հկոնիայի սովորանության դեմ: Առաջին անգամ այս բանակցությունների պատմության մեջ դեսպանագնացություն է ձեռնարկում Հայոց կաթողիկոսը: Բանագնացն է Հռոմկլայում մեծացած Կոստանդին Հույն քահանան:

ե) 1176—1178 թթ. Բյուզանդիան ամբողջովին կորցնում է իր զիրքերը Կիլիկիայում և Փոքր Ասիայում: Մանուելը 1176 թ. սեպտեմբերին պարտվում է Միրիոկեֆալեի մոտ: Հայոց եկեղեցու հետ Հարաբերություններում բյուզանդական կայսրը ստիպված է հրաժարվել 8 ծիսական պահանջներից և խնդրել, որ կաթողիկոսն ընդունի միայն մեկ՝ դավանաբանական կետ: Ակնառու է արևելքում Բյուզանդիայի քաղաքական ձախողման դերը եկեղեցական բանակցություններում գիշումներ կատարելու, իր դիրքերը վերանայելու գործում:

Հայ-բյուզանդական դիվանագիտական հարաբերությունների այս ամփոփ պատմության մեջ փորձեցինք ցույց տալ, որ քաղաքական ակնկալիքներ ունեին ոչ միայն՝ բյուզանդացիները, այլ նաև Հռոմկլայի կաթողիկոսարանը¹³², որը հայ-իշխանական ընտանիքները իր հովանու տակ համախմբելու քաղաքականություն էր որդեգրել:

¹³² Այս բանակցությունները զուտ եկեղեցադավանաբանական հողի վրա են քննում Հ. Զերիյանը և Ա. Քեշիշյանը. տե՛ս Լ. Զերիյան, Համամիութենական տրամախօսություն..., Բազմավէպ, 1977, թիւ 3—4, A. Keshishian, The problem of church Unity in Twelfth century, «Հասկ» (Հայագիտական տարհանք) նոր շրջան, Անթիկան, 1980, էջ 91—106:

Խնշպես տեսանք, 1165—1178 թթ. Հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական բանակցություններն իրենց շրջափառ հարցերով դուրս են գալիս եկեղեցական միության շրջանակներից: Դրանք պետք է կապվեն Հռոմկալայի Հայոց կաթողիկոսության քաղաքական միտրումների հետ*:

* Կիլիկիայի Հայկական թանգավորության պատմության ուսումնասիրությունը արդիական է նաև այսօր, այդ պետության կործանումից վեց դար հետո: Պատմության ժամանակակից կեղծարարները՝ թուրքական պաշտոնական պատմագրության և պետության ներկայացուցիչները վերջերս պետական մեղադրանք են ներկայացրել Թրիտանական Հանրապետարանի թուրքերներ թարգմանության հրատարակչին, որն իր հրատարակության մեջ համարձակվել է Հիշատակել ԺԲ դարսում ունարավային Անատոլիայում Հայկական պետության գոյության մասին, իստ մամուլում լույս տեսած հաղորդագրությունների պետական մեղադրողը դատարանից պահանջել է լորս ու կես տարվա բանտարկության դատապարտել Թրիտանական Հանրապետարանի հրատարակչին՝ թուրք բնակչության մեջ շանչատողականություն պրոպագանդիութեա և «ազգային-հայրենասիրական զգացմունքները վիրավորելու» համար (տե՛ս Յա րիեյոմ, № 13 (1394), 1987, ս. 24, ՊԲՀ, 1987, № 1, էջ 228): Ցավով պետք է արձանագրել, որ կեղծարարները հետևողականություն պահպանված Հայկական հուշարձանները, խեղաթյուրում են դրանց էթնոմշակութային պատկանելությունը (այդ ժաման տե՛ս Դեկտ Բալաբանով, Հարուստ ժառանգության բարբարոսական բանզումը, «Երեկան» շաբաթաթերթ, Սոֆիա, 1986, հոկտեմբերի 18, էջ 1, 3, հմմտ. նաև «Սովորական Հայաստան» ամսագիր, Երևան, 1987, № 4, էջ 25—27: Թուրքիայից ուղարկված այս հոդվածը առաջին անգամ հրապարակվել է բուլղարերեն «Օтечествен фронт» օրաթերթի 1986 թ. հոկտեմբերի 8-ի համարում):

ՀԱԳԱՎԱՒՄՆԵՐ

ՀՀ—ՀՍԽՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների
ՀԱ—Հանդէս Ամսօրեալ

ՊԲՀ—Պատմա-բանագիրական հանդես

ՏՊՀ—ՀՍԽՀ Տեղեկագիր հասարակական գիտությունների

АДСВ—Античные древности и средние века

ВВ—Византийский временник

ВО—Византийские очерки

ВОН—Вестник общественных наук АН Арм.ССР

BS—*Byzantinoslavica*

EI—*Encyclopédie d' Islam*

JA—*Journal Asiatique*

PG—J.—P. Migne, *Patrologiae cursus completus. Series græca.*

REArm.—*Revue des études Arménienes*

REB—*Revue des études Byzantines*

RH—*Revue historique*

RHC—*Recueil des historiens des Croisades*

РЕЗЮМЕ

Армянские княжества, вплоть до конца XII в. самостоятельно существовавшие на территории Киликии, тесно связанными политическими и экономическими узами с Византийской империей de jure признавали ее суверенитет. Империя в этом регионе держала многочисленную армию и периодически назначала своих военачальников-правителей. Но вопреки активной политике Византии Рубенидскому армянскому княжеству удалось объединить почти все районы Киликии, во второй половине XII в. выйти из-под опеки империи и добиться признания независимости в качестве самостоятельного царства.

Направления византийских походов и завоеваний в первых трех десятилетиях XII в. указывают на то, что главной задачей византийской политики, помимо завоевания северного и южного побережий Малой Азии, было изгнание сельджукских племен с сухопутного пути Никея—Ататия. Замечается, что определяющими в византийской восточной политике в Малой Азии в 20—30-е годы XII в. были взаимоотношения между Иконийским султанатом и Данишмендидским эмирата. Византийская империя смогла использовать в своих политических целях вражду правящих кругов этих государств. Киликийское армянское княжество Рубенидов не только участвовало в этой борьбе, но и в 1132—1136 гг., во время византийо-данишмендидского конфликта, являлось союзником эмирата. Этим объясняется и тот факт,

что армянские и византийские источники называют эмиров Данишмендидов армянами, а государство — армяно-туркским (по византийским источникам — *Τερσαριανοί*). Особенность византийской восточной политики в 20—30-е годы XII в. состояла в том, что она не считалась с реальностью и продолжала следовать пунктам мирного договора, заключенного в 1108 г. между князем Антиохии Боземундом и Алексеем I Комнином. С Иконийским султанатом и Данишмендидским эмирратом византийская дипломатия вела ту же политическую линию в 20—30-е годы XII в., что и с Антиохийским и Киликийским княжествами, пытаясь препятствовать свободному выходу названных государственных единиц к морю.

В борьбе за овладение крепостью Каракар, наряду с двумя армянскими вельможами (братьем католикоса Григора III — Василом Тга и Микаелом Армянином), участвовали также Данишмендидский эмиррат, Рубенидское и латинские княжества региона. Конфронтация Левона I и князя Антиохии Раймунда Пуатье закончилась крупной политической победой Антиохийского княжества, вследствие чего Левон I Рубенид стал пленником Раймунда. Последнее обстоятельство сказалось на внутривизантийском положении Килийского армянского княжества. В Киликии начинается междоусобица, главными инициаторами которой, как выясняется, были сыновья Левона. Борьба достигла своей кульминации накануне первого похода Иоанна II в Киликию и Северную Сирию. Византийская империя внимательно следила за внутри- и внешнеполитической борьбой Килийского армянского княжества. Не исключено, что византийцы активно вмешивались в эту борьбу. Империя, скрупулезно изучив политическую обстановку интересующего нас региона, незамедлительно подняла военные силы в дальний поход. Независимость Килий-

ского и Антиохийского княжеств оказалась под угрозой в результате византийской кампании.

В восточной политике Византийской империи первой половины XII столетия выделяются первый (1136—1138) и второй (1142—1143) походы императора Иоанна II Комнина в Киликию и Северную Сирию. Однако нужно отметить, что если первый поход завершился удачно, то второй имел более скромные результаты. По сведениям византийских источников XII—XIII вв., первая северосирийская экспедиция Иоанна II была карательным походом, направленным в первую очередь против Киликийского армянского княжества, а уж затем—против латинского государства Антиохии. Изучение всех источников дало нам возможность установить, что главными целями византийских походов на Северную Сирию являлись:

- а) захват побережья Средиземного моря от Атлани до Триполи;
- б) подчинение Киликийского армянского княжества, которое в союзе в Данишмендиским эмиратором выступило против Византийской империи;
- в) принуждение Антиохийского княжества признать сюзеренитет Византии;
- г) демонстрация военной мощи Византийской империи мусульманским государствам Малой Азии и Северной Сирии.

К числу нерешённых вопросов относительно первого срийского похода Иоанна II относится его датировка. В работе начало этого события датируется летом 1136 г. Империей были завоеваны киликийские города Тарс, Мопсуестия, Адана, Анаварза и крепости Вахка, Капан, Баграс, Амайк, Цахут. Надо, однако, подчеркнуть, что первая северосирийская экспедиция Иоанна II Комнина не достигла своей цели—претворения в жизнь пунктов Девольского мирного договора. Единственным

завоеванием Византии в результате стольких усилий фактически стал захват Киликии. В последние годы правления Иоанна II в восточной политике Византии снова сложилось критическое положение: это касается в особенности двух важнейших регионов—северных причерноморских областей Малой Азии, где империя, несмотря на длительную борьбу в 20—30-х годах, не смогла вытеснить Данишмендидский эмират, и Киликии, где внешнеполитические интересы Византийской империи столкнулись с интересами Данишмендидского эмирата, Иконийского султаната и латинского княжества Антиохии. Иконийский султанат и Данишмендидский эмират не примирялись с присутствием византийских властей в Киликии и начали сами посягать на ее территории. Иоанн Комнин находился со своим войском близ Антиохии, когда Иконийский султан Масуд в 1137 г. вторгся в Киликию и завладел городом Аданой. Это был предупредительный удар с тыла по находившемуся в Антиохии византийскому войску. В 1138/9 г. Данишмендидский эмир Мухаммад отнял у византийцев крепости Горной Киликии. В 1142—1143 гг. Иоанн II организовал новый поход в Киликию и Северную Сирию, но изменений в сложившейся ситуации не произошло.

Восточная политика Мануила I Комнина в Малой Азии была связана с политическими устремлениями его предшественника и являлась логичным продолжением вспыхнувшей до этого борьбы. В нашей работе рассматривается борьба Византии с Антиохийским княжеством, Иконийским султанатом и Данишмендидским эмиратором за Равнинную Киликию. Исследуются вопросы, связанные с византийской экспедицией в Киликию в 1144 г. Удар византийских армий с суши и с моря в тыл Антиохийского княжества в момент, когда правитель Алеппо-Мосула Занги предпринял мощное наступление на латинское княжество Эдессы; помешал Раймунду Пу-

атье выступить против Занги в союзе с Эдессой. После захвата Эдессы войсками Алеппо-Мосульского атабекства Раймунд Пуатье предпринял активные меры для создания союза против усилившегося Занги, который угрожал также существованию Антиохийского княжества. В этот союз Раймунд Пуатье решил вовлечь Византийскую империю. Только такими намерениями можно объяснить посещение антиохийским князем Константинополя в 1145/6 г. Однако после военных действий 1144 г. Мануил I больше не организовывал крупных экспедиций в Киликию и Северную Сирию. Завершив войну 1145—1147 гг. против Иконийского султаната, византийский император заключил мирный договор с султаном Масудом. Это соглашение, подписанное на кануне второго крестового похода, было направлено против крестоносцев. Военное вмешательство европейских государств в политические дела Ближнего Востока не дало ожидаемых результатов. Положение латинских государств Востока еще более ухудшилось. Мануил I ввел существенную поправку в восточную политику. Отныне Византийская империя стремилась войти в союз с Данишмендидским эмиратором и со всеми, кто боролся против Иконийского султаната. Несмотря на это, Мануил Комнин не смог приостановить усиление Иконийского султаната в годы правления Кылыч Арслана, и дипломатическая игра Византийской империи с Иконийским султанатом завершилась поражением в битве при Мириокефалоне в сентябре 1176 г. В годы правления Мануила I Византийская империя, имевшая конкретные политические цели в Киликии и Северной Сирии, не могла больше не считаться с Алеппо-Мосульским атабекством. В 1144 г., захватив Эдессу, Занги нанес удар по государствам латинского Востока, тем самым помешав и планам Византийской империи, которая намере-

валась создать средиземноморский пояс византийского политического влияния.

Наступательная тактика Византийской империи против латинских государств Востока, которую осуществлял Иоанн II Комнина во время первого северо-сирийского похода, продолжалась только в первые годы правления Мануила I. В дальнейшем политическая доктрина превратилась в план, по которому Византийская империя пробовала использовать династические браки в международных отношениях с Антиохийским княжеством и Иерусалимским королевством. Экспедиция 1158 г. не изменила положение дел на Ближнем Востоке. Мануил I фактически признал сложившуюся международную обстановку.

В 40-х годах XII в., после длительного перерыва, было восстановлено Киликийское армянское княжество Рубенидов. Изучение сообщений источников привело нас к выводу, что это произошло в 1148 г. Сложившаяся политическая обстановка в Малой Азии и Северной Сирии 40-х годов XII в. была благоприятной (внимание всех мусульманских и христианских государств Малой Азии и Ближнего Востока было направлено к событиям второго крестового похода), и Торос II сумел использовать эту ситуацию. На этом этапе политической истории Северной Сирии и Малой Азии интересы сирийской яковитской церкви и Килийского армянского государства совпадали. Для сирийцев было выгодно господство Рубенидов, ибо покровительством армянского княжества можно было легко создать общий фронт против агрессивной политики Византийской империи. Конечно, это лишь церковно-догматическая сторона вопроса, но тем не менее сыгравшее немаловажную роль в эпоху средневековья. Армянское княжество Киликии не в состоянии было игнорировать церковно-политические и социально-экономические интересы тех народов, кото-

рые населяли территорию Киликии. Нужно иметь в виду, что каждый из этих народов или народностей имел собственные интересы и в союзе с Рубенидским княжеством был намерен решать собственные проблемы. Киликийское княжество было более толерантным в отношении национальных меньшинств, чем любое крестоносное княжество. Иначе говоря, народности, проживавшие в Киликии, принимали участие в сложившейся социально-экономической жизни государства.

Наши знания о компетенции византийских провинциальных чиновников в XII в. весьма ограничены. Источники не сообщают никаких сведений о том, что во время византийского господства до XII в. Киликия имела внутреннее, или фемное, самоуправление. После 1137 г., когда Иоанн II овладел Киликией и взял в плен Левона I, коренным образом изменилось соотношение сил на интересующих нас территориях. Византийская империя вынуждена была создать административно-экономическую систему управления, которая соответствовала бы не только внутренним и внешнеполитическим целям империи, но и в равной мере — политическим устремлениям, тех армянских княжеств в Киликии, с удовлетворением принявших византийскую власть. По-видимому, уже Иоанн II пытался объединить в одной системе управление несколькими малоазийскими районами (Аталия—Киликия—Кипр—Антиохия), которые на северо-восточном побережье Средиземноморья приобрели бы важное стратегическое значение. Однако Иоанн II не мог осуществить свои намерения, а его преемник Мануил I не пытался объединить указанные территории в одну административную систему. Тем не менее стремление увеличить византийские военные силы в Киликии и создать единую военно-административную провинцию на территориях Киликии и Кипра было очевидным и в первые годы правления Мануила I, во время первого североси-

рийского похода. Намереваясь дать отпор антивизантийским действиям Антиохийского латинского княжества, Мануил I отправил в Киликию сухопутные и морские военные силы. Во главе этих армий находились византийские полководцы Просух и Дмитрий Врана. Первого мы склонны считать военным и административным правителем Киликии, а второго — правителем Кипра. Основанием для такого предположения может служить тот факт, что и Просух, и Дмитрий Врана после успешных военных действий против антиохийского князя Раймунда Пуатье (1144) не возвратились в Константинополь: первый из них остался в Киликии, второй — на Кипре. Причиной этих административных преобразований были агрессивные намерения Антиохийского княжества относительно Равнинной Киликии. Поэтому с прекращением завоеваний киликийских областей Антиохией, источники перестают упоминать правителей в Киликии или на Кипре.

Сообщения о киликийских правителях снова появляются в источниках с восстановлением Рубенидского княжества во главе с Торосом II, угрожавшим покончить с византийским господством в Киликии. Главная обязанность византийских правителей-военачальников состояла в том, чтобы дать отпор притязаниям Рубенидов и обеспечить подчинение Киликии византийским властям. Сообщения о первом правителе Киликии в источниках встречаются в изложении событий 1151/2 г. Епископ Тарса Нерсэс Ламбронаци сообщает, что в XII в. в Византийской империи был обычай, по которому по истечении года сменили наместников областей и на их место назначали других. Такая практика не прослеживается на предыдущем этапе истории византийской административной системы. Сведения об отдельных правителях подтверждают это положение.

Подытожив сведения источников о византийских правителях Киликии, мы составили следующую хронологическую таблицу:

1144/5 г.—Просух (?);

1151/2 г. (?)—Тома или Томас;

1152/3 г. (?)—Андроник Комнин (первое правление);

В 1153—1158-х годах Торос II упразднил византийский протекторат над территориями Киликии.

1159—1162 гг. Для этого отрезка времени на территории Киликии имена византийских правителей не упоминаются. Нам представляется, что после военной экспедиции Мануила I Торос II не только стал вассалом Византийской империи и получил титул преторея, но и взял на себя обязанности правителя византийской провинции Киликия.

1162/3 г.—Андроник Фервин (первое правление);

1163/4 г.—Константин Каломан (первое правление);

1164/5 г.—Алексей Аксух;

1165/6 г.—Андроник Комнин (второе правление);

1166/7 г.—Константин Каломан (второе правление);

1167/8 г.—Михаил Врана;

1168/9 г.—Андроник Фервин (второе правление).

Хотя мы и не знаем имен всех правителей Киликии в 1169—1175 годах, в годы княжения Млеха Рубенида, однако имя одного из них известно—это Константин Каломан (третье правление).

1179/80 г. (?)—Исаак Комнин.

Сведения разноязычных авторов о должностях византийских правителей представляют следующую картину:

а) в большинстве армянских источников они называются дуками. Из византийских же авторов лишь Иоанн Киннам однажды упоминает эту должность (в рассказе о первом правлении Константина Каломана).

Должность дуки фигурирует также в сирийских и арабских источниках;

б) в армянских источниках византийские правители Киликии называются также «надзирателями» (вератесуч). Это равнозначно лат. «*proconsul*» и старофранц. «*bailliz*». К указанным терминам по своему значению приближается глагольная форма «*ἐπιστάτας*», употребленная Никитой Хониатом;

в) армянские источники византийских правителей Киликии иногда называют «наместниками» (колмнапах)—параллелью этому является лат. «*praeses*»;

г) в византийских источниках чаще встречается термин «*στρατηγός αὐτοκράτορ*», который имеет параллель в сирийском тексте «Хроники» Михаила Сирийца. Этот термин переведен на французский язык словом «*général*», а в древнеармянском переводе того же произведения он заменяется армянским эквивалентом—«зораглух». В греческих источниках иногда встречается только «*στρατηγός*»;

д) Никита Хониат правителей Киликии обычно называет «*իշխան*». Эквивалентный термин, очевидно, употребил также Михаил Сириец: во всяком случае в древнеармянском переводе значится ишхан (князь). Ж.-Б. Шабо, заполняет лакуну «Хроникой» Бар Эбрея, переводя адекватный сирийский термин на французское слово «*préfet*».

Нужно четко отметить границы распространения власти киликийских правителей-военачальников. Источники свидетельствуют, что территорией деятельности византийских чиновников была Киликия. Однако Вильгельм Тирский, вероятно, употребляя номенклатуру античной географии, знает две Киликии (Первая и Вторая

Киликия). Столицей Первой Киликии латинский хронограф считает Тарс, а Второй—город Анаварзу. До 1162/3 г. в состав Киликийской провинции входила и Исаакия (со столицей в Селевкии). Так, согласно сведению Иоанна Киннама, во время первого правления в Киликии Андроника Фервина Исаакия находилась под его властью. Заслуживает внимания и тот факт, что в 1165/6 г. правитель Киликии Андронику Комнину было по жаловано право собирать подати с острова Кипр. Это значит, что Византийская империя сознавала важность стратегического положения киликийской провинции и любой ценой способствовала укреплению ее экономической мощи. Нужно отметить, что правитель Киликии на подчиненных ему территориях имел неограниченную военную власть. Он, по-видимому, был и гражданским чиновником, как и все византийские дуки этой и предыдущих эпох.

Исторические сочинения и особенно дипломатические документы сохранили чрезвычайно интересные сведения о церковно-политических взаимоотношениях армянского католикосата с Византийской империей и церковью в 60—70-е годы XII в. В интересующую нас эпоху Ромклайский католикосат занимал особое положение среди армянских государственных образований Киликии и Северной Сирии. Из-за отсутствия армянского государства как такового католикосат приобрел функции объединяющей политической организации. Византийская империя в течение XII в. и особенно в годы правления Мануила I, исходя из своих внешне- и внутриполитических задач, многократно пыталась установить тесные дипломатические связи с римской католической церковью, армянским католикосатом и патриаршеством сирийцев-яковитов. Переговоры о церковной унии, принятые Византийской империей, намеревавшейся под-

чинить ортодоксальной церкви армянский католикосат, преследовали три основные политические цели:

а) заручиться содействием армянского населения политике Византийской империи;

б) добиться подписания церковной унии: Мануил I этим путем пытался подчинить ортодоксальной церкви большое число армян, противостоящих официальной церкви Византийской империи и по этой причине объявленных еретиками;

в) приобрести поддержку армянского населения в одном из узловых регионов восточной политики Византийской империи—Киликии.

Историю дипломатических отношений Византийской империи с армянским католикосатом можно разделить на несколько этапов. В нашей периодизации мы в первую очередь имели в виду интересы восточной политики Византии.

а) 1165—1166 гг. Указанные годы можно назвать начальным этапом движения за унию в армяно-византийских церковно-политических взаимоотношениях XII в. Стороны уясняют позиции своих партнеров касательно основных догматических вопросов христианской церкви. Планами о церковной унии Византийская империя пыталась привлечь на свою сторону армян Балканского полуострова, Киликии и Северной Сирии. Здесь не трудно проследить политический нажим на киликийские армянские княжества и на Ромклайский католикосат. Однако византийцы на этом этапе церковных переговоров еще не требовали от армянского католикосата конкретных уступок в догматическом плане. Переговоры вели византийские чиновники, светские лица.

б) 1166—1169 гг. Византийская империя в эти годы занималась политическими делами на западе. Переговоры с армянской церковью временно прекратились.

в) 1169—1175 гг. Мануил I вновь начал переговоры с Ромклайским католикосатом. Восточные дела снова привлекают Мануила I. Обостряются политические отношения с восточным союзником Фридриха Барбароссы—иконийским султаном Кылыч Арсланом. Византийская империя делает шаги к сближению с римско-католической церковью, защищает интересы североитальянских городов-республик вопреки посягательствам Германской империи. В 1169 г. в союзе с иерусалимским королем Мануил I предпринимает авантюристический поход в Египет, который завершается полным крахом. В эти годы Мануил I предпринял дипломатическую атаку на армянскую церковь. В 1169 г. византийский император потребовал, чтобы армянский католикос принял девять требований византийской церкви, касающиеся обрядов и догмы. Но в армянском католикосате не спешили принимать эти требования и заключить церковную унию. Со стороны Византии церковно-политические переговоры вел магистр Теориан. В дебатах участвовал настоятель одного из филиппопольских армянских монастырей—Иоанн Утман. С армянской стороны переговоры вели католикос Нерсэс IV Шнорали, высшие армянские церковные сановники и делегаты сирийско-яковитской церкви.

г) 1175—1176 гг. Обостряются отношения Византийской империи с Иконийским султанатом. Мануил I предпринимает военный поход в глубь Малой Азии с целью усмирения султаната. Впервые в истории армяно-византийских церковно-политических переговоров в Константинополь отправляются представители Ромклайского католикосата. Посланником армянского католикосата стал питомец Григора IV Тга, греческий священник Константин.

д) 1176—1178 гг. В сентябре 1176 г. войска Мануила I были разгромлены армией Кылыч Арслана при Мири-

скефалоне. Византийская империя потеряла все свои позиции в Малой Азии и Северной Сирии. В результате изменения политической обстановки в Малой Азии император Мануил I вынужден был перестроить политику Византии. В переговорах с армянским католикосатом константинопольская церковь отказалась от требуемых ранее восьми пунктов обрядового порядка. Она требовала теперь пересмотреть позиции армянской церкви только в одном доктринальском вопросе. Армянский католикосат формально пошел на эту уступку, но документы Ромклайского собора не дошли до Константинополя. Пересмотр позиций константинопольской церкви был связан с поражением византийской армии в битве при Мириокефалоне. Из вышесказанного вытекает, что армяно-византийские церковно-политические переговоры со всеми затронутыми вопросами выходят за рамки чисто церковной унии. Их следует связывать также с политическими планами католикосата Ромкла.

Таким образом, проделанный нами детальный анализ византийско-киликийских политических и церковных взаимоотношений 30—70-х годов XII в. позволяет определить следующие основные этапы и моменты развития политических контактов между Византийской империей и Киликией.

До 1136 г. Византия, стремившаяся утвердиться в северных и южных прибрежных районах Малой Азии, сделала первые дипломатические шаги для восстановления своей власти в Киликии. В этот период Рубенидское княжество еще не было подготовлено политически и не имело ресурсов для того, чтобы противостоять имперской политике Византии. Политический союз с соседом—Данишмендидским эмиратором—не привел к успеху Левона I Рубенида в борьбе против Византийской империи.

1137—1147 гг. После первого похода Иоанна II Комнина в Северную Сирию (1136—1138) в Киликии прекратило свое существование армянское княжество Рубенидов. С целью укрепления своих позиций в регионе Византийская империя в 1143 и 1144 гг. организовала военные походы в Киликию и сопредельные страны.

1148—1157 гг. Активными усилиями Тороса II в Киликии была восстановлена власть Рубенидов. Начиная с этого момента Киликийское армянское княжество во главе с Торосом II взяло курс на сплочение вокруг своего государства всех народов, проживавших на территориях Киликии. Торос II поставил перед собой задачу освободить Киликию и нанести сокрушительный удар по позициям армянских княжеств провизантийской ориентации. Это привело к освобождению территории Киликии от византийцев и тюрок. Перед угрозой нового византийского военного вмешательства Торос II подписал союзный договор с Иконийским султаном и признал его суверенитет. В 1156 г. Торос II с князем Антиохии Раймундом Пуатье совершил нападение на остров Кипр, принадлежавший Византийской империи.

1158—1164 гг. Мануил I возглавил новый военный поход в Киликию и Северную Сирию (1158—1159). Рубенидское княжество было вынуждено признать суверенитет Византийской империи. В Киликии снова появились византийские правители, возглавившие политическую борьбу против Рубенидского княжества. Высшие чиновники империи использовали авторитет и военные силы армянских князей Хетумидов, владетелей крепости Ламброн. Однако Рубениды сумели дать решительный отпор намерениям своих политических противников. Византия постепенно теряла свою власть в Киликии. В 1164 г. коалиционная армия латинских государств Востока и империи недалеко от крепости Харим потерпела поражение от войск атабека Алеппо Нур ад-Дина, а

командующие коалиционной армией попали в плен. Несмотря на то, что Торос II был членом этой коалиции, он не участвовал в сражении и со своими войсками возвратился в Киликию. В 1164 г. почти вся территория Киликии оказалась под контролем Рубенидского княжества.

1165—1176 гг. Византийская империя потеряла надежды на захват Киликии. Мануил I начал переговоры с армянским католикосатом. Хотя в указанный период византийские правители регулярно назначались, реальную власть они потеряли. После смерти Тороса II власть перешла в руки его брата—Млеха Рубенида. В борьбе против своих противников новый князь предпочел войти в союз с атабеком Алеппо Нур ад-Дином и в международных делах признал его суzerенитет. Византийское политическое влияние в Киликии было искоренено. В сентябре 1176 г. при Мириокефалоне византийская армия была разгромлена войсками Иконийского султаната, и территория Киликии полностью потеряла свое значение для восточной политики Византийской империи.

ԱՆՎԱՆԱՑԱԿՆ

- Աբեղյան** Մ. 19, 29, 30
Աբրահամ 235
Աբրահամյան Ա. Գ. 216
Աբուլ Քասիմ 58
Ազար 136
Ազարյան Լ. 49
Աթանաս մետրոպոլիտ Անավարդայի 178, 182—184, 187
Աթանաս Ը, հակոբիկ ասորի պատրիարք 43, 151, 178
Ալեքս Աբովյան 191, 207—210, 214, 222, 227, 228, 232, 233, 235—238, 241, 263
Ալեքս Կոմինենս, Հովհաննես Բ-ի որդին 71, 75
Ալեքս Ա Կոմինենս 5, 20—23, 26, 28, 45, 52, 54, 55, 58, 71, 72, 75, 114, 117, 125, 132, 134, 194, 196, 198, 202, 229, 256
Ալեքս Բ Կոմինենս 23, 45
Ալիք բին Վախիս 158
Ալիշան Ղ. 39, 46—48, 77—79, 83, 98, 160, 165—167, 173, 174, 221, 229, 232, 237, 239
Ալիք Քոչուկ 154
Ալիս, Անտիռքի դպրուհի 84, 85
Ալպօյաճյան Ա. 7, 68, 69
Ալինեան Ն. 38, 40, 202
Ահմէտ տէ՛ս Մաւամեդ, Դանիշմանյան ամիր
Անապյան Հ. 27, 29, 30, 42, 79
Ամորի Ա 36, 133, 231
- Անահիտ Շիրակացի** 216
Անանյան Պ. 176, 237
Անանուն Եղիսաբէի (Կամ Ասորի) 35, 41, 83, 89, 100, 106—109, 112—114, 117, 119, 120, 123, 152, 153, 155, 165, 206, 215
Անեհուն Քեսուցի (Գրիգոր Երեց) 109, 110
Անգևոսների հարստություն 23
Անգրոնիկոս Ա Կոմինենս 23, 26, 45, 131, 133, 134, 138, 191, 198—201, 210, 211, 214, 217, 228, 229, 263, 265
Անդրոնիկոս Կոնտոստեֆանոս 142
Անդրոնիկոս Յնըրենս (Եղիշերքնենս) 191, 204, 205, 210, 212—214, 216, 228, 230, 231, 263, 265
Աննա Կոմինենս 20, 21, 55, 57, 58, 72, 78, 102, 103, 120
Ապողինար 234
Արագ 58, 62, 63, 81, 83
Արշակոնիներ 67, 68
Արևոն-Թողմիշ 150
Արուիս տէ՛ս Ալեքս Արսուիս
Արտուրյաններ (Արթովյաններ)
 93, 148
Արփ Արսլան 155
Աֆշին 90—93
- Բաբայան Լ. Հ.** 19, 31
Բագրատոնիներ 17
Բալաբանով Դելլը 263

Բալաբ 59
Բալդուին թ Երուսաղեմացի (Պաղ-
տին) 84
Բալդուին գ Երուսաղեմացի (Պե-
տուին) 131, 150, 231
Բաղդասարյան է. 184
Բար Երրեսու 33, 34, 51, 83, 146,
199, 204, 264
Բարիկյան Հր. 27, 29, 52, 84,
100, 128, 159, 178, 225
Բարսեղ Բար Շուման 151
Բարսեղ Ծղեսացի 32
Բևառքիսա 132
Բաղյան Ա. Ա. 31, 210, 249
Բահմանդ թ Անտիռքացի (Պե-
տունդ) 21, 71, 72, 76, 81—85,
100, 107, 256
Բահմանդ գ Անտիռքացի 158
Բախեազյան Ս. է. 13, 49
Բուազ Տ. Ռ. 49, 157, 164,
166
Բուրսուին 58

Գարեգին Ա Կաթողիկոս (Հովհ-
անիսիան) 44
Գող Վասիլ 12, 53, 157, 188
Գոտիք Պ. 103
Գրիգոր Պակուրիան (Բակուրյան)
225
Գրիգոր թ Վեպյաներ 28
Գրիգոր գ 39, 89, 91, 141, 222,
223, 227, 236—238, 249
Գրիգոր Դ Տղա 39, 219, 246—
249, 267
Գրիգոր Երեց 25, 27, 29—31,
40, 41, 47, 93, 112, 114, 140,
146, 159—163, 169, 175—177,
180, 199—201, 203, 229
Գրիգոր Մարաշացի 159—162
Գրիգոր Սկնացի 41
Գրիգոր Ն. 24, 128
Գրիգորի Վ. 135, 209

Գրուսէ Բ. 49, 76, 84, 85, 92,
96—99, 116, 117, 119, 122,
164, 172, 174, 191, 231, 232,
246
Գուգիկելմո դելլա Բարիկա 125
Գևորգ Սկնացի 184

Դանուն (Տանուն) 146, 147, 168,
169
Դավիթ Բաղիշեցի 220
Դափուդ. (Դափութ) 92, 146, 148,
150
Դիմետրիս Վրանաս 142, 143,
195, 196, 262
Դիոնիսիոս Բար Սալիբի 7, 32,
42, 43
Դհուկ Նուն 168, 169, 171
Դյուլգեր Ֆ. 226, 243
Դյուլորիս էդ. 47, 159
Դյուկանժ 20
Դուահ 106, 147—149, 168, 169,
171

Եիսեկ Ն. 19, 50, 85, 96, 130,
153—155, 157, 180
Երեմյան Ս. 68, 151
Եվթիմիոս Զիղարենոս 225
Եվստաթիոս Սոլունցի 56

Զարորով Մ. 19, 32, 36, 50, 158
Զանգի (Զանկի) 39, 82, 83, 85,
93, 96, 97, 101, 107, 116—
118, 130, 132, 140, 145, 150—
155, 172, 180, 258, 259
Զեն աղ-Զին 155, 159
Զենոյան Հարստություն 37, 38,
189, 231,
Զեքենան Լ. 210, 237, 243, 246,
249, 252

Էմին Մկրտիչ 26, 32
Էսպալեն Պ. 7, 43

- Թաթուլ 80
 Թեմուրձյան Վ. 7
 Թեղորոր Բար Վահրուն 183, 245
 Թեղորորս Դասիունս 138
 Թեղորորս Պրոդրոմոս 41, 69, 70,
 104, 127
 Թեղորիանոս 39, 219, 242—246,
 252, 267
 Թէսփիստէ 42
 Թիմուրթաշ 163
 Թորոս Ա Ռուբինյան 26, 63, 64,
 78—81, 83, 173, 192
 Թորոս Բ Ռուբինյան 95, 131,
 132, 156, 163—165, 173—187,
 196—205, 207, 209, 210, 212,
 214, 216, 221, 226—232,
 260, 262, 263, 269, 270
 Թումա 132, 197, 198, 214, 263
 Թուրիներիզ Ֆ. 174, 191

 Իրե ալ-Ասիր 37, 41, 101, 107,
 108, 111, 113, 115—117,
 152, 153, 206
 Իրե ալ-Ջառուզի 111
 Իրե ալ-Փալանիսի 53
 Իգնատիոս պատրիարք 35
 Ինկենտիոս Բ պապ 141, 223
 Իշող (Իշոխ) 35
 Իսահակ Կոմինոս 60, 61, 65,
 66, 86, 87, 113, 133
 Իսահակ Կոմինոս, Կիլիկիայի
 կառավարի 213, 214, 263

 Լանգլուա Վ. 47, 48
 Լասկարիսների Հարստություն 23
 Լըրս 191
 Լիպարիտ 68
 Լիպարիտյաններ 68
 Լևոն Ա, Ռուբինյան իշխան 60—
 62, 64—66, 78—92, 94—96,
 98, 100, 101, 107, 110, 112,
 114, 116, 118, 119, 123, 124—
 163, 165, 167, 173, 179, 192,
 196, 203, 228, 256, 261, 268—
 Լևոն Ա, Կիլիկիայի թագավոր 48,
 178

 Խլիճ Ասլան տէ՛ս Ղլիճ Արուլան

 Կաժդան Ա. Պ. 24, 45, 46, 103,
 116, 129, 136, 170, 224, 228
 Կալոժան տէ՛ս Հովհաննես Բ
 Կոմինոս
 Կահեն Կ. 18, 19, 36, 50, 51,
 54, 66—68, 92, 93, 98, 126,
 130, 131, 148, 152, 153, 155—
 158, 160, 164, 180, 189, 196,
 247
 Կասիանոս 59, 64, 82, 123
 Կիրակոս Գանձակեցի 25, 26, 207,
 227, 229, 233
 Կղեմեն Գալանոս 219
 Կոմմազինացի 12, 52, 68, 77
 Կոմինոսներ քաջ եմ քաղնում.
 Կոստանդին Բարձրաքերպի 34
 Կոստանդին Ա Ռուբինյան 77, 78,
 87
 Կոստանդին զինվոր 118
 Կոստանդին, Լևոն Ա (Իշխանի)-
 որդի 85
 Կոստանդին, Թորոս Ա-ի որդի 80
 Կոստանդին, Միքայել Հայի հայ-
 րը 89
 Կոստանդին Գարրաս 57, 60, 61
 Կոստանդին Կալամանոս (Կոլո-
 ման) 191, 205—207, 210—
 214, 217, 263
 Կոստանդին Հերապոլսցի 247—
 250, 252, 267
 Կոստանցա 76, 84, 131, 158
 Կրումբախեր Կ. 19, 41, 102, 243;
 Կուրց Եղ. 102, 103, 106

- Հակոբյան Գր. 39
Հակոբյան Վ. Ա. 32, 179
Հայկագույշյաններ 221
Հարությունովա-Ֆիդայյան Վ. Ա.
12, 52, 53, 77, 208, 225
Հեթում Ա. 34
Հեթում Բ. 179
Հեթում պատմիլ 167
Հեթում Կռոհկոսցի 179
Հեթում, Ներսես Լամբրոնացու
եղբայրը 38
Հեթումյաններ 7, 38, 53, 108,
202, 210, 221, 231, 269
Հռնիդման էռ. 21, 71, 73, 74,
178
Հովհաննես Աքսուխ 135, 208,
209, 228
Հովհաննես Կամատերոս 41
Հովհաննես Կեսար 131
Հովհաննես Կիննամոս 22—24, 41,
56—58, 70, 71, 75, 76, 98,
100, 101, 104—107, 112—116,
118, 119, 122, 124, 127—129,
131, 135—138, 142—145, 155,
156, 166, 170, 172, 176, 180,
182, 191, 193—195, 198—201,
204—206, 209—213, 215, 221,
228, 265
Հովհաննես Կոհոտոստեֆանոս 142
Հովհաննես ԺԲ, Հակոբիկ պատ-
րիսրը 178,
Հովհաննես Բ Կոյնենոս 10, 21—
23, 45, 46, 53, 55—58, 60,
62, 63, 65, 66, 69—72, 75,
76, 82, 84, 86, 97—123, 131—
137, 143, 146, 150, 164—167,
169—171, 173, 179, 182, 192—
195, 198, 256—258, 260, 261,
269
Հովհաննես Սկիլիցիս 52
Հովհաննես Ության 244, 245, 252,
267
- Հովհաննես Թեսունցի 32
Հովհաննես Օձնեցի 43
Հովհաննիսյան Ա. 17
Հունգեր Հ. 19, 21, 23, 24, 129
- Դազարյան Հ. 178
Դազի (Ամր-հազլ) 59—67, 81—
86, 89, 93, 110, 148, 167
Դարա Արսլան (Խարասլան) 148,
150, 152, 160, 163
Դիճ Արսլան (Խլիճասլան) 6,
129, 130, 162, 169, 220, 248,
250, 259, 267,
- Ճեկահիբճյան Մ. Հ. 152, 167
- Մամիկոնյան 225
Մանադյան Հ. 42
Մանտակ Եղբայրներ 78—80
Մանուկ Ա Կոմենսոս 6, 10, 21—
23, 25, 26, 38, 39, 45, 46,
73, 76, 100, 107, 122, 124—
145, 149—150, 155, 156, 158,
170, 171, 175, 194, 195, 198,
199, 202—205, 207—211, 213,
218, 219, 221, 226, 228, 230,
231, 236—240, 243—252,
258—263, 265—270
- Մաշտոց 176
Մառ Ն. Ց. 225
- Մատոդ 57, 58, 61—63, 66, 81,
86, 105, 123, 138, 141, 144,
148—152, 155, 160—163, 169,
171, 175, 181, 258, 259
- Մատթիոս Ուռհայեցի 25, 27, 29—
31, 40, 41, 47, 68, 78, 79,
89, 93, 96, 108—110, 114,
115, 135, 141, 145, 146, 153,
155, 157, 159—162, 167, 169,
176, 185, 197, 199—203, 214,
215, 221, 229, 231
- Մարգարյան Հ. Գ. 8, 31

- Մարիամ Նորավելա 225
Մարքս Կարլ 5, 133, 134
Մէլքչառ 13
Մէլքչ-Օհանջանյան Կ. Ա. 25
Մեկիոս Կ. 207, 228
Միքայել Պ. Անդրելոս 38, 39,
218, 245
Միքայել Ասորի (Միխայել) 21,
26, 31—35, 41, 59—66, 70, 77,
78, 81—83, 85—87, 89—91,
93, 100, 104—106, 113, 116,
117, 123, 124, 135, 144—153,
155, 159, 163, 166—170, 172,
175—178, 180, 182—187, 189,
199, 200, 203—206, 215, 216,
219, 229, 231, 244, 245, 264
Միքայել Բարգմանիլ 245
Միքայել Խոալիկոս 69, 84, 99—
101, 104, 127, 128
Միքայել Հայ 89, 90, 92, 256
Միքայել Վրանան 191, 195, 212—
214, 263
Միքայելյան Գ. Գ. 48, 73, 74,
77, 80, 86, 98, 100, 115, 119,
164, 174, 179, 183, 184, 191
Մւճ 95, 165, 212, 214, 219,
228—231, 246, 263, 270
Միտթար Այրիվանեցի 32
Մկրտչյան Մ. 39
Մուհամեդ Ասլիթան 155
Մուհամեդ (Մահմուտ), ղանիշ-
մանյան ամիր 58, 63, 67, 92—
94, 104—106, 109—111, 123,
124, 126, 129, 143, 146—148,
166—170, 179, 258
Մուհամեդ մարգարե 36, 184
Մուրադյան Պ. Մ. 225

Ֆազան 106
Ֆակոր Արալան (Աղուպ-Ասլան)
42, 129, 130, 148—150, 168,
169, 171
- Յանոս 146, 147, 163
Յովսեփեան Պ. 159, 160—162,
185
Յառնա 63
Յուզբաշյան Կ. Մ. 6, 127, 208
Յուլիան 43

Նաթանայելյան 221
Նեղոս Դոքսապատոս 247
Ներսես Ղամբրոնացի 38, 40—42,
130, 202, 208, 214, 224, 226,
227, 233, 235, 236, 238, 239,
241—244, 246—248, 250, 262
Ներսես Պ Ծերծալի 38—41, 160,
176, 210, 214—216, 222, 223,
227, 232—242, 244—246, 249,
267
Ներսես Պալիանենց 179
Նիկետաս Խոնիխատև 23, 24, 41,
56, 57, 60, 67—71, 100, 104,
105, 111, 113—115, 119,
128—130, 135, 138, 142, 144,
167, 170, 172, 211—213, 215,
221, 264
Նիկեփոր Վրիենս 20, 102, 103,
120
Նիկեփոր Բասիլիակիս 104
Նուր աղ-Դին 19, 50, 130, 153,
156, 158, 159, 163, 185, 186,
206, 209, 212, 219, 228, 231,
232, 269, 270

Շաբի Ժ.—Բ. 22, 33—35, 61, 152,
203, 229, 231, 264
Շալանդոն Յ. 23, 24, 45, 46,
51—57, 59, 60, 63—65, 69—
72, 75, 82, 99, 103—105,
108—112, 115—119, 121—124,
126, 128, 129, 131—135, 142,
144, 150, 156, 158, 164, 167,
169, 170, 172, 174, 178, 180,

- 183, 191, 197, 198, 211, 213,
 219, 228, 230, 236, 244, 248
Եահազարիանց Կ. 30, 40
Երեկուն 157

Զական 56
Զամշան Ա. 46, 47, 79, 98, 164,
 173, 191, 229, 238

Պալճեան Ա. 219
Պաղտին Դ (Բալդուին) 36
Պաղտին (Պաղտուն), Քեսունի և
 Մարտաշի իշխան 29, 81, 92, 94,
 96, 140, 156, 157, 159
Պահապատինի 38
Պապիկյան Ա. 83, 85, 174
Պեղպեռօչէն տե՛ս Հովհաննես Բ
 Կոմինենոս
Պետեփին 155
Պրոսովին 142, 143, 195, 214,
 262, 263
Պուտառվին տե՛ս Խայմենդ Պուտ-
 տին
Պողոս Տարօնացի 42

Ջուլին Ա. 89
Ջուլին Բ 21, 84, 89—91, 111, 117,
 131, 132, 140, 151—153, 156,
 159—161, 165, 176, 184—186,
 189

Ժայմոնդ Պուտառին (Պեմունդ) 26,
 94, 96, 98, 107, 111, 116, 117,
 131, 136, 139—142, 144, 145,
 155—159, 165, 172, 180, 186,
 193, 256, 258, 259, 262, 269
Ժանիման Ա. 49, 102, 104, 164,
 166, 172, 191, 197
Ժավինգինոս 75
Ժրիազտ Անտոբացի 195
Ժընազտ Շատիլոնցի 232

Ոընազտ Մարաշացի 140, 157—
 159, 186
Ոոզուան 81—83
Ոոմանս Դիոդենես 57
Ոուրեն Ա Ոուրինյան 77, 78, 88,
 91
Ոուրեն, Ղան Ա իշխանի որդին
 95, 165
Ոուրինյաներ բաց եմ բողոքում

Սամուել Անեցի 25, 31, 40, 79,
 80, 86—88, 91, 94, 95, 177—
 179, 182, 183, 187, 200, 202,
 214, 226, 229—231
Սայֆ ադ-Դին Ղազի 153
Սարգիս 235, 241
Սելիկիս 81
Սետոն Ք. 49
Սիմոն 140, 185
Սիրմահէ 140
Սմբատ Դումդումարլ (Սպարապետ)
 30, 31, 40, 58, 80, 83, 86—
 89, 91, 94, 95, 111, 113, 114,
 119, 123, 124, 130, 165—167,
 176; 177, 180, 182, 187, 197,
 200, 202, 204, 205, 210, 221,
 228—230, 250
Սմբատ Ներքինի 222, 223, 236—
 239
Սմբատ, Պաղեռոնի տեր 202, 221
Սմբատ, Պուկանի տեր 202
Ստեփանեն 26, 95, 165, 203, 210,
 228—232
Ստեփանոս Նախավկա 145
Ստեփանոս Օրբելյան 27
Սուրբիասյան Ա. 49

Վահրամ Բարուեի 40, 78, 80, 95,
 178—180, 182, 185, 230
Վասիլիսս Ֆինցիլուկիս 135
Վասիլի, Բարձրաբերդի տեր 202,
 221

- Վասիլ Տղա, Կարկառի տեր 89,
90, 92, 97, 157, 256
Վարդան Արքեկոցի 241
Վարդան Արքելցի 25, 26, 34, 35,
177, 182, 199
Վարդանյան Ս. 35
Վիճելմ Սուրաբի 36, 81—84,
101, 106, 107, 132, 202, 206,
211, 215, 216, 264
- Sbepին* 220
Sbep-Ղազարյան Հ. 176
Sbep-Գավթյան Ք. Ս. 41
Sbep-Ալենդրյան Ա. Ե. 37
Sbep-Մինասիանց Ե. 183, 223
Sbep-Միթելյան Ա. 91, 141, 179,
223, 235, 236, 249
Sbep-Պետրոսյան Լ. 35, 40
Sbepին 221
- Գևորգոս Վարաժնոնի 7, 12,
52, 53, 68, 77, 188
- Գալունի Ս.—Ե. Հ. 49, 65, 75,
77, 78—81, 83—85, 89, 97, 98
Գեղջյան Ա. 210, 252
Գյոշկերյան Ա. Ս. 41
Գրիգորյան 15, 110, 222, 233—235,
240, 242, 250, 251
- Օբերտոր դելա Տորի 125
Օգերիկ Վիտալիս 75
Օլին 202, 203, 216, 221, 226,
227, 232, 235
Օլինյաններ տե՛ս Հեթումյաններ
Օստրովսկի Գ. 52, 54, 55, 72
102, 104
Օտտոն Ֆրենդինգացի 56
Օրմանյան Մ. 14, 79, 141, 174,
249, 250
- Յիլիպպի 211, 212
- Յինկ Յ. 247
Յըհողիկի Բարբարոս 219, 252
267
Յուզ Անդուշի 84, 89, 116, 150
- Адоратский В. 5
- Барсегов Ю. Г. 49, 205
Бибиков М. В. 67
- Гордлевский В. А. 13, 50
Гусейнов Р. 33
- Дмитревский А. 102
Дмитриев Г. А. 49, 158
Долоцкий В. И. 24
- Карпов В. Н. 22
Коковцев П. К. 19
Курбатов Г. Л. 45
- Любарский Я. Н. 20, 21,
72—74, 103
- Медведев И. П. 116, 209
Мстиславна Добродей 71, 75
- Острогорский Г. А. 54
- Пападимитру С. 71, 75
Петров П. Хр. 192
- Райт В. 19
- Степаненко В. П. 12, 53
- Тураева К. А. 19
- Успенский Ф. И. 126, 127,
164
- Фрейденберг М. М. 21, 22,
72—74
- Шандровская В. С. 44, 79
- Энгельс Ф. 5, 134

- Adontz N. 52
Ahrweiler H. 47, 55, 74, 194,
196, 198, 199, 208
al-Firdaous *ահ'ս Փիլարտոս Վա-*
բաժնունիք
- Baldwin Marshall W. 49
Bar Hebraeus *ահ'ս Բաբր Եպիկոս*
Baumstark A. 19, 42
Bayan G. 48
Beck H.—G. 19, 42, 218, 225,
228, 241—243
Bedawi *ահ'ս Շայմոն Պուշտիկ*
Bedoukian P. Z. 44, 49
Bréhier L. 15, 192, 196, 203
Brosset M. 191
Budge Ernest A. Wallis 33
Casanova 57
Charanis P. 225
Danishmendides 41, 50, 57
Dédéyan G. 7, 31, 69
Der Nersessian S. 14
Ehrhard A. 243
Every G. 14
Folz R. 15
Fusco F. 101
Gelzer H. 102
Gotteln S. D. 116
Greco V. 24
Grégoire le Prêtre *ահ'ս Գրիգոր*
Եպիկոս
Gregory Abu'l Faraj *ահ'ս Բաբ-*
րեպեսս
Guilland R. 209
Heywood C. J. 70
- Hohlweg A. 46
Hussey J. M. 14
Ibn-Alatyr *ահ'ս Իբրահիմ Ալ-Ալատիր*
Ioannes Aloysius van Dieten 23
- Jarnley C. J. 12, 52
Jurewicz O. 134, 198, 210
Justinian 19, 41
- Lamma P. 99
Laurent J. M. 12, 52
Leib B. 20
Lille R. J. 220
Lüders A. 19, 33
- Meinke Augustus 22
Mélikoff I. 13, 41, 50, 64, 68
Migne J.—P. 254
Moravcsik G. 51
Mordtmann 57
- Norden W. 14
- Oboiensky D. 46
- Regel W. 56
Roger le Tourneau 53
- Saint-Martin M. 191
Setton Kenneth M. 49, 174
Schlumberger G. 133
- Vryonis Jr. Speros 51, 55, 121
Willermus Tyrensis *ահ'ս Վիլ-*
լմբ Սուլբացի
Wirth P. 22, 46
- Σάθας K. N. 213
- ღոնքը 3. 178

ՏԵՂԱՆՎԱՆՆՑԱՆԿ

- Արլիստան (Ապլիստան) 148, 150,
151, 168, 169
Ազանա (Ատանա) 61, 65, 73,
86, 87, 112—114, 117—119,
123, 165, 257, 258
Աւեքսանդրել 116
Աճար 161
Ամալը 119, 257
Ամիդ 13, 50, 90, 93, 130, 151,
152, 163, 189
Ամուգա 174, 186, 197
Այլասեռ Քար 176
Այնթապ 140
Անավարդա (Անարդաբա) 73, 80,
82, 83, 112—115, 118, 178,
182, 184, 187, 196, 205, 216,
230, 231, 257, 265
Անտոլիա 253
Անդրկովկաս 17
Անկյուրիա 63
Անտիոք (Անտար) 12, 13, 21, 22,
50, 52, 67, 71, 73—76, 81,
82, 84, 85, 87, 88—90, 94, 96—
98, 107, 108, 110, 112, 113,
116, 117, 120, 122, 131, 136,
137, 141, 152, 155, 156, 159,
162, 165, 173, 178—180, 182,
189, 193—195, 209, 211, 228,
230, 247, 248, 251, 256, 257,
261, 269
Անտիոքի իշխանություն 10, 11,
71—76, 80, 83, 91, 92, 95, 96,
99, 101, 121, 123, 124, 130,
131—133, 137—145, 155, 156,
158, 169—172, 185, 186, 189,
196, 202, 203, 256, 257—260,
262
Ապամեա 158
Արյուծաքերդ 174, 187, 196
Ասիա 73, 94
Ասկուսիս 221
Ասորիք 19, 22, 36, 42, 43, 50,
73, 74, 77, 78, 103, 106, 116,
117, 126, 178
Ատալիա 56, 57, 59, 74, 101,
108, 112, 122, 124, 143, 191,
194, 255, 257, 261
Արարական խալիֆաթ 6
Արկա 147
Արձղան 158
Արմենիակոն 59, 65, 74, 105,
125
Արտահ 157
Արտուրյան ամիրություն 13, 50,
130, 151—154, 157, 160, 186,
189
Արևմտյան Եվրոպա 14, 15, 36,
158, 188
Աւել 161
Աֆրիկա 157

Բաալբեկ 154
Բաբալոն 92
Բարուզա 152
Բագրատ 119, 257
Բականյան Թերակղզի 54, 108,
126, 244, 266
Բալու տե՛ս Բելը Բուլա
Բաղդատ 93, 158, 159, 167
Բարին 116
Բարձրաբերդ 202, 220
Բար Սառմա 151, 178, 189
Բեյթ Բուլա 152
Բերյա, քաղաք Մակեդոնիայում
58
Բիրող տե՛ս Բարուզա
Բյուզանդական կայսրություն բաց
եմ բողոքում
Բյուզանդիոն 155
Բյութանիա 103

- Բորիդինյան (աշտարակի դար-
պաս Մելիտենեում) 147
Բուլղարիա (բուլղար) 192, 241
- Գալիչ 210
Գամբիթ տե՛ս Կապադովկիա
Գանգրա 57, 58, 60, 70, 82, 105,
106, 115
Գերմանիական (արևմտահռոմեա-
կան) կայսրություն 15, 184,
218, 267
Գերմանիկ տե՛ս Մարտ
- Գամասկոս 53, 153, 189
Գանիշմանյան ամիրություն 10,
11, 13, 36, 41, 42, 50, 54,
56—60, 62—71, 74, 81, 82,
84—86, 89, 93, 96, 97, 102,
104—106, 108, 115, 118, 121—
126, 129, 130, 138, 146, 148,
149, 151, 166—171, 193, 194,
255—259, 268
Գանուր 56
Գաղտային սիլիկիա 73, 76, 80,
82, 86, 88, 96, 111, 112, 122,
136—149, 141—144, 172, 180,
205
Գեարուցան համաձայնագիր 21,
61, 71, 72—76, 78, 79, 81,
116, 117, 137, 192, 257
Գեղույ տուն 161
Գիար Բաքր տե՛ս Ամիդ
- Եղիպտոս 5, 6, 132, 133, 251,
267
Եղիսիա (Ուուա) 22, 28—30, 39,
40, 50, 52, 74, 76, 84, 85, 89,
96, 112, 120, 130, 140, 141,
145, 151, 153, 154, 156, 157,
163, 172, 181, 189, 197, 258,
259
Եղիսիայի իշխանություն 10, 11,
- 80, 91, 92, 97—99, 130—132,
138, 140, 145, 151, 152, 162,
163, 165, 184—186
Եվրոպա 36, 45, 46, 48, 72, 73,
158, 181
Երուսաղեմ 36, 49, 76, 84, 85,
88, 89, 91, 131, 133, 148, 150,
151, 154, 164, 184, 205, 213,
231, 232, 237, 251, 260, 267
Երեան 91
Եփեսոս 54
Եփրատ 90, 130, 136, 152, 157,
162, 185, 248
Եփրատյան մարզ 90, 137, 160,
219
- Զաղյու 161
Զմյուռնիա 54,
Էրմիտաժ 79
- Թիլ Աւետեաց տե՛ս Թլպաշար
Թիլ Համտուն (Թիլ) 115, 197,
198, 205, 231
Թլպաշար 160—162
Թուրքիա 253
Թրակիան 125
- Իրերիա 208
Իկոնիա 6, 10, 11, 13, 30, 37,
50, 54, 56—60, 62, 63, 66,
70, 74, 81, 86, 105, 118, 121—
123, 125, 126, 129, 130, 133,
138, 139, 141, 144, 148—
152, 156—162, 168, 169, 171,
175, 181, 185—187, 189, 193,
194, 202, 239, 248—250, 252,
255, 256, 258, 259, 267, 269,
270
Ինար 131, 158, 159, 185, 186
Իսավրիա 198, 200, 205, 216,
228, 232, 265

- Իտալիա 5, 6, 51, 126, 219
Իրրիլ 154
Լամբրոն 7, 38, 108, 192, 202,
221, 226, 227, 231, 235, 269
Լամոս 112
Լառողիկիա 57, 91
Լեռնային պիլիկիա 76, 113, 117,
118, 143, 166—170, 180, 185—
187, 258
Լիգիա 103
Լիկանդոն 169

Խալդիա 53, 59, 122, 190
Խոտան 157
Խարբերդ (Խարիբերդ) 92, 148,
150—152, 160, 163, 186, 189
Խորասան 77, 93, 167
Խումանոս 161

Սամնդավ (Սիմանդա) 147, 168
Սովք 92

Կալաբրիա 128
Կապաղովկիա 7, 11, 59, 67—69,
77, 78, 82, 124, 146, 168, 187,
251
Կապան (Կապանըքերդ, Կապանա-
քերդ) 119, 123, 166—168,
257
Կաստամոն 57, 58, 60, 70, 82,
104—106, 170
Կարկան (Գարգար) 89, 90, 92,
152, 256
Կարմիր վանք 94
Կարմիր լեռն 123, 167
Կենտոռուկավիս 79
Կեսարիա տե՛ս Կապաղովկիա
Կիբեռայոտոն 125, 191
Կիզնոս 73
Կիլիկիա կամ Կիլիկյան Հայաս-
տան բաց եմ բաղնում
Կիպրոս 115, 122, 124, 138, 143,
191, 194—196, 203, 210, 211,
217, 220, 261, 262, 265, 269
Կիկ 128
Կլավդիա 151
Կոմանա 63
Կոսիտառառ 167
Կոստանդնուպոլիս 6, 38, 39, 62,
63, 66, 80, 101, 102, 106, 107,
116, 119, 123, 129, 138, 144,
145, 155, 156, 170, 172, 173,
177, 178, 180, 182, 187, 192,
193, 218, 222, 231, 236—243,
246—251, 259, 262, 267, 268
Կոստանդնուպոլսի պատրիարքու-
թյուն 11, 14, 15, 18, 222

Հալեպ 22, 36, 74, 81—83, 85,
93, 97, 111, 117, 132, 145,
151, 153, 155—159, 163,
172, 180, 185, 186, 212, 219,
231, 232, 239, 269, 270
Հալեպ-Մոսուլի աթարեկություն
10, 11, 36, 50, 70, 93, 96, 97,
101, 121, 130, 133, 153, 194,
258, 259
Հալի 161
Հալիս 59
Համահ 154
Համուս 204, 205, 229
Հայաստան 7, 13, 17, 25, 26,
36, 43, 47—49, 52, 68, 77,
78, 147, 220, 233, 236, 253
Հայոց կաթողիկոսարան 14, 16,
40, 210, 219, 220, 222—224,
240, 242, 252
Հանի 150
Հարիմ 158, 206, 217, 269
Հեսնա Զիադ տե՛ս Խարբերդ
Հերապոլիս 247, 248
Հերմոն 73
Հյուսիսային Ասորիք 5—7, 11—
13, 17—21, 30, 32, 33, 39,

- 43, 50, 58, 59, 70, 72, 73,
 75—77, 80, 84, 91, 94, 96,
 97, 99, 101, 104, 107, 108,
 111, 116, 117, 119, 121, 124—
 126, 130, 131, 135, 137, 139,
 140, 142, 145, 156, 164, 180,
 181, 183, 220, 221, 224, 256—
 260, 265, 266, 268, 269
 Հյուսիս-Եփրատյան մարզ 97
 Հյուսիսային Հայաստան 8, 241
 Հռոմ 154, 156
 Հռոմեական կայորություն 6
 Հռոմի պապություն 14, 15, 141,
 218, 219, 222, 241, 252, 267
 Հռոմեական 11, 17, 186, 219, 222,
 236—238, 241, 243, 246, 247,
 250—253
 Հռոմեայի Հայոց կաթողիկոսա-
 րան 9, 16—17, 38, 218, 223,
 224, 253, 265—268
 Հռոմեարիա, Հռոմեարներ 58, 108,
 109, 131, 207, 244

 Մակեդոնիա 58
 Մամետիա 86, 113, 207, 227,
 233
 Մանագկերտ 6, 43, 73
 Մաշտոցի տնօպան Մատենագարան
 91
 Մասարա 63, 146, 147, 168
 Մարաշ 80, 91—94, 97, 109, 111,
 137, 140, 157—159, 161, 162,
 169, 185, 230, 232
 Մարքար Բար Մառմա տե՛ս Բար
 Մառմա
 Մարգին 93, 186
 Մեանգըրի դաշտ 57
 Մելանգիա 141, 144, 150
 Մելիտենի 52, 61, 62, 106, 130,
 147, 150, 151, 168, 250
 Մեծ Հայք 7, 188
 Մերձավոր Արևիլք 7, 9, 10, 12—
- 14, 17, 18, 49, 53, 76, 77,
 85, 99, 133, 134, 146, 157,
 158, 181, 220, 259, 260
 Մելիտենի 52, 61, 62
 Միջազգայի 73, 74, 236
 Միջերկրայի 220
 Միջերկրական ծով 10, 36, 49,
 55, 56, 59, 73, 74, 171, 194,
 196, 217, 220, 257, 261
 Միբիոկեֆալի 6, 130, 220, 250,
 252, 259, 267, 268, 270
 Մմահե տե՛ս Հերակլիոն
 Մոպսուհասիա (Մամետիա, Մը-
 սի) 61, 65, 73, 86, 87, 112,
 113, 119, 165, 197—201, 257
 Մոսուլ 87, 85, 93, 97, 145, 152,
 153, 155, 172, 180

 ալ-Յագիչիսան 154
 Յեսուանց վանք 160

 Նեղոս 133
 Ներքին Ասորիք 74
 Նիկիա 23, 54, 108, 252,

 Որոնտ 91

 Պաղեստին 126, 136, 211
 Պանտոկրատորի վանք 102, 103
 Պապեոն 7, 108, 202, 221
 Պափլագոնիա 59, 65, 74, 82, 105,
 125
 Պեհոնի 162, 230
 Պելու 152
 Պետրիծիոն 225
 Պիր 153
 Պիրամիդ (Քահան) 73
 Պոնտոս 124
 Պոական 202, 221

 Քաղիրք 157

Համանի շրջան 148—151, 162,
168, 169, 185
Հենովա 125
Բաբան (Բապան) 90, 162, 184

Մամուստ 90, 157
Մազդիկ 54
Մարս 78
Մարգանդիքար 88, 89, 113, 119,
165
Մերաստիա 42, 146, 147, 149,
168
Մելուկիան մեծ ուսութանություն
7, 13, 50
Մելիկիա 100, 108, 112, 116, 125,
143, 191, 216, 265
Միքարերեկ (Մամկառ, Մահուկառ,
այսօր՝ Սուվերեն) 89, 90
Միմանկլա 174, 187, 196
Մինոյ 55
Միհական տե՛ս Մյունխաց հահանգ
Միստան տե՛ս Կիլիկիա
Միցիլիա 51, 128, 131, 134, 197
Միորիա տե՛ս Ասորիք
Մյունխաց հահանգ 27
Մողովոլիս 57, 66
Մտամրու տե՛ս Կոստանդնուպոլիս
Մըռճ 153
Մուհամա 74
Մուր (Տիր) 36
Մու լեռներ 43, 230
Մու ծով 10, 53, 56, 57, 59, 74,
82, 123, 170, 171

Վահկա 112, 115, 117—119, 123,
166—168, 174, 187, 196, 257
Վենետիկ (վենետիկցի) 55, 159
Վրաստան 8

Տաճիկ Թար 176
Տաճկաստան 92, 110

Տավրոսյան լեռներ (Տօրոս) 78,
124, 216, 227
Տարսոն 38, 40, 73, 87, 112,
113, 142, 198—200, 202, 204,
208, 212, 216, 221, 227, 257,
262, 265
Տիգրիս 136
Տլուք 92, 232
Տրապիզոն 53, 59, 60, 122
Տրապիզոնի գրություն 57, 60
Տրիպոլիս 73, 74, 101, 116, 257

Յախուտ 119, 257
Յիշոնա 90

Յուռհա տե՛ս Եղիսիա

Փարգաման 90, 92
Փիլապուպոլիս (այսօր՝ Պէտք-
դիվ) 23, 225, 244, 252
Փլորենտիա 219
Փոքր Ասիա 7—10, 12, 13, 17,
18, 20, 21, 32, 39, 50—55,
57, 62, 65, 67, 70, 71, 77,
83, 99, 102, 108, 111, 121,
122, 124—126, 131, 134, 135,
138, 141, 171, 180, 181, 183,
252, 255, 257, 258, 260, 267,
268
Փուրդիս 187, 216, 226, 227

Քեսոն 28—30, 90, 92—94, 97,
109—111, 137, 140, 152, 157,
159, 162, 186,

Օպսիկիոն 125

Ֆիլադելֆիա 54

Damas 53
Dorylaion 46

Hiçen Kaifâ 92

Lattaké 92

Portus Pallorum (Pré des Pallies) 82

Romaine 48

Turkey Pre-Ottoman 50, 54, 68

Zynyn 66

İztria 67

Icauria 104

Aogianias 72

Misri 67

Poðanðov 73

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՆՌԱՆԵՐ, ԿՐՈՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ալաման 108, 109

ասորի 17, 33, 35, 40, 43, 80, 108, 109, 112, 147, 172, 186, 187, 189, 260

ասորի հակորիկ պատրիարքություն 14, 16

Բարելացի 94

Բյուրբեր 56, 57, 59, 60, 66, 68, 77, 81, 82, 86, 88, 90—92, 108, 121, 124, 138, 147, 152, 159, 162, 166, 173, 181, 187, 197, 228, 256, 269

Բյուրբ-սելջուկներ 51, 52, 54, 55, 60, 68, 77, 108, 126, 197

Բուրբ 253

Իսմայիլի ազգ 88, 248

Լիդիացի 103

Կաթոլիկ 42, 190

Հակորիկ 7, 16, 32, 33, 42, 44, 174, 178, 183, 184, 189, 190,

199, 218, 245, 267

Հռոմեացի (Հռոմե) 42, 56, 67, 78, 94, 109, 114, 123, 136, 137, 142, 167, 176, 197, 208, 226, 227, 242

Հրիս

Հույն (Հունարեն) 17, 28, 37, 39, 43, 53, 59, 66, 77, 79, 80, 86, 94, 106, 110, 112, 116, 119, 123, 146, 166, 173, 187, 199, 201, 204, 205, 229, 231

Հունգարներ 58

Խեստորականներ 42

Խորմաներ 51, 54, 55, 58, 71, 72, 131, 134, 197

Պամփիուցի 103

պարսիկներ 43, 67, 70, 137

պարսկահայեր 67, 68, 256

պեղենգներ 51, 54, 55, 198

սելջուկ 56, 62

սերբներ 197

սկլութեան տէ՛ս Հունգարներ

սյունի 189

- քաղկեդոնական 43, 234
- օրբոգրքս 15, 42, 180
- Ֆրանկ (ֆրանկ) 22, 81, 82, 87—
90, 92, 112, 117, 146, 155,
184, 187
- Ֆրանսիացի 45—47, 68, 191
- Аркаун 225
- армяне-халкедониты 52, 53
- Arménienne 7, 46—48
- Franc (Franque) 49
- Grecque 48
- Turque 51
- Türkvolker 51

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒՐՅԱՅ

Մկրնազբյուրների տեսություն	5
Դրականության տեսություն	18
	44

Գ լ ո ւ խ ա ռ ա շ ի ն

Քյուզանդիան և Կիլիկիան ժմ դարի 30—70-ական քվականներին	51
1 Հովհաննես Բ Կոմենսոփ (1118—1148) արքելյան քաղաքականությունը և Կիլիկիան	55
2 Կիլիկիայի Ռուբինյան հայկական իշխանությունը ժմ դարի 30-ական թվականներին	77
3 Կիլիկիայի գրավումը Բյուզանդիայի կողմից. Հովհաննես Բ Կոմենսոփ առաջին (1136—1138) և երկրորդ (1142—1143) ռազմարշավները դարի Կիլիկիա	99
4 Մահուլ Ա Կոմենսոփ արքելյան քաղաքականությունը և Կիլիկիան	128

Գ լ ո ւ խ ե ր կ ր ո ր դ

Թօպինյան իշխանուրյան վերահաստատումը և քյուզանդական կառավարչները	164
1 Թորոս Բ-ը և Ռուբինյան հարստության վերականգնումը Կիլիկիայում	164
2 Կիլիկիայի Ռյուզանդական կառավարիչները և Ռուբինյան իշխանությունը ժմ դարի 40—70-ական թվականներին	190

Գ լ ո ւ խ ե ր բ ո ր դ

Հայ-քյուզանդական եկեղեցաքաղաքական դիվանագիտական հարարիւրյանները ժմ դարի 60—70-ական քվականներին	218
Հազարամաններ	254
Բէզումուշ	255
Անվանացանկ	271
Տեղանացանկ	278
Ժողովուրդների անուններ, կրօնական ուղղուրյուններ	284

ԱԶԱՏ ԱՐՏԱՇԻ ԲՈՅՈՅԱՆ

ՔՅՈՒՋԱՆԴԻԱՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺՅ ԴԱՐԻ 30—70-ԱԿԱՆ
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հրատ. ինքաղիր է. Ա. Ավետյան
Տեխ. ինքաղիր լ. Կ. Հարուրյանիան
Նկարիչ՝ Ա. Վ. Արամյան
Սրբագրիներ՝ Գ. Է. Դերձակյան,
Վ. Բ. Միմոնյան

ԽԲ № 1246

Հանձնված է շարժածքի 11. 05. 1987 թ., Սառորագրված և տպագրության
6. 06. 1988 թ., ՎՖ 03956: Չափը 84×108^{1/32}, թուղթ № 2: Տառատեսակ
«զրի սովորական», բարձր տպագրություն: Պալմ. 15,12 մամ., տպագր.
18,0 մամուլ: Ներկ մամուլ 15,12: Հրատ.-հաշվարկ. 13,8 մամուլ: Տպա-
քանակ 3000: Հրատ. Խ 7280: Պատվեր № 293: Գիր 1.ո. 90 կ.:

ՀԱՅ ԳԱ Հրատարակություն, 375019, Երևան,

Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.:

ՀԱՅ ԳԱ Հրատարակության տպարան, 375019, Երևան,

Մարշալ Բաղրամյան պող. 24:

Издательство АН АрмССР, 375019, Ереван,

пр. Маршала Баграмяна, 24 г.

Типография Издательства АН АрмССР, 375019, Ереван,

пр. Маршала Баграмяна 24.

9(42.925
P-89

42